

Հիմնադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական
խորհուրդ՝

- Ն. Թովմայան
- Ա. Գյուլումյան
- Ֆ. Թոխյան
- Ա. Թունյան
- Ա. Խաչատրյան
- Ն. Նազարյան
- Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(92)
2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

* ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Ռոզա ԱԲԱԶՅԱՆ7

* ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Վալերի ՊՈՂՈՍՅԱՆ.....20

• ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1409-1437)

* 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 12-ԻՆ ՍԻՆԳԱՊՈՒՐՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1409, 27 մարտի 2018 թվականի)27

* 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 14-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱԶԻԿՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1410, 27 մարտի 2018 թվականի)32

* «ԷՍ ԴԻ ԷՅ ԹՐԱՎԵԼ» ՄՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 221¹-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1411, 3 ապրիլի 2018 թվականի)37

* ԳԱԳԻԿ ԵՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 369-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1412, 4 մայիսի 2018 թվականի)44

- * 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ԻՆ ՊՐԱՀԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1413, 4 մայիսի 2018 թվականի)53
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԵՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՏԱՐԱԾՈՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1414, 4 մայիսի 2018 թվականի)57
- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԼԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1415, 4 մայիսի 2018 թվականի)60
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՅԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1416, 4 մայիսի 2018 թվականի)63
- * ԱՐԱՄ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (17.06.1998թ. ՀՕ-247) 204.33-ԲԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ «ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍՈՒՄ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1417, 15 մայիսի 2018 թվականի)68
- * ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԻ, ՀԱՅԿ ՆԱԶԻՆՅԱՆԻ ԵՎ ԱՐԿԱՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 887-ԲԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ԲԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1418, 12 հունիսի 2018 թվականի)77
- * ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԿՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ԲԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ԲԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1419, 12 հունիսի 2018 թվականի)90

- * ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 381-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՉԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՍՈՒՅՆ ՀՈԴՎԱԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ..., ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՍԲ ԱՅՆ ԹՈՂՆՎՈՒՄ Է ԱՌԱՆՅ ՔՆՆՈՒԹՅԱՆ» ԴՐՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1420, 19 հունիսի 2018 թվականի).....103
- * ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 300-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1421, 26 հունիսի 2018 թվականի)116
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1422, 26 հունիսի 2018 թվականի)131
- * ԿԱՐԵՆ ԱՎԱԳՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 60-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Թ» ԿԵՏԻ 6-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1423, 10 հունիսի 2018 թվականի).....134
- * ՀՀ ՎԱՐՉՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԴ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 61-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 16-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1424, 10 հունիսի 2018 թվականի)145
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՋՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՈՒԹՅԱՆ «ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԵՎՐՈՊԱ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1425, 10 հունիսի 2018 թվականի).....162
- * ՌՈՄԻԿ ԴԱՆԻԱԼԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 375-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «ՏՈՒԺՈՂԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՅՅՎՈՐԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՆ, ՆՐԱՆՅ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԴԱՏԱՎՃՈՒ ՊԱՏՃԵՆՆ ԱՅՅ ԼՈՒՅՆ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՀԱՆՋՆՎՈՒՄ Է ՆՐԱՆՅ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ» ԴՐՈՒՅԹԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1426, 18 սեպտեմբերի 2018 թվականի)166

- * ՀԱՅԿ ՄԱՇՈՒՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 96-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՄԴՈ-1427, 2 հոկտեմբերի 2018 թվականի)179
- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ
ՀԱՐԱԿԻՅ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1428, 23 հոկտեմբերի 2018 թվականի)186
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-ԻՆ ԱԼՄԱԹԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՅՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՄԴՈ-1429, 23 հոկտեմբերի 2018 թվականի)190
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 14-ԻՆ ՍՈՉԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԴՂՋՍԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1430, 23 հոկտեմբերի 2018 թվականի)194
- * ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 379-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՄԴՈ-1431, 23 հոկտեմբերի 2018 թվականի)197
- * ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 102-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՄԴՈ-1432, 30 հոկտեմբերի 2018 թվականի)206
- * 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԻԼԻՄԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՄԴՈ-1433, 6 նոյեմբերի 2018 թվականի)218

- * ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
 «ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ
 17-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»
 ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 141-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ, 3-ՐԴ ԵՎ 8-ՐԴ
 ՄԱՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ»
 ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
 ԶՆՏՐՎԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ
 ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՄԴՈ-1434, 6 նոյեմբերի 2018 թվականի)221

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ
 ՄԻՋԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՆՐԱՅԻՆ
 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.
 ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՄԴՈ-1435, 19 նոյեմբերի 2018 թվականի)242

- * ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 109-ՐԴ
 ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 11-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՎ 123-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ
 2-ՐԴ ԿԵՏԻ «Բ» ԵՆԹԱԿԵՏԵՐԻ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1373-Ն ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՎ
 ՄԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ 3-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՎ 15-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԵՐԻ՝
 ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ-1436, 27 նոյեմբերի 2018 թվականի)245

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԿԱՍՎՈՐՆԵՐԻ
 ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ
 ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ» ՀՕ-266-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 26-Ի ՀՕ-338-Ն ՕՐԵՆՔԻ
 44-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
 ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՄԴՈ-1437, 14 դեկտեմբերի 2018 թվականի)266

Ռոզա ԱԲԱԶՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ

**ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

XX դարում հայ ժողովուրդը ևս մեկ անգամ բախվեց հասարակական-քաղաքական կառույցի փոփոխության խնդրին: Եթե առաջին երկուսի դեպքում նա գրեթե չունեի հասարակական-քաղաքական զարգացման ուղու ընտրության հնարավորություն և համակարգի հիմնադրումը կատարվել էր իրավիճակի թելադրանքով կամ պարտադրված, ապա այս անգամ արդեն իրավիճակն արմատականորեն տարբերվում էր նախորդներից: Էական տարբերությունը վերակառուցման ու փոփոխությունների ռազմավարության կառուցման հարցում այլընտրանքի հնարավորությունն էր: Այդ այլընտրանքը ներառում էր զարգացման մի քանի հնարավոր ուղիներ: **Առաջին** վերակառուցել և կատարելագործել (մոդիֆիկացնել) արդեն առկա համակարգը խորհրդային սոցիալիստական հանրապետությունը: **Երկրորդ** կենսագործել մի քաղաքականություն, որը քաղաքագիտական մտքի պատմության մեջ ունի սոցիալ-ժողովրդավարություն անվանումը¹: Այս ուղու նպատակահարմարությունը պայմանավորված էր սոցիալիստական համակարգի վերակառուցմամբ, էվոլուցիոն ուղու առավելություններով, ի համեմատ լրիվ ազատականի: **Երրորդ** իրականացնել ազատական հիմքերով վերակառուցում հասարակական համակարգի բոլոր ոլորտներում տնտեսությունից մինչև քաղաքական համակարգ: **Չորրորդ** փորձել գտնել զարգացման ուրույն ուղի՝ սոցիալ-պատմական առանձնահատկություններից էլնելով, հատկապես որ քաղաքական և իրավական ուսմունքների հերթափոխում արդեն կային հետկապիտալիստա-

¹ Դեմոկրատական սոցիալիզմի գաղափարախոսության հիմնադիրներից Է. Բենշտեյնը հիմնավորեց, որ մարքսիզմի պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարից պետք է հրաժարվել: Նա կոչ արեց սոցիալ-դեմոկրատական շարժման անցնել «խորհրդարանական գործունեության, քանակային ժողովրդավարական ներկայացուցչության ու ժողովրդավարական օրենսդրության, որոնք հակառակ էին դիկտատուրայի գաղափարներին»: Ըստ Բենշտեյնի «ժողովրդավարությունը միջոց է և միաժամանակ նպատակ: Այն սոցիալիզմի անցկացման միջոց է և այդ սոցիալիզմի իրականացման ձև» (տե՛ս **Бенштейн Э.** Проблемы социализма и задачи социал-демократии, М.: Наука, 1901, էջեր 244-247): Բենշտեյնն ազատական սկզբունքներին տվեց սոցիալիստական մեկնաբանություն:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՍՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵՎՈՂԻՐ ♦ 4(92)2018
7

կան-հետսոցիալիստական կոչված զարգացման այլընտրանքային ուղիների գաղափարներ²:

Առաջընթացի ռազմավարական ուղու այլընտրանքը, սակայն, չէր ենթադրում հայեցողության լրիվ ազատություն, որովհետև բացի քաղաքական-ժողովրդական կամքից՝ հասարակական նախընտրության վրա ազդում էին բազմաթիվ գործոններ³, որոնց ազդեցությամբ և կատարվեց հասարակական զարգացման ուղղության ընտրությունը: Ընտրությունը կանխորոշող գործոններից կարելի է առանձնացնել տնտեսականը, գաղափարականը, բարոյականը, ազգային-մշակութայինը, կրոնականը, աշխարհաքաղաքականը, արտաքին քաղաքականը, իշխանության եկած ուժերի քաղաքական գաղափարախոսական կողմնորոշումը և այլն: Այս գործոններից յուրաքանչյուրն անպայմանորեն ազդում էր ուղու ընտրության վրա, հետևաբար չկար ընտրության միակ հիմք, այլ բազմաթիվ գործոնների համակցություն, որոնք պետք է ներդաշնակորեն հաշվառվեին քաղաքական-հասարակական ուղու ընտրության, դրան համապատասխանող ծրագրի մշակման ժամանակ: Մակայն պետք է նկատի ունենալ, որ բազմագործոն ազդեցությամբ հանդերձ ընտրության վրա ազդող վճռական պայմանը քաղաքական էր, որը պետք է իմաստավորեր իրական կացությունը և բոլոր գործոնների հաշվառմամբ կատարեր օպտիմալ ուղղության ծրագրի մշակումը:

Քաղաքական գործոնը դառնում էր վճռական ժողովրդավարության ինստիտուտների չկայացվածության պայմաններում: Եթե դրանք լինեին կայացած, ապա ընտրությունը կկատարեր ժողովուրդը: Ստեղծված իրավիճակում ընտրության միջավայրը դարձավ միագործոն: Անտեսվեցին հատկապես ներքին գործոնների

² Այդպիսի ուղղություններից էր ցիվիլիստական հասարակության, պետության և իրավունքի մասին ուսումունըրը (այդ մասին մանրամասն տե՛ս՝ **Ներսիսյանց Վ.Ս.** Ցիվիլիզմի մանիֆեստը: Պոստսոցիալիզմը հավասարության, ազատության և արդարության համաշխարհային պատմական առաջընթացում, Եր., 2001): Այս ուսումնքի հիմնադիր Վ. Ներսիսյանցի կարծիքով կայիտալիզմի որպես «պատմության ավարտի» մասին պատկերացումների հետևողական հաղթահարումը տանում է ազատության, իրավունքի, սեփականության հետբոլոժական, նաև հետսոցիալիստական հասարակության, որում սեփականությունը քաղաքացիական է: Սոցիալիզմի ապամոնոտաժման պայմաններում ամեն քաղաքացի պետք է դառնար բոլորի համար հավասար սեփականության նվազագույն բաժնի (անձնական որոշակի անօտարելի, քաղաքացու ճնունդից մինչև մահ պատկանող) նկատմամբ սուբյեկտիվ իրավունքի կրող, տեր: Դրանից բացի յուրաքանչյուր որ իրավունք կունենար ձեռք բերելու ցանկացած այլ սեփականություն:

³ «Գործոնը», որպես լատիներեն «factor» բառի համարժեք, պետք է հասկանալ ինչ-որ գործընթացի, երևույթի պատճառ, շարժիչ ուժ, որը որոշում է դրա բնույթը, նկարագիրը կամ առանձին գծերը (տե՛ս **Мирошниченко В.М.** О системном подходе министерств и ведомств РФ к совершенствованию системы государственного управления. Монография. - М.: АПК, 1998):

մեծ մասը: Գլխավոր գործոն դարձավ արտաքին քաղաքական-գաղափարական ներգործությունը, ազատական շուկայական պոպուլիզմը, որը հրամցվեց որպես արդիականացման միակ և հնարավոր ճիշտ ուղի: Աշխարհաքաղաքական պայմանները և արտաքին միջավայրն աչքի էին ընկնում քաղաքական անկայունությամբ: Խորհրդային հասարակության վերակառուցման քաղաքականությունը, որն այդպես էլ չհասավ Հայաստան, ձախողվում էր, իսկ ձախողման հետևանքը խորհրդային համակարգի փլուզման միտումներն էին, փլուզում, որը ներառում էր նաև պետաիրավական համակարգը՝ ընդհուպ մինչև խորհրդային դաշնության կառույցը: Այս պայմաններում էական էին արտաքին քաղաքական միջամտությունը և խորհրդային «վերակառուցման» քաղաքականության կարգախոսները՝ «ժողովրդավարացում», «շուկայական տնտեսություն» և այլն: Կարծում ենք՝ քաղաքական զարգացման ուղու չափորոշիչները ի սկզբանե ակնհայտ էին արտաքին քաղաքական ներգործության ուժով, ինչպես նաև Խորհրդային Միությունում ստեղծված ընդհանուր գաղափարախոսական ու քարոզչական միջավայրի ազդեցությամբ:

Համամիասնական զարգացման ուղղությունն աշխարհում արդեն հարյուրամյակից ավելի տևող ժողովրդավարացման քաղաքականությունն էր, արևմտյան տեսլականով արդիականացումը: Սակայն, եթե 20-րդ դարասկզբին աշխարհաքաղաքական գաղափարական պայքարը զարգացման ուղու հարցում ներկայացվում էր հիմնականում երկու հայեցակարգերով՝ սոցիալիստական ու ազատական ժողովրդավարությունների պայքարով, ապա 20-րդ դարի վերջին կային ժողովրդավարության բազմաթիվ տեսություններ: Այսպիսով, համաշխարհային մասշտաբով արդիականացման «ժողովրդավարացման» չափորոշիչները, սակայն, միշտ նույն տեսական մակարդակին չմնացին: XX դարի վերջին այդ տեսության բազմաթիվ գաղափարախոսներ հետ կանգնեցին եվրոկենտրոնականությունից՝ կասկածի տակ դնելով դրա կիրառման արդյունավետությունն այլ երկրներում, և առաջ քաշեցին ավելի հավասարակշռված, արդիականացվող հասարակությունների բազմազան գործոնները՝ հատկապես քաղաքական մշակույթը հաշվի առնող տեսական հայեցակարգեր: Սակայն դա չէր նշանակում հրաժարում

ժողովրդավարացման գլխավոր գծից, անմիջական ժողովրդավարության տեսաբանների եզրակացությունն այն էր, որ սոցիալ-տնտեսական առաջադիմության ապահովման համար անհրաժեշտ էր քաղաքական զարգացման կայունություն: Այդ կայունության հաստատման համար առաջարկվեցին երկու տիպային լուծումներ՝ ազատական (Ռ. Դալ, Գ. Ալմոնդ, Լ. Փայ և այլն)⁴ ու պահպանողական (Ս. Հանթինգթոն, Ջ. Նելսոն, Հ. Լինց և այլն)⁵: Այս ուղղություններն էական կապ ունեն Հայաստանի քաղաքական զարգացման ու սահմանադրական կարգավորման գործընթացների հետ, որովհետև դրանցից ամեն մեկն առաջարկում էր իր լուծումները պետականություն կրող ժողովրդի իշխանության կազմակերպման ու ժողովրդի մասնակցության ձևերի հարցում:

Անկախության հռչակագրի ընդունման պահը համարելով մեկնարկային՝ փաստենք, որ այդ պահին անմիջական ժողովրդա-իշխանության իրավաբանորեն ամրագրված ձևերն էին հանրաքվեն, համաժողովրդական քննարկումը և ընտրությունները⁶, որոնք իրենց բովանդակությամբ խորհրդային իրավական ինստիտուտներ էին, այսինքն՝ աղճատված, պետական կառավարումը լրացնող, հայեցողական իրավական ձևեր: Դրանցից միայն ընտրությունները, իրենց նորմատիվ բովանդակությամբ լինելով սոցիալիստական իրավունքի ինստիտուտ, կրել էին էական փոփոխություն, որովհետև փոխվել էր դրանց կիրառման քաղաքական-հասարակական միջավայրը: Բազմակարծության, նոր քաղաքական ուժերի ու հասարակական նոր կազմակերպությունների հրապարակ գալով՝ ընտրությունները դարձել էին այլընտրանքային. 1990թ. Գերագույն խորհրդի կազմավորումը տեղի ունեցավ հենց այդ պայմաններում:

Անկախության հռչակագրի ընդունմամբ ուղենիշ վերցնելով ազատական ժողովրդաիշխանության մոդելը՝ ընդ որում միիշխա-

⁴ Այդ մասին տե՛ս **Pye L.** Communication and Political Development. Priston, 1963; **Hatington Samuel P.** Political order in Changing Societies. New Haven: Yall University Press, 1968; **Almond G.A., Powell G.B.** Comparative Politics: A Developmental Approach. Boston, Toronto, 1966; **Dahl R.** Polyarchy. Patrcipation and Opposition. New Haven, 1971, **Дал Р.** После революции. Власть в хорошем обществе, 1969:

⁵ **Hantington S., Nelson N.**, No easy choice: Political Participation in Developing Societies. N.Y. 1976; **Hantington Samuel P.** Political Order in Changing Societics. New Haven: Yall Universiti Press. 1968:

⁶ Տե՛ս Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք): Ընդունված է ՀՍՍՀ 9-րդ գումարման Գերագույն սովետի արտահերթ յոթերորդ նստաշրջանում 1978թ. ապրիլի 14-ին, Եր., Հայաստան, 1987, 64 էջ:

նության հիմքով (անբաժան ու անօտարելի ժողովրդի իշխանության), խնդիր էր առաջանում իրականացնել ժողովրդի իշխանության կենսագործման երկու կառուցակարգերի՝ անմիջական ու ներկայացուցչական հավասարակշռված համակարգի ստեղծում, հանրահավաքային, ցնցումային ժողովրդաիշխանությունից անցնելու ազատական ժողովրդաիշխանության իրականացման ներդաշնակ կառուցակարգերի: Ղարաբաղյան շարժումը բավական մեծ քաղաքական փորձ էր նոր իշխանությունների համար: Այդ փորձն ուներ ն՝ դրական, և՛ բացասական կողմեր: Բացասական կողմն այն էր, որ ամբողջ հանրապետությունը երկու և ավելի տարի գտնվում էր անկայուն քաղաքական պայմաններում: Անկայունության այդ քաղաքական միջավայրը չէր կարող շարունակվել, որովհետև կառավարման քաղաքական խնդիրները գնալով ավելի ու ավելի էին սրվում, բարդանում, իսկ դրանց լուծման համար անհրաժեշտ էր քաղաքական կայունություն:

Կայունության ապահովման ազատական ուղին գտնում էր, որ արդիականացման հաջողության պայմանը կայունության ու կարգի ապահովումն է, իսկ վերջինիս հաստատման միջոցը՝ երկխոսությունը բնակչության և էլիտայի միջև, զանգվածների հավաքագրումը (մոբիլիզացիան)⁷: Այս ուղղությունը քաղաքական արդիականացման գլխավոր չափանիշ էր համարում երկրի բնակչության՝ քաղաքական ներկայացուցչության համակարգում ընդգրկվածության աստիճանը. ցանկացած շեղում ժողովրդաիշխանության երկու ձևերի հավասարակշռությունից կարող է հանգեցնել ինքնակալության կամ օխլոկրատիայի կամ քառսի, որից դուրս գալու ելքը դիկտատուրան է⁸: Արդիականացման ազատական ուղու կողմնակիցներից Լ. Փայր ընդգծում էր, որ քաղաքական համակարգը պետք է ունակ լինի ոչ միայն լուծելու առաջացած տնտեսական ու սոցիալական խնդիրները, այլև ապահովել մարդկանց ինքնության գիտակցություն ու հասարակության մեջ հիմնարար անդամություն: Այդ պատճառով քաղաքական արդիականացումը պարտադիր ենթադրում է ոչ միայն իրավունքներ ունեցող, այլև որոշումներ ընդունելիս լսված լինելու իրական հնարավորություն ունեցող մարդկանց

⁷ Տե՛ս **Мухаев Р.Т.** Теория политики.- М., ЮНИТИ-ДАНА, 2005.- էջ 467:

⁸ Տե՛ս **Мухаев Р.Т.** Теория политики.- М., ЮНИТИ-ДАНА, 2005.- էջ 467:

ու խմբերի քանակի ավելացում: Դրանով իսկ ընդգծվում է քաղաքական մասնակցության նշանակությունը՝ որպես անցման շրջանի քաղաքական ռեժիմի արդյունավետության ու լեգիտիմության բարձրացման գործոն⁹:

Գիտաքաղաքական այս խորհրդատվությունից հետևում է, որ իշխանության եկած նոր ուժերը, բացի ժողովրդաիշխանության ազատական ուսմունքը պաշտոնական-գաղափարական չափանիշի ու կողմնորոշիչի վերածելուց, պետք է արագորեն ապահովեին ներկայացուցչական ու անմիջական ժողովրդավարության ձևերի հավասարակշռությունը, անմիջական նոր ձևերի արմատավորումը: Մակայն դա, ըստ էության, տեղի չունեցավ, որովհետև հինգ տարիների ընթացքում՝ 1990-1995թթ. (մինչև Սահմանադրության ընդունումը), միակ քայլը, որն արվել է այդ ուղղությամբ «Հանրաքվեի մասին» օրենքի ընդունումն էր 1991 թ. ապրիլի 2-ին¹⁰: Գլխավոր գործոնը, որ մղել էր այդ օրենքի ընդունմանը, ոչ թե բնակչության ընգրկվածության ապահովման խնդրի լուծումն էր, այլ փլուզվող խորհրդային դաշնության պայմաններում անկախության հանրաքվեի անցկացման համար իրավական հիմքերի ստեղծումը:

Դրական գծերից բացի «Հանրաքվեի մասին» 1991թ. ապրիլի 2-ի օրենքին բնութագրական էին նաև բացթողումներ ու բացասական գծեր: Այն, հանրաքվեները դասակարգելով տեղականի և ազգայինի, անտեսելով առաջինը, կարգավորում էր միայն համապետական հանրաքվեի ընթացակարգը¹¹: Այդ օրենքով նախատեսված հանրաքվեի մոդելը լրացուցիչ հանրաքվեն էր: Դրանում չկար **պարտադիր** հանրաքվեի որևէ տեսակ: Իսկ դա նշանակում էր, որ հանրաքվեի անցկացումը քաղաքական իշխանության կամքից կախված նախաձեռնություն էր: Միայն 1995թ. Սահմանադրության ընդունմամբ ներմուծվեց սահմանադրական պարտադիր հանրաքվեն, որի նախաձեռնողը, սակայն, միայն պետական մարմիններն էին: «Հանրա-

⁹ Տե՛ս **Pye L.** Communication and Development. Princeton, 1963:
¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), ՀՀ Գերագույն Խորհուրդ, Եր., 1995 թ., էջեր 118-131:
¹¹ Այդպիսի եզրակացության համար հիմքեր են «Հանրաքվեի մասին» 1991թ. ապրիլի 2-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 4-րդ հոդվածը (Հանրաքվեին դրվող հարցերը), որը հանրաքվեի դրվող հարցերի շրջանակում չէր ներառում տեղական նշանակության հարցեր (տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), ՀՀ Գերագույն Խորհուրդ, Եր., 1995 թ., էջեր 118-120):

քվեի մասին» 1991թ. օրենքը լրացուցիչ հանրաքվեների նախաձեռնող սուբյեկտներ էր ճանաչում Գերագույն խորհրդին և ՀՀ քաղաքացիներին (հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն 200 000 ստորագրություն):

«Հանրաքվեի մասին» ՀՀ 1991թ. օրենքի 4-րդ հոդվածը նախատեսում էր իրավաստեղծ հանրաքվեի միայն մեկ տեսակ՝ օրենքներ և այլ իրավական ակտեր (որոշումներ) ընդունելու հանրաքվե¹²: Օրենսդրական հանրաքվեի առարկա կարող էին լինել ինչպես օրենքների կամ այլ որոշումների ընդունումը, այնպես էլ օրենքը կամ դրա առանձին դրույթները չեղյալ համարելու կամ դրա մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ հարցերը: Ոչ իրավաստեղծ հանրաքվեի բոլոր հնարավոր տեսակներից այդ օրենքը նախատեսում էր ՀՀ կարգավիճակի փոփոխման վերաբերյալ հարցերով հանրաքվե: Միջազգային պայմանագրեր կնքելու, միջազգային կազմակերպություններին միանալու, պաշտոնատար անձանց կամ մարմիններին անվտանգություն հայտնելու հանրաքվեի անցկացման հնարավորություններ նախատեսված չէին¹³:

1990-1995թթ.. Գերագույն խորհրդի ինտենսիվ օրենսդրական գործունեության արդյունքում ընդունված օրենքների մեջ բացի «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքից չկա որևէ օրենք, որը կամրագրեր կամ անմիջական ժողովրդաիշխանության որևէ ձև, կամ կկատարելագործեր արդեն ամրագրված ձևերից (ընտրություններ և հանրաքվե) որևէ մեկը: Հանրապետության առաջին օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդն, ընտրվել էր սոցիալիստական օրենսդրությանը համապատասխան: Նրա լիազորությունների ժամկետը 5 տարի էր: Հետևաբար, միայն 1995թ. սկզբներին, երբ մոտենում էր Գերագույն խորհրդի լիազորությունների ավարտը, օրակարգի հարց դարձավ համապետական ընտրությունների խնդիրը: Ստեղծված քաղաքական իրավիճակը հանգեցրել էր քաղաքական ուժերի բևեռացման ապագա Մահմանադրության և խորհրդարանի ընտրության հարցերով: Այդ քաղաքական բանավեճը լուծվեց 1995թ.

¹² Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), Եր., 1995, էջ 120:

¹³ «Հանրաքվեի մասին» 1991թ. ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասն արգելում էր հանրաքվեի դնել՝ ա) ՀՀ սահմանների հարցեր, բ) պաշտպանության և անվտանգության հարցեր, գ) հասարակական կարգի պահպանության հարցեր, դ) քաղաքացիների առողջության և անվտանգության պաշտպանության միջոցառումների հարցեր, ե) ՀՀ կողմից կնքված միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման վերաբերյալ հարցեր:

մարտի 27-ի «ՀՀ սահմանադրական օրենքով»¹⁴ : Այս Սահմանադրական օրենքն առնչվում էր անմիջական ժողովրդաիշխանությանն այնքանով, որ ամրագրում էր ապագա Սահմանադրության ընդունման այլընտրանքային լուծում՝ կա՛մ հանրաքվեի, կա՛մ Գերագույն խորհրդի միջոցով: Նշված Սահմանադրական օրենքի մյուս առանձնահատկությունը ժողովրդաիշխանության հարցում այն էր, որ ամրագրեց ապագա խորհրդարանի պատգամավորների ընտրության երկու կարգ՝ մեծամասնական և համամասնական¹⁵: Վերջապես մյուս արմատական փոփոխությունը, որ կատարվեց ընտրական համակարգում, պատգամավորության թեկնածուների առաջադրման կառուցակարգն էր: Համաձայն Սահմանադրական օրենքի՝ թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեին ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները, հասարակական-քաղաքական կազմակերպությունները կամ նրանց միավորումները¹⁶: Առաջադրման իրավունքից զրկվեցին «աշխատավորական կոլեկտիվները», որոնք նախորդ շրջանում համարվում էին քաղաքական համակարգի սուբյեկտ:

Այսպիսով՝ 1990-1994թթ. ընտրական համակարգի նորմատիվ հիմքը նույն խորհրդային Հայաստանի ընտրական օրենսդրությունն էր, որը որոշակի փոփոխությունների էր ենթարկվել մասնակի օրենսդրական վերանայումների միջոցով: Դրանք հիմնականում վերաբերում էին տեղական խորհուրդների ընտրություններին¹⁷: Այդ փոփոխությունները շոշափում էին ժողովրդական պատգամա-

¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), ՀՀ Գերագույն խորհուրդ, Երևան, 1995 թ., էջ 838:

¹⁵ Համաձայն օրենքի 5-րդ հոդվածի Ազգային ժողովը կազմված էր լինելու 190 պատգամավորներից, որոնցից 150-ը ընտրվելու էին մեծամասնական ընտրակարգով՝ միամանդատ ընտրատարածքներից, իսկ 40-ը՝ համամասնական ընտրակարգով՝ Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ ընտրատարածքից: Հետագայում ընդունված «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» ՀՀ օրենքը (4 ապրիլի, 1995 թ.) պահպանեց այդ համամասնությունը:

¹⁶ «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» 1995 թ. ապրիլի 4-ի օրենքը պահպանեց այս կարգը: Մեծամասնական ընտրական համակարգով պատգամավորության թեկնածուն առաջադրվում էր 500-700 ընտրողների ստորագրությամբ, իսկ ցուցակով՝ 10000-12000 ընտրողների ստորագրությամբ (տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), ՀՀ Գերագույն խորհուրդ, Եր., 1995 թ., էջ 851, հոդվ. 20):

¹⁷ Տե՛ս «ՀՀ ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 1990թ. հոկտեմբերի 17-ի օրենքը, ՀՀ 1990 թ. հոկտեմբերի 17-ի օրենքը «ՀՀ Սահմանադրության (հիմնական օրենքի) 85 հոդվածում լրացում կատարելու մասին», ՀՀ 1990 թ. նոյեմբերի 14-ի օրենքը «ՀՀ ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ օրենքի 45, 51 և 52 հոդվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» //Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), ՀՀ Գերագույն խորհուրդ, Երևան, 1995 թ., էջեր 14-22, 41-43:

վորների տեղական, գյուղական, ավանային, քաղաքային, քաղաքի շրջանային խորհուրդների ընտրական հարաբերությունները: Դրանցով ներմուծված սկզբունքային նորամուծություններից էին տեղական խորհուրդների ընտրության կրկնակի ընտրությունների ինստիտուտի ամրագրումը¹⁸, պատգամավորների (նաև Գերագույն խորհրդի) թեկնածուների անձեռնմխելիության սահմանումը¹⁹, մի շարք այլ հարաբերություններ²⁰:

Անմիջական ժողովրդաիշխանության ձևերից մեկի՝ տեղական հանրաքվեի ինստիտուտին էր վերաբերում 1990թ. հոկտեմբերի 17-ի «ՀՀ ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» օրենքի 6-րդ հոդվածը, որը, սահմանելով տեղական խորհուրդների պատգամավորների լիազորությունների միասնական 5-ամյա ժամկետ, սահմանում էր նաև այդ խորհուրդների պատգամավորների արտահերթ ընտրության հնարավորություն՝ երեք հիմքերով, որոնցից մեկն էլ հետևյալն էր. «խորհրդի տարածքի ընտրողների ընդհանուր թվի առնվազն 30 տոկոսի նախաձեռնությամբ՝ հանրաքվեի արդյունքների հիման վրա»²¹: Սա, փաստորեն, յուրահատուկ տեղական հանրաքվե էր, որը քաղաքական-իրավական գրականության մեջ կոչվում է վստահության հանրաքվե²²: Սակայն ՀՀ իրավական համակարգում այն մնաց չկենսագործված, որովհետև օրենքով

¹⁸ Տե՛ս ՀՀ 1990թ. նոյեմբերի 14-ի օրենքը «ՀՀ ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ օրենքի 45, 51 և 52 հոդվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» //Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), ՀՀ Գերագույն խորհուրդ, Երևան, 1995թ., էջեր 41-43:

¹⁹ Տե՛ս «ՀՀ Գերագույն խորհրդի մասին» և «ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 1994թ. ապրիլի 26-ի օրենքը //Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), ՀՀ Գերագույն խորհուրդ, Երևան, 1995 թ., էջ 695:

²⁰ Տե՛ս «ՀՀ պատգամավորների քաղաքային, քաղաքի շրջանային խորհրդի մասին», «ՀՀ պատգամավորների շրջանային խորհրդի մասին» և «ՀՀ պատգամավորների տեղական խորհուրդների պատգամավորների ընտրությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 1994թ. ապրիլի 26-ի ՀՀ օրենքը, «ՀՀ պատգամավորների շրջանային խորհրդի մասին», «ՀՀ պատգամավորների քաղաքային, քաղաքի շրջանային խորհրդի մասին», «ՀՀ պատգամավորների ավանային, գյուղական խորհրդի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ և փոփոխությունների կատարելու մասին» 1994թ. հոկտեմբերի 18-ի ՀՀ օրենքը //Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), ՀՀ Գերագույն խորհուրդ, Եր., 1995 թ., էջեր 696-697, 776-777:

²¹ Երկու այլ հիմքեր էին տվյալ խորհրդի պատգամավորների 2/3 մեծամասնությամբ ընդունված որոշումը, ինչպես նաև վարչատարածքային փոփոխությունների հետ կապված դեպքերը:

²² Հանրաքվեների դրվող հարցերի շրջանակից ելնելով՝ տեսաբանները դրանք բաժանում են իրավաստեղծ (սահմանադրական և օրենսդրական) և այլ հարցեր լուծող հանրաքվեների (տե՛ս **Комарова В.В.** Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. - М., 1995.- էջ 72):

տեղական հանրաքվեի իրավական կարգավորումը կատարվեց միայն 2002թ.: Այսինքն՝ հանրաքվեի միջոցով տեղական ընտրովի մարմինների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը դեկլարատիվ օրենսդրական դրույթ էր:

Օրենսդրական փոփոխությունների նորմատիվ բովանդակության վերլուծությունը ցույց տվեց, որ ի սկզբանե ներկայացված ժողովրդաիշխանությունն իրականություն դարձնելու քաղաքական կամքը և ցանկությունն աստիճանաբար մարեցին, և չնայած հռչակված ժողովրդաիշխանական կառավարմանն անցնելու կարգախոսներին, իրավական համակարգում չարմատավորվեց անմիջական ժողովրդաիշխանության ձևերի որոշակիորեն օպտիմալ շրջանակ, որը կհակակշռեր պետական ներկայացուցչական կառավարմանը, ժողովրդին իրականում մասնակից կդարձներ քաղաքական-հասարակական գործընթացներին:

Իշխանության նման գործելակերպը բերում է համոզման, որ այն գործում էր ոչ թե ժողովրդավարական արդիականացման ազատական ուղու հայեցակարգով, այլ պահպանողական ուղղության: Դրա հիմնադիրներից Մ. Հանթինգթոնը գտնում էր, որ քաղաքական ինստիտուտների արդիականացվածությունը կապված չէ դրանց ժողովրդավարացման մակարդակի հետ, այլ կախված է կայունությունից ու կազմակերպվածությունից²³:

Այսպիսով, Ղարաբաղյան շարժման ընթացքում ձևավորված բնակչության հավաքագրման ու ընդգրկվածության բարձր աստիճանն արդեն իշխողների համար վերածվեց բացասական գործոնի, քանի որ այն մրցակցում, բախվում էր գոյություն ունեցող քաղաքական կառավարման պետական ինստիտուտների հետ: Ռ.Տ. Մուխանն այսպիսի իրավիճակը գնահատում է որպես բախում (կոնֆլիկտ) մի կողմից բնակչության հավաքագրվածության, քաղաքական կյանքում նրա ընդգրկվածության, իսկ մյուս կողմից՝ ինստիտուտացման, շահերի հաշվառման ու կուտակման անհրաժեշտ կառույցների ու կառուցակարգերի միջև: «Այս իրավիճակում զանգվածների անպատրաստվածությունը կառավարմանը, իշխանության ինստիտուտների օգտագործման անկարողությունը, հետևաբար նրանց քաղաքական կյանք ընդգրկվելու սպասումների անիրականալիությունը նպաստում են քաղաքական վարչաձևի ապա-

²³ Տե՛ս **Huntington Samuel P.** Political Order in Changing Societies. New Haven: Yale University Press, 1968.

կայունացմանը»²⁴ : Այս բախման, կոլիզիայի լուծման տարբերակը պահպանողականները տեսնում են ժողովրդաիշխանության ձևերի չափավորման, նորմավորման մեջ, իսկ ազատականները՝ ժողովրդաիշխանությունն ընդլայնելու և իրական դարձնելու մեջ: Քանի որ ընթացիկ օրենսդրական վերլուծություն հաստատեց իշխանությունների չափավորությունն ու զգուշավորությունը ժողովրդաիշխանության նկատմամբ՝ ընդհուպ մինչև 1995թ., երբ նույնիսկ Սահմանադրության ընդունումը պատկերացվում էր խորհրդարանի կողմից, ուրեմն կարող ենք եզրակացնել, որ Հայաստանում իշխանությունների գործելակերպն ավելի շատ պահպանողական էր, քան ազատական-ժողովրդավարական:

Արդյունքում բոլոր տեսակի կարևոր քաղաքական որոշումներն ընդունվեցին պետական կառավարման ներկայացուցչական համակարգի միջոցով՝ առանց անմիջական ժողովրդաիշխանության ձևերի օգտագործման: Ներկայացուցչական այդ համակարգն իր հիմքով խորհրդային պետական կառավարման համակարգն էր՝ հագեցված իշխանությունների բաժանման սկզբունքով²⁵: 1991թ. նոյեմբերին ընդունվեց «ՀՀ Գերագույն խորհուրդի մասին» օրենքը, որի 1-ին հոդվածը սահմանում էր. «Գերագույն խորհրդը մշտապես գործող մարմին է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը և օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ»: 1991թ. հունիսին Գերագույն խորհուրդը որոշեց հիմնել ՀՀ պրեզիդենտի պաշտոն և տարվա վերջին անցկացնել պրեզիդենտի ընտրություններ: 1991թ. օգոստոսին Գերագույն խորհուրդը ընդունեց ՀՀ օրենքը «ՀՀ նախագահի մասին», ըստ որի Հանրապետության նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն էր և գլխավորում էր հանրապետության գործադիր իշխանությունը²⁶: Նախագահի ինստիտուտի հիմնադրմամբ նախադրյալներ ստեղծվեցին ապագա ինքնակալական ռեժիմի համար: Ժողովրդից ստանալով իշխանությունը՝ նոր իշխողներն անտեսեցին ժողովրդին:

²⁴ Տե՛ս **Мухаев Р.Т.** Теория политики. - М.: ЮНИТИ-ДАНА, 2005. - էջ 468:

²⁵ Այդ սկզբունքի կենսագործումը համարվում է նշված շրջանի սահմանադրական-օրենսդրական բարեփոխումների ուղղություններից մեկը (տե՛ս Մարդկային զարգացման հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ մագիստրոսների համար, Եր., Նոյյան Տապան, 2004, էջեր 239-240):

²⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), ՀՀ Գերագույն խորհուրդ. - Եր., 1995, /ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին», (1 օգոստոսի, 1991 թ.), ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին» (2 օգոստոսի, 1991 թ.), էջեր 158-162, 163-173:

20-րդ դարի վերջում Հայաստանում արտաքին քաղաքական ներգործությունը դարձավ հասարակական-քաղաքական համակարգի ընտրության գրեթե միակ գործոնը, որի արդյունքում ազատական շուկայական ժողովրդավարությունն ընտրվեց որպես արդիականացման միակ ուղի: Անկախության հռչակագրի ընդունմամբ և ազատական ժողովրդի անբաժան ու անօտարելի իշխանության մոդելը որպես ուղենիշ ընտրելով՝ պետության գլխավոր խնդիրը դարձավ անմիջական և ներկայացուցչական ժողովրդավարության միջև հավասարակշռության հաստատումը, որը քաղաքական կայունության երաշխիք է: Սակայն, ի սկզբանե առաջադրված քաղաքական նպատակներն աստիճանաբար մարեցին, և իրավական համակարգում չարմատավորվեց ժողովրդաիշխանության անմիջական ձևերի նախընտրելի տարբերակը: Իշխանությունը ընտրել էր ոչ թե ժողովրդավարական արդիականացման ազատական, այլ պահպանողական ուղու հայեցակարգը: Այս ամենի արդյունքն է ժողովրդաիշխանության ձևերի հավասարակշռված համակարգի ստեղծումը և պետական ներկայացուցչական կառավարման միջոցով քաղաքական բոլոր կարևոր որոշումների ընդունումը: Նախագահի ինստիտուտի ներդրմամբ նախադրյալներ ստեղծվեցին ապագա ինքնակալական համակարգի համար:

Роза АБАДЖЯН

Соискатель кафедры теории и истории
государства и права юридического факультета ЕГУ

ПРОВОЗГЛАШЕНИЕ НЕЗАВИСИМОСТИ И ВЫБОР ОСНОВОПОЛАГАЮЩЕГО КОНСТИТУЦИОННОГО ПУТИ ПОЛИТИЧЕСКОГО РАЗВИТИЯ РА

В конце XX века единственным фактором выбора общественно-политического строя в Армении стало внешнеполитическое воздействие, вследствие чего либерально-рыночная демократия стала единственным путем модернизации. С принятием Декларации независимости и взятием за ориентир либеральной модели неотъемлемой и неотчуждаемой власти народа главной задачей государства стало создание сбалансированной системы непосредственной и предста-

вительной форм демократии, что является гарантией политической стабильности. Однако изначально проявленные политические намерения постепенно утасли, и в политической системе не укоренились эффективные формы непосредственной демократии. Власти не придерживались либеральной концепции демократической модернизации, а следовали по консервативному пути. Результатом этого стало создание сбалансированной системы форм демократии и принятие всех важных политических решений государственного представительного правления. С учреждением института Президента появились предпосылки будущей авторитарной системы.

Rose ABAJIAN

Postgraduate at the Chair of Theory and History
of State and Law, Faculty of Law, YSU

THE DECLARATION OF INDEPENDENCE OF THE
REPUBLIC OF ARMENIA AND THE SELECTION OF THE
INSTITUTIONAL-CONSTITUTIONAL COURSE OF POLITICAL
DEVELOPMENT: FACTORS AND OUTCOMES

At the end of the 20th century, foreign-political influence became almost the only factor of the selection of the public-political system in Armenia, as a result of which liberal market democracy was chosen as the only way of modernization. By adopting the Declaration of Independence and selecting the indivisible and inalienable power of the liberal people as a benchmark, the main task of the state became the establishment of a balance between direct and representative democracy, which serves as a guarantee of political sustainability. However, the initial political objectives gradually extinguished, and a favorable option for immediate forms of democracy did not entrench in the legal system. The government chose the conservative way of democratic modernization but not the liberal concept. This results in the formation of a balanced system of forms of democracy and adoption of all political decisions through representative and state governance. With the introduction of the institution of the president, preconditions were created for the future autocratic system.

Վալերի ՊՈՂՈՍՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Սահմանադրություն» հասկացությունը սովորաբար առաջին հերթին ընկալվում է իբրև «պետության սահմանադրություն» իմաստով: Սակայն դրանից զատ, սահմանադրություն հասկացությունը հաճախ գործածվում է նաև ավելի լայն առումով: Այդ մասին են վկայում «ձիու սահմանադրություն», «նվազախմբի սահմանադրություն», «Հայոց ազգային սահմանադրություն», «հոգեւոր սահմանադրություն» եւ գիտության մի շարք այլ բնագավառներում օգտագործվող համապատասխան արտահայտությունները: Մասնավորապես «ձիու սահմանադրություն» արտահայտությունը օգտագործել են պրոֆեսորներ Պ.Ն. Կուլեշովը, Ե.Ա. Բոգդանովը, ակադեմիկոս Մ.Ֆ. Իվանովը եւ ուրիշներ: Բացի այդ օգտագործվում են նաև «կովի կոնստիտուցիա», «շան կոնստիտուցիա» եւ այլն: Որքան տեղյակ եմ, արդի հայերենում նշված արտահայտություններն օգտագործվել են «ձիու կոնստիտուցիա» ձևով: Այսինքն, հայերենում խուսափել են «սահմանադրություն» հասկացության գործածումից, ինչը նշանակում է, որ հայերենում սահմանադրություն եզրույթը այլ իմաստներով չի ընկալվել: Այսինքն «կոնստիտուցիա» բառը ընկալվել է զուտ նեղ առումով: Մի շարք լեզուներում ֆրանսերեն (constitution du cheval), անգլերեն (Horse Constitution), ռուսերեն (конституция лошади) եւ այլն, «կոնստիտուցիա» բառն ունի նաև «մարմնակազմություն» իմաստը: «Նվազախմբի սահմանադրություն» ձեւակերպումը տրվել է 1842թ. Նյու Յորքի սիմֆոնիկ նվազախմբի ստեղծման հիմնարար փաստաթղթին: Ինչ վերաբերում է «հոգեւոր սահմանադրություն» արտահայտությանը՝ այն օգտագործել է Հռոմի պապ Ֆրանցիսկոսը, ով Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը բնութագրել է իբրև «հայ ժողովրդի հոգեւոր սահմանադրություն»: Համանման բնորոշում է տրվել նաև կոնֆուցիականությանը իբրև «չինական հոգեւոր սահմանադրություն»:

Բնականաբար հարց է առաջանում, թե այս ամենատարբեր արտահայտություններն ինչու են բնութագրվում նույն հասկացությամբ եւ ինչն է դրանք միավորում: Նկատի ունենալով սահմանադրության վերաբերյալ ամենաընդհանուր եւ ինտուիտիվ պատկերացումները՝ դժվար չէ կռահել, որ բոլոր այս դեպքերում էլ խոսքը վերաբերում է օբյեկտների կազմակերպմանը, ամբողջի մասերի որոշակի համամասնությանը, ուժերի հավասարակշռմանը եւ ներդաշնակ ու բնական միավորմանը մի ամբողջության մեջ, անկախ այն բանից օբյեկտն ունի նյութական, թե ոչ նյութական, հոգեւոր բնույթ: Մի դեպքում նշված ներդաշնակությունը վերաբերում է կոնկրետ առարկայի, այսինքն՝ նկարագրում և դասակարգում է ձիերին ըստ որոշակի հատկանիշների: Մակայն միաժամանակ հարց է առաջանում, թե ինչու հատկապես «սահմանադրություն», այլ ոչ պարզապես մարմնակազմություն կամ մի որեւէ այլ տերմին: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այդպիսի մոտեցումը, թերեւս, բացատրվում է այն հանգամանքով, որ 17-18-րդ դարերում նյութոսոփիան դասական մեխանիկայի ազդեցությամբ ձեւավորված աշխարհայացքային պատկերացումների շրջանակներում «սահմանադրություն» հասկացությունն ընկալվել է որպես բնական օրենքի դրսեւորում. «այնպես ինչպես Արեգակն է ենթարկվում բնական օրենքներին, այնպես էլ միապետը պետք է ենթարկվի բնական օրենքին՝ սահմանադրությանը»:

Կարծում ենք՝ հենց այդ «բնականությունն» էլ հանգեցրել է սահմանադրության հասկացության այդպիսի ընկալմանը:

Մասնավորապես, «հոգեւոր սահմանադրության» դեպքում նույնպես դերակատարություն է ունեցել այդպիսի բնականության դրսեւորումը, եւ այդ հանճարեղ ստեղծագործությունը ընկալվում է որպես ազգային հոգեւոր-բարոյական բաղադրիչների, հատկանիշների մի ներդաշնակություն, որով տվյալ ազգը առանձնանում է իր ինքնությամբ:

«Պետության սահմանադրության» դեպքում նույնպես այն առանձնանում է որպես մարդկանց քաղաքական կազմակերպության առանձին բաղադրիչների ներդաշնակ ամբողջականություն: Մակայն «պետության սահմանադրությունն», ի տարբերություն մյուսների, բնականաբար, ունի որոշակի առանձնահատկություններ: Բանն այն է, որ եթե մի դեպքում սահմանադրության հասկա-

ցությունն օգտագործվում է առկա երևույթի բնականությունը նկարագրելու համար, ապա մյուս դեպքում մարդկային հանրությունը նպատակադրված է ստեղծել հասարակական այնպիսի իրողություն, որի բաղադրիչների ներդաշնակ ամբողջությունը կապահովի հասարակական, սոցիալական, քաղաքական համաձայնության և կայուն զարգացման ապահովություն: Հենց այս հիմնախնդրի լուծմանն էլ ուղղված է սահմանադրության գաղափարի, իսկ ապա նաև հասկացության ներմուծումը: Եվ որպեսզի սահմանադրությունը կարողանա արդարացնել սպասումները, անհրաժեշտ է սահմանադրության լեգիտիմացման նպատակով այն օժտել որոշակի «արտոնություններով»: Դրանցից է, օրինակ՝ սահմանադրության ընդունման որոշակի կարգի սահմանումը, երբ միապետին փոխարինելու է գալիս ժողովուրդը, իսկ միապետի կամքին՝ ժողովրդի ձայնը՝ «ձայն բազմաց, ձայն Աստծո» սկզբունքով: Այսպիսի մոտեցումն էլ հնարավորություն է տալիս սահմանադրությամբ հաստատել խաղի որոշակի կանոններ, որոնք դառնում են ընդունելի և պարտադիր սահմանադրական բոլոր իրավասուբյեկտների, այդ թվում՝ քաղաքական ուժերի համար:

Սահմանադրության նշված հատկանիշներն, իհարկե, դեռևս բավարար չեն սահմանադրության ամբողջական բնորոշման համար, սակայն հասարակական գիտակցության մեջ նման պատկերացումներն ընկալվում են արդեն իբրև սահմանադրական, այսինքն՝ որոշակի առումով սահմանադրությանը համապատասխանող:

Կարծում եմ՝ հենց այս հանգամանքն էլ հիմք է ծառայել, որ պրոֆեսոր Գ. Հարությունյանը, իր «Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» (Երևան, 2016) հիմնարար մենագրությունում ուսումնասիրելով հայ մատենագրության մեջ հաճախ օգտագործվող սահմանադրության հասկացության եզրույթը, իրավացիորեն հանգում է այն եզրակացությանը, որ սահմանադրական մոտեցում է ցուցաբերվել հասարակական, այդ թվում՝ իրավական հարաբերությունները կանոնակարգելիս:

Նման եզրակացության համար հիմք են ծառայել ազգային-եկեղեցական ժողովները: Ընդ որում, ուշագրավ է այն հանգամանքը, որ դրանք հրավիրվել են ոչ թե մեկ-երկու անգամ, այլ դարեր շարու-

նակ, սկսած 365թ. Աշտիշատի ժողովից և իրականացվել են ոչ միայն պետականության պայմաններում, այլև դրա կորստի դեպքում: Այդ ժողովները հրավիրել են ինչպես թագավորները, այնպես էլ կաթողիկոսները: Այդ ժողովներին մասնակցել են հասարակության եւ կրոնական, եւ աշխարհիկ բոլոր խավերի ներկայացուցիչները, այդ պատճառով էլ այդ ժողովներում ընդունված կանոնները դարձել են ընդունելի և ընկալելի բոլորի համար և ստացել են համապարտադիր բնույթ: Հենց այսպիսի մոտեցումն էլ նկատի ունենալով պրոֆեսոր Հարությունյանը եզրակացնում է, որ հանձին ազգային-եկեղեցական ժողովների «գործ ունենք սահմանադիր ժողովների հետ» (նշված մենագրությունը, էջ 35):

Թերևս անհրաժեշտ է նաև հասկանալ, թե ինչով է պայմանավորված նշված սահմանադրական մոտեցումը հայ իրականությունում: Նման մոտեցումը չէր կարող լինել տարբեր հանգամանքների պատահական զուգադիպությունների արդյունք: Ակնհայտ է, որ նման մոտեցման համար անհրաժեշտ էր համապատասխան իրավական մտածողություն, ինչն էլ իր հերթին պայմանավորված էր նախորդ դարաշրջանից ստացված ժառանգությամբ և քրիստոնեական վարդապետության տարածմամբ:

Սահմանադրական այսպիսի մոտեցումը ճիշտ ըմբռնելու համար թերևս հարկ է անդրադառնալ «սահմանադրություն» հասկացությանը: Այս առումով հետաքրքիր է «Նոր Բաղդիքը Հայկազյան լեզուի» բացատրական բառարանում առկա «Սահմանադրություն» բառի բացատրությունը. «որոշումն սահմանաց և Տեսչութին վերին», որը վերոհիշյալ մենագրությունում հանգամանորեն վերլուծվել է: Ամբողջությամբ համաձայնելով նշված վերլուծությանը միաժամանակ ցանկանում ենք նշել մի քանի հանգամանք: Նախ կարծում ենք պետք է նկատի ունենալ, որ նման բացատրությունը ամփոփում և ընդհանրացնում է ձեռագիր մատյաններում դարեր շարունակ բազմիցս օգտագործված «սահմանադրություն» հասկացության ըմբռնումը և հիրավի այդպիսի ըմբռնումը միանգամայն համահունչ է վերը հիշատակված «հոգևոր սահմանադրության» հասկացությանը:

Երկրորդ՝ նշենք, որ տվյալ սահմանումը բաղկացած է երկու մասից՝ ա) «որոշումն սահմանաց», բ) «Տեսչություն վերին», որոնք միավորվում են «և» շաղկապով, այսինքն՝ սահմանադրությունը այդ

երկու մասի ամբողջությունն է և հասկանալի է, որ դրանք մեկը մյուսին լրացնում են և արտահայտում են սահմանադրության հասկացության բուն իմաստը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ իր ժամանակին օգտագործված այս կամ այն արտահայտությունը հարյուրամյակներ անց ենթարկվում է փոփոխության և միշտ չէ, որ համընկնում է նույն արտահայտության ներկայումս օգտագործվող իմաստին, ուստի ճշտելու համար «որոշումն սահմանաց» և «Տեսչութիւն վերին» գրաբարյան արտահայտությունների իմաստը, դիմեցինք մի շարք բառարանների: Մասնավորապես, ըստ «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» (Մ. Աւգերեան, Գ. Ճէլալեան, Վենետիկ, 1865) Սահմանադրությունը բնորոշվում է իբրև «կարգաւորութիւն, վճիռ»: «Գրաբարի հոմանիշների բառարան»-ում (Ռ. Ղազարյան, Անթիլիաս, 2006) իբրև Սահմանադրության հոմանիշներ նշվում են «կարգաւորութիւն, օրինադրութիւն, վճիռ», իսկ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»-ում (Երևան, 2000) Սահմանադրությունը սահմանվում է իբրև «սահմաններ դնելը՝ որոշելը, նշանակելը, սահմանված կարգ, օրինադրութիւն, վճիռ»: Ըստ Մտ. Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարանի» (հ.4, Ե., 1945, էջ 174, 405) «Սահմանք» նշանակում է սահմանված կարգեր:

Հետաքրքիր է նաև, որ 13-րդ դարի մի ձեռագիր մատյանում՝ «Գիրք վաստակաց» (Վենետիկ, 1877) հանդիպում ենք «սահմանք ձիոյ, գրաստնոյ» արտահայտությանը՝ նրանց խնամելու, պահելու կարգը իմաստով: Միաժամանակ նշենք, որ Միջնադարում սահմանադրության հասկացությունն ունեցել է նաև կետ, կետահարություն, կարգավորություն, վճիռ և մի շարք այլ իմաստներ:

Նշված փաստերը վկայում են այն մասին, որ ըստ էության մինչև օրս բացահայտված չէ «սահմանադրություն» հասկացության միջնադարյան ամբողջական բովանդակությունը, դրա առանձին նրբերանգները և հետևաբար կարիք ունի լուրջ ուսումնասիրության: Միաժամանակ պարզ է դառնում, որ սահմանադրության վերաբերյալ նախկինում եղած պատկերացումները միշտ չէ, որ համապատասխանում են ներկայիս պատկերացումներին: Այս ամենի հետ մեկտեղ կարծում ենք կարելի է այնուամենայնիվ ենթադրել, որ միջնադարում «սահմանադրություն» հասկացությունն օգտագործվել է ավելի լայն առումով և, մասնավորապես, այն արտահայտել

է օբյեկտների օրգանական ամբողջությունը, նշանակել է այնպիսի ներդաշնակություն, որը հատուկ է աստվածային (բնական) օրգանական երևույթներին, ինչ-որ բացակայում է մեր ներկա ընկալումներում:

Այսինքն, Հայկազյան բառարանի բնորոշման աշխարհաբար տարբերակը հետևյալն է. «կարգերի որոշում և վերին աստվածային հսկողություն»: Կարճ ասած՝ սահմանադրությամբ հաստատվում է որոշակի կարգ, որը ենթակա է միայն վերին՝ բարձրագույն հսկողության, այլ կերպ ասած, եթե օգտագործենք ներկայիս տերմինաբանությունը, սահմանադրությունը վերածվում է «հիմնական օրենքի»:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ սահմանադրության հասկացության այսպիսի լայն ըմբռնումը հայ իրականությունում դարձավ սահմանադրական մոտեցման հաստատման հիմք և կարելի է պնդել, որ նպաստեց սահմանադրականության և սահմանադրական մշակույթի արմատավորմանը: Եվ ամենևին պատահական չէր, որ Շ. Շահամիրյանը՝ իբրև այդ ամենի ժառանգորդ, ստեղծեց իր հանրահայտ «Որոգայթ փառաց»-ը, որը պետք է դառնար ինքնիշխան Հայաստանի Սահմանադրությունը: Չքննարկելով Շահամիրյանի ստեղծագործությունը՝ նշենք միայն, որ միայն այդ երկի վերնագիրը արտահայտում է «պետության սահմանադրություն» հասկացության բուն իմաստը, և ըստ էության այն սահմանադրության հասկացության էության փայլուն բնորոշումն է՝ «Սահմանադրություն, նշանակում է որոգայթ փառաց», այսինքն՝ սահմանադրությունը իշխանությունների սահմանափակման միջոց է:

Խոսելով հայ իրականությունում սահմանադրական զարգացումների մասին՝ չի կարելի չնշել այնպիսի մի երևույթի մասին, ինչպիսին է **Սահմանադրական շարժումը**, որը ձևավորվեց 19-րդ դարի 40-60-ական թվականներին, և որի արդյունքում Թուրքիայի կառավարությունը 1863թ. վավերացրեց հայոց «Ազգային Սահմանադրությունը» (մանրամասները տես՝ *Погосян В.В. Феномен конституции в Армянской политико-правовой мысли, Конституционное правосудие*, 2000, N 4):

Անդրադառնալով հայ իրականությունում սահմանադրական զարգացումներին՝ բնականաբար հարց է առաջանում, թե ինչու ներ-

կայումս մեզանում դեռևս բացակայում է Սահմանադրության նկատմամբ պատշաճ վերաբերմունքը և չի ձևավորվում սահմանադրականություն և սահմանադրական մշակույթ: Կարծում ենք՝ այդ հարցի պատասխանը միանշանակ է. Հայաստանի բազմամյա կախյալ վիճակը, ինչպես նաև Սովետական Հայաստանում տիրապետող մարքս-լենինյան գաղափարախոսությունը և սովետական կարգերը խաթարեցին սահմանադրական զարգացումների բնական ընթացքը: Մակայն Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո աստիճանաբար սկսվում է աճել հետաքրքրությունը սահմանադրության նկատմամբ, մասնավորապես ուշադրության կենտրոնում են հայտնվում հայ իրականությունում սահմանադրական զարգացումները, ինչի վկայությունն են ՀՀ սահմանադրական դատարանի, «Սահմանադրական իրավունք» հասարակական կազմակերպության կողմից Երևանում կազմակերպվող ամենամյա միջազգային խորհրդածողովները, «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի ստեղծումը, պատմական ժառանգության հետազոտման վերաբերյալ բազմաթիվ տեսական ու վերլուծական մենագրություններն ու հոդվածները և այլն:

Շնորհակալություն եմ հայտնում բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Դիլբարյանին, ով մեծապես օգնեց գրաբարյան տեքստերի ճիշտ լուսաբանման հարցում և ծանոթացրեց մի շարք աղբյուրների:



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-ԻՆ ՄԻՆԳԱՊՈՒՐՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՆԳԱՊՈՒՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ Ս. Ավետիսյանի,

համաձայն Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հուլիսի 12-ին Սինգապուրում ստորագրված՝ Օդային հաղորդակցությունների մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև համաձայնա-

գրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի փետրվարի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Օդային հաղորդակցությունների մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Մինգապուրի Հանրապետության կառավարության միջև համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017թ. հուլիսի 12-ին՝ Մինգապուրում: Համաձայնագրի նպատակն է խթանել միջազգային ավիացիոն համակարգը, նպաստել միջազգային օդային հաղորդակցությունների հնարավորությունների ընդլայնմանը, հնարավոր դարձնել հանրությանն առաջարկվող զբոսաշրջության և փոխադրողների ծառայությունների տարբերակների բազմազանությունը, խրախուսել մասնավոր ավիաընկերություններին մշակել և կիրառել նորարարական և մրցակցային սակագներ, ինչպես նաև միջազգային օդային հաղորդակցություններում երաշխավորել թռիչքային և ավիացիոն անվտանգության բարձրագույն մակարդակ:

2. Համաձայնագրով, մասնավորապես, տրվում են Համաձայնագրի նպատակների համար կիրառվող հասկացությունների սահմանումները (հոդված 1), սահմանվում են Պայմանավորվող կողմերին վերապահված իրավունքները (հոդվածներ 2-4), օրենքների և կանոնակարգերի կիրառման հետ կապված կարգավորումները (հոդված 5), ուղիղ տարանջման և վկայականների ու լիցենզիաների ճանաչման վերաբերյալ դրույթները (հոդվածներ 6 և 7), ավիացիոն ապահովության և անվտանգության հետ կապված դրույթները (հոդվածներ 8 և 9), օգտագործման համար վճարները և մաքսատուրքերը (հոդվածներ 10 և 11), արդար մրցակցության, սակագներին և եկամուտների փոխանցմանը վերաբերող դրույթները (հոդվածներ 12-15), առևտրային գործունեությունը և համագործակցային կարգավորումները (հոդվածներ 16 և 17) և այլն:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Մինգապուրի Հանրապետության կողմից նշանակված ավիաընկերություններին միջազգային օդային հաղորդակցությունների իրականացման հետ կապված իրավունք վերապահել իր տարածքի վրայով կատարել առանց վայրէջքի թռիչք, իր տարածքում վայրէջք կատարել ինչպես ոչ առևտրային նպատակով, այնպես էլ սահմանված երթուղու կետում ուղևորներին, ուղեբեռը, բեռը և փոստն օդանավ վերցնելու և օդանավից իջեցնելու նպատակով (հոդված 2, կետ 1),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության այն օրենքները և կանոնակարգերը, որոնք կարգավորում են միջազգային օդային հաղորդակցություններում ներգրավված օդանավի ՀՀ տարածք մուտք գործելը և այնտեղից մեկնելը կամ ՀՀ տարածքում գտնվելիս օդանավի նավիգացիան և շահագործումը, կիրառվեն Մինգապուրի Հանրապետության նշանակված ավիաընկերությունների նկատմամբ (հոդված 5, կետ 1),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության այն օրենքները և կանոնակարգերը, որոնք կարգավորում են ուղևորների, անձնակազմի և բեռի, ներառյալ փոստը, ՀՀ տարածք մուտք գործելը, այնտեղ գտնվելը և մեկնումը այնտեղից, ինչպիսիք են իմիգրացիոն, մաքսային, տարադրամային, առողջապահական և կարանտինային կանոնակարգերը, ՀՀ տարածքում գտնվելիս կիրառվեն Մինգապուրի Հանրապետության նշանակված ավիաընկերությունների օդանավերով փոխադրվող ուղևորների, անձնակազմի, բեռի և փոստի նկատմամբ (հոդված 5, կետ 2),

- ուղիղ տարանցմամբ փոխադրվող ուղեբեռները և բեռները ազատել մաքսատուրքերից և նմանատիպ այլ հարկերից (հոդված 6),

- դիմում ստանալու դեպքում Մինգապուրի Հանրապետությանը տրամադրել ողջ անհրաժեշտ աջակցությունը՝ կանխելու համար օդանավերի ապօրինի գավթման գործողությունները և քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք (հոդված 9, կետ 3),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության տարածքում օդանավի բեռնումից առաջ, բեռնման կամ ուղևորների նստեցման ընթացքում պատշաճ միջոցառումներ իրականացվեն օդանավի պաշտպանության և օդանավի բեռնման և նստեցման ընթացքում ուղևորների, անձնակազմի, ձեռքի իրերի, ուղեբեռի, բեռի և օդանավի պաշարների ստուգման համար, ինչպես նաև բարյացակամորեն քննության առնել Մինգապուրի Հանրապետության ցանկացած դիմում որոշակի սպառնալիքի արձագանքելու՝ անվտանգության հիմնավորված հատուկ միջոցառումների վերաբերյալ (հոդված 9, կետ 5),

- ապահովել, որպեսզի Մինգապուրի Հանրապետության նշանակված ավիաընկերությունների նկատմամբ չկիրառվի կամ չթույլատրի, որ կիրառվեն օգտագործման համար ավելի բարձր վճարներ, քան օգտա-

գործման համար այն վճարները, որոնք կիրառվում են նմանատիպ միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող իր սեփական ավիաընկերությունների նկատմամբ (հոդված 10, կետ 1),

- Մինգապուրի Հանրապետության նշանակած ավիաընկերությանն առավելագույն չափով ազատել մաքսատուրքերից, ակցիզային հարկերից, գննության վճարներից և այլ ազգային տուրքերից և գանձումներից, որոնք կիրառվում են օդանավերի, վառելիքի, վերգետնյա սարքավորումների, քայուղերի, սպառվող տեխնիկական պաշարների, պահեստամասերի, ներառյալ շարժիչները, օդանավի հիմնական սարքավորումները, օդանավի պաշարների նկատմամբ, ներառյալ սննդամթերքը, ըմպելիքները, խմիչքը և ծխախոտը, որոնք սահմանափակ քանակությամբ վաճառվում կամ օգտագործվում են ուղևորների կողմից չվերթի ընթացքում (հոդված 11, կետ 1),

- Հայաստանի Հանրապետությունում գործող մրցակցային օրենքներին համապատասխան Մինգապուրի Հանրապետության նշանակած ավիաընկերություններին տրամադրել համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման արդար և հավասար պայմաններ (հոդված 12),

- Մինգապուրի Հանրապետության նշանակված ավիաընկերությանն իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքում տեղական ծախսերը, ներառյալ վառելիքի համար ծախսերը, վճարել տեղական արժույթով կամ իր ընտրությամբ՝ այդ ծախսերի դիմաց վճարել ազատ փոխարկելի արժույթով՝ համաձայն ՀՀ արժութային կանոնակարգերի (հոդված 16, կետ 4),

- Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված տարաձայնությունների ծագման դեպքում առաջին հերթին փորձել դրանք կարգավորել խորհրդակցությունների միջոցով կամ դիվանագիտական ուղիներով, իսկ նման կարգավորման անհնարինության դեպքում դրանց լուծումն իրականացնել Համաձայնագրի 21-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում և կարգով (հոդված 21):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն Համաձայնագրով ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածի պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հուլիսի 12-ին Սինգապուրում ստորագրված՝ Օդային հաղորդակցությունների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության և Սինգապուրի Հանրապետության կառավարության միջև համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

27 մարտի 2018 թվականի
ՄԴՈ-1409



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱԶԻԿՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՕԴԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑՄԱԸ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 մարտի 2018թ.

4(92)/2018

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՊԻՐ ♦

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ Ս. Ավետիսյանի,

համաձայն Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հունիսի 14-ին Երևանում ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 27.02.2018թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի հունիսի 14-ին Երևանում՝ Կողմերի համապատասխան տարածքների միջև և դրանց սահմաններից դուրս կանոնավոր օդային հաղորդակցություն հաստատելու նպատակով:

Համաձայնագրին կից ներկայացված է Հավելված, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության նշանակված ավիաընկերությունների կողմից շահագործվող երթուղիները:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- տաջիկական Կողմին տրամադրել Համաձայնագրով նախատեսված իրավունքներ՝ Համաձայնագրի հավելվածով սահմանված երթուղիներով միջազգային օդային հաղորդակցություններ հաստատելու նպատակով (այսուհետև, համապատասխանաբար՝ «համաձայնեցված հաղորդակցություններ») և «սահմանված երթուղիներ»),

- ապահովել, որպեսզի տաջիկական Կողմի նշանակված ավիաընկերությունը սահմանված երթուղիներում համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելիս օգտվի Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված իրավունքներից,

- ապահովել, որպեսզի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ծանուցում ստանալուն պես ՀՀ ավիացիոն իշխանությունները, Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի դրույթներին համապատասխան, յուրաքանչյուր նշանակված ավիաընկերության անմիջապես տրամադրեն թռիչքների կատարման համապատասխան թույլտվություն,

- երաշխավորել ՀՀ օրենքների, կանոնների և ընթացակարգերի, որոնք կարգավորում են միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող օդանավերի ՀՀ տարածք ժամանելը, այնտեղ գտնվելը և այն-

տեղից մեկնումը կամ այդ օդանավերի շահագործումը և նավիզացիան, կիրառումը տաջիկական Կոդմի նշանակված ավիաընկերությունների օդանավերի նկատմամբ,

- երաշխավորել ՀՀ միջազգային օդային հաղորդակցություններին վերաբերող օրենքների, կանոնների և ընթացակարգերի, որոնք կարգավորում են ուղևորների, անձնակազմի, ուղեբեռի, բեռի կամ փոստի՝ ՀՀ տարածք մուտք գործելը, այնտեղ գտնվելը և այնտեղից մեկնումը և, մասնավորապես, վերաբերում են մաքսային, արժույթային և սանիտարական կանոններին, երկիր մուտք գործելու, այնտեղից մեկնելու, էմիգրացիոն և իմիգրացիոն, ավիացիոն անվտանգությանն առնչվող ձևակերպումներին, կիրառումը տաջիկական Կոդմի նշանակված ավիաընկերությունների օդանավերով փոխադրվող ուղևորների, անձնակազմի, ուղեբեռի, բեռի կամ փոստի նկատմամբ ՀՀ տարածքում գտնվելու ընթացքում,

- Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված օրենքները և կանոնները կիրառելիս ՀՀ նշանակված ավիաընկերությանը չտրամադրել տաջիկական Կոդմի նշանակված ավիաընկերության նկատմամբ արտոնյալ իրավունք,

- ՀՀ և տաջիկական Կոդմի նշանակված ավիաընկերություններին տրամադրել համապատասխան տարածքների միջև սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման արդար և հավասար պայմաններ,

- թռիչքների համար պիտանիության վկայականները, որակավորման վկայականները և հավաստագրերը, որոնք տրվել են տաջիկական կողմի կողմից և վավեր են այդ պետության տարածքում, վավեր ճանաչել ՀՀ համար՝ համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման նպատակով՝ պայմանով, որ այն պահանջները, որոնց համապատասխան տրվել են այդպիսի վկայականները և հավաստագրերը համապատասխանում են Չիկագոյի կոնվենցիային համապատասխան սահմանված նվազագույն ստանդարտներին կամ գերազանցում են դրանք,

- տաջիկական Կոդմի նշանակված ավիաընկերությունների կողմից միջազգային փոխադրումների համար օգտագործվող օդանավերը, ինչպես նաև դրանց մշտական սարքավորումները, պահեստամասերը, ներառյալ շարժիչները, վառելիքի պաշարները, քսայուղերը և օդանավի պաշարները (այդ թվում՝ սննդամթերքը, խմիչքը), որոնք գտնվում են այդ օդանավերում, ՀՀ տարածք ժամանելուց ազատել բոլոր մաքսատուրքերից, ստուգման վճարներից և այլ տուրքերից ու հարկերից՝ պայմանով, որ այդ սարքավորումները և պաշարները կմնան օդանավում մինչև ՀՀ տարածքից մեկնելու պահը, ինչպես նաև այդպիսի մաքսատուրքերից, վճարներից և հարկերից, բացի մատուցված ծառայությունների դիմաց վճարներից, ազատել նաև Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշված նյութերը,

- ապահովել, որպեսզի ՀՀ նշանակված ավիարևակերությունը ոչ ուշ, քան թռիչքներն սկսելուց 45 (քառասունհինգ) օր առաջ տաջիկական Կողմի ավիացիոն իշխանությունների հաստատմանը ներկայացնի նախատեսվող չվացուցակը՝ նշելով չվերթերի հաճախականությունը, օդանավի տեսակը, ժամանակը, տեղերի տեղաբաշխվածությունը և քանակը, ինչպես նաև չվացուցակի գործողության ժամկետը,

- ապահովել, որպեսզի ուղևորները, ուղեբեռը և բեռը, որոնք փոխադրվում են ուղիղ տարանցմամբ ՀՀ տարածքով և չեն լքում օդանավակայանի՝ այդ նպատակի համար նախատեսված տարանցիկ, ստերիլ գոտին, ենթարկվեն միայն պարզեցված հսկողության, և ուղիղ տարանցմամբ փոխադրման դեպքում ուղեբեռը և բեռն ազատել մաքսատուրքերից և նմանատիպ այլ հարկերից,

- միջազգային իրավունքով նախատեսված ՀՀ իրավունքների և պարտավորությունների համաձայն՝ հաստատել անօրինական միջամտության գործողություններից քաղաքացիական ավիացիայի անվտանգությունն ապահովելու՝ տաջիկական կողմի նկատմամբ ՀՀ ստանձնած պարտավորությունը և առանց սահմանափակելու միջազգային իրավունքով նախատեսված ՀՀ ստանձնած իրավունքների և պարտավորությունների ընդհանուր կիրառելիությունը՝ գործել Համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետում նշված միջազգային պայմանագրերի դրույթների համաձայն, որոնց շրջանակներում համագործակցում են հայկական և տաջիկական Կողմերը,

- տաջիկական Կողմի խնդրանքով՝ տաջիկական Կողմին ցուցաբերել ողջ անհրաժեշտ աջակցությունը՝ կանխելու համար քաղաքացիական օդանավերի ապօրինի գրավման գործողությունները և օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմերի, օդանավակայանների և ակրոնավիզացիոն սարքավորումների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողությունները, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք,

- ապահովել, որպեսզի ցանկացած համաձայնեցված հաղորդակցությունում սակագները սահմանվեն՝ հաշվի առնելով բոլոր համապատասխան գործոնները, ներառյալ շահագործման ծախսերը, շահույթը և սահմանված երթուղու ցանկացած հատվածի համար այլ ավիարևակերությունների սակագները, և ապահովել, որպեսզի այդ սակագները սահմանվեն Համաձայնագրի 13-րդ հոդվածում սահմանված պայմանների համաձայն,

- տաջիկական Կողմի նշանակված ավիարևակերություններին, փոխադարձության սկզբունքով և ՀՀ մուտքի, բնակության, զբաղվածությանը վերաբերող օրենքներին և կանոններին համապատասխան, տալ հավասար հնարավորություններ՝ ՀՀ տարածքում բացելու իրենց ներկայացուցչությունները՝ անհրաժեշտ վարչական, տեխնիկական, առևտրային և գործառնական աշխատակազմով,

- տաջիկական Կողմի նշանակված ավիաընկերությունից չգանձել կամ չթույլատրել նրանից գանձել ավելի բարձր օգտագործողների վճարներ, քան նմանատիպ միջազգային հաղորդակցություն իրականացնող ՀՀ ավիաընկերություններից գանձված գումարն է,

- ամբողջովին կատարել միջնորդ դատարանի ցանկացած որոշում կամ վճիռ՝ այնքանով, որքանով այն համատեղելի է ՀՀ օրենսդրության հետ,

- հոգալ ՀՀ նշանակված դատավորի գործունեության հետ կապված ծախսերը, իսկ միջնորդ դատարանի այլ ծախսերը, ներառյալ ԻԿԱՕ-ի խորհրդի նախագահի Համաձայնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընթացակարգերի կատարման կապակցությամբ կատարած ծախսերը, կրել տաջիկական Կողմի հետ հավասար մասնաբաժնով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հունիսի 14-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

27 մարտի 2018 թվականի
ՄԴՈ-1410



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԷՍ ԴԻ ԷՅ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 221¹ -ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչներ Տ. Եգորյանի, Լ. Հակոբյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Վ. Դանիելյանի,

համաձայն Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Էս Դի Էյ Թրավել» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221¹-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Գործի քննության առիթը «Էս Դի Էյ Թրավել» ՍՊԸ-ի՝ 2017 թվականի նոյեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները, գործում առկա մյուս փաստաթղթերը, Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները և փաստարկները

Դիմողը վիճարկում է Օրենսգրքի՝ «Վերաքննիչ դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը» վերտառությամբ 221¹-րդ հոդվածը, համաձայն որի՝ «Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո»:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող հոդվածը հակասում է Սահմանադրության 1-ին, 3, 28, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75, 78, 79 և 80-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ առանց որևէ ողջամիտ և օբյեկտիվ պատճառների խտրական վերաբերմունք է դրսևորվում անձանց նկատմամբ՝ կախված այն հանգամանքից, թե որ ամսին է հրապարակվել կամ մատչելի դարձել նրանց շահերին առնչվող դատական ակտը: Այն անձինք, ովքեր վիճարկում են 31 օր ունեցող ամիսներին կայացված դատական ակտերը, առավել շահեկան դիրքում են գտնվում, քան նրանք, ովքեր անհրաժեշտություն ունեն վիճարկելու ավելի պակաս օրեր ունեցող ամիսներին հրապարակված կամ մատչելի դարձած դատական ակտերը:

Բացի դրանից, դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի երաշխավորում ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու միջոցով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի կենսագործումը:

Վիճարկվող դրույթում սահմանված մեկամսյա ժամկետը չի համապատասխանում նաև իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ յուրաքանչյուր դեպքում այդ ժամկետը տարբեր է օրերի քանակով:

Վիճարկվող դրույթի՝ իր նկատմամբ կիրառելիության մասով դիմողը նշում է, որ վճռաբեկ բողոքը ներկայացրել է վերաքննիչ դատարանի որոշումը հրապարակվելուց հետո՝ 29-օրյա ժամկետում, սակայն Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բաց է թողնվել օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը: Այնինչ, ըստ դիմողի, եթե դիմողի շահերին վերաբերող դատական ակտը հրապարակվեր հունվարին կամ մարտին, ապա դիմողը կունենար մի քանի օր ավել ժամանակ վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկելու համար, և վճռաբեկ բողոքը չէր համարվի ժամկետանց:

2. Պատասխանողի դիրքորոշումները և փաստարկները

Պատասխանող կողմը, վկայակոչելով Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված՝ արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման վերաբերյալ դիրքորոշումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, ինչպես նաև առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ «Էս Դի Էյ Թրավել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի հիման վրա վիճարկվող Օրենսգրքի 221¹ -րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրության պահանջներին:

Պատասխանողի կարծիքով՝ կոնկրետ դեպքում օրենսդիրը դատական ակտերի վերանայման համար սահմանել է նվազագույնը 25 օր, ինչը բավարար է հիմնավոր բողոքի կազմման և ներկայացման համար: Բացի դրանից, պատասխանողը գտնում է, որ այս հարցում օրենսդիրն ունի հայեցողական լիազորություն այն սահմանափակմամբ, որ նրա կողմից սահմանված ժամկետը բավարար լինի անհրաժեշտ դատավարական գործողության կատարման համար, որպեսզի չխաթարվի վերջինիս գործնական իրացումը:

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքին՝ վիճարկվող իրավադրույթի առնչությանը, ըստ պատասխանողի կարևոր չէ, թե որևէ դատավարական գործողության կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածն օրենսդիրն ինչ չափման միավորով է սահմանում՝ ժամերով, օրերով, շաբաթներով, ամիսներով, թե՛ տարիներով, եթե հստակ սահմանված են տվյալ ժամանակահատվածի հոսքի սկիզբը և ավարտը:

Ըստ պատասխանողի՝ սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթով սահմանված ժամկետը, Օրենսգրքի ժամկետների հաշվարկման այլ դրույթների հետ դիտարկված, առավել քան կանխատեսելի է, քանզի ամիսների տարբեր օրեր ունենալու հանգամանքը հանրաճանաչ և ընդունված փաստ է, ինչը քաղաքացիներին լիարժեք հնարավորություն է տալիս համապատասխանեցնելու իրենց վարքագիծը խնդրո առարկա իրավակարգավորումներին:

Պատասխանողը գտնում է նաև, որ օրենսդիրը դատավարական գործողության սահմանման համար բավարար ժամկետներ սահմանելիս հաշվի է առնում և հիմք ընդունում հնարավոր նվազագույն ժամկետը:

3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները
Սույն սահմանադրաիրավական վեճի լուծման նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

-արդյոք ք Օրենսգրքի 221¹ -րդ հոդվածով նախատեսված ամսով հաշվարկվող ժամկետի որոշման կարգը համահունչ է Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքին.

-արդյոք ք Օրենսգրքի 221¹ -րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի վճիռների բողոքարկման մեկամսյա ժամկետ սահմանելը չի խախտում Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներով նախատեսված՝ օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները, միաժամանակ սահմանափակելով անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

4. Սահմանադրական դատարանի վերլուծությունները և դիրքորոշումները

4.1. Օրենսգրքի 221¹-րդ հոդվածը կոչված է կանոնակարգելու վերաբնիչ դատարանի հրապարակած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետը՝ սահմանելով այն մեկ ամիս: Հիշյալ դրույթում օգտագործված «մեկ ամիս» եզրույթի բովանդակությունը, այդ թվում՝ նման ժամկետի հաշվարկման կարգը, բացահայտված է Օրենսգրքի այլ՝ 74-րդ և 75-րդ հոդվածներում:

Մասնավորապես, ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Միաժամանակ, ըստ Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի՝ եթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջը համընկնում է այնպիսի ամսվա, որը համապատասխան ամսաթիվ չունի, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

Օրենքի որոշակիության սկզբունքը պահանջում է, որ անձի համար իրավակարգավորումները լինեն հնարավորինս պարզորոշ, մատչելի, ըմբռնելի, որպեսզի անձն ի վիճակի լինի դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ որոշակիության աստիճանը կախված է ինչպես անձանց համար իրավակարգավորումների նշանակությունից և հետևանքներից, այնպես էլ այն օբյեկտիվ հանգամանքներից՝ թե որքանով է հնարավոր ճշգրիտ լեզվական ձևակերպումներ տալ կարգավորման առարկա ոլորտներին:

Որոշակիության ավելի խիստ պահանջներ Սահմանադրության 79-րդ հոդվածը դնում է հիմնական իրավունքների սահմանափակման պարագայում. «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանա-

փակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Որոշակիության սկզբունքի կիրառության ժամանակ պետք է նկատի ունենալ, որ իրավական նորմերը, որպես ընդհանուր-վերացական կարգավորումներ, միշտ որոշակի մեկնաբանությունների կարիք ունեն, և գրեթե անհնար է իրավական միարժեք նորմերով հստակ կարգավորել կյանքի բոլոր բազմաբնույթ հարաբերությունները:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ իրավական նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ «ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ իրավական որոշակիության կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...անհրաժեշտ է, որ օրենքը լինի բավարար հասանելի ... և որոշակի: ... նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար որոշակիությամբ, որպեսզի քաղաքացուն հնարավորություն տա կարգավորել իր վարքագիծը: Նա պետք է ի վիճակի լինի, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդի օգնությամբ, այդ հանգամանքներում ողջամիտ աստիճանի կանխատեսել այն հետևանքները, որոնց նշված գործողությունը կարող է հանգեցնել ...» **(Michaud v. France, 06.12.2012):**

Բացի դրանից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանված ժամկետից հետո ներկայացված դիմումները համարել է անընդունելի, պայմանով, որ համապատասխան ժամկետի ավարտը գնահատվի կանխատեսելի **(Melnik v. Ukraine, 28.03.2006):**

Ելնելով վերոգրյալից, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթով սահմանված «մեկամսյա» ժամկետն ըստ նորմատիվ ձևակերպման համահունչ է Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքին, քանի որ վերոհիշյալ հիմնավորմամբ որոշակի է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետի հիմքում ընկած «մեկ ամիս» եզրույթի բովանդակությունը և դրան համապատասխան ժամկետների հաշվարկման կարգը: Ուստի վիճարկվող իրավադրույթի կիրառման շրջանակներում անձը հնարավորություն ունի իր իրավական վարքագիծը ներդաշնակեցնել սահմանված պահանջներին:

Սահմանադրական դատարանը՝ արձանագրելով, որ դատավարական ժամկետների սահմանման ժամանակ օրենսդիրն ունի հայեցողության լայն տիրույթ, գտնում է, որ տվյալ պարագայում բողոքարկման ժամկետի սահմանումն ինչպես ամիսներով, այնպես էլ օրերով կամ դատական ակտում բողոքարկման կոնկրետ վերջնաժամկետ սահմանելու միջոցով կլինի համահունչ Սահմանադրությամբ սահմանված իրավական որոշակիության սկզբունքին:

4.2. Անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ առանց որևէ ողջամիտ և օբյեկտիվ պատճառների խտրական վերաբերմունք է դրսևորվում անձանց նկատմամբ՝ կախված այն հանգամանքից, թե որ ամսին է հրապարակվել կամ մատչելի դարձել նրանց շահերին առնչվող դատական ակտը, Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը. անկախ այն հանգամանքից, թե կոնկրետ ամսվա շրջանակում մեկ ամսվա հաշվարկի արդյունքում օրերի ինչպիսի չափաբաժին կստացվի, այն հավասարապես տարածվում է դատավարության բոլոր մասնակիցների վրա, և վերջիններս իրավական առումով ժամկետային հավասար հնարավորություններով են օժտված: Այսպիսի իրավիճակը չի խախտում Սահմանադրության 28-րդ հոդվածով նախատեսված օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը, ինչպես նաև Սահմանադրության 29-րդ հոդվածով սահմանված խտրականության արգելքը, քանի որ այն ոչ թե խտրական մոտեցում է, այլ պայմանավորված է հաշվարկվող ամսվա օրերի թվաքանակով, կրում է օբյեկտիվ բնույթ, ուղղված չէ սոցիալական որևէ խմբի ոչ իրավաչափ արտոնություն տալուն կամ դատավարության որևէ կողմի համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելուն՝ կախված անձի սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Ամիսների տարբեր օրեր ունենալն օբյեկտիվ և հայտնի իրողություն է, իսկ ամիսներով հաշվարկն օգտագործվում է ոչ միայն տարբեր օրենսդրական ակտերում, այլ նաև տարբեր օտարերկրյա և միջազգային իրավական համակարգերում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221¹ -րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՍԱՍՅԱՆ

3 ապրիլի 2018 թվականի
ՍԴՈ-1411



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԳԱԳԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 369-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչներ փաստաբաններ Գ. Պետրոսյանի, Տ. Եզոբյանի և Լ. Հակոբյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Գագիկ Եղիազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Գագիկ Եղիազարյանի 2018 թվականի հունվարի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**։

1. Դիմողի դիրքորոշումները և փաստարկները

Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) «Տուժանքի հասկացությունը» վերտառությամբ 369-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի «Տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել»:

Դիմողի կարծիքով վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածին, 60-րդ հոդվածին (1-4 մասեր), 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75, 78, 79 և 80-րդ հոդվածներին:

Ըստ դիմողի Օրենսգրքի 369-րդ հոդվածը, սահմանելով տուժանքը որպես պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում պարտապանի նկատմամբ կիրառելի պատասխանատվության միջոց, «չի նախատեսել պայմանագրով սահմանվող տուժանքի առավելագույն թույլատրելի չափ», որի արդյունքում դրա բռնագանձումը փոխկապակցված է ոչ թե միանվագ դրամական գումարի, այլ՝ կետանցի համար սահմանված ամսական կամ օրական տոկոսային դրույքաչափի հետ՝ իր բնույթով վերածվելով «...փոխառության կամ վարկային պայմանագրի տոկոսի»: Դիմողի կարծիքով նման իրավակարգավորումը հնարավորություն է ընձեռում, «...որ օրինակ, պայմանագրի կողմ հանդիսացող վարկային կազմակերպությունը կամ բանկը կարող են ազատորեն սահմանել վարկառուի կողմից վարկային պարտավորության խախտման համար տուժանքի այնպիսի չափեր, որոնք ... գերազանցում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթը»:

Դիմողը գտնում է նաև, որ «...Դատարան դիմելուց հետո վարկային պայմանագրով սահմանված տույժերի հաշվարկման հնարավորությունը, դատարանում գործի քննության ժամկետի անորոշ լինելու պայմաններում, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման ընթացքում, մինչև վերջնական դատական ակտի կայացումը, արգելափակում է ՀՀ Սահմանադրության 61 (1)-րդ և 63 (1)-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացումը՝ դրանք պայմանավորելով ոչ համաչափ գույքային հետև-

անքներով...»: Նման այնպիսի իրավակարգավորումը, համաձայն որի՝ չի նախատեսվում դատարանի վճռի կայացումից հետո՝ մինչև պարտավորության փաստացի կատարումը, պայմանագրային տուժանքի հաշվարկը շարունակելու ուղղակի արգելք, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, հակասում է Սահմանադրության 1-ին, 3-րդ, 60-րդ հոդվածի 1-4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75, 78, 79 և 80-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները և փաստարկները

Ըստ պատասխանող կողմի՝ դիմողն ինքնին չի վիճարկել Օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման սահմանադրականությունը և դրա հակասահմանադրականության վերաբերյալ հիմնավորումներ ներկայացրել է Օրենսգրքի նույն հոդվածի 2 և 3-րդ մասերի և 1998 թվականի մայիսի 5-ի խմբագրությամբ 372-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների համադրմամբ:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-319-Ն օրենքով նախատեսված իրավակարգավորումները՝ պատասխանող կողմը գտնում է, որ «...դիմողի կողմից մատնանշված հնարավոր խնդիրներին արդեն իսկ օրենսդրական լուծում է տրվել» և «...հնարավոր չէ, որ փաստացի վարկի չմարված մասի բռնագանձման օրվա դրությամբ տուժանքը կրկնակի, եռակի կամ ավելիի չափով գերազանցի պարտքի հիմնական գումարը...»:

Անդրադառնալով դիմող կողմի՝ տուժանքի հաշվարկման կարգի վերաբերյալ փաստարկներին՝ պատասխանող կողմը կարծում է, որ այն բխում է տուժանքի ինստիտուտի էությունից, մասնավորապես, որ «...տուժանքը՝ մի դեպքում՝ որպես պատասխանատվության միջոց, մեկ այլ դեպքում՝ որպես պարտավորության ապահովման միջոց, կարող է սահմանվել և՛ պարտավորության խախտման համար որոշակի կայուն դրամական գումարի տեսքով, և՛ կետանցի դեպքում՝ ըստ որոշակի ժամանակահատվածի տոկոսադրույքների տեսքով, և՛ խառը համադրելով կայուն դրամական գումարը տոկոսադրույքների հետ»: Միաժամանակ, ըստ պատասխանողի՝ տուժանքի հաշվարկը մինչև պարտավորության փաստացի կատարման պահը պարտատիրոջ համար գործուն էրաշխիք է պարտավորության կետանցի դեպքում պարտապանի կողմից պարտավորությունը հնարավորինս սեղմ ժամկետում կատարելու համար:

Տուժանքի բռնագանձման գործով դատարանի կողմից վճռի կայացման դրությամբ պարտապանից հետագայում բռնագանձվելիք տուժանքի գումարի չափի անկանխատեսելիության և վիճարկվող իրավակարգավորման ենթադրյալ անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկների կա-

պակցությամբ պատասխանող կողմը գտնում է, որ չնայած իրավակիրառական պրակտիկայում «...հստակ չափանիշներ չէին ձևավորվել», այնուամենայնիվ գործնականում «...դատարանները կարող են վճռում, անդրադառնալով տուժանքին, սահմանեն այն առավելագույն տուժանքի չափը, որից ավելի պարտավորության փաստացի կատարման ժամանակ հաշվեգրված տուժանքը անհամաչափ կհամարվի պարտավորության խախտման հետևանքներին», հետևաբար, ինչպես գտնում է պատասխանողը՝ «...խնդիրն առավելապես գործնական մեկնաբանման հարթությունում է եղել, այլ ոչ օրենսդրական»:

3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- որո՞նք են տուժանքի՝ որպես քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարման ապահովման կառուցակարգի, ինչպես նաև դրա կիրառման ընթացակարգի սահմանադրաիրավական չափանիշները,

- վիճարկվող իրավակարգավորմամբ երաշխավորվա՞ծ են, արդյոք, անձի Սահմանադրությամբ նախատեսված, այդ թվում՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության, իրավունքների իրացման անհրաժեշտ պայմանները,

- արդյոք ք մասնավոր սուբյեկտների միջև սույն գործով քննության առարկա իրավահարաբերությունները Սահմանադրության կարգավորման առարկա են:

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը գնահատել՝ ելնելով ինչպես ամբողջությամբ այդ հոդվածի, այնպես էլ՝ վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենսգրքի 370, 371, 372-րդ (14.12.2017թ. փոփոխություններով) և 372.1-րդ (14.12.2017թ. փոփոխություններով) հոդվածների համատեքստում:

4. Սահմանադրական դատարանի դիրքորոշումները և պարզաբանումները

4.1. Դիմող կողմի հարցադրումներն իրենց իրավական բնույթով ու բովանդակությամբ առնչվում են քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների ծագման, փոփոխման և դադարման օրենսդրական հիմքերի սահմանադրականության խնդիրներին կապված, մասնավորապես, քաղաքացիաիրավական պարտավորության կատարումից բխող հարաբերությունների հետ, որի շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևորում է սահմանադրաիրավական նախնառաջ հետևյալ կարգավորումները:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն

գործող իրավունքի, հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականությունն է, որով և սահմանափակված է այդ իշխանությունը:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածը որպես հանրային-իրավական տնտեսական հարաբերությունների կարգավորման սկզբունք է սահմանել՝ պետական քաղաքականության միջոցով մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության և դրանով իսկ՝ ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության երաշխավորումը:

Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Միաժամանակ, սահմանադրաիրավական պահանջ է՝ օրենքով երաշխավորել հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր (Սահմ. 75-րդ հոդված)՝ ներառյալ նաև՝ արդար ու արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման նպատակով (Սահմ. 61-րդ և 63-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ելնելով վերջինիս խնդիրներից, կոչված է սահմանադրական վերոհիշյալ պահանջների շրջանակներում նախատեսել անհրաժեշտ այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարումն ապահովելու երաշխիք կհանդիսանան:

4.2. Օրենսգրքի 368, 369 և 370-րդ հոդվածների համաձայն՝ տուժանքը (կամ՝ տուգանքը, տույժը) օրենքով կամ պայմանագրով գրավոր ձևով նախատեսված և դրամական գումարով որոշված քաղաքացիական պարտավորությունների կատարման ապահովման եղանակ է, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Ընդ որում, տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել: Միաժամանակ, պարտապանն ազատվում է տուժանք վճարելու պարտականությունից, եթե պատասխանատվություն չի կրում ստանձնած պարտավորությունը չկատարելու համար:

Այսպիսով, տուժանքն օրենքով սահմանված կարգով վճարվում է այն դեպքերում, երբ առկա է օրենքով կամ պայմանագրով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում:

Ինչպես հետևում է Օրենսգրքի հիշյալ հոդվածների նորմատիվ բովանդակությունից, տուժանքը՝ որպես կառուցակարգ, Սահմանադրության 3-րդ (2 և 3-րդ մասեր), 11 և 39-րդ հոդվածների սահմանադրաիրավական կարգավորման շրջանակներում, կոչված է ազատ շուկայական հարա-

բերությունների պայմաններում ապահովելու իրավասուբյեկտների քաղաքացիաիրավական արդյունավետ գործունեությանը և միտված է այդ գործունեության բնագավառում իրավական պատասխանատվություն նախատեսելու միջոցով պայմանագրային պարտավորությունների ժամանակին ու պատշաճ կատարման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելուն՝ դրանով նաև երաշխավորելով մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակարգավորիչ նման խնդիրներով տուժանքի կառուցակարգը հետապնդում է ՀՀ Սահմանադրությամբ կանխորոշված նպատակներ, հետևաբար՝ ինքնին սահմանադրականության խնդիր հարուցել չի կարող:

4.3. Օրենսգրքի 372 և 372.1-րդ հոդվածների համադրված վերլուծությունը կապված ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրաիրավական կարգավորման շրջանակներում տուժանքի կիրառման կառուցակարգային արդյունավետ ընթացակարգի երաշխավորման հետ, վկայում է, որ Օրենսգրքում՝ 14.12.2017թ. ՀՕ-319-Ն օրենքով լրացումների և փոփոխությունների արդյունքում, օրենսդիրը նախատեսել է իրավապայմաններ, որոնք միտված են ապահովելու իրավակիրառման որոշակիություն և կանխատեսելիություն, մասնավորապես, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, իսկ պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը (372-րդ հոդվածի 1-ին մաս), ընդ որում, հիշյալ իրավապայմաններին հակասող համաձայնությունը, ըստ Օրենսգրքի 372-րդ հոդվածի 2-րդ մասի՝ առ ոչինչ է:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի հիմքով ՀՀ Կենտրոնական բանկի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Օրենսգրքի վերոհիշյալ 372-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված իրավապայմանն իրացվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափը սահմանելով:

Հետևաբար, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի հարցադրումը՝ կապված պայմանագրով սահմանվող տուժանքի առավելագույն թույլատրելի չափը սահմանելու անհրաժեշտության հետ, կարգավորված է օրենքով և կոչված է հետապնդելու ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածում նախանշված իրավակարգավորիչ ընդհանուր նպատակներ:

4.4. Անդրադառնալով տուժանքի միջոցով քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարման ապահովման շրջանակներում հիմնական իրավունքների ու ազատությունների դատական արդյունավետ պաշտպանության վերաբերյալ դիմող կողմի կոնկրետ հարցադրումներ:

րին՝ Սահմանադրական դատարանը կարևոր է համարում դրանք դիտարկել, նախևառաջ, ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված արդար և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը երաշխավորելու տեսանկյունից հաշվի առնելով, մասնավորապես, ինչպես պարտապանի իրավունքների պաշտպանության, այնպես էլ պարտապանի իրավունքների իրացման հնարավոր չարաշահման անթույլատրելիության սահմանադրաիրավական պահանջի կատարման անհրաժեշտությունը (Սահմ. 77-րդ հոդված):

Օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորման հետ համակարգային առումով փոխկապակցված 372-րդ հոդվածի 3 և 4-րդ մասերի, ինչպես նաև 372.1-րդ հոդվածի նորմերի վերլուծությունը վկայում է, որ տուժանքի վճարման պահանջով գործ քննելիս դատարանը, իսկ արտադատական կարգով նաև՝ ֆինանսական համակարգի հաշտարարը, պարտավոր է իրավական որոշակի օբյեկտիվ պայմանների առկայությամբ և պահպանմամբ, պարտապանի կամահայտությամբ պակասեցնել վճարման ենթակա կամ վճարված պայմանագրով որոշված տուժանքի չափը, եթե տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին: Միաժամանակ, դատարանի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից տուժանքը պակասեցնելու դեպքում պարտատերը պարտապանի դիմումի հիման վրա դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր դառնալու պահից կատարում է վերահաշվարկ, իսկ տուժանքը վճարված լինելու դեպքում պարտապանին վերադարձնում է վճարված տուժանքի պակասեցված չափին համապատասխան գումար:

Օրենսդիրը նախատեսել է նաև տուժանքի վճարման պարտավորության դադարման հիմքերը: Մասնավորապես, Օրենսգրքի 372.1-րդ հոդվածով նախատեսված են փաստական որոշակի հանգամանքներով պայմանավորված հիմքեր, որոնց առկայության դեպքում որոշակի ժամանակահատվածի համար տուժանք չի հաշվարկվում, կամ՝ կողմերի համաձայնությամբ երկարաձգվում է հիմնական պարտավորության կամ տուժանքի բռնագանձման գործընթացն սկսելու ժամկետը:

Այդպիսով, վերոհիշյալ իրավակարգավորումներն ինքնին կոչված են երաշխավորելու պարտապանի, որպես նաև տուժանք վճարելու պարտավոր անձի, իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ոչ թե դատական հայեցողության, այլ՝ օրենսդրի կողմից կանխորոշված իրավապայմանների շրջանակներում, ինչը ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իմաստով արդար և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման երաշխիք է:

4.5. Անդրադառնալով տուժանքի միջոցով պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման միջազգային-իրավական պրակտիկային՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է այդ միջոցի կիրառման կառուցակարգային բազմազանությունը և, միաժամա-

նակ, այն ընդհանրությունը, համաձայն որի՝ տուժանքը քաղաքացիա-իրավական հարաբերություններում պայմանագրերի պատշաճ կատարման իրավական խթան է (օր. Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Չեխիա, Լիտվա, Իսպանիա, Խորվաթիա, Մեծ Բրիտանիա):

Եվրոպական Միության շրջանակներում (Եվրոպական պայմանագրային իրավունքի հարցերով հանձնաժողովի կողմից ընդունված՝ Եվրոպական պայմանագրային իրավունքի սկզբունքներ) սահմանված են պայմանագրային հարաբերություններում տուժանքի կիրառման առավել միասնական կանոններ, որոնց համաձայն՝

1) եթե պայմանագիրը սահմանում է, որ պարտավորությունը չկատարած կողմը պետք է մյուս կողմին վճարի սահմանված գումար պարտավորության չկատարման համար, ապա այդ գումարը պետք է վճարվի անկախ իրական վնասներից,

2) այնուամենայնիվ, անկախ համաձայնությունից, սահմանված գումարը կարող է ողջամտորեն կրճատվել, եթե այն չափազանց մեծ է պարտավորության չկատարման կամ այլ հանգամանքների արդյունքում առաջացած վնասի համեմատությամբ (THE PRINCIPLES OF EUROPEAN CONTRACT LAW - Parts I and II revised 1998, Part III 2002, Section 5-Damages and Interest, Article 9:509 Agreed Payment for Non-performance) (<http://www.jus.uio.no/lm/eu.contract.principles.parts.1.to.3.2002>):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով քննության առարկա իրավակարգավորումն իր համակարգային ամբողջությամբ համահունչ է վերոհիշյալ չափանիշներին:

4.6. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը, որպես հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտականության հասցեատեր է սահմանում հանրային իշխանությանը՝ դրանով իսկ, ըստ էության, բացառելով **այդ գործառույթի անմիջական իրականացումը մասնավոր անձանց կողմից** միևյանց միջև ծագող իրավահարաբերություններում: Սահմանադրության, հատկապես, հիմնական իրավունքներն ու ազատությունները սահմանող նորմերը մասնավոր անձանց միջև հարաբերություններում անմիջականորեն իրացվելի են միայն Սահմանադրությամբ և վերջինիս հիման վրա ընդունված օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով: Հանրային իշխանության վերոհիշյալ սահմանադրական պարտականության բովանդակու թյունից անմիջականորեն բխում է, որ պետությունը պարտավոր է օրենսդրական կարգավորումների միջոցով պաշտպանել հիմնական իրավունքներն ու ազատությունները երրորդ անձանց անիրավաչափ միջամտությունից: Իսկ մասնավոր իրավունքի բնագավառում դա նշանակում է, որ օրենսդիրը պետք է անձանց միջև հակադիր շահերի առկայության (կոլիզիայի) դեպքում,

Սահմանադրության 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ կարգավորման համաչափության սկզբունքի հիման վրա որպես սահմանադրաիրավական նպատակ հավասարակշռի մասնավոր իրավահարաբերությունների մասնակիցների հիմնական իրավունքների ու ազատությունների իրացումը, եթե առկա չէ փաստական հանգամանքներով հիմնավորված որևէ պատճառ՝ այդ իրավունքների ու ազատությունների իրացման իրավական նախապատվությունը կողմերից որևէ մեկին տրամադրելու համար: Այս տեսանկյունից տուժանքի ինստիտուտին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող կարգավորումները համահունչ են վերոհիշյալ նպատակին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

4 մայիսի 2018 թվականի
ՍԴՈ-1412



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ԻՆ ՊՐԱՀԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽՒՍՑԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հունվարի 30-ին Պրահայում ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև հանցավորության դեմ պայքարում համագործակցության վերաբերյալ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդ-

4(92)2018

◆ ՍՏՈՐԱՎՈՐՈՒՄ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

վածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով Հանրապետության Նախագահի՝ 2018թ. մարտի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև հանցավորության դեմ պայքարում համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի հունվարի 30-ին Պրահայում, նպատակ ունի նպաստել երկու պետությունների միջև ռազմավարական և գործառնական տեղեկատվության փոխանակմանը, ինչպես նաև կողմերի իրավասու մարմինների միջև անմիջական շփումների միջոցով՝ հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և հանցագործություն կատարած անձանց պարզելու ուղղությամբ ռստիկանական համագործակցության խորացմանը և ամրապնդմանը:

2. Համաձայնագիրը չի ներառում իրավական աջակցություն այն քրեական գործերով, որոնք կարգավորվում են հատուկ համաձայնագրով, որով Հայաստանի Հանրապետությունը և Չեխիայի Հանրապետությունը պարտավորություններ ունեն:

Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող Հավելված, որը վերաբերում է գաղտնիության դասակարգման մակարդակին:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով, ի թիվս այլնի, ստանձնում է, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինները չեխական կողմի իրավասու մարմիններին տրամադրեն փոխադարձ աջակցություն փոխանակելով Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված անհատական և այլ տվյալներ և փաստաթղթեր (հոդված 3),

- ապահովել, որպեսզի անհրաժեշտության դեպքում ՀՀ իրավասու մարմինները համակարգեն իրենց գործողությունները և աջակցեն չեխական կողմի իրավասու մարմիններին Համաձայնագրի 4-րդ հոդվածով սահմանված գործողություններում (հոդված 4),

- ապահովել, որպեսզի անհրաժեշտության դեպքում և չեխական կողմին աջակցելու նպատակով կամ առանձնահատուկ հանցագործության հետ կապված գործողությունները համակարգելու համար ՀՀ իրավասու մարմինը չեխական կողմի իրավասու մարմին ուղարկի խորհրդատուներ, կամ չեխական կողմի հետ ստեղծի համատեղ վերլուծական և այլ աշխատանքային խմբեր (հոդված 5, կետ 1),

- ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինների պաշտոնատար անձինք չեխական կողմի տարածքում ակտիվ խորհրդատվություն և աջակցություն տրամադրեն, ինչպես նաև երաշխավորել, որ չեխական կողմի տարածքում խորհրդատվություն և աջակցություն տրամադրելիս նրանք հետևեն չեխական կողմի իրավասու մարմինների ցուցումներին (հոդված 5, կետ2),

- չեխական կողմի հետ համագործակցել կրթության և վերապատրաստումների բնագավառում, որը կներառի Համաձայնագրի 7-րդ հոդվածում սահմանված գործողությունները (հոդված 7),

- երաշխավորել, որ Համաձայնագրի դրույթների իրականացման համար ՀՀ իրավասու մարմիններն օգտագործեն անզլերեն, եթե հայկական և չեխական կողմերի միջև չկա այլ պայմանավորվածություն (հոդված 8, կետ 6),

- ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինները չեխական կողմի իրավասու մարմիններին տեղեկացնեն Օդային Մարշալներ նշանակելու վերաբերյալ, որոնք կարող են անհրաժեշտության դեպքում զենք կրել չեխական կողմի տարածքում՝ օդանավի անվտանգությունն ապահովելու նպատակով (հոդված 9, կետ 2),

- եթե չկա որևէ հատուկ միջազգային համաձայնագիր, որով նախատեսվում է գաղտնի տեղեկության փոխանակում, ապա գաղտնի տեղեկատվությունը փոխանցել Համաձայնագրի ներքո՝ ՀՀ օրենսդրության համաձայն, Համաձայնագրի 11-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով (հոդված 11),

- եթե հայկական և չեխական կողմերի իրավասու մարմինները նախապես այլ կերպ չեն պայմանավորվել, ապա, որպես աջակցություն ցուցաբերող կողմ, հոգալ Համաձայնագրով նախատեսված համագործակցության բոլոր ձևերի իրականացման համար նախատեսված ծախսերը, ինչպես նաև պահպանել ծախսերի երկկողմ փոխադարձությունը և հավասարակշռությունը (հոդված 13),

- Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 (երեսուն) օրվա ընթացքում չեխական կողմին տեղեկացնել Համաձայնագիրն իրականացնող ՀՀ իրավասու մարմինների վերաբերյալ, որոնք ուղղակիորեն և օպերատիվ կհամագործակցեն իրենց համապատասխան իրավասությունների շրջանակներում, միաժամանակ տրամադրել իրավասու մարմինների հասցեները, ինչպես նաև այլ կոնտակտային տվյալներ (հոդված 14, կետ1):

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 8.**

1. 2014 թվականի հունվարի 30-ին Պրահայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև հանցավորության դեմ պայքարում համագործակցության վերաբերյալ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

4 մայիսի 2018 թվականի
ՍԴՈ-1413



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻԶԵՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հունվարի 16-ին Երևանում ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև Հայաստանի Հանրապետությունում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

4(92)2018
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
57

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի ապրիլի 3-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018թ. հունվարի 16-ին Երևանում:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև Հայաստանի Հանրապետությունում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայկական տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին» նախորդ համաձայնագիրը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 12.10.1998թ. Ն-296-1 որոշմամբ (ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչվել 06.10.1998թ. ՄԴՈ-127 որոշմամբ): Քննության առարկա Համաձայնագիրը կոչված է փոխարինելու նշված համաձայնագիրը և ներառում է որոշակի լրամշակումներ և փոփոխություններ, որոնք հիմնականում տեխնիկական բնույթի են:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, նախ ստանձնում է ֆինանսական պարտավորություններ, որոնք են.

- Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան տարածաշրջանային բաժանմունքի (այսուհետ՝ ՄԳՏԿ ՀՏԲ) գործունեության համար ծախսերի մի մասը կատարել պետական բյուջեի՝ գիտությանը հատկացվող միջոցներից (հոդված 2, կետ 2.1.),

- ՄԳՏԿ ՀՏԲ-ին հատկացնել գրասենյակային տարածք և տրամադրել համապատասխան նյութատեխնիկական աջակցություն (հոդված 2, կետ 2.2.),

- Կառավարության միջոցներով (Համաձայնագրի 2.1. հոդվածում նշված ֆինանսական հատկացումներից) ապահովել ՄԳՏԿ-ի կողմից գնված փոխադրամիջոցի շահագործումը (հոդված 2, կետ 2.3.):

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նաև.

- ապահովել Հայաստանի քաղաքացիների՝ ՄԳՏԿ ՀՏԲ աշխատակազմի անդամների աշխատանքի ժամանակին վարձատրությունը (հոդված 3, կետ 3.1.),

- ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի միջոցով իրականացնել վերահսկողություն Համաձայնագրի կատարման նկատմամբ (հոդված 6):

4. Համաձայնագիրն էպպես չի շոշափում Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները և դրանով ստանձնած պարտավորությունները չեն հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Ավելին, Համաձայնագիրը կոչված է Հայաստանի Հանրապետության գիտնականներին և ինժեներներին լայնորեն ընդգրկելու ՄԳՏԿ գործունեության շրջանակներում իրականացվող նախագծերի կազմման և իրականացման գործում, ինչը կարող է նպաստել Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում ամրագրված հիմնարար և կիրառական գիտության զարգացման նպատակի իրագործմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 63, 64-րդ հոդվածներով և 74-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2018 թվականի հունվարի 16-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

4 մայիսի 2018 թվականի
ՄԴՈ-1414



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԱԼԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾՍԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 մայիսի 2018թ.

4(92)/2018

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի դեկտեմբերի 7-ին Վիեննայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդ-

վածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի ապրիլի 7-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի դեկտեմբերի 7-ին՝ Վիեննայում:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները

ա) աջակցել երկու երկրների արվեստի և մշակույթի ճանաչմանը փոխադարձ այցելությունների և մշակութային փոխանակման ծրագրերի միջոցով,

բ) նպաստել պատմության և մշակույթի վերաբերյալ գրքերի, հրապարակումների, մատենագիտական նյութերի և տեսալսողական ռեսուրսների փոխանակմանը, երկու երկրների գրադարանների միջև ուղիղ համագործակցությանը,

գ) զարգացնել համագործակցությունը երաժշտության բնագավառում, կատարողական արվեստի, թատրոնի, օպերայի, բալետի և այլ բնագավառներում,

դ) նպաստել հայկական և մալթայական շահագրգիռ հաստատությունների և կառույցների միջև ուղիղ համագործակցությանը հնագիտության, թանգարանային կառավարման և հուշարձանների կոնսերվացման (ամրակայման), պաշտպանության և պահպանության ոլորտներում,

ե) կինոարվեստի ոլորտում աջակցել արվեստագետների և փորձագետների մասնակցությանը երկու պետություններում կազմակերպվող միջազգային կինոփառատոներին, ֆիլմերի ցուցադրություններին և մշակութային կինոմիջոցառումներին՝ միջոցառումների կազմակերպման կանոնների համաձայն, ինչպես նաև մասնագիտացված հաստատությունների, դպրոցների, ասոցիացիաների և կինոպահոցների միջև ուղիղ համագործակցությանը,

զ) ապահովել մտավոր սեփականության իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը՝ իրենց պետությունների օրենսդրության և միջազգային այն պայմանագրերի դրույթների համաձայն, որոնց կողմ են հանդիսանում երկու պետությունները,

է) աջակցել արվեստի և մշակույթի բնագավառների դասախոսների, մասնագետների, գիտնականների և փորձագետների փոխանակմանը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են նպաստելու երկու պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը և ամրապնդելու համագործակցությունը մշակույթի բնագավառում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի դեկտեմբերի 7-ին Վիեննայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Մալթայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՍԱՍՅԱՆ

4 մայիսի 2018 թվականի
ՄԴՈ-1415



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 թվականի ֓եՏՐՎԱՐԻ 12-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 40 և 74-րդ հոդվածներին,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի փետրվարի 12-ին Երևանում ստորագրված Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի ապրիլի 7-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի փետրվարի 12-ին Երևանում՝ նպատակ ունենալով խթանել Կողմերի միջև համակողմանի համագործակցությունը և բարեկամությունը՝ Կողմերի կառավարությունների արտաքին քաղաքականության և միգրացիոն քաղաքականության համատեքստում:

2. Համաձայնագիրը կիրառվում է հետևյալ կատեգորիաների աշխատողների նկատմամբ, ովքեր Կողմերից մեկի քաղաքացիներ են, Համաձայնագրի շրջանակներում կնքել են աշխատանքային պայմանագիր և ում տրամադրվել է մյուս Կողմի տարածքում կացության անհրաժեշտ թույլտվություն.

ա) աշխատողներ՝ մեկ տարի սկզբնական ժամկետով՝ մինչև ընդհանուր երեք տարի ժամկետով հետագա երկարաձգման հնարավորությամբ, բ) սեզոնային աշխատողներ՝ յուրաքանչյուր տարի ոչ ավել, քան ինն ամիս ժամկետով (հոդվ. 2):

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- ապահովել, որպեսզի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (որպես Լիազորված մարմին) Համաձայնագրի իրականացման համար նշանակի Իրավասու հաստատություն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալություն (հոդվ. 1, կետ 2(1)),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Իրավասու հաստատությունը կատարի աշխատանքի առկա առաջարկների համար պոտենցիալ աշխատողների հավաքագրումը՝ համաձայն նրանց մասնագիտական որակավորման (հոդվ. 4),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Իրավասու հաստատությունը, ՀՀ պետական բյուջեի հատկացումների շրջանակներում իրականացնի մյուս Կողմի տարածքում գործատուների կողմից ստացված աշխատանքի առաջարկների մասին տեղեկույթի փոխանակում, պոտենցիալ աշխատողների ընտրություն Համաձայնագրով նախատեսված փուլերով, աջակցի աշխատանքային բանակցությունների ընթացքին և ընտրված այդ աշխատողների կողմից աշխատանքային պայմանագրերի ստորագրմանը, պայմանագրեր ստորագրած աշխատողնե-

րին գտնվելու, աշխատելու, բնակության և մեկնելու պայմանների մասին տեղեկությունի տրամադրման պաշտոնական լեզվով (հոդվ. 5, կետ 1),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Իրավասու հաստատությունը մյուս Կողմի Իրավասու հաստատության հետ ձևավորեն թեկնածուների ընտրության Համատեղ հանձնաժողով, որի աշխատակարգը սահմանվում է համաձայնագրի գործնական կիրառման նպատակով կողմերի լիազորված մարմինների կողմից հաստատված Իրականացման ընթացակարգերով (այսուհետ՝ Իրականացման ընթացակարգ) (հոդվ. 5, կետ 3, հոդվ. 14, կետ 1),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Իրավասու հաստատությունը, Իրականացման ընթացակարգերով սահմանված կարգի համաձայն, կատարի ուղարկվող թեկնածուների ընտրություն՝ նրանց մասնագիտական որակավորման և ներկայացված փաստաթղթերի հիման վրա (հոդվ. 6, կետ 1),

- ապահովել, որպեսզի Համաձայնագրով նախատեսված վիզայի հայտերը քննվեն առաջնահերթ կարգով, ուղարկող Կողմի տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության իրավասու հյուպատոսական ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի համապատասխան դրույթների համաձայն (հոդվ. 8, կետ 1),

- որպես ընդունող Կողմ երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության տարածք էկող աշխատողներին կտրվի կացության անհրաժեշտ թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև գործատուների հետ կհամաձայնեցվեն նրանց դիմավորման կազմակերպման և բնակեցման հետ կապված հարցերը (հոդվ. 8, կետեր 2 և 4),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Իրավասու հաստատությունը աշխատողներին մեկնելուց առաջ տրամադրի տեղեկություն մեկնելու, ժամանման օրվա և գտնվելու վայրի, աշխատանքային և բնակարանային պայմանների մասին (հոդվ. 8, կետեր 3 և 4),

- որպես ընդունող Կողմ երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատողները կունենան աշխատանքային նույն իրավունքներն ու պարտականությունները, որոնք գործում են տեղացի աշխատողների համար, և կօգտվեն աշխատավայրում հավասար պաշտպանության իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության համաձայն (հոդվ. 9, կետ 1),

- ապահովել, որպեսզի աշխատողների վարձատրությունը և աշխատանքային պայմանները անհատապես նշվեն ստորագրված աշխատանքային պայմանագրում և միշտ համապատասխանեն առկա կոլեկտիվ

պայմանագրերին կամ, այդպիսի պայմանագրերի բացակայության դեպքում, Հայաստանի Հանրապետության՝ որպես ընդունող Կողմի՝ նույն մասնագիտությունն ու որակավորումն ունեցող աշխատողներին վերաբերող օրենսդրությունը (հոդվ. 10),

- համաձայնել, որ մինչև սոցիալական ապահովության ոլորտում երկկողմ համաձայնագրի ստորագրումը, որպես ընդունող Կողմ հանդես գալու դեպքում, կկիրառվի Հայաստանի Հանրապետության համապատասխան ներպետական օրենսդրությունը (հոդվ. 11),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Լիազորված մարմինները մյուս Կողմի Լիազորված մարմինների հետ փոխհամաձայնեցված ընթացակարգով տեղեկություն փոխանակեն աշխատանքային հարաբերությունների, ինչպես նաև օտարերկրացիների մուտքի, գտնվելու և զբաղվածության վերաբերյալ առկա կարգավորումների մասին (հոդվ. 14, կետ 2) և այլն:

6. Համաձայնագրում նաև նախատեսված են դրույթներ՝ Համաձայնագրի իրականացման արդյունքում առաջացած խնդիրների (հոդվ. 14, կետ 3) և Կողմերի միջև ծագող վեճերի լուծման (հոդվ. 12 և հոդվ. 16, կետ 2), Համաձայնագրի ուժի մեջ մտնելու և դրա գործողության (հոդվ. 15), Համաձայնագրի ամբողջությամբ կամ մասնակի դադարեցման (հոդվ. 16, կետ 1), դրանում փոփոխություններ կատարելու կարգի և պայմանների (հոդվ. 17) վերաբերյալ:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են նպաստելու երկու պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը և ամրապնդելու համագործակցությունը աշխատանքային միգրացիայի կարգավորման բնագավառում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի փետրվարի 12-ին Երևանում ստորագրված Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

4 մայիսի 2018 թվականի
ՄԴՈ-1416



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՐԱՍ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (17.06.1998թ. ՀՕ-247) 204.33-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ
1-ԻՆ ԿԵՏԻ՝ «ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍՈՒՄ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ,
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 մայիսի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի ներկայացուցիչներ Տ. Եգորյանի և Լ. Հակոբյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Վ. Դանիելյանի և նույն վարչության օրենսդրական փորձաքննության բաժնի ավագ իրավափորձագետ Ս. Թևանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արամ Շահբազյանի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 204.33-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Եզրափակիչ մատում» բառակապակցության մատով, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի օգոստոսի 7-ին, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից և ուժը կորցրած է ճանաչվել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Գործի քննության առիթը Ա. Շահբազյանի՝ 2018 թվականի հունվարի 31-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողի և պատասխանողի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետը՝ «եզրափակիչ մասում» բառակապակցության մասով: Հիշյալ հոդվածով սահմանվել են նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը: Նույն հոդվածի 1-ին կետով դրանց թվում սահմանվել է հետևյալ հիմքը՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը սովյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրափրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Դիմողը նշում է, որ Սահմանադրական դատարանի որոշումների ընտրանքային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողի նկատմամբ կիրառված վիճարկվող օրենքի դրույթի սահմանադրականության հարցի քննության որոշ դեպքերում Սահմանադրական դատարանը միաժամանակ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ և եզրափակիչ մասում բացահայտել է դրա սահմանադրափրավական բովանդակությունը, իսկ որոշ դեպքերում եզրափակիչ մասում նշել է, որ վիճարկվող օրենքի դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը՝ այդ որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Դիմողը վկայակոչում է, մասնավորապես, թիվ ԵՄԴ/2598/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ ամրագրված հետևյալ եզրահանգումը՝ «...Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումը՝ նոր հանգամանքի առկայության

մասին անհիմն է, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 07.02.2017 թվականի թիվ ՄԴՈ-1344 որոշման եզրափակիչ մասում բողոքաբերի կողմից վճարել բողոքում վիճարկվող օրենքի դրույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 4-րդ մասը, չի ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, կամ ճանաչելով այն ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ: Հետևաբար բողոք բերած անձը չի ապացուցել և հիմնավորել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նոր հանգամանքի առկայությունը»:

Դիմողը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթի կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները հանգեցնում են նրան, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները չեն հանդիսանում իրավունքի աղբյուր, հնարավորություն չեն տալիս նոր հանգամանքի հիմքով վերանայել դատական ակտերը, ինչպես նաև տարբերակում է դրսևորվում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների միջև՝ պայմանավորված դրանց՝ Սահմանադրական դատարանի որոշման տարբեր մասերում տեղակայված լինելու հանգամանքով: Այս համատեքստում դիմողը վկայակոչում է Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, մասնավորապես, ՄԴՈ-652, ՄԴՈ-943, ՄԴՈ-1359 որոշումները և գտնում է, որ սույն գործով բարձրացված իրավական խնդրի նկատմամբ ևս լիարժեք կիրառելի են հիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետը՝ «եզրափակիչ մասում» բառակապակցության մասով, հակասում է Սահմանադրության 1-ին, 3, 5-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75, 78, 79 և 80-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողն արձանագրում է, որ անհատական սահմանադրական գանգատի հիմքում ընկած են անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գաղափարն ու նպատակը և ընդգծում, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը՝ իրավական որոշակիության սկզբունքի կիրառմամբ: Պատասխանողը գտնում է, որ այդ պատճառով բոլոր այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներում կիրառված նորմին տա-

լիս է այլ մեկնաբանություն, այդ հանգամանքը հստակորեն պետք է ամրագրի որոշման եզրափակիչ մասում՝ նշելով, որ նորմը բողոք բերող անձի նկատմամբ կիրառվել է իր որոշման մեջ արտահայտված դիրքորոշումից տարբերվող մեկնաբանությամբ, և որ այդ փաստն անձի համար դիտարկվում է որպես նոր հանգամանք: Դրանով, ըստ պատասխանողի, Սահմանադրական դատարանը կապահովի իրավական որոշակիություն անձի համար՝ բացառելով ընդհանուր իրավասության դատարանի հայեցողությամբ Սահմանադրական դատարանի որոշումը մեկնաբանելու կամ գնահատելու հնարավորությունը, կամ իր նկատմամբ նորմն այլ կերպ մեկնաբանված լինելու փաստի ապացուցման բեռը բողոք բերող անձի վրա դնելը:

Պատասխանողը նաև գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի շարադրանքը բացառում է քննարկվող հարցի կապակցությամբ որևէ տարբերակման հնարավորություն:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթի ձևակերպումն ինքնին չի կարող խոչընդոտ հանդիսանալ անձի նկատմամբ Սահմանադրական դատարանի դիրքորոշումից տարբերվող այլ մեկնաբանությամբ կիրառված լինելու պարագայում այն որպես նոր հանգամանք դիտարկելու և դատական ակտը վերանայելու համար, եթե Սահմանադրական դատարանը պահպանել է եզրափակիչ մասում անձի նկատմամբ նորմն այլ մեկնաբանությամբ կիրառված լինելու փաստը հստակորեն նշելու կանոնը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ եզրահանգման հիմք հանդիսացած իրավավերլուծությունները որոշման որ մասում են շարադրված:

Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը՝ արդյո՞ք այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով դատական ակտի վերանայման համար անհրաժեշտ պայմանները, դրանք են՝ Սահմանադրական դատարանը մեկնաբանել է վիճարկվող դրույթը և միաժամանակ գտել, որ այդ դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, որոշման **եզրափակիչ մասում** ամրագրելը սահմանափակում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

4. Սահմանադրական դատարանի իրավական վերլուծությունները և դիրքորոշումները

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 204.33-րդ հոդվածը վերաբերում է նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերի իրավակարգավորումներին:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-701, ՄԴՈ-751, ՄԴՈ-758, ՄԴՈ-767, ՄԴՈ-833, ՄԴՈ-935, ՄԴՈ-943, ՄԴՈ-984, ՄԴՈ-1099, ՄԴՈ-1275) արտահայտել է իրավական դիրքորոշումներ Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի, դրա արդյունավետության և կենսունակության չափանիշների, այդ ինստիտուտի միջոցով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների վերաբերյալ: Սահմանադրական դատարանը, մասնավորապես, քննության առնելով Օրենսգրքի 204.33-րդ հոդվածի (նախկին խմբագրությամբ) 1-ին կետը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի նորմի կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով վերականգնելու հնարավորություն չի ընձեռում, իր ՄԴՈ-984 որոշմամբ հիշյալ դրույթը ճանաչել է 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6, 18, 19 և 93-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետը 2011 թվականի հոկտեմբերի 26-ի ՀՕ-269-Ն օրենքով շարադրվել է նոր խմբագրությամբ, որը և սույն գործով դիմողի կողմից մասնակիորեն վիճարկվում է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող դրույթի մասով գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (2018 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-110-Ն) 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նույնպես ամրագրված է համանման դրույթ:

Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, որ վիճարկվող դրույթը հնարավորություն չի տալիս Սահմանադրական դատարանի որոշումներն ընկալել իրենց կառուցվածքային ամբողջության մեջ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ իր մի շարք որոշումներում (մասնավորապես, ՄԴՈ-652, ՄԴՈ-943) անդրադարձել է Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակին և առանձնահատկություններին, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների էությանը և բովանդակությանը: Սույն գործի շրջա-

նակներում ևս Սահմանադրական դատարանը վերահաստատում է 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշման մեջ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օրյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը: Այդ խնդրի իրագործմանն են միտված հատկապես սահմանադրական դատարանի որոշումների նկարագրական-պատճառաբանական մասում արտահայտված **իրավական դիրքորոշումները**, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անստեման դեպքում չի կարող երաշխավորվել դատարանի որոշման կատարումը»:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև իր հիշյալ իրավական դիրքորոշումը, վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու դեպքում և, մասնավորապես, երբ ընդունել է «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թվականի հունիսի 1-ի ՀՕ-58-Ն օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված որոշումը, այդ որոշման եզրափակիչ մասում՝

1) վիճարկվող դրույթը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման մեջ իր արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2) վիճարկվող դրույթը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման մեջ իր արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ նշելով նաև կոնկրետ եզրահանգող իրավական դիրքորոշումը/ները:

3) վիճարկվող դրույթը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը:

4) վիճարկվող դրույթը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը և միաժամանակ գտնելով, որ այդ դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թվականի հունիսի 1-ի ՀՕ-58-Ն օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումների եզրափակիչ մասերում հատուկ շեշտադրել է հիշյալ օրենքի այն պահանջը, համաձայն որի՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

Դիմումում բարձրացված հարցը դիտարկելով 2018 թվականի հունվարի 17-ին ընդունված և նույն թվականի ապրիլի 9-ից ուժի մեջ մտած «Սահմանադրական դատարանի մասին» ՀՕ-42-Ն սահմանադրական օրենքով ամրագրված իրավակարգավորումների համատեքստում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշյալ օրենքի՝ «Կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա» վերտառությամբ 69-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանվում է, որ հիշյալ հոդվածում նշված գործերով՝ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, **դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:** Նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածում նշված գործերին առնչվող բոլոր այլ հանգամանքների քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են սույն օրենքի 68-րդ հոդվածի 7-20-րդ մասերի կանոնները»: Ի դեպ, հիշյալ սահմանադրական օրենքով սահմանվում է նաև, որ սույն օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով սահմանված որոշումն ընդունելու դեպքում, այդ որոշումը պարունակում է նաև հետևյալ տեղեկությունը՝ որոշման **եզրափակիչ մասում** վիճարկվող ակտի կամ դրա վիճարկվող դրույթի համառոտ սահմանադրաիրավական բովանդակությունը (64-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ):

Հիշյալ իրավակարգավորումներից, մասնավորապես, բխում է, որ Սահմանադրական դատարանի որոշումն իրավական նախադրյալ է դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով օրենքով սահմանված կարգով վերանայելու համար, եթե՝

- 1) նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, կամ

2) նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ Սահմանադրական դատարանը գտել է, որ այդ դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, որը պետք է ամրագրվի որոշման եզրափակիչ մասում:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի այն դրույթը, համաձայն որի «...դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով», յուրաքանչյուր դեպքում Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում անհրաժեշտ չէ ամրագրել, քանի որ այն պարտադիր է հիշյալ սահմանադրական օրենքի ուժով:

Հաշվի առնելով, որ, համաձայն Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի, օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործող դատավարական օրենսգրքերի վերաբերելի դրույթները պետք է ուսումնասիրության և, ըստ անհրաժեշտության, օրենսդրական վերանայման առարկա դառնան «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումների լույսի ներքո:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ կանոնակարգումները և դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր են իրավական հստակության և որոշակիության ապահովման տեսանկյունից, իրավապաշտպան պրակտիկայում առավել մատչելի և կանխատեսելի են դարձնում ինչպես Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումը, այնպես էլ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված դրույթների անմիջական կիրառումը՝ բացառելով իրավակիրառողների կողմից դրանց հայեցողական և կամայական մեկնաբանությունները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (17.06.1998թ. ՀՕ-247) 204.33-րդ հոդվածի 1-ին կետը՝ «եզրափակիչ մասում» բառակապակցության մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

15 մայիսի 2018 թվականի
ՄԴՈ-1417



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԻ, ՀԱՅԿ ՆԱԶԻՆՅԱՆԻ ԵՎ ԱՐԿԱԴԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 887-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Ս. Սողոմոնյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Վ. Դանիելյանի և նույն վարչության օրենսդրական փորձաքննության բաժնի ավագ իրավափորձագետ Ս. Թևանյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արմինե Աթոյանի, Հայկ Նազինյանի և Արկադի Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ մտել՝ 1999 թվականի հունվարի 1-ին: Օրենսգրքի 887-րդ հոդվածը գործում է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված և նույն թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ օրենքով (ՀՕ-116) նախատեսված փոփոխություններով:

Գործի քննության առիթը Ա. Աթոյանի, Հ. Նազինյանի և Ա. Վարդանյանի՝ 2018 թվականի փետրվարի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողների դիրքորոշումները և փաստարկները

Դիմողները վիճարկում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) «Վարկային պայմանագիր» վերտառությամբ 887-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ «Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով»: Նրանք խնդրում են նշված իրավադրույթը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածին հակասող և անվավեր, պատճառաբանելով, որ այն անձին զրկում է սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքից:

Դիմողները գտնում են, որ վիճարկվող իրավադրույթից հետևում է, որ վարկային պայմանագիրը կարող է հակասել պայմանագրերի մասին քաղաքացիաիրավական այլ դրույթներին և վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում սահմանել այնպիսի տուժանքներ, որոնք խախտում են վարկառուի սեփականության իրավունքը և նրա համար առաջացնում անբարենպաստ հետևանքներ: Դիմողներն այդպիսի հետևանքներ են համարում առաջին դիմողի վարկային պայմանագրում նախատեսված այնպիսի պայմանները, ինչպիսիք են ժամկետանց վարկի մնացորդի նկատմամբ տարեկան 73% տոկոսադրույթը, առանց վարկառուի համաձայնության նրա բանկային հաշիվներում առկա միջոցները տնօրինելու բանկի իրավունքը:

Դիմողների կարծիքով վարկային պայմանագրով նախատեսված այն պայմանը, որ վարկառուն պարտավոր է «Իր նկատմամբ սնանկացման գործընթաց սկսվելու դեպքում անհապաղ մարել Վարկը՝ անկախ դրա մարման պայմանագրային ժամկետից՝ վճարելով Վարկի օգտագործման

փաստացի ժամկետի համար հասանելիք տոկոսագումարներն ու տույժերը» հակասում է «Մանակության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի **իմպերատիվ նորմի** պահանջներին, որոնց համաձայն «...սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, բացառությամբ պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունների»:

2. Պատասխանողի դիրքորոշումները և փաստարկները

Ըստ պատասխանողի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթը և 46-րդ գլուխը կողմերին վարկային պայմանագիր կնքելիս հնարավորություն են տալիս լայնորեն օգտվելու պայմանագրի ազատության սկզբունքից, և փոխառության պայմանագրի կանոնների կիրառումը կողմերի միջև ծագած վարկային հարաբերությունների նկատմամբ կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ պայմանագրով այլ բան նախատեսված չէ և տվյալ պարագայում պետք է հիմք ընդունել Օրենսգրքի իմպերատիվ նորմերի կողմերի կամքով փոփոխելու անթույլատրելիության հանգամանքը և առաջնորդվել այն կանխավարկածով, որ պայմանագրի ազատության սկզբունքի շրջանակներում կողմերը փոխառության պայմանագրի վերաբերյալ Օրենսգրքի նորմերից տարբերվող դրույթներ կարող են սահմանել միայն այն դեպքում, երբ այդ կարգավորումը դիսպոզիտիվ բնույթ ունի:

Պատասխանողի կարծիքով դիմողների կողմից բարձրացված հարցը վերաբերում է վարկային պայմանագրի առարկայի (վարկի գումարը և հաշվարկված տուժանքը) վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու հնարավորությանը, որի վերաբերյալ համաձայնությունը վարկառուն տալիս է իր և բանկի միջև կնքված պայմանագրով: Ստացվում է, որ վարկառուն պայմանագրի կնքման փաստի ուժով վարկատուին օժտել է իր կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ինքնուրույնաբար միջոցներ ձեռնարկելու իրավունքով պարտքի կատարումն ապահովելու համար:

Պատասխանողը գտնում է, որ այդ իրավունքի շրջանակը հստակ է ու որոշակի և չի կարող տարածվել վարկառուին սեփականության իրավունքով պատկանող ողջ գույքի կամ տարբեր բանկերում առկա հաշիվների վրա ամբողջ ծավալով, քանի որ պայմանագրով սահմանվում է, որ այդ իրավունքը Բանկը կարող է իրականացնել պայմանագրով նշված գումարի և սահմանված տոկոսների, տույժերի, տուգանքի գանձման համար հասանելիք գումարի չափով:

Պատասխանողը եզրակացնում է, որ՝ «...այնքանով, որքանով անձը պայմանագրային հարաբերություններ ձևավորելու ընթացքում ազատորեն կարող է սահմանել իրեն սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցների նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելու այլ անձի իրավունքը՝ ի կատարումն վերջինիս հանդեպ իր ունեցած պարտավորությունների, միաժամանակ ցանկացած պարագայում պահպանելով իր իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունը, այդ թվում՝ պարտատեր հանդիսացող անձի կողմից իրեն վերապահված իրավագործությունների անցման կամ անհիմն դրանք իրացնելու դեպքերում վիճարկվող դրույթը լիովին համահունչ է պայմանագրի ազատության և սեփականության անձեռնմխելիության սկզբունքներին»:

Պատասխանողի համոզմամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- Օրենսգրքով սահմանված փոխառության կանոնների նկատմամբ վարկային պայմանագրի գերակայություն նախատեսող վիճարկվող իրավադրույթն արդյո՞ք սահմանափակում է սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու անձի իրավունքը (Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մաս),

- վարկի ընդհանուր պարտքի գումարը և վարկային պայմանագրով նախատեսված տուժանքը վարկառուի ցանկացած հաշվից անվիճելի և անակցեպտ գանձելու վերաբերյալ վարկային պայմանագրով նախատեսված պայմանն արդյո՞ք նշանակում է, որ անձը զրկվում է սեփականությունից՝ առանց նրա կամքը հաշվի առնելու կամ առանց Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված երաշխիքների պահպանման,

- պարզել, եթե վիճարկվող նորմի կիրառման հետևանքով սահմանափակվում է անձի սեփականության իրավունքը, արդյո՞ք պահպանվում է սահմանափակման համաչափության սկզբունքը (Սահմանադրության 78-րդ հոդված),

- վիճարկվող նորմը վերլուծել, համադրելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի դրույթների հետ, և պարզել՝ արդյո՞ք դրանց միջև առկա է հակասություն, որը կարող է հանգեցնել որոշակիության սահմանադրական սկզբունքի խախտման, և որի պարագայում վարկառուն ի վիճակի չի լինի դրսևորել համապատասխան վարքագիծ (Սահմանադրության 79-րդ հոդված):

4. Մահմանադրական դատարանի դիրքորոշումները

4.1. ՀՀ Մահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում **ճանաչվում** և հավասարապես **պաշտպանվում** են սեփականության բոլոր ձևերը: Ճանաչել, պաշտպանել սեփականության իրավունքը ոչ միայն նշանակում է, որ այն ճանաչվում է պետության կողմից և պաշտպանվում է պետության միջամտությունից, այլ նաև ենթադրում է պետության պոզիտիվ պարտավորությունն ընդունելու այնպիսի իրավակարգավորումներ, որոնք անձի սեփականությունը կպաշտպանեն այլոց ոչ իրավաչափ գործողություններից:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) անդամ պետությունները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ ՄԻԵԿ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված անձի սեփականության իրավունքը խախտելուց, այլ նաև ընդունել այնպիսի օրենսդրություն, որը կպաշտպանի անձի սեփականության իրավունքը այլ անձանց ոտնձգություններից: Որոշ հանգամանքներում, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը կարող է պարտադրել «որոշ անհրաժեշտ միջոցառումներ սեփականության իրավունքը պաշտպանելու համար (...), նույնիսկ այն դեպքում, երբ վեճը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև է» («Sovtransauto holding v. Ukraine», 25/07/2002, app. no. 48553/99, § 96):

Կոնվենցիայի նշված դրույթով երաշխավորված իրավունքի արդյունավետ իրականացումը կախված է ոչ միայն պետության չմիջամտելու պարտականությունից, այլև կարող է պահանջել ձեռնարկել պոզիտիվ պաշտպանության միջոցներ, հատկապես, եթե ուղղակի կապ է առկա միջոցների միջև, որոնց ձեռնարկումը դիմողը կարող է օրինական կերպով ակնկալել իշխանություններից իր սեփականության հարգման իրավունքի արդյունավետ իրականացման համար» («Öneryildiz v. Turkey», GC 30/11/2004, app.no. 48939/99, §134):

ՀՀ Մահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

«Մահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրա-

ցումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն»** (ՄԴՈ-1009, կետ 5):

4.2. Օրենսգրքի քննարկվող 887-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Ցանկացած քաղաքացիաիրավական պայմանագիր պետք է կնքվի՝ ելնելով Օրենսգրքի 437-րդ հոդվածով սահմանված պայմանագրի ազատության սկզբունքի պահանջներից: Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում և իրականացնում իրենց կամքով, ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի օրենքին չհակասող ցանկացած պայման:

Վարկային պայմանագրի կնքելիս նախաձեռնող կողմ է հանդիսանում բանկի կամ վարկային կազմակերպության հաճախորդը, որը դիմում է բանկ կամ վարկային կազմակերպություն՝ վարկ ստանալու նպատակով: Հաճախորդը բանկի կամ վարկային կազմակերպության հետ համաձայնեցնում է վարկի չափը և պայմանները: Եթե հնարավոր վարկառուի համար վարկային պայմանագրով բանկի կամ վարկային կազմակերպության կողմից անընդունելի պայմաններ են նախատեսվում, ապա նա հնարավորություն ունի հրաժարվելու վարկային պայմանագրի կնքելու մտադրությունից, իսկ բանկը կամ վարկային կազմակերպությունը չի կարող պարտադրել հաճախորդին վարկային պայմանագրի կնքել վերջինիս համար անընդունելի պայմաններով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարկային պայմանագիրն ունի կոնսենսուալ բնույթ, այն երկկողմանի և հատուցելի պայմանագիր է, որը կարող է կնքվել միայն այն դեպքում, երբ կողմերը պայմանագրի պայմանների, մասնավորապես, տոկոսների, բանկային ծառայությունների այլ արժեքի և պայմանագրի խախտման դեպքում կողմերի գույքային պատասխանատվության շուրջ համաձայնության են եկել: Այնուհանդերձ, պետության միջամտությունը վարկային իրավահարաբերություններին ամբողջովին չի բացառվում:

Այսպես, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից հետևում է, որ նույնիսկ հորիզոնական հարաբերություններում կարող են լինել հանրային շահի նկատառումներ, որոնք պետության վրա որոշակի պարտավորություններ

են դնում («Kotov v. Russia», app. no. 54522/00, 22.04.2012, §109):

«Մասնավորապես, պայմանագրային կամ գույքային հարաբերությունները մասնավոր անձանց միջև կանոնակարգող իրավական համակարգի արդարությունը հանդիսանում է հանրության ուշադրության առարկա: Այդ իսկ պատճառով օրենսդրական միջոցները, որոնք ուղղված են նման արդարությանը հասնելուն, կարող են բխել հանրության շահերից, նույնիսկ եթե դրանք ներառում են սեփականության պարտադիր փոխանցումը մի մասնավոր անձից մյուսին» («James and others v. The United Kingdom», app. no. 8793/79, 21.02.1986, § 41):

Մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը մասնավոր անձանց հարաբերությունների առնչությամբ նշել է, որ «պետության պոզիտիվ պարտավորությունն է պաշտպանել քաղաքացուն և, հաշվի առնելով վաղեմության ժամկետի վատ հետևանքները, այս կերպ բանկերի համար նախատեսել ժամկետի ավարտից առաջ հաշվետիրոջն այդ մասին տեղեկացնելու պարտավորություն...: Նմանատիպ տեղեկություն չպահանջելը վտանգում է հանրության շահի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության հրամայականի միջև արդարացի հավասարակշռությունը» («Zolotas v. Greece» app. no. 66610/09, 29.01.2013, § 53):

4.3. Դիմողները վիճարկում են Օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, համաձայն որի «Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46-րդ գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով»:

Այսպես, Օրենսգրքի «Փոխառություն» վերտառությամբ 46-րդ գլխում, որը կարգավորում է փոխառության պայմանագրի կապակցությամբ ծագող քաղաքացիական իրավահարաբերությունները, ամրագրված է փոխառության պայմանագրի տոկոսների իրավական կարգավորումը սահմանող 879-րդ հոդվածը, որը կարող է կիրառվել նաև բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից վարկեր տրամադրելու կապակցությամբ ծագող քաղաքացիական իրավահարաբերությունների նկատմամբ:

Վկայակոչված 879-րդ հոդվածի համաձայն՝ փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթի **կրկնապատիկը**: Տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը, քաղաքացիական օրենսդրության առանցքային սկզբունքների՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության պահպանմամբ, միևնույն ժամանակ, ելնելով մասնավոր իրավահարաբերությունների կողմի ողջամիտ և հավասարակշռված պաշտպանության անհրաժեշտությունից, իմպերատիվ նորմերով սահմանափակել է փոխառության պայմանագրով սահմանվող տոկոսի չափի հարցում կողմերին վերապահված ազատությունը (879-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասություն): Օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է դրույթ, համաձայն որի «Պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին)»:

4.4. Ինչ վերաբերում է ժամկետանց վարկի մնացորդի նկատմամբ սահմանված տարեկան տոկոսադրույքին, ապա Սահմանադրական դատարանն այդ հարցին անդրադարձել է 2018թ. մայիսի 4-ի ՄԴՈ-1412 որոշմամբ և սույնով վերահաստատում է այդ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ Սահմանադրության 78-րդ հոդվածի համապատասխան իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար և համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում բացահայտել պայմանագրային տուժանքների՝ օրենքի իմպերատիվ դրույթներով նախատեսված վերին սահմանաչափերի հարցը:

Սահմանադրական դատարանն այդ հարցը մեկնաբանելիս հաշվի է առնում նաև սեփականության նկատմամբ ոտնձգությունների և միջամտության համաչափության վերաբերյալ ՄԻԵԴ-ի դիրքորոշումը, համաձայն որի՝ «Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը պահանջում է դրված նպատակի և օգտագործվող միջոցների միջև ողջամիտ համաչափության առկայություն, որպիսի պայմանը չի համարվում կատարված, եթե անձը ենթարկվել է «հատուկ և չափազանց ծանրաբեռնման» («Håkansson and Stureson v. Sweden», app. no. 11855/85, 21.02.1990, § 51):

Այսպես, Օրենսգրքի «Տուժանքի առավելագույն չափը և այն պակասեցնելը» վերտառությունը կրող 372-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը,

Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը»: Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ կետն իմպերատիվ նորմ է սահմանում, ըստ որի՝ պայմանը խախտող համաձայնությունն առ ոչինչ է: Փաստորեն օրենսդիրը, կանոնակարգման է ենթարկել բոլոր այն դեպքերը, երբ կողմերի նախատեսած պայմանագրային տուժանքի չափը կարող է անհամաչափ դառնալ պայմանագրի առարկա պարտավորության հիմնական գումարի նկատմամբ՝ սահմանելով վերին սահմանաչափ, որը պայմանագրային տուժանքը ոչ մի պարագայում գերազանցել չի կարող:

Բացի դրանից, քննարկվող հոդվածը հստակ մատնանշում է այն իրավիճակները, երբ տուժանքի՝ պարտավորության խախտման հետևանքներին ակնհայտորեն անհամաչափ լինելու պարագայում դատարանը կամ ֆինանսական համակարգի հաշտարարը *պարտապանի պահանջով պարտավոր են պակասեցնել վճարման ենթակա կամ վճարված պայմանագրով որոշված տուժանքի չափը*:

Փաստորեն, բացի պայմանագրային տուժանքների վերին սահմանաչափ սահմանելուց օրենսդիրը նպատակահարմար է գտել առանձին դեպքերում, որոշ կատեգորիայի սուբյեկտների գույքային շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով, էլ ավելի պակասեցնել պայմանագրային տուժանքի չափը՝ համապատասխան վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով պակասեցնել պայմանագրով որոշված տուժանքի չափը: Ընդ որում, դրույթում թվարկված սուբյեկտների սեփականության իրավունքի առավել համապարփակ պաշտպանության նկատառումներից ելնելով, օրենսդիրը վարույթն իրականացնող մարմնի վերը շարադրված պարտականությունը տարածել է թե՛ դեռևս չվճարված, թե՛ արդեն իսկ վճարված պայմանագրային տուժանքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի 4-րդ մասն էլ, որպես արդեն իսկ վճարված պայմանագրային տուժանքը վերադարձնելու երաշխիք, նախատեսում է, որ դատարանի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից տուժանքը պակասեցնելու դեպքում պարտատերը պարտապանի դիմումի հիման վրա դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր դառնալու պահից կատարում է վերահաշվարկ, իսկ տուժանքը վճարված լինելու դեպքում պարտապանին վերադարձնում է վճարված տուժանքի պակասեցված չափին համապատասխան գումար:

Հարկ է արձանագրել, որ, հաշվի առնելով պայմանագրի ազատության սկզբունքը (այդ թվում՝ վարկային պայմանագրի շրջանակներում դրսևորվող պայմանագրի ազատության սկզբունքը), օրենսդիրն իմպերատիվ կանոնակարգման է ենթարկել պայմանագրային տուժանքների հետ

կապված իրավահարաբերությունները՝ սահմանափակելով կողմերի հնարավորությունը՝ պայմանագրով նախատեսել հիմնական պարտավորության հետ անհամաչափության մեջ գտնվող պայմանագրային տուժանքներ:

Դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում է, իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքներից ելնելով, պայմանագրային տուժանքների ինստիտուտի վերին սահմանաչափի իրավական բովանդակության սահմանման և հիշյալ կանոնակարգման հետագա հնարավոր փոփոխման խնդիրը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» 189-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է համապատասխան ձևով իրականացնի ֆինանսական ծառայությունների իր կարգավորումների մոտարկումը Եվրոպական միության օրենսդրությանը: Այդ բնագավառում Եվրամիությունը, տույժերի ընտրությունը թողնելով անդամ պետությունների հայեցողությանը, գտնում է, որ նախատեսված տույժերը պետք է լինեն արդյունավետ, համաչափ և զսպող (EU Consumer Credit Directive (Directive 2008/48/EC):

4.5. Անդրադառնալով առանց վարկառուի համաձայնության նրա բանկային հաշիվներում առկա միջոցները տնօրինելու՝ բանկի իրավունքի մասին դիմողների փաստարկին՝ Սահմանադրական դատարանը նշում է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում ամրագրված են սեփականության անձեռնմխելիության ապահովման կարևորագույն երաշխիքներ, այն է՝ սեփականության իրավունքի սահմանափակումը հնարավոր է միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, իսկ սեփականագրկումը՝ միայն դատական կարգով և միայն օրենքով սահմանված դեպքերում:

Օրենսգրքի 926-րդ հոդվածն ամրագրում է՝ «Հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու՝ հաճախորդի իրավունքները չի թույլատրվում սահմանափակել, բացի **օրենքով նախատեսված դեպքերում** հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դնելուց կամ հաշվով գործառնությունները դադարեցնելուց»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2.1. մասի համաձայն՝ պարտապանի մոտ դրամական միջոցների առկայության դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավոր է պարտա-

պանի դրամական միջոցների վրա արգելանք դնել միայն այն չափով, որը նշված է հարկադիր կատարողի որոշման մեջ: Այդ պահանջների չպահպանման դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունն ավել պահած գումարի համար պարտավոր է յուրաքանչյուր օրվա համար վճարել տույժ՝ նշված գումարի 0.1 տոկոսի չափով:

Վերոհիշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դեպքերում անձի սեփականության իրավունքը վտանգվել չի կարող, քանի որ բանկերն իրավունք չունեն, ինչպես պնդում են դիմողները «սեփական հայեցողությամբ, ազատորեն տնօրինել բանկային հաշիվներում առկա գումարները»: Վարկառուի **դրամական միջոցների վրա արգելանք կարող է դրվել միայն այն գումարների չափով, որոնք սահմանված են պայմանագրով և որոնք պայմանագրային պարտավորությունների կատարման շրջանակներում պարտապանի (վարկառուի) կողմից չեն վճարվել:**

Այս կապակցությամբ հարկ է նշել նաև, որ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ պարտապանի անհիմն ստացած գումարի վճարման պահանջը չի կարող համարվել միջամտություն պարտապանի գումարի սեփականության հարգման իրավունքին, քանի որ **պարտքը չի կարող դիտարկվել որպես «ունեցվածք»** թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով («Cheminade v. France» (Dec.), app. no. 31599/96, 26.01.1999):

4.6. ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է Սահմանադրության 79-րդ հոդվածում ամրագրված որոշակիության սկզբունքին, գտնելով, որ այն նշանակում է, որ օրենքները պետք է լինեն այնպիսին, որ համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության համար, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1270):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ոչ միայն կոնկրետ իրավադրույթի կամ օրենքի համապատասխանությունը որակական որոշակի հատկանիշներին՝ հստակության, կանխատեսելիության և մատչելիության, այլ նաև, որ դրանք չեն կարող հակասել նույն իրավահարաբերության կարգավորմանն ուղղված այլ օրենքներում առկա դրույթներին, ինչը թույլ կտա իրավահարաբերությունների մասնակիցներին որոշակի պատկերացում կազմել իրենց իրավունքների և պարտավորությունների բնույթի և ծավալի մասին:

Վարկային պայմանագրի համապատասխան կետի՝ օրենքի իմպերատիվ դրույթին հակասելու հարցը դիմողը բարձրացրել է գործի դատական քննության ընթացքում՝ առաջին աստիճանի և վերաքննիչ դատարաններում: Մակայն դատարաններն իրենց դատական ակտերում որևիցե կերպ չեն անդրադարձել այդ հարցին: Այնուամենայնիվ, քննարկվող հակասության մասով հարկ է նկատել, որ հարցը լուծելի է Քաղաքացիական օրենսգրքով և «Մնանկության մասին» օրենքով նախատեսված իրավանորմերի շրջանակում:

Նախ՝ Օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով, իսկ 438-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին):

Երկրորդ՝ առաջին դիմողի վարկային պայմանագիրն ապահովված է եղել մյուս դիմողների հետ կնքված երաշխավորության պայմանագրերով և, Օրենսգրքի 377-րդ և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածների համաձայն, պարտադիր չպահանջները, այդ թվում՝ պայմանագրով սահմանված տուժանքները և վճարման ենթակա տոկոսները, կարող են բավարարվել երաշխավորություն տված անձանց միջոցների հաշվին :

4.7. Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ, ելնելով մասնավոր իրավահարաբերությունների կողմերի շահերի ողջամիտ և հավասարակշռված պաշտպանության անհրաժեշտությունից, վարկային պայմանագրերով սահմանվող տոկոսների և տուժանքների սահմանաչափերի առնչությամբ Օրենսգրքով նախատեսվել են անհրաժեշտ երաշխիքներ: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով վիճարկվող իրավադրույթը, եզրակացնում է, որ նախ՝ վարկային պայմանագրերը չեն կարող հակասել ՀՀ օրենսդրության իմպերատիվ նորմերի պահանջներին, և երկրորդ՝ ժամկետանց վարկերի համար վարկառուների նկատմամբ պայմանագրով սահմանվող տուժանքները չեն կարող գերազանցել նշված նորմերով որոշված սահմանները և պետք է արդյունավետ ու զսպող լինեն՝ չխախտելով համաչափության սահմանադրական սկզբունքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմա-

նադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

12 հունիսի 2018 թվականի
ՄԴՈ-1418



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Ն. Թովմայանի (նախագահող), Վ. Հովհաննիսյանի, Ա. Գյուլումյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 35-րդ հոդվածի, 40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1999 թվականի մայիսի 8-ին և ուժի մեջ մտել՝ 1999 թվականի մայիսի 14-ին:

Ուսումնասիրելով դիմումը, կողմերի գրավոր բացատրությունները, «Կրթության մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումները

1.1. Դիմողը Մարդու իրավունքների պաշտպանը, 2017 թվականի նոյեմբերի 6-ին դիմել է Սահմանադրական դատարան և խնդրել է որոշել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի Սահմանադրության 38-րդ հոդվածին համապատասխանության հարցն այնքանով, որքանով այն սահմանելով, որ «Պետական հանրակրթական դպրոցների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով», չի ապահովում պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ անվճար կրթություն՝ ստանալու իրավունքի լիարժեք իրացումը:

1.2. Դիմողը գտնում է՝ չնայած Սահմանադրությունը սահմանում է յուրաքանչյուրի անվճար ու պարտադիր միջնակարգ կրթության իրավունքը, պետությունը վիճարկվող օրինադրույթի հետևանքով պետական բյուջեի միջոցների հաշվին տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով անվճար ապահովում է միայն պետական հանրակրթական դպրոցների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին, իսկ այլ դասարանների աշակերտների դասագրքերի օգտագործման դիմաց սովորողների ծնողները (օրինական ներկայացուցիչները) վճարում են ներդրումային գումարներ, որոնց չափը, համաձայն ուսումնասիրությունների արդյունքների, ավելանում է յուրաքանչյուր տարի, իսկ «Կրթության մասին» ՀՀ օրենքը խոցելի խմբերի երեխաների դասագրքերի համար որևէ բացառություն չի նախատեսում:

1.3. Դիմողը գտնում է նաև, որ անվճար միջնակարգ կրթության իրավունքն իր մեջ ներառում է նաև անվճար դպրոցական դասագրքեր ստանալու իրավունքը: Դիմողի կարծիքով անվճար դպրոցական դասագրքերի տրամադրումը սահմանված է նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով:

1.4. Վկայակոչելով Կրթության և գիտության նախարարության տեղեկատվությանը ըստ որի՝ ա) սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական

բյուջեի՝ «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում, բ) սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը քննարկվում և ձևավորվում է հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում, որը հաստատվում է տնօրենի կողմից, դիմողը նշում է, որ պարզ չէ, թե ի՞նչ չափանիշների հաշվառմամբ, ի՞նչ սկզբունքով են ընտրվում ցուցակում ներգրավված երեխաները կամ նրանց ընտանիքները:

2. Պատասխանողի դիրքորոշումները

2.1. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ միջազգային չափանիշների լույսի ներքո պետությունն անվճար կրթությունն ապահովելու համատեքստում պարտավորվում է՝

ա) ապահովել կրթություն ստանալու մատչելիություն, այն է՝ յուրաքանչյուրը՝ անկախ իր գրադեցրած սոցիալական դիրքից կամ իր բնակության վայրի աշխարհագրությունից, կրթական ծրագրերից օգտվելու հավասար հնարավորություն ունենա,

բ) ապահովել տեղեկատվության և նյութերի մատչելիությունը բոլոր երեխաների համար,

գ) չզրկել որևէ անձի՝ կրթություն ստանալու հնարավորությունից, չմերժել որևէ անձի կրթության իրավունքը:

2.2. Վերոգրյալ չափանիշների լույսի ներքո պատասխանողն արձանագրում է, որ պետությունն իր՝ անվճար կրթությունն ապահովելու գործառույթի շրջանակում պարտավոր չէ աշակերտներից յուրաքանչյուրին ապահովել անվճար դասագրքերով: Այսպես, վերոգրյալ տնտեսական մատչելիության ապահովման գործառույթի շրջանակում պետությունը միայն ընդհանուր կերպով պարտավորվում է կա՛մ հարևանությամբ աշխարհագրորեն հարմար դպրոց հիմնել, կա՛մ հեռահար ուսուցում ապահովել, սակայն ոչ յուրաքանչյուր աշակերտի համար անվճար տրանսպորտ ապահովել: Նույն տրամաբանությամբ պետությունը պարտավորվում է դասավանդվող նյութերի մատչելիությունն ապահովել, ինչը չի ենթադրում յուրաքանչյուր աշակերտի անվճար դասագրքերի կամ գրենական պիտույքների տրամադրում: Սա նշանակում է, որ դասավանդվող նյութերը կարող են ապահովվել դպրոցի գրադարանում համապատասխան նյութերից օգտվելու հնարավորության սահմանմամբ կամ էլեկտրոնային եղանակով կամ խոցելի խմբերին ֆինանսական աջակցության ցուցաբերմամբ, որպեսզի որևէ աշակերտ ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով չզրկվի կրթություն ստանալու հնարավորությունից: Կոնկրետ դեպքում, պետությունը ՀՀ կրթության և գիտության նախարարի «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին Հայաստանի Հանրապետության պետական ուսումնական հաստատու-

թյունների կողմից անվճար տրվող դասագրքերի դիմաց փոխհատուցման ենթակա գումարների մասին» 2011 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1137-Ա/Ք հրամանով արդեն իսկ անհրաժեշտ իրավական հիմքեր է ստեղծել խոցելի սոցիալական խմբերին դասագրքերի անվճար ձեռքբերման հարցում ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու համար, իսկ դիմողի կողմից մատնանշված ենթադրյալ անարդարություններն այդ իրավական ակտի կիրառման ժամանակ դուրս են սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթների սահմանադրականության գնահատման տիրույթից:

2.3. Հետևաբար, միջազգային չափանիշների համաձայն՝ անվճար կրթությունը վերաբերում է պետության կողմից ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի, պետական ուսումնական հաստատությունների վարչական և մանկավարժական կազմի աշխատանքի վարձատրության, վերապատրաստման պետական ֆինանսավորմանը, այլ կերպ աշակերտների «հաճախելիության անվճարության» ապահովմանը: Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Եվրոպական սոցիալական խարտիայի (այսուհետ Խարտիա) նախադեպային իրավունքի ժողովածուի մեջ, անդրադառնալով Խարտիայի տարբեր հոդվածների մեկնաբանություններին, Խարտիայի 17-րդ հոդվածի 2-րդ մասի կապակցությամբ, այն է՝ տարրական և միջնակարգ կրթությունը պետք է անվճար լինի, նշում է՝ «Այս իրավունքը ներառում է հիմնական կրթական համակարգը: Ի լրումն, **թաքնված ծախսերը, ինչպիսիք են գրքերի և համազգեստների համար վճարները, պետք է լինեն ողջամիտ, և խոցելի խմբերի վրա դրանց ազդեցության նվազման ուղղությամբ միջոցներ պետք է ձեռնարկվեն**»¹:

2.4. Մա նշանակում է, որ ըստ էության դասագրքերի վճարովիությունը չի հակասում անվճար կրթության ապահովման պետության պարտավորությանը, սակայն դասագրքերի վճարները պետք է ողջամիտ լինեն, իսկ խոցելի խմբերը ֆինանսական օժանդակություն ստանան այս հարցում, որպեսզի որևէ մեկը ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով չզրկվի պարտադիր միջնակարգ կրթության իրավունքից: Դասագրքերի ներդրումային վճարները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով, իսկ այդ վճարների ողջամտությունը մեր գնահատման իրավասության մեջ չէ, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ անգամ հրամանով ոչ ողջամիտ գնի սահմանումը ինքնին չի կարող հանգեցնել դասագրքի ձեռքբերման վճարովիության դրույթ սահմանող օրենքով սահմանված նորմի հակասահմանադրականության:

2.5. Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը կարծում է, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

¹ See a DIGEST OF THE CASE LAW OF THE EUROPEAN COMMITTEE OF SOCIAL RIGHTS, 1 September 2008 <https://rm.coe.int/168049159f>, էջ 122:

3. Գործի էլքի համար նշանակություն ունեցող հանգամանքները

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի էլքի համար անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները.

ա) արդյո՞ք Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «... Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունը **անվճար է**» դրույթը բովանդակային առումով իր մեջ ներառում է դպրոցական դասագրքերի **անվճար լինելը**,

բ) որո՞նք են սոցիալական հիմնական իրավունքների սահմանադրական երաշխավորման առանձնահատկությունները,

գ) արդյո՞ք առկա են անհամաչափ ֆինանսական պարտականություններ, որոնք կարող են խոչընդոտել պետական հանրակրթական դպրոցների հինգերորդից տասներկուերորդ դասարաններում սովորողների՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների պարտադիր անվճար միջնակարգ կրթության իրավունքի իրականացմանը,

դ) արդյո՞ք անվճար կրթության սահմանադրական իրավունքն ամրագրելիս օրենսդիրը հաշվի է առել Հայաստանի Հանրապետության վավերացրած մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով սահմանված չափորոշիչները (Սահմանադրության 81-րդ հոդված):

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

Ա. Արդյո՞ք Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «... Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունը **անվճար է**» դրույթը բովանդակային առումով իր մեջ ներառում է դպրոցական դասագրքերի **անվճար լինելը**:

Անվճար միջնակարգ կրթության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու համար Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալին.

4.1. «Կրթության իրավունքի» սահմանադրական երաշխիքը պատմահամեմատական համատեքստում

Հայաստանի սահմանադրական իրավունքի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անվճար միջնակարգ կրթությունը և անվճար դպրոցական դասագրքերը ստանալու իրավունքները նույնական չեն: Անվճար կրթության իրավունքն ամրագրելիս դպրոցական դասագրքերի վերաբերյալ որևէ դրույթ չի պարունակել ո՞չ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 1937թ. մարտի 23-ի Սահմանադրության (Հիմնական օրենք) 96-րդ հոդվածը, և ո՞չ էլ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության 1922թ. փետրվարի 4-ի Սահմանադրության 6-րդ հոդվածի (ե) կետը: Միայն Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության 1978թ. ապրիլի 14-ի Սահմանադրության 43-րդ հոդվածն է հատուկ ամրագրել դասագրքերի անվճար

տրամադրումը՝ այն տարբերակելով անվճար կրթությունից: Սահմանադրության 43-րդ հոդվածը «կրթության բոլոր տեսակների անվճարությունը» ու «դպրոցական դասագրքերի անվճար տրամադրումը» դիտարկում էր որպես կրթության իրավունքն ապահովող միջոցներ: Սահմանադրական նշված ձևակերպումներից ուղղակիորեն բխում է, որ կրթության անվճարությունը չէր ներառում դպրոցական դասագրքերի անվճար տրամադրումը և դիտարկվում էր կրթության իրավունքի երաշխավորման բնագավառում պետության ինքնուրույն սահմանադրական պարտականություն: 1978թ. Սահմանադրության 43-րդ հոդվածով դասագրքերի անվճար տրամադրման վերաբերյալ առանձին դրույթի հատուկ ամրագրումն ակնհայտորեն ցույց է տալիս, որ մինչ այդ սահմանադրական մակարդակում այն չի դիտարկվել որպես անվճար կրթության իրավունքի բաղադրատարր: Հայաստանի Հանրապետության 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրությունը (35-րդ հոդված), ինչպես նաև դրա հետագա փոփոխությունները՝ 2005թ. (39-րդ հոդված) և 2015թ. (38-րդ հոդված), ամրագրել են միայն անվճար միջնակարգ կրթության իրավունքը: Այսինքն, ի տարբերություն 1978թ. Սահմանադրության, որն ուղղակիորեն ամրագրել է դասագրքերի անվճար տրամադրումը՝ որպես պետության պոզիտիվ սահմանադրական պարտականություն, 1995թ. Սահմանադրությամբ և դրա հետագա խմբագրություններում սահմանադիրը հրաժարվել է նման ամրագրումից, ինչը վկայում է, որ դասագրքերի անվճար տրամադրումը չի դիտարկվել որպես անվճար միջնակարգ կրթության իրավունքի բաղադրատարր: Անվճար կրթության իրավունքը դիտարկվել է որպես միայն «անվճար ուսումնառություն» նաև մասնագիտական գրականության մեջ:

4.2. Սահմանադրական նորմի իրացումը «Կրթության մասին» ՀՀ օրենքում 1995 թվականից

4.2.1. 1995թ. Սահմանադրության ընդունումից հետո 1999թ. «Կրթության մասին» ՀՀ օրենքում (ընդունված է Ազգային ժողովի կողմից 1999 թ. ապրիլի 14-ին, ՀՕ-297) օրենսդիրը անվճար կրթության ներքո հասկացել է բացառապես ուսման վարձը չվճարելու հանգամանքը: Այդ մասին է վկայում, մասնավորապես, գործող օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, 28-րդ հոդվածի 9-րդ մասը, որոնցով անվճար կրթությունը սահմանվում է որպես «պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ» կրթություն: Իսկ օրենքի սկզբնական տարբերակում (ՀՕ-297) 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում անվճար միջնակարգ կրթությունը տարանջատվել է դասագրքերի անվճար տրամադրումից: Եթե սահմանադիրը գտներ, որ անվճար կրթության սահմանադրաիրավական բովանդակությունն օրենքում հետագայում նեղացվել է, ապա նա հնարավորություն ուներ 2005թ. և 2015թ. սահմանադրական փոփոխություններով հստակեցնելու դրա բովանդակությունը՝ ուղղակիորեն

րեն ներառելով նաև դասագրքերի տրամադրումը, ինչպես, որ արվել էր 1978թ. Սահմանադրությամբ:

4.2.2. Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ անվճար միջնակարգ կրթությունը Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով միջնակարգ կրթություն ստանալու համար պետական ուսումնական հաստատություններ (պետական հանրակրթական դպրոց) ընդունվելու և ուսումնառության համար ուսման վարձի բացակայությունն է:

Բ. Որո՞նք են սոցիալական հիմնական իրավունքների սահմանադրական երաշխավորման առանձնահատկությունները:

4.3. Հիմնական իրավունքների և պետության նպատակների տարանջատումը. պետության հայեցողությունը պետության պարտականությունների իրագործման հարցում

4.3.1. Հիմնական իրավունքները որպես պաշտպանիչ իրավունքներ, նախ և առաջ, պետությունից պահանջում են ձեռնպահ մնալ այդ իրավունքը խաթարող ներգործությունից: Պաշտպանիչ իրավունքների առավելությունը սկզբունքորեն այն է, որ հիմնական իրավունքով պաշտպանված բարիքի խաթարման պարագայում հստակ է խախտման առկայությունը, և դրա իրավական հետևանքը, ինչպես նաև պաշտպանիչ իրավունքները հեշտ իրագործելի են, քանի որ պետությունից հիմնականում պահանջում են ընդամենը անգործություն՝ այդ իրավունքներին չմիջամտելու ձևով: Իհարկե, պաշտպանիչ իրավունքները կարող են նաև պահանջել կոնկրետ պոզիտիվ գործողություններ խախտման հետևանքները վերացնելու և վնասը փոխհատուցելու ձևով: Այս պարագայում պետության համար առաջ են գալիս նաև որոշակի ծախսեր: Այսինքն՝ նույնիսկ պաշտպանիչ իրավունքների պարագայում, որոնք անհրաժեշտաբար չեն պահանջում պետության պոզիտիվ գործողություններ, պետության համար առաջ են գալիս որոշակի ֆինանսական պարտականություններ:

4.3.2. Պաշտպանիչ իրավունքների համեմատ այլ բնույթ ունեն գործողություններ կատարելու պահանջի իրավունքները (ինչպիսին է նաև կրթության իրավունքը), որոնք անհրաժեշտաբար ենթադրում են պետության պոզիտիվ գործողությունների միջոցով տրամադրել որևէ բարիք: Այս պարագայում, առավել ևս, անխուսափելիորեն առաջանում են ծախսեր²:

4.3.3. Գործողություններ կատարելու պահանջի իրավունքներից հատկապես «սոցիալական հիմնական իրավունքները» (այդ թվում՝ կրթության իրավունքը) կարող են սահմանել պետական իշխանության համար չափազանց մեծ պարտավորություններ, որոնք կարող են իրագործվել միայն պետության առկա հնարավորությունների շրջանակում: Դա կարող է վտանգել հիմնական իրավունքների նորմատիվությունը, որոնք Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անմիջականորեն գործող իրավունք են:

4.3.4. Մինչդեռ, 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը կառուցված է մարդու հիմնական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների (Սահմանադրության գլուխ 2-րդ) ու տնտեսական,

² T. Kingreen, R. Poscher, Grundrechte. Staatsrecht II, 33., neu bearbeitete Auflage 2017, էջ 53-54:

սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքների ու պետության քաղաքականության հիմնական նպատակների հստակ տարանջատման մոտեցման վրա (Սահմանադրության գլուխ 3-րդ): Վերջիններիս Սահմանադրությամբ տրամադրվում է ամրագրման և պաշտպանության այլ ռեժիմ ու պարտադիրություն. պետություններն ապահովում են օրենսդրական երաշխիքներն ու պետության սոցիալական նպատակները միայն իրենց հնարավորությունների շրջանակում: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, բացի սուբյեկտիվ իրավունք սահմանող 38-րդ հոդվածից, 86-րդ հոդվածից, մասնավորապես, 6-րդ և 13-րդ կետերով որպես պետության քաղաքականության նպատակ է նախատեսում երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, ինչպես նաև անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը: Սակայն նշված դրույթները միայն պետության օբյեկտիվ իրավական պարտականություններ են (Սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին մաս) և չեն առաջացնում սուբյեկտիվ իրավունքներ: Այս հանգամանքով է պայմանավորված Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատումը:

4.3.5. Քանի որ դպրոցական դասագրքերի անվճար տրամադրումը չի մտնում անվճար կրթության սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առարկայի մեջ, ապա օրենսդրի հայեցողությանն է վերապահվում դասագրքերի անվճար տրամադրման ինդրի կարգավորումը էլնելով ոլորտում պետական քաղաքականության նպատակներից և առաջնահերթություններից, ֆինանսական միջոցների առկայությունից և դրանց արդյունավետ օգտագործումից: Այդուհանդերձ, այս գործառույթների իրականացման համար օրենսդրին և կառավարությանը վերապահված հայեցողության գնահատումը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

4.3.6. Պատահական չէ, որ նույնիսկ Եվրոպական Միության անդամ երկրների սահմանադրությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն կրթության, այդ թվում անվճար, իրավունքի երաշխավորման պարագայում, որևէ երկիր սահմանադրական մակարդակով չի ամրագրել դասագրքերի անվճար տրամադրումը³: Սակայն, անհրաժեշտ է նաև արձանագրել, որ առնվազն մի քանի երկիր,

³ Օրինակ՝ Բելգիայի Սահմանադրության 24-րդ հոդվածի 3-րդ պարագրաֆ, Բուլղարիայի Սահմանադրության 53-րդ հոդվածի 3-րդ մաս, Դանիայի Սահմանադրական ակտի 76-րդ պարագրաֆ, Ֆինլանդիայի Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին պարբերություն, Բոլանդիայի Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մաս, Շվեդիայի Սահմանադրության 21-րդ հոդված, Խորվաթիայի Սահմանադրության 66-րդ հոդվածի 2-րդ պարբերություն, Իտալիայի Սահմանադրության 34-րդ հոդվածի 2-րդ պարբերություն, Լյուքսեմբուրգի Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին մաս, Պորտուգալիայի Սահմանադրության 74-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետ, Բսպանիայի Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մաս, Լատվիայի Սահմանադրության 112-րդ հոդված, Լիտվայի Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ պարբերություն, Էստոնիայի Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին պարբերություն, Սլովակիայի Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մաս, Հունգարիայի Սահմանադրության 16-րդ հոդված, Լեհաստանի Սահմանադրության 70-րդ հոդվածի 2-րդ մաս, Սլովենիայի Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ պարբերություն, Մալթայի Սահմանադրության 10-րդ հոդված, Գիպրոսի Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մաս, Ֆրանսիայի Սահմանադրության նախաբանի 13-րդ պարբերություն, Հունաստանի Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մաս, Չեխիայի՝ Մարդու հիմնարար իրավունքների հռչակագրի 33-րդ հոդվածի 2-րդ մաս, Ռումինիայի Սահմանադրության 32-րդ հոդվածի 4-րդ մաս:

օրինակ՝ Ֆինլանդիան, Մեծ Բրիտանիան, Լատվիան, Էստոնիան, Կիպրոսը, Ճապոնիան դասագրքերի անվճար տրամադրումն ամրագրել են օրենքի մակարդակում և սահմանադրական կարգավորումների բացակայության պայմաններում, ըստ էության, դա մեկնաբանել են որպես անվճար կրթության բաղադրատարր:

4.4. Կրթության ոլորտում հանրության կարիքների և պետության հնարավորությունների միջև ողջամիտ հավասարակշռության անհրաժեշտությունը

4.4.1. Անվճար կրթության ներքո, բացի ուսման վարձը չվճարելու հանգամանքից, նաև այլ բաղադրատարրեր ներառելու պարագայում հարց է առաջանում, թե ինչու պետք է առավելություն տրվի միայն դասագրքեր և ոչ թե ուսումնական գործընթացի համար ոչ պակաս կարևոր այլ բաղադրիչներ (ինչպես, օրինակ, գրենական պիտույքներ, սնունդ, դպրոցական հանդերձանք) անվճար տրամադրելուն: Այսպիսի ընկալման պարագայում անթույլատրելի կլինի ցանկացած տարբերակումը ոչ միայն հանրակրթական դպրոցի 1-4-րդ, նաև 5-12-րդ դասարանների միջև: Մինևույն ժամանակ, Սահմանադրության 38-րդ հոդվածի 2-րդ մասով անվճար կրթություն ստանալու հնարավորություն է նախատեսված նաև պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում:

4.4.2. «Անվճար կրթություն» հասկացության այդպիսի լայն մեկնաբանությունը խախտում է ողջամիտ հավասարակշռությունը կրթության ոլորտում հանրության կարիքների և պետության հնարավորությունների միջև: ՄԻԵԴ-ը ևս իր դատական պրակտիկայում ընդգծել է այն միտքը, որ «կրթությունը կազմակերպման տեսանկյունից բարդ և իրականացման տեսանկյունից թանկ գործունեություն է, քանի որ միջոցները, որ իշխանությունը կարող է տրամադրել դրա համար, սահմանափակ են: Ճիշտ է նաև այն, որ կրթության մատչելիությունը կարգավորելիս և, մասնավորապես, դրա համար վճար գանձելը կամ չգանձելը կամ ումից գանձելը կարգավորելիս Պետությունը պետք է հավասարակշռություն պահի մի կողմից իր իրավագործության տակ գտնվող անձանց կրթական կարիքների և, մյուս կողմից, դրանց ապահովման համար իր սահմանափակ հնարավորությունների միջև»⁴:

Գ. Արդյո՞ք առկա են անհամաչափ ֆինանսական պարտականություններ, որոնք կարող են խոչընդոտել պետական հանրակրթական դպրոցների հինգերորդից տասներկուերորդ դասարաններում սովորողների՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների պարտադիր անվճար միջնակարգ կրթության իրավունքի իրականացմանը:

4.5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ, սահմանելով պարտադիր միջնակարգ կրթության պահանջ, մինևույն ժամանակ, դրանով չպետք է անհամաչափ ֆինանսական պարտականություններ դրվեն դպրոցականների և նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների)

⁴ Case of Ponomaryovi v. Bulgaria, 5335/05, 21/06/2011, կետ 55:

վրա: Պարտադիր կրթությունից բխող ծախսերը՝ աշակերտների միատեսակ դպրոցական հագուստի, գրենական պիտույքների, սպորտային համազգեստի, ներառյալ՝ դպրոցական դասագրքերի գները, դրանց համար նախատեսված վճարները չպետք է լինեն այնպիսի մակարդակի, որ հարցականի տակ դնեն պարտադիր միջնակարգ կրթության անվճար լինելու սկզբունքը⁵:

4.6. «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ Մահմանադրական դատարանը ՀՀ կրթության և գիտության նախարարությունից, ի թիվս այլ հարցերի, տեղեկություններ է պահանջել նաև այն մասին, թե յուրաքանչյուր տարի որքա՞ն գումար է հատկացվում դասագրքերի տպագրության համար, և արդյո՞ք առկա է 5-12-րդ դասարաններում սովորող, սոցիալապես անապահով խմբի աշակերտներին դասագրքերը զեղչով կամ անվճար տրամադրելու որոշակի կարգ: Ի պատասխան այդ հարցադրումների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 2018 թվականի մայիսի 8-ի թիվ 01/10/5028-18 տեղեկատվությամբ հայտնել է, որ «Յուրաքանչյուր տարի դասագրքերի տպագրության համար հատկացվող գումարի չափը կայուն չէ, այն որոշվում է նախարարությանը ներկայացրած հայտերով՝ կազմված տվյալ ուստարվա սովորողների փաստացի թվաքանակի և պահանջվող դասագրքերի հիման վրա»: Երկրորդ հարցի առնչությամբ նախարարությունը տեղեկացրել է, որ «Հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին հատկացվող դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում: Հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը կազմվում է հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում և հաստատվում տնօրենի կողմից»: Մինևույն ժամանակ, նշված գրությամբ նախարարությունն արձանագրել է, որ դասագիրք չունենալու պատճառով դպրոց չհաճախող սովորողներ չկան, քանի որ դասագրքերով ապահովման հարցը կարգավորվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 21-ի N752-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրապարակելու կարգի» 10-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի, 11-րդ կետի պահանջներով: Նշվել է նաև, որ «Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին հաստատությունը ճշտում է անհրաժեշտ դասագրքերի քանակը՝ ելնելով փաստացի սովորողների թվից, և տվյալ ու նախորդ ուսումնական տարիներին ստացված դասագրքերի պակասորդի պարագայում կարող է ներկայացնել լրացուցիչ հայտ»:

4.7. ՀՀ կրթության և գիտության նախարարի 28.07.2017թ. N834-Ս/2 «Հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների 2017-

⁵ Kingreen, Art. 14 Rn. 2 // in C. Callies, M. Ruffert, EUV/AEUV Das Verfassungsrecht der Europäischen Union mit Europäischer Grundrechtecharta Kommentar, 5. Auflage 2016: Report submitted by the Special Rapporteur, Katarina Tomasevski, E/CN.4/2004/45, 15 January 2004, կետ 26:

2018 ուսումնական տարվա դասագրքերի համար ներդրումային գումարների չափը հաստատելու մասին» հրամանի հավելվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 5-12-րդ դասարանների դասագրքերի համար ներդրումային նվազագույն գումարը կազմում է 300 դրամ, իսկ առավելագույն գումարը՝ 550 դրամ: Սահմանադրական դատարանի գնահատմամբ նշված նույնիսկ առավելագույն գումարը՝ մեկ դասագրքի համար 550 դրամը, **սոցիալապես ոչ անապահով ընտանիքի կողմից վճարելը չի կարող դիտվել որպես պետական** ուսումնական հաստատություններում անվճար միջնակարգ կրթության իրավունքի նկատմամբ էական միջամտություն:

4.8. Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ պետությունը պարտավոր է երաշխավորել սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար դասագրքերի հասանելիությունն ապահովող բավարար որոշակի, թափանցիկ և հավասարության վրա հիմնված ընթացակարգեր: Այս առումով «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում փոխհատուցման կարգը խնդրահարույց է դասագրքերի հասանելիությունը երաշխավորելու առումով առնվազն երկու պատճառով: Նախ՝ նշված կարգը չի հստակեցնում ընտանիքի՝ «սոցիալապես անապահով» կարգավիճակ ձեռքբերելու և այդ կարգավիճակով պայմանավորված՝ դասագրքերն անվճար կամ էականորեն նվազեցված գնով հասանելիությունն ապահովելու հստակ ընթացակարգեր: Եվ երկրորդ՝ մարդու հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը, սովյալ դեպքում՝ սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը, պետք է ամրագրվեն օրենքով և ի կատարումն այդ օրենքի ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

Դ. Արդյո՞ք անվճար կրթության սահմանադրական իրավունքն ամրագրելիս օրենսդիրը հաշվի է առել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով այդ իրավունքի ապահովման կապակցությամբ ստանձնած պարտավորությունները և համապատասխան իրավական պրակտիկան (Սահմանադրության 81-րդ հոդված, մաս 1):

4.9. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ոչ՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով, և ոչ էլ այդ պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայում

նախատեսված չէ, որ անվճար միջնակարգ կրթությունը ներառի նաև դպրոցական դասագրքերի անվճար տրամադրումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերը նշված նախադեպային իրավունքից հետևում է, որ «կրթության իրավունքն իր բնույթով ենթադրում է Պետության կողմից կանոնակարգում, և այդ կանոնակարգումը կարող է ժամանակի և տարածության մեջ տարբերվել համայնքի կարիքներին և հնարավորություններին համապատասխան»⁶:

Պետք է հաշվի առնել նաև, որ Հայաստանի Հանրապետությունն անվճար կրթության իրավունքի երաշխավորման հարցում շատ ավելի ընդգրկուն պարտավորություններ է ստանձնել, քան նախատեսված է միջազգային փաստաթղթերով⁷: Վերջիններս անվճար կրթության իրավունքը հիմնականում երաշխավորում են «տարրական» («սկզբնական», «առաջնային») կրթության համար («primary education» կամ «elementary school»)⁸, որը պարտադիր է:

Այսպես, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» 1966 թվականի Միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածը սահմանում է, որ բոլորի համար պարտադիր և անվճար պետք է լինի տարրական կրթությունը, իսկ միջնակարգ կրթության համար պահանջում է, որ այն՝ իր տարբեր ձևերով, ներառյալ՝ միջնակարգ տեխնիկական և մասնագիտական կրթությունը, բաց և մատչելի լինի բոլորի համար՝ բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես, առաջադիմական անվճար կրթություն մտցնելու միջոցով:

Մինչդեռ, ի կատարումն Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը նախատեսել է, որ Հայաստանի Հանրապետությունում պարտադիր է ճանաչվում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի

⁶ Case of Ponomaryovi v. Bulgaria, 5335/05, 21/06/2011, կետ 53, Case “Relating to certain aspects of the laws on the use of languages in education in Belgium” v. Belgium (merits), 23 July 1968, , **B. Interpretation adopted by the Court**, կետ 5; Campbell and Cosans v. the United Kingdom, 25 February 1982, կետ 41, Series A no. 48; Çiftçi v. Turkey (dec.), no. 71860/01, ECHR 2004 VI; Konrad v. Germany (dec.), no. 35504/03, ECHR 2006 XIII.

⁷ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի 1-ին մաս, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966թ. դեկտեմբերի 16-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի 2-րդ մաս, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1989թ. նոյեմբերի 20-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածի 1-ին մաս:

⁸ «Տարրական» («սկզբնական») կրթությունը, համաձայն միջազգային փաստաթղթերի, սովորաբար սկսվում է 5-7 տարեկանում և տևում է մոտավորապես 7 տարի՝ չնայած կարող է տևել նաև 4-7 տարի՝ որպես կանոն մինչև 10-12 տարեկանը: UNESCO International Standard Classification of Education (ISCED) (2011), կետ 120-123, CESC General Comment No. 13: The Right to Education (Art. 13), adopted at the Twenty-first Session of the Committee on Economic, Social and Cultural Rights, on 8 December 1999, կետ 9, The World Declaration on Education for All, adopted by the World Conference on Education for All, held at Jomtien, Thailand from 5-9 March 1990, 5-րդ հոդված 1-ին մաս:

իրացվել ավելի վաղ: Միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

- 1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ),
- 2) միջին դպրոց (5-9-րդ դասարաններ),
- 3) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

12 հունիսի 2018 թվականի
ՄԴՈ-1419



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 381-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԱՅՆ ԴԵՊԲՈՒՄ, ԵՐԲ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՉԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՍՈՒՅՆ ՀՈԴՎԱԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ..., ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՍԲ ԱՅՆ ԹՈՂՆՎՈՒՄ Է ԱՌԱՆՅ ՔՆՆՈՒԹՅԱՆ» ԴՐՈՒՅԹԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ՀՀ վճռաբեկ դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(92)2018

..., վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության» դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Գործի քննության առիթը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 26-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են, որոնցով ներկայացվել են ՀՀ վճռաբեկ դատարանի 2018 թվականի մարտի 20-ի թիվ ՍԴ/0088/01/12 և ԵԿԴ/0056/11/17 քրեական գործերով «Բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումները:

Ուսումնասիրելով դիմումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան նորմերը, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1.Դիմողի դիրքորոշումները

Ըստ դիմողի՝ վիճարկվող հողվածի 1-ին և 2-րդ մասերի համադրված վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը մի կողմից ամրագրել է վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջները, մյուս կողմից՝ այդ պահանջների չպահպանման դեպքում վերաքննիչ բողոքն «...առանց քննության թողնելու ձևով արտահայտվող իրավական հետևանքը»:

Փաստարկելով դատարանի մատչելիության իրավունքի՝ քննարկվող սահմանափակման հետապնդվող նպատակին անհամաչափ լինելը և հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածին՝ դիմողը նշում է, որ համաչափության սկզբունքի բովանդակությունից հետևում է, որ իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է պիտանի և անհրաժեշտ լինի հետապնդվող նպատակին հասնելու համար և հետապնդվող նպատակի հետ գտնվի համարժեք հարաբերակցության մեջ: Այլ կերպ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև պետք է լինի արդարացի հավասարակշռություն, կիրառվող միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար չպետք է լինի չափից ավելի խիստ շրջանցելով այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող հողվածի 1-ին մասում նախատեսված վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները մեծ մասամբ տեխնիկական են, որի պատճառով շատ հաճախ դրանց չպահպանումը գուտ անփութության հետևանք է, անվերականգնելի չեն և դրանք չպահպա-

նելու, թերություններով վերաքննիչ բողոք ներկայացնելու պարագայում կարող են շտկվել բողոքաբերի կողմից:

Նման պայմաններում, «պիտանիության» չափանիշի տեսանկյունից, թեև վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը հնարավորություն է տալիս հասնելու արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակին, այսինքն՝ բացառում է թերություններով վերաքննիչ բողոքներին հետագա ընթացք տալու հնարավորությունը, սակայն Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքի նկատմամբ այդ եղանակով իրականացվող միջամտությունը, *prima facie*, չի համապատասխանում «անհրաժեշտության» չափանիշին: Մասնավորապես, եթե նույն արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակին կարելի է հասնել, օրինակ, բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքի ձևական բնույթ ունեցող թերությունը ուղղելուց հետո, ուստի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու ձևով Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքի նկատմամբ իրականացվող միջամտությունը չի կարող համարվել այնպիսի բացառիկ միջոց, որի կիրառմամբ է միայն հնարավոր հասնել հետապնդվող նպատակին:

Վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու պարագայում, երբ անձը վերաքննիչ բողոքում թույլ տրված ձևական թերության արդյունքում զրկվում է իրեն առնչվող դատական ակտի իրավաչափությունը վերադաս դատական աստիճանի կողմից վերանայման ենթարկվելու իրավունքից, խախտվում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը, քանի որ իրականացվող միջամտությունն իր բնույթով սահմանափակում է Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը:

Դիմողը եզրահանգում է, որ Օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածի պահանջներին, ..., վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության» ձևակերպման ուժով ձևական սխալների առկայության պարագայում վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն անհամաչափորեն սահմանափակում է անձի արդար դատաքննության, այդ թվում՝ Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանող կողմի՝ վերաքննության կարգով վարույթ հարուցելու համար անհրաժեշտ են «ինչպես բողոքարկման իրավունքի նախադրյալները, այնպես էլ բողոքարկման իրավունքի իրացման պայմանները»: Պատասխանողի կարծիքով «օրենսդիրը չի կարող այնպիսի ընթացակարգեր սահմանել, որոնք հնարավորություն չտան բողոքարկման իրավունքի իրացման պայմանի ոչ պատշաճ իրացման դեպքում այն շտկել»: Ըստ պատասխանողի՝ «...նման շտկման անվերջ շրջապտույտը բացառե-

լու նպատակով օրենսդիրը դատավարական օրենսգրքերում իրավաչափորեն սահմանում է տեխնիկական սխալի շտկման մեկ հնարավորություն: Սակայն կոնկրետ դեպքում օրենսդիրը չի սահմանել դատական ակտի տեխնիկական սխալները վերացնելու բողոքը դատարանի կողմից վերադարձնելու, բողոքաբերի կողմից թույլ տրված սխալները ուղղելու և նորից ներկայացնելու իրավական հնարավորություն, ինչը կոչված պետք է լիներ ապահովելու դատարանի մատչելիության սկզբունքի գործնական իրացումը»: Ըստ պատասխանողի՝ սույն գործով սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթով սահմանված իրավակարգավորումների պայմաններում դատարանի մատչելիությունն «արդյունավետ չէ», քանզի բողոք բերող անձը չունի հստակ և գործնական հնարավորություն բողոքարկելու իր իրավունքները շոշափող դատական ակտը որևէ տեխնիկական բացթողման դեպքում: Պատասխանողի գնահատմամբ՝ սույն գործով սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթը «անհամաչափորեն սահմանափակում է անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը», հետևաբար կարծում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

3. Գործի ելքի համար նշանակություն ունեցող հանգամանքները

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի ելքի համար անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները.

ա) արդյո՞ք վեճի առարկա իրավակարգավորումն ապահովում է Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքի իրացումը, և արդյո՞ք պահպանված են այդ իրավունքը հարգելու և պաշտպանելու հանրային իշխանության՝ Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված պարտականության իրացման անհրաժեշտ նախապայմանները,

բ) արդյո՞ք վիճարկվող նորմն իր իրավակարգավորիչ նշանակությամբ բավարարում է հիմնական իրավունքների և ազատությունների նշանակության և դրանց սահմանափակման միջև համաչափության պահպանման, ինչպես նաև՝ այդ իրավունքների ու ազատությունների էության անխախտելիության վերաբերյալ՝ Սահմանադրության 78 և 80-րդ հոդվածների պահանջներին,

գ) արդյո՞ք վեճի առարկա իրավակարգավորումը Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից համապատասխանում է իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշներին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Դատական ակտերի բողոքարկման կառուցակարգը կարևոր երաշխիք է Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար: Գործող օրենսդրությամբ նախա-

տեսված են այդ կառուցակարգի կիրառման ընթացակարգեր: Ընդ որում՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությունից անմիջակա- նորեն բխում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ օրենքով սահմանելու իրավունքի պաշտպանությանը միտված իրավական այն- պիսի միջոցներ, որոնք կապահովեն անկախ, անաչառ և մատչելի արդարադատության միջոցով անձանց հիմնական իրավունքների ու ազատու- թյունների արդյունավետ, արդար պաշտպանություն՝ ինչպես գործի ըստ էության քննության, այնպես էլ դատական ակտերի հետագա բողոքար- կման շրջանակներում:

Սահմանադրական դատարանն իր նախորդ բազմաթիվ որոշումներում (ՄԴՈ-690, 719, 733, 765, 780, 849, 873, 890, 918, 922, 936, 1037, 1052, 1062, 1114, 1115, 1190, 1191, 1192, 1196, 1197, 1220, 1222, 1231, 1249, 1254, 1257, 1263, 1265, 1268, 1275, 1289, 1290, 1293, 1395) անդրադարձել է արդար դատաքննության և դատական բողոքարկման, դատարանի մատչելիու- թյան հիմնախնդիրներին, կարևորելով վերջինս որպես կարևոր նախա- պայման՝ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունք- ների ու ազատությունների արդյունավետ պաշտպանության համար: Վերոթվարկյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորո- շումները, ելնելով սույն գործով բարձրացված հիմնախնդրի էությունից, հիմնականում հանգել են հետևյալին.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյու- նավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրու- թյամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնա- բանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունե- նալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրա- վունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դա- տարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որո- շակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է վերոհիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները և միաժամանակ արձանագրում, որ դրանք իրենց էությամբ համադրելի են նաև 2015թ. սահմանադրական փոփոխություններին, ինչպես նաև կիրառելի՝ սույն գործով դիմող կողմի բարձրացրած սահմանադրաիրավական հիմնախնդրի շրջանակներում:

4.2. Քրեական վարույթի շրջանակներում, ելնելով անձանց իրավունքների ու ազատությունների հնարավոր օբյեկտիվ սահմանափակման իրողությունից, Սահմանադրությամբ հատուկ կարևորվել է դատական ակտերի բողոքարկման արդյունավետ կառուցակարգի սահմանադրաիրավական նշանակությունը: Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք: Սահմանադրության 61-րդ հոդվածի իրավական ընդհանուր բովանդակության համադրմամբ, հիմք ընդունելով նաև Սահմանադրության ինչպես 3, 23, 27, 28 և 75-րդ հոդվածների անխախտելիությունը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ իրավունքի իրացման ընթացակարգերը պետք է անվերապահ համադրելի լինեն սահմանադրական վերոհիշյալ նորմերի պահանջներին, համապատասխանեն նաև Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներում ամրագրված՝ իրավակարգավորման համաչափության և որոշակիության սկզբունքներին, ապահովեն այդ իրավունքի էության անխախտելիությունն ու համապատասխանեն այն երաշխավորելու միջազգային իրավական պրակտիկային (Սահմ. 80 և 81-րդ հոդվածներ):

4.3. Սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման վերլուծությունը և համադրումը Օրենսգրքի համապատասխան այլ նորմերի հետ վկայում է, որ քրեական վարույթում նախատեսվելով առաջին ատյանի դատարանի ակտերի վերաքննիչ բողոքարկման ընթացակարգ (Օրենսգրքի 46-րդ գլուխ), օրենսդիրը նպատակ է ունեցել դատավարական համապատասխան փուլի շրջանակներում սահմանել անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացման միջոցներ և դրանց գործադրման իրավական որոշակի հնարավորություններ, այդ թվում՝ բողոքարկող անձի կողմից իր իրավունքների պաշտպանությանն ուղղված ձևական և բովանդակային բնույթի՝ կատարման համար պարտադիր պահանջներ: Մասնավորապես, սահմանված են.

- վերաքննիչ բողոքներով գործեր քննող դատարանը (Օրենսգրքի 377-րդ հոդված),
- վերաքննիչ բողոք բերելու դատավարական իրավունք ունեցող անձանց շրջանակը (Օրենսգրքի 376-րդ հոդված),

- վերաքննության կարգով բողոքարկելի դատական ակտերի շրջանակը (ինչպես՝ գործով ըստ էության, այնպես էլ՝ միջանկյալ) (Օրենսգրքի 376.1-րդ հոդված),

- վերաքննիչ բողոք ներկայացնելու ընդհանուր կարգը և ժամկետները, նման բողոք բերելու հիմքերը (Օրենսգրքի 378, 379, 380 և 380.1-րդ հոդվածներ),

- վերաքննիչ բողոքի բովանդակությունը և այն վարույթ ընդունելու պայմանները (Օրենսգրքի 381-րդ հոդված),

- վերաքննիչ բողոքի ընդունմամբ պայմանավորված դատավարության շահագրգիռ այլ անձանց դատավարական իրավունքների ու պարտականությունների շրջանակը և դրանց իրացման ընթացակարգը (Օրենսգրքի 382-րդ հոդված),

- բողոքարկման հետևանքները (Օրենսգրքի 383-րդ հոդված):

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ կարգավորումներն իրենց ընդհանուր բովանդակությամբ միտված են նախատեսելու իրավական միջոցներ, ընթացակարգեր՝ քրեական վարույթի շրջանակներում վերաքննության կարգով դատական բողոքարկման անձանց սահմանադրական իրավունքի իրացման համար: Հետևաբար, իրավական այդ նպատակին ընդհանուր միտվածությունը հետապնդում է Սահմանադրությամբ նախանշված նպատակ, քանի որ այդ կարգավորումներն օրյեկտիվորեն կոչված են ապահովելու Սահմանադրության նորմերի կիրառումը:

Միաժամանակ վերոհիշյալ իրավակարգավորման ամբողջական վերլուծությունից հետևում է, որ այն պարունակում է նաև վերաքննիչ բողոքին ներկայացվող գուտ բովանդակային պահանջներ: Այսպես՝ բողոք բերող անձը պարտավոր է շարադրել «բողոքի հիմքերը և պահանջը», «վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի էլքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջբերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ՝ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը», «առկայության դեպքում՝ այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում նախօրոք չհետազոտված ապացույցները»:

Նման պայմաններում ակնհայտ է, որ վերաքննիչ բողոքում հայտնաբերված թերությունների կամ սխալների նկատմամբ պետք է դրսևորվի տարբերակված մոտեցում, ինչի հետևանքով անհրաժեշտ կլինի նաև սահմանազատել դրանցից հետևող հնարավոր իրավական հետևանքները: Եթե ձևական պահանջների խախտման դեպքում չափազանց խիստ հետևանքներ նախատեսելը կսահմանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը, ապա բովանդակային պահանջների խախտման հանդեպ անհամաչափ մեղմ գնահատականը կարող է այդ իրավունքի չարաշահման նախադրյալներ ստեղծել:

Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջն է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևաբար, այս տեսանկյունից Սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն իրավունքի իրացման կարգի օրենքով նախատեսման փաստը սուսկ, այլև նման կարգի **արդյունավետությունը**, այսինքն օրենքի նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների, ձևերի առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը՝ կոնկրետ դեպքում հաշվի առնելով նաև Սահմանադրության 78, 79, 80 և 81-րդ հոդվածների պահանջները:

4.4. Անդրադառնալով քրեական վարույթում վերաքննիչ բողոքարկման շրջանակներում վերը հիշատակված հատկապես ձևական պահանջների առաջադրման և դրանց իրավակարգավորիչ նշանակության խնդրին՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել հատկապես միջազգային իրավական պրակտիկայում հաստատագրված սկզբունքների պահպանման տեսանկյունից (Սահմ. 81-րդ հոդված):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ «...չափազանցված ձևականությունը վերաբերում է մասնավորապես ընթացակարգային կանոնների նեղ մեկնաբանություններին, որոնք կարող են դիմումատուներին զրկել իրենց դատարանի մատչելիության իրավունքից: Սա կարող է ներառել սահմանված ժամկետների, ընթացակարգային կանոնների և ապացույցների նեղ մեկնաբանությունները¹:

Իր մի շարք նախադեպային որոշումներում ՄԻԵԴ-ը մասնավորապես գտել է, որ.

1. Case of Reklós and Davourlis v. Greece, 15 January, 2009, Application no. 1234/05

28. ... Բողոքն անընդունելի համարելը միայն այն հիմքով, որ դիմումատուները «իրենց բողոքում չեն նշել այն փաստական հանգամանքները,

¹ Աղբյուրը՝ ԵԴ վճիռների պաշտոնական կայք, <https://hudoc.echr.coe.int>, Handbook on European law relating to access to justice, 2016, pages 119-121, https://www.echr.coe.int/Documents/Handbook_access_justice_ENG.pdf

որոնց հիման վրա Վերաքննիչ դատարանը նրանց բողոքը մերժելու վերաբերյալ որոշում է կայացրել», չափազանցված ձևականություն է և խոչընդոտում է դիմումատուների Վճռաբեկ դատարանի կողմից իրենց գործի ըստ էության քննության իրավունքի իրականացմանը (տես *Běleš and Others v. the Czech Republic*, no. 47273/99, § 69, ECHR 2002 IX, and *Zvolský and Zvolská v. the Czech Republic*, no. 46129/99, § 55, ECHR 2002 IX)²:

2. *Case of Shuli v. Greece*, 13 July 2017, (Application no. 71891/10)

26. ... Ընթացակարգային նորմերը կիրառելիս ներպետական դատարանները պետք է խուսափեն և չափազանցված ձևականությունից, որը կազդի ընթացակարգի արդարացիության վրա, և չափազանցված ճկունությունից, որը կհանգեցնի օրենքով սահմանված ընթացակարգային պահանջների վերացմանը (տես *Walchli v. France*, no. 35787/03, § 29, 26 July 2007, և *Peca v. Greece* (no. 2), no. 33067/08, § 30, 10 June 2010): Փաստացիորեն, դատարանի մատչելիության իրավունքը թուլանում է, երբ կանոնները չեն ծառայում իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և դառնում են խոչընդոտ իրավասու դատարանի կողմից դատավարության մասնակցի գործի ըստ էության քննության համար (տես *Kart v. Turkey [GC]*, no. 8917/05, § 79, ECHR 2009 (extracts); *Efstathiou and Others v. Greece*, no. 36998/02, § 24, 27 July 2006; *Vamvakas v. Greece*, no. 36970/06, § 26, 16 October 2008; *Louli-Georgopoulou v. Greece*, no. 22756/09, § 39, 16 March 2017):

29. Դատարանը... գտնում է, որ չպատճառաբանված բողոքի քննարկման մերժումը հետապնդում է արդարադատության պատշաճ իրականացման և իրավական որոշակիության ապահովման իրավաչափ նպատակ: Սույն գործում խնդիրն այն է՝ արդյոք ք Նաֆայլիոնի հինգ անդամից բաղկացած վերաքննիչ դատարանը, իրավաչափ նպատակներ հետապնդելով, խախտել է արդարացի հավասարակշռությունը կիրառված միջոցի և հետապնդվող նպատակների միջև: Հատկապես, հարց է առաջանում, թե արդյոք դիմումատուի բողոքը ներպետական դատարանների կողմից համարվել է անընդունելի չափազանցված ձևականության արդյունքում, հաշվի առնելով բողոքի կարևորությունը և այն, թե երկարաժամկետ ազատազրկման դատապարտված դիմումատուի համար ինչ հարց էր դրված վարույթում (տես *Labergere v. France*, no. 16846/02, § 20, 26 September 2006): Դատարանը հաջորդիվ պետք է գնահատի, թե արդյոք սահմանափակումը համապատասխանում է հետապնդվող նպատակին:

34. ... դատարանի քարտուղարության կողմից դիմումատուին տպված ձևաթուղթ տրամադրելը, որը նրա մոտ առաջացրել է սահմանված ձևով բողոքը ներկայացնելու տպավորություն, ինչպես նաև դատարանի քարտուղարության դերն այս գործում, և այն, թե ի նչն էր վտանգված դիմումատուի համար, Դատարանը համարում է, որ Նաֆայլիոնի հինգ անդամից բաղկացած վերաքննիչ դատարանը, մերժելով դիմումատուի բողոքը որ-

² <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-90617>

պես անընդունելի, խոչընդոտել է դիմումատուին օգտվել ներպետական իրավունքով նրան հասանելի պաշտպանության միջոցից (տես Louli-Georgopoulou v. Greece, no. 22756/09, 16 March 2017, § 47)³:

3. Case of Masirevic v. Serbia, 11 February 2014, (Application no. 30671/08)

48. ... Դատարանի դերն է որոշել, թե արդյոք ընթացակարգային նորմերը նպատակ ունեն ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, և, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանությունը (տես, mutatis mutandis, Efstathiou and Others v. Greece, no. 36998/02, §§ 24, 27 July 2006, and Syngelidis v. Greece, no. 24895/07, § 41, 11 February 2010), և արդյոք դիմումատուն կարողացել է հիմնվել ամբողջական համակարգի վրա, որը պահպանել է արդարացի հավասարակշռություն իշխանությունների շահերի և նրա սեփական շահերի միջև (տես, mutatis mutandis, Lay Lay Company Limited v. Malta, no. 30633/11, § 56, 23 July 2013)⁴:

4. Poirot v. France, 15 December 2011, Application no. 29938/07

«Դատարանը գտնում է, տիկին Պուարոն ձևական առումով պարտավոր չի եղել Քրեական դատավարության օրենսգրքի 186-3 հոդվածի համաձայն հղում կատարել իր բողոքի հիմքերին, այսինքն՝ այն, որ նա վիճարկել է ենթադրյալ ակտերի իրավական դասակարգումը: ... Դատարանն ընդունում է, որ ներպետական մարմինները գտնվում են լավագույն կարգավիճակում ներպետական օրենսդրությունը մեկնաբանելու համար, և որ բողոքները կարգավորող ձևական պահանջները կոչված են ապահովելու արդարադատության պատշաճ իրականացումը և, մասնավորապես, նվազեցնելու դատարանների ծանրաբեռնվածությունը: Այն, այնուամենայնիվ, հաշվի է առել, որ այս գործով դատական մարմինները համապատասխան ընթացակարգային նորմերը կիրառել են չափազանց ձևական՝ դրանով իսկ խախտելով տիկին Փոյրոթի դատարանի մատչելիության իրավունքը»⁵:

Այսպիսով, ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկան վկայում է, որ դատարնթացակարգային նորմերում ձևական պահանջների առկայությունը պայմանավորված է այնքանով, որքանով անհրաժեշտ է իրավունքի իրացման համար, սակայն նման պահանջների բնույթն ու բովանդակությունը, իրացման ընթացակարգերը չպետք է առաջացնեն իրավունքի անհամաչափ սահմանափակում հանգեցնելով դրա էության խաթարմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանում են, ըստ էության, կայանում իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշները:

4.5. Սույն գործով վեճի առարկա նորմի և դրա հետ փոխկապակցված իրավակարգավորումների վերլուծությունը վկայում է, որ քրեական վարույթի շրջանակներում դատարանի կողմից վերաքննիչ բողոքը քննու-

³ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-175158>

⁴ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-140775>

⁵ [https://hudoc.echr.coe.int/eng-press#{"fulltext":\["Poirot v. France"\]}](https://hudoc.echr.coe.int/eng-press#{)

թյան ընդունելու նախապայմանների որևէ խախտման դեպքում (օրինակ՝ դատարանի անվանումը և բողոքին կցվող նյութերի ցանկը չնշելը, բողոք ներկայացնող անձի ստորագրության բացակայությունը և այլն) վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքը թողնվում է առանց քննության: Գրեթե նույնաբովանդակ նորմ է պարունակում նաև Օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասը՝ համաձայն որի՝ «...բողոքը կարող է թողնվել առանց քննության և վերադարձվել դատավարության մասնակցին, եթե այն ստորագրված չէ նրա կամ նրա ներկայացուցչի կողմից կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին»: Արդյունքում՝ բողոք բերած անձը գրկվում է իր նկատմամբ կայացված դատավճռի օրենքով սահմանված հիմքերով վերադաս դատական ատյանի (տվյալ դեպքում՝ վերաքննիչ դատարանի) կողմից վերանայման՝ Մահմանադրության 69-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքի իրացման հնարավորությունից: Ըստ որում, Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձի՝ դատական բողոքարկման իրավունքի իրացման վերոհիշյալ նախապայմանները նախատեսելիս օրենսդիրն ըստ էության տարբերակված մոտեցում չի դրսևորել այս կամ այն նախապայմանի խախտման և դրան հաջորդող հնարավոր իրավական հետևանքների առումով՝ կապված, մասնավորապես, բողոքի ներկայացման շրջանակներում ձևական և իրավունքի իրացման համար էական խոչընդոտ չհանդիսացող այս կամ այն վրիպումը (սխալը) շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու իրավական հնարավորության նախատեսման հետ, ինչն առկա է քաղաքացիական և վարչական գործերով արդարադատական գործող ընթացակարգերում: Սակայն, տարբերակված մոտեցում առկա է Օրենսգրքում՝ վճարելի բողոքարկման ընթացակարգում: Օրենսգրքի 414.1-րդ հոդվածն ըստ էության սահմանազատել է վճարելի բողոքը վերադարձնելու և այն առանց քննության թողնելու դեպքերը:

Այսպիսով, եթե վերաքննիչ բողոք ներկայացրել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է (բացակայում է այն վերականգնելու հիմնավոր որևէ պատճառ), կամ այն բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման և նման այլ այնպիսի հիմքերի առկայությամբ, երբ անձը վերաքննիչ դատարանի գնահատմամբ փաստի ուժով, իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, ապա վերջինիս իրացման արգելքը, ինչը նախատեսված է Օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասում, իրավական պատշաճ գործընթացի արդյունքում կարող է գնահատվել իրավաչափ: Մինչդեռ, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական որևէ նախապայմանի խախտման հիմքով, երբ առկա է այն շտկելու իրավական ողջամիտ հնարավորություն, անձին Մահմանադրությամբ երաշխավորված դատական բո-

դոքարկման իր իրավունքի իրացումից զրկելը, սահմանափակելը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, չի կարող բխել մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման և իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից, ինչպես նաև այդ բնագավառում հանրային իշխանությանն առաջադրված սահմանադրաիրավական նպատակներից: Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա իրավակարգավորմամբ նախատեսված ձևական պահանջների չպահպանման հիմքով, սահմանափակելով անձի հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մատչելիության իրավունքը, խախտվել է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքը: Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից այդ իրավակարգավորումը չի համապատասխանում իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշներին: Ուստի, Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ վիճարկվող դրույթի սահմանադրականության վերաբերյալ դիմող և պատասխանող կողմերի փաստարկները հիմնավոր են:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ Օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթը՝ վերաքննիչ բողոքի ներկայացման շրջանակներում չի կարող ընկալվել և կիրառվել որպես բողոքը դատարանի կողմից վերադարձնելու իրավական հիմք, եթե առկա է հիշյալ նորմում մատնանշված սխալները շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու ողջամիտ հնարավորություն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ..., վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության» դրույթն այնքանով, որքանով բացառում է վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական և իրավունքի իրացման համար էական խոչընդոտ չհանդիսացող պահանջներին անհամապատասխանության դեպքում բողոք ներկայացրած անձի կողմից այն շտկելու և կրկին վերաքննիչ դատարան ներկայացնելու իրավական հնարավորությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 69, 75 և 78-րդ հոդվածներին հակասող:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 19-րդ մասի պահանջներից, հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող դրույթը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչելը քրեական վարույթի շրջանակներում դատական ակտերը վերաքննիչ դատարանում բողոքարկելու իրենց իրավունքն իրացնող անձանց համար անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի հետևանքներ, որոնք կխաթարեն վերոհիշյալ դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 1-ը, հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին վիճարկվող իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին՝ հաշվի առնելով նաև սույն որոշման հրապարակման դրությամբ և մինչև համապատասխան օրենսդրական կարգավորումն ընկած ժամանակահատվածում անձանց՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում բողոքարկման իրենց իրավունքի իրացման երաշխավորման անհրաժեշտությունը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 հունիսի 2018 թվականի
ՄԴՈ-1420



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 300-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀՀ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

դիմողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության օրենսդրական փորձաքննության բաժնի ավագ իրավափորձագետ Ա. Քոչարյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 1-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(92)/2018

Գործի քննության առիթը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են, որոնցով ներկայացվել են ՀՀ վճռաբեկ դատարանի 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ ԵԴԴ/0063/01/17 և ԵԿԴ/0250/01/17 քրեական գործերով «Բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումները:

Ուսումնասիրելով սույն գործով դիմողի և պատասխանողի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները, գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը վիճարկում է Օրենսգրքի՝ «Որոշում՝ խափանման միջոցների մասին» վերտառությամբ 300-րդ հոդվածը, որով սահմանվում է. «Որոշումներ կայացնելու հետ միաժամանակ, բացի գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումից, դատարանը պարտավոր է քննել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում»: Դիմողը բարձրացնում է հետևյալ իրավական հարցը. վիճարկվող իրավակարգավորումը գործը դատական քննության նախապատրաստելու փուլում չի նախատեսում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով իրականացնելու կարգ:

Դիմող կողմը, վերլուծելով Օրենսգրքի՝ «Դատական քննության նախապատրաստելը» վերտառությամբ 40-րդ գլխի իրավանորմերը, եզրահանգում է, որ հիշյալ փուլում դատարանն իրավասու չէ դատական նիստ հրավիրելու, իսկ այդ փուլում լուծման ենթակա հարցերը լուծվում են դատավորի կողմից միանձնյա՝ իր աշխատասենյակում: Քննարկվող փուլում կայացվող որոշումներից է գործը դատական քննության նշանակելը, իսկ լուծման ենթակա հարցերից խափանման միջոցների հարցը: Ընդ որում, որպես խափանման միջոց կարող է կիրառվել նաև կալանքը, քանի որ այդ առումով Օրենսգրքը որևէ բացառություն չի նախատեսում: Դիմողը նշում է նաև, որ անգամ անձի կողմից իր անազատությունը վիճարկելու խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին միջնորդության առկայության դեպքում դատարանն իրավասու չէ դատական նիստ անցկացնել և ապահովել անձի մասնակցությունը:

Դիմողը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (Կոնվենցիա) վերաբերելի նորմերը, Մարդու իրավունքների եվրո-

պական դատարանի (ՄԻԵԴ) մի շարք վճիռներով արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ Օրենսգրքի 300-րդ հոդվածում կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով անցկացնելու հնարավորության բացակայությունը վտանգում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով երաշխավորված իրեն ազատությունից զրկելը վիճարկելու անձի իրավունքի իրականացումը:

Վերոգրյալի հիման վրա դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 300-րդ հոդվածը հակասում է Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի Օրենսգրքի 300-րդ հոդվածով, ընդհանուր առմամբ, խախտվում է անձի ազատության իրավունքը՝ անհապաղ դատարանի առջև կանգնելու և իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքի տեսանկյունից:

Պատասխանող կողմը ևս, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերաբերելի նորմերը, ՄԻԵԴ-ի մի շարք վճիռներով արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ անձի պաշտպանության իրավունքի իրականացման տեսանկյունից ցանկացած առարկություն կամ միջնորդություն ներկայացնելու անհնարինությունն ու այդ հանգամանքներով պայմանավորված՝ դատարանների կողմից հոգուտ կալանքի կիրառման բերվող հիմնավորումները կհանգեցնեն անձի ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումների՝ այսպիսով անձին զրկելով գործը դատական քննության նշանակելու պահից մինչև առաջին դատական նիստի միջև ընկած ժամանակահատվածում ազատությունից զրկած լինելու հանգամանքը վիճարկելու հնարավորությունից:

Պատասխանող կողմը փաստել է, որ դեռևս 2012 թվականի սեպտեմբերի 14-ից ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ էր դրվել ՀՀ կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, որով, մասնավորապես, առաջարկվում էր ամրագրել նախնական դատական լուսմների ինստիտուտ՝ սահմանելով վերջինիս շրջանակներում կողմերի մասնակցությամբ դատական նիստով լուծելու խափանման միջոցների հստակ նախատեսման հարցը:

Վերոգրյալի հիման վրա պատասխանողը ևս գտնում է, որ Օրենսգրքի 300-րդ հոդվածն այնքանով, որքանով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում չի նախատեսում կալանքը որպես խափան-

ման միջոց ընտրելու կամ այն ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով իրականացնելու կարգ, հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական հարցի շրջանակներում, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ այն հարցադրումներին, թե քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը (կալանավորումը) որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությունն արդյոք

ա) համահունչ է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված՝ անձնական ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափորոշիչներին,

բ) երաշխավորում մ է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող լավելու իրավունքը՝ հաշվի առնելով նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության սահմանադրաիրավական պահանջները,

գ) սահմանափակում մ է անձի՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունը,

դ) համահունչ է ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկային:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը քննության է առնում ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, 75 և 81-րդ հոդվածների համատեքստում:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. ՀՀ քրեադատավարական օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանի կողմից կալանքի՝ որպես խափանման միջոցի, ընտրության, հիմնավորվածության կամ ժամկետի երկարացման վերաբերյալ հարցի քննությունը կատարվում է ինչպես քրեական գործի մինչդատական, այնպես էլ դատական քննության նախապատրաստման և դատական քննության փուլերում:

Քրեական գործի մինչդատական վարույթի շրջանակներում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու դեպքում որպես անձի իրավունքների, մասնավորապես, անձնական ազատության իրավունքի պաշտպանության օրենսդրական երաշխիք են հանդիսանում նաև հետևյալ իրավակարգավորումները.

- կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին: Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին (Օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մաս),

- անազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քննության դատական նիստին նրա մասնակցության հարցը պետք է ապահովի վարույթն իրականացնող մարմինը (Օրենսգրքի 285-րդ հոդվածի 3-րդ մաս),

- միջնորդությունը քննարկելիս դատավորն իրավունք ունի պահանջել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ (Օրենսգրքի 285-րդ հոդվածի 4-րդ մաս),

- քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին: Որոշումը կայացնելու օրը դատարանը այն ստորագրությամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և տուժողին, իսկ դատական նիստին վերջիններիս չներկայանալու դեպքում՝ պատշաճ ձևով ուղարկում է նրանց: Որոշումը ենթակա է անհապաղ կատարման (Օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մաս):

Բացի դրանից՝ հիշյալ առումով կարևոր օրենսդրական երաշխիք է վերաքննիչ դատարանի կողմից կատարվող՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինակա- նության և հիմնավորվածության դատական ստուգումը (Օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մաս), որը կատարվում է դատախազի և պաշտպանի մասնակցությամբ (Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մաս):

Անձի իրավունքների պաշտպանության օրենսդրական երաշխիք է, ի թիվս այլնի, նաև այն, որ դատարանը, դատական քննության ժամանակ, լսելով ամբաստանյալի բացատրությունները, կողմերի կարծիքները, իրավունք ունի ամբաստանյալի նկատմամբ ընտրել, փոխել կամ վերաց- նել խափանման միջոցը (Օրենսգրքի 312-րդ հոդված):

Սահմանադրական դատարանը փաստում է, որ, ի տարբերություն վերը նշվածի՝ գործը դատական քննության նախապատրաստելու շրջա- նակներում դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտ- պանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խա- փանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը քննելու ժամանակ, մասնավորապես, **անձնական ազատության, արդար դատաքննության իրավունքների, քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման օրենսդրական երաշ- խիքներ նախատեսված չեն:** Օրենսդիրն այս առումով միայն սահմանել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և խափան- ման միջոցն ընտրված լինելու դեպքում դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը քննելու դատարանի պարտակությունը (Օրենսգրքի 300-րդ հոդված), որը դատարանն իրականացնում է՝ առանց դատական նիստ հրավիրելու:

Վիճարկվող իրավակարգավորումից հետևում է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանը, քննելով մեղա- դրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու, խա- փանման միջոցն ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը, կարող է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանք, եթե այն ընտրված չէ, կամ կարող է արդեն իսկ որպես խափանման միջոց ընտրված կալանքը հիմնավոր համարել: Հատկանշական է, որ երկու դեպքում էլ՝ ինչպես մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ արդեն իսկ ընտրված կալանքը հիմնավոր համարելու դեպքում, տեղի է ունենում անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափա- կում: Առաջին դեպքում՝ մեղադրյալի նկատմամբ ընտրվում է անձնական

ազատության իրավունքի սահմանափակում նախատեսող խափանման միջոց: Երկրորդ դեպքում՝ մինչդատական փուլում մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից հիմնավոր համարելու դեպքում այն թողնվում է անփոփոխ և անդրադարձ է կատարվում կալանավորման ժամկետի հարցին: Ընդ որում, հարկ է նշել, որ դատական քննության փուլում կալանքի առավելագույն ժամկետ նախատեսված չէ: Հետևաբար, գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև ընտրված կալանքը որպես խափանման միջոց հիմնավոր համարելու դեպքում առավել ևս պետք է պահպանվեն անձնական ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափորոշիչները:

Անձնական ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափորոշիչներին Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև 2016 թվականի սեպտեմբերի 2-ի ՄԴՈ-1295 որոշմամբ՝ ամրագրելով, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի նորմերի իրավական բովանդակությունից անմիջականորեն բխում է, որ, մասնավորապես.

- անձնական ազատությունից զրկելու իրավական չափանիշները սահմանվում են Սահմանադրությամբ,
- անձնական ազատությունից զրկելու կարգը սահմանվում է օրենքով,
- անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը:

Սույն գործի շրջանակներում ևս, վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, Սահմանադրական դատարանը կարևոր է համարում անձնական ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափորոշիչների պահպանումը, հատկապես՝ անձին ազատությունից զրկելու իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության իրականացումը նաև գործը դատական քննության նախապատրաստելու փուլում:

Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակում նախատեսող քրեադատավարական ցանկացած ընթացակարգի սահմանադրականությունը կախված է ոչ միայն այդ իրավունքի սահմանափակման իրավաչափության հիշյալ չափորոշիչների պահպանման նկատմամբ դատական վերահսկողության պատշաճ և արդյունավետ իրականացումից, այլ նաև անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքի երաշխավորումից: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1295 որոշմամբ ամրագրել է հետևյալը. «...ազատությունից զրկելու

հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ չի կարող բացառել անձի անձամբ պաշտպանվելու իրավունքը, եթե առկա է վերջինիս կողմից հստակ արտահայտված համապատասխան ցանկություն (դատավարական միջնորդություն): ... **Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ անձի լավելու (անձամբ պաշտպանվելու) իրավունքի իրացումն ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ դատական բողոքարկման (ստուգման) հետագա ընթացակարգերում:**

Մեկ այլ՝ 2009 թվականի սեպտեմբերի 12-ի ՄԴՈ-827 որոշմամբ Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավորի մոտ տարվելու և լավելու իրավունքի իրացումն անմիջականորեն և անխզելիորեն կապված է անձին փաստացիորեն անազատության մեջ պահելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու փաստի հետ, այդ իրավունքի իրացման երաշխավորման պարտականությունը պետության համար ծագում է անձին ազատությունից փաստացիորեն զրկելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու պահից: Այսինքն՝ ինչպես 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով, այնպես էլ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված բոլոր երաշխիքները, այդ թվում՝ նաև դատարանի առջև լավելու իրավունքը, սկսում են գործել միայն այն պահից սկսած, երբ անձը պետության կողմից փաստացիորեն զրկվում է ազատությունից:

Սույն գործի շրջանակներում ևս, վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի դրույթներից ըստ էության բխում է, որ **ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանի կողմից լավելու իրավունք, որի իրացումը պետք է ապահովվի օրենքով սահմանված կարգով:**

Վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևոր է համարում անդրադառնալ անձի՝ լավելու իրավունքի երաշխավորմանը մեկ այլ համատեքստում ևս:

Դատարանի կողմից լավելու սահմանադրական իրավունքից օգտվում են ոչ միայն ազատությունից զրկված անձինք, այլ նաև յուրաքանչյուր ոք, ով իրացնում է իր արդար դատաքննության սահմանադրական իրավունքը:

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ևս Սահմանադրական դատարանը, կարևորելով անձի արդար դատաքննության իրավունքի երաշխավորումը, միաժամանակ գտնում է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքի

որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության ընթացքում պետք է ապահովել ինչպես պաշտպանության, այնպես էլ մեղադրանքի կողմի մասնակցությունը՝ ելնելով քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունից: Դատական քննությունը, այդ թվում՝ դրա նախապատրաստումը, արդյունավետ է համարվում իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովման առումով, եթե այն համապատասխանում է արդարության պահանջներին և հիմնված է մրցակցության սկզբունքի վրա: Հիշյալ հանգամանքը կալանքի՝ որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննման դեպքում ենթադրում է դատարանի կողմից անհրաժեշտ պայմանների ապահովում՝ կողմերի իրենց դատավարական իրավունքների իրացման և դատավարական պարտականությունների կատարման համար: Բացի դրանից, անհրաժեշտ է դատարանի կողմից իրականացնել իրավական և փաստական հիմքերի ուսումնասիրություն, այդ թվում էական հանգամանքների ինքնուրույն գնահատման միջոցով որոշում կայացնելու համար՝ ապահովելով պաշտպանության և մեղադրանքի կողմերին իրենց դիրքորոշումները ներկայացնելու հնարավորությունը, բացառելով կամայական, սուբյեկտիվ հայեցողական և չհիմնավորված մոտեցումները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանն իր նախաձեռնությամբ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը որոշելիս չի կարող ազատվել կողմերի կարծիքը լսելու պարտականությունից, և կողմերը չեն կարող զրկված լինել իրենց դիրքորոշումները ներկայացնելու հնարավորությունից: Հակառակ պարագայում՝ այն կարող է պարունակել վտանգ, որ դատարանն իր վրա է վերցնում մեղադրանքի կամ պաշտպանության գործառույթներ: Բացի դրանից, դատարանը զրկվում է հարցը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու փաստացի հնարավորությունից, որի երաշխավորման կարևոր նախապայման է նաև կողմերի կարծիքները, փաստարկները, դիրքորոշումները լսելը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ **անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակումն իրավաչափ է միայն դատարանի որոշմամբ, որն ընդունվել է դատական նիստում՝ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև ընտրված կալանքի հիմքերի և հիմնավորումների համակողմանի և անաչառ քննության, այդ թվում՝ մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի իր դիրքորոշումը դատարանին ներկայացնելու հնարավորության առկայության դեպքում:**

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումն այն մասով, որ չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, չի ապահովում անձի՝ դատարանի կողմից լսվելու սահմանադրական իրավունքի իրացումը՝ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար այն չի համապատասխանում նաև արդար դատաքննության չափանիշներին:

4.2. Դիմողի այն դիրքորոշման կապակցությամբ, համաձայն որի՝ վիճարկվող իրավակարգավորումը հակասում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հիշյալ հարցը դիտարկել անձին՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու ինչպես դատական բողոքարկման (ստուգման), այնպես էլ վիճարկման այլ դրսևորումների հնարավորության առկայության տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործը դատական քննության նախապատրաստելու ժամանակ դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և ընտրված կալանքը հիմնավոր համարելու հարցի քննությունը չի սահմանափակում անձին՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունը՝ դատական բողոքարկման (ստուգման) ձևով դրսևորվելու դեպքում:

Օրենսգրքի 292-րդ հոդվածը նախատեսում է, որ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետագոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում գործը դատական քննության նախապատրաստելիս ընդունվող, օրենքով սահմանված որոշումներից մեկը, իսկ Օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորումը նախատեսում է, որ հիշյալ որոշումները կայացնելու հետ միաժամանակ, բացի գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումից, դատարանը պարտավոր է քննել նաև խափանման միջոցի վերաբերյալ հարցը:

Հետևաբար՝ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում վիճարկվող իրավակարգավորման ուժով մեղադրյալի նկատմամբ անձնական ազատության իրավունքի սահմանափակում նախատեսող խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունվում է որոշում (Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մաս), որն, ի թիվս այլնի, Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 20-րդ կետի, ինչպես նաև Օրենս-

գրքի 73-րդ հոդվածի 15-րդ կետի ուժով կարող է բողոքարկվել մեղադրյալի, նրա պաշտպանի կողմից (ինչը և կատարվել է սույն գործում առկա ԵԷԴ/0063/01/17 և ԵԿԴ/0250/01/17 քրեական գործերի շրջանակներում), և այդ բողոքի քննությանն Օրենսգրքի ընդհանուր իրավակարգավորումների շրջանակներում (մասնավորապես, Օրենսգրքի 390 և 418-րդ հոդվածներ) մեղադրյալի և նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն նախատեսված է: Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը խնդրահարույց չէ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համատեքստում այն առումով, որ Օրենսգրքում, մասնավորապես, առկա են կալանքի՝ որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության արդյունքում ընդունված որոշման դատական բողոքարկման (ստուգման) օրենսդրական երաշխիքներ:

Ինչ վերաբերում է քրեական գործը դատական քննության նախապատրաստելու ժամանակ դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և ընտրված կալանքը հիմնավոր համարելու հարցի քննության շրջանակներում անձին իրեն ազատությունից զրկելու՝ իրավաչափությունը վիճարկելու հնարավորության այլ դրսևորումների՝ հակափաստարկներ, առարկություններ, միջնորդություններ, այլ ձևերով հակադիր, պաշտպանող, հիմնավորող դիրքորոշումներ ներկայացնելու սահմանադրականության հարցին, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ ձևերով իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունը բացակայում է, մասնավորապես, մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի դատարանի կողմից լսվելու իրավունքի իրացման համատեքստում, ինչը չի բխում ՀՀ Սահմանադրության ինչպես 27-րդ հոդվածի 5-րդ մասի, այնպես էլ 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների պահանջներից: Բացի դրանից, Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձի սահմանադրական իրավունքների պատշաճ պաշտպանության երաշխավորումը քրեական վարույթի շրջանակներում հավասարապես հասանելի պետք է լինի ինչպես գործի դատական քննության, այնպես էլ դատական քննության նախապատրաստման շրջանակներում, ինչը կարևոր երաշխիք է արդար դատաքննության իրավունքի իրացման ապահովման տեսանկյունից: Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական գնահատման առումով հիմնավոր չէ նման տարբերակված մոտեցումը:

4.3. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ Սահմանադրական դատարանը կարևոր է համարում անդրադառնալ ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի շրջանակներում ձևավորված անձնական ազատության իրավունքի սահմանափակման չափորոշիչներին: Սասնավորապես.

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի շրջանակներում (Kampanis v. Greece գործով 1995թ. հուլիսի 13-ի վճիռ, գանգատ թիվ 17977/91, Aquilina v. Malta գործով 1999թ. ապրիլի 29-ի վճիռ, գանգատ թիվ 25642/94, Փիրուգյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012թ. հունիսի 26-ի վճիռ, գանգատ թիվ 33376/07, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012թ. հոկտեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 22491/08 և այլն) առանձնացվում է, ի թիվս այլնի, անձնական ազատության իրավունքի սահմանափակման հետևյալ չափորոշիչը՝ ազատությունից զրկված անձի՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու իրավունքի երաշխավորումը:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի շրջանակներում առկա են նաև գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքի՝ որպես խափանման միջոցի, հարցի քննության ժամանակ մեղադրյալի իրավունքների երաշխավորման խնդրին անմիջականորեն վերաբերող իրավական դիրքորոշում: Մասնավորապես, Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2011թ. մայիսի 31-ի վճռով (գանգատ թիվ 5829/04) **ՄԻԵԴ-ը գործը դատական քննության նախապատրաստելու փուլում առանց դատական նիստ նշանակելու կալանքն անփոփոխ թողնելը և կալանքի հարցի քննությունը դիմումատուի կամ իր փաստաբանի բացակայության պայմաններում գնահատել է որպես անձի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավունքների խախտում:**

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի շրջանակներում առանձնահատուկ կարևորվել է այն, որ անձի շարունակական կալանքի վերանայման համատեքստում վարույթը պետք է լինի մրցակցային և երաշխավորի կողմերի՝ դատախազի և կալանավորված անձի միջև «գենքերի հավասարությունը» (Nikolova v. Bulgaria գործով Մեծ պալատի՝ 1999թ. մարտի 25-ի վճիռ, գանգատ թիվ 31195/96, Altinok v. Turkey գործով 2011թ. նոյեմբերի 29-ի վճիռ, գանգատ թիվ 31610/08):

Քննության առարկա հարցի համատեքստում ՄԻԵԴ-ն առաջնային հիմնարար երաշխիք է դիտարկում՝ կալանավորման իրավաչափությունը վերանայելիս դատական արդյունավետ քննության իրավունքի ապահովումը ինչպես Կոնվենցիայի 5-րդ, այնպես էլ 13-րդ հոդվածների համատեքստում (Chahal v. The United Kingdom գործով Մեծ պալատի՝ 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռ, գանգատ թիվ 22414/93): Կարևոր երաշխիք է դիտարկվում նաև անձի շարունակական կալանքի անհրաժեշտության հարցի որոշումն իրավասու մարմնի կողմից (Altinok v. Turkey գործով 2011թ. նոյեմբերի 29-ի վճիռ, գանգատ թիվ 31610/08, Knebl v. the Czech Republic գործով 2010թ. հոկտեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 20157/05):

Հարկ է նաև նշել, որ քննարկվող հարցին վերաբերելի իրավունքների անդրադարձ կատարվել է նաև մարդու իրավունքների միջազգային մի

շարք այլ փաստաթղթերում, մասնավորապես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևով) 9-րդ հոդվածի 4-րդ մասով և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ Rec(2006)13 հանձնարարականի 28-րդ կետով:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումն այն մասով, որը չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, համահունչ չէ ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի շրջանակներում ձևավորված անձնական ազատության իրավունքի սահմանափակման չափորոշիչներին:

4.4. Անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի դատավարական իրավունքների իրացման օրենսդրական ապահովման (օրենսդրական բացի) խնդրին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր մի շարք որոշումներով անդրադարձել է օրենսդրական (իրավունքի) բացի հասկացության բովանդակությանը: Մասնավորապես, իր 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ. «...բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակա-

սական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես Օրենսգրքով գործը դատական քննությանը նախապատրաստելու իրավակարգավորումների առումով ընդհանրապես, և, մասնավորապես, սույն գործով վիճարկվող իրավակարգավորման համատեքստում **այն մասով, որ չի նախատեսվում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, առկա է այնպիսի օրենսդրական բաց, որը չի կարող լրացվել օրենսդրական այլ երաշխիքներով և, որի պայմաններում, մասնավորապես, չի ապահովվում անձնական ազատության իրավունքի, արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող լավելու իրավունքի արդյունավետ իրականացումը: Այն կարող է ապահովվել միայն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի համապատասխան օրենսդրական երաշխավորմամբ և հստակ ամրագրմամբ, ինչը բխում է իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև ՀՀ վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայից: Հիշյալ օրենսդրական բացի հաղթահարումը Ազգային ժողովի լիազորությունների տիրույթում է:**

Սահմանադրական դատարանի կողմից սույն գործի շրջանակներում իրականացվել է իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրություն: Ի պատասխան համապատասխան հարցումների ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնակատարը 17.05.2018թ. ՎԴ-Ե-3525 գրությամբ հայտնել է, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից ստացված տեղեկատվության համաձայն գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում, քննելու ժամանակ մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության դեպքեր վերջին երեք տարիների ընթացքում դատական պրակտիկայում առկա չեն: ՀՀ փաստաբանների պալատի նախագահը ևս 21.05.2018թ. N 05/05/696-18 գրությամբ հիշյալ հարցի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ փաստաբանների պալատին հայտնի չեն նման դեպքեր:

Ելնելով մարդու հիմնական իրավունքների անմիջական գործողության սահմանադրական պահանջից, ինչպես նաև դատարանի կողմից կալանքի՝ որպես խափանման միջոցի, ընտրության և հիմնավորվածության հարցի քննության քրեադատավարական ընթացակարգերի օրենսդրական կարգավորումների ընդհանուր տրամաբանությունից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը **դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը պետք է ապահովվի, մասնավորապես, մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորությունը (ինչպես նախատեսված է Օրենսգրքի, մասնավորապես, 285 և 312-րդ հոդվածներով) առաջնորդվելով անձնական ազատության իրավունքի, արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող լավելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման, քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածն այն մասով, որ չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

26 հունիսի 2018 թվականի
ՄԴՈ-1421

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՍՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018 130



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Կառավարության ներկայացուցիչ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի մարտի 15-ին Մոսկվայում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից ստորագրված Կառավարության՝ 2018 թվականի հունիսի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի մարտի 15-ին, Մոսկվայում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը միացել է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, որը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի ԱԺՈ-132-Ն որոշմամբ:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունը.

համաձայնվել, որ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել «կամ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարները, եթե իրենց պետության օրենսդրության համապատասխան նրանք օժտված են Բարձրագույն խորհրդի իրավասության մեջ մտնող հարցերով որոշումներ ընդունելու լիազորություններով» բառերով (հոդվ. 1):

3. Արձանագրությամբ նաև նախատեսված է դրույթ, համաձայն որի՝ նշված արձանագրությունը ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու օրվանից (հոդվ. 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի մարտի 15-ին Մոսկվայում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

26 հունիսի 2018 թվականի
ՄԴՈ-1422



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԿԱՐԵՆ ԱՎԱԳՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 60-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 22-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1ԻՆ ՄԱՍԻ «Թ»
ԿԵՏԻ 6-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 հուլիսի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ Տ. Ղազարյանի, գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության օրենսդրական փորձաքննության բաժնի ավագ իրավափորձագետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Կարեն Ավագյանի դիմումի հիման վրա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(92)2018 134

Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի «Դատական ծախսերի բաշխումը դատավարության մասնակիցների միջև» վերտառությամբ 60-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող նորմը սահմանում է.

«1. Կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին»:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունվարի 10-ին և ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 11-ից:

Օրենքի «Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները» վերտառությամբ 22-րդ հոդվածի սույն գործով վիճարկվող նորմը սահմանում է.

«Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

...

թ) ոչ առևտրային կազմակերպություններ և ֆիզիկական անձինք՝

...

- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով»:

Գործի քննության առիթը Կարեն Ավագյանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի և Օրենքի համապատասխան դրույթները, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, ինչը, իր հերթին հետևանք է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավական նորմի անորոշության, հա-

կատում է ՀՀ Սահմանադրության 39 և 79-րդ հոդվածներին, ինչպես նաև Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին:

Դիմողի կարծիքով՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության հիմքով պետական տուրքից ազատվելու հնարավորությունը հավասարապես տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ հայցվորի պահանջը ՀՀ վարչական դատարանը բավարարում է, սակայն հետագայում այդ վճռի դեմ պատասխանողի կողմից բերված բողոքի արդյունքում այն բեկանվում է վերադաս դատական աստիճանի կողմից: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը խախտում է սեփականության սահմանադրական իրավունքը՝ անձի վրա դնելով պետական տուրք վճարելու պարտականություն այն դեպքում, երբ նման պարտականություն օրենքը չի նախատեսում:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենսդիրը սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթների ամրագրման իրավական հիմք է ընդունել պատճառված վնասի հատուցման տեսությունից բխող՝ դատական ծախսերի ողջամիտ բաշխման հայեցակարգը, համաձայն որի՝ օրենքով սահմանված ընթացակարգերի արդյունքում պատճառված վնասը պայմանավորված է այն ծախսերով, որոնք ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում իրավունքները խախտված են, պետք է կրի խախտված իր իրավունքները վերականգնելու համար, ներառյալ՝ նրա սեփականության (գույքի) կորուստը և վնասը: Բացի դրանից, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությամբ սահմանված դրույթների ամրագրման հիմքում դրել է միջազգային իրավունքի հանրաճանաչ restitution at integrum սկզբունքը (վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցող վիճակը):

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս պարզել.

- արդյո՞ք Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմերն Օրենսգրքի այլ նորմերի հետ համակարգային ամբողջականության շրջանակներում երաշխավորում են անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը՝ ելնելով այն հանգա-

մանքից, որ այդ իրավունքի իրացման արդյունավետությունն ու մատչելիությունն օբյեկտիվորեն պայմանավորված են նաև դատական ծախսեր կատարելու, այս կամ այն կողմի կրած դատական ծախսերը հատուցելու (դատավարության կողմերի միջև այն արդարացի բաշխելու) իրավական հնարավորությամբ,

- արդյոք ք Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությամբ սահմանված պետական տուրքի գծով արտոնությունը Սահմանադրության 61-րդ հոդվածի (1-ին մաս), 63-րդ հոդվածի (1-ին մաս), 75 և 79-րդ հոդվածների սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում բավարար չափով որոշակի ընկալելի է իրավակիրատ ընթացակարգերում և արդյունավետ միջոց վարչաիրավական հարաբերություններից բխող որոշակի գործերով դատական պաշտպանության իրավունքի իրացման համար:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Օրենքի 2-րդ, 3-րդ, 7-րդ հոդվածների և դրանց հետ փոխկապակցված այլ նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ որոշակի ծառայությունների կամ գործողությունների, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է: Ելնելով այդ վճարի՝ օրենքով որոշված իրավական բովանդակությունից և նպատակային նշանակությունից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում, նախ՝ որոշակիորեն փոխհատուցել պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, իսկ վերջինիս դեպքում նաև՝ մասամբ նախականիել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը՝ նպաստելով թե՛ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը և թե՛ դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը:

Հետևաբար, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել և միաժամանակ գտնում է, որ պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից անձին զրկելու կամ այդ իրավունքի իրացումը սահմանափակելու նպատակ: Օրենսդիրը, կարգավորելով դատա-

րաններում պետական տուրքի գանձման հետ կապված հարաբերությունները, կաշկանդված է անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության և այն իրացնելու անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու, դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորման սահմանադրական պարտականություններով, որոնք ուղղակիորեն բխում են Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում, 63-րդ հոդվածի 1-ին մասում, 75-րդ հոդվածում ամրագրված նորմերից: Պետության այդ պարտականություններից բխող խնդիրն է՝ օրենքով երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից՝ պետական տուրք վճարելու՝ անձի պարտականության և, մյուս կողմից՝ դատարանում իր իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու՝ անձի սահմանադրական իրավունքի իրացման արդյունավետության ապահովման միջև: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի հավասարակշռության երաշխավորումն իր իրավական միտվածությամբ հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ: Ուստի, արդարադատության արդյունավետ իրականացմանն ուղղված իր վերոթվարկյալ խնդիրներով պետական տուրքի կառուցակարգը հետապնդում է անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի՝ ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավական չափանիշներով իրացման նպատակ: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վճարված պետական տուրքը դրա վճարման պարտավորություն ունեցող դատավարության մասնակցի հաշվին կարող է հատուցվել օրենքով սահմանված կարգով, որը նաև պայմանավորված է մրցակցային արդարադատության էությամբ:

4.2. Օրենքի՝ սույն գործով վիճարկման առարկա իրավակարգավորման վերլուծությունը, ելնելով նաև դիմողի հարցադրումների ընդհանուր բովանդակությունից, վկայում է, որ օրենսդիրը սահմանել է նաև որոշակի լրացուցիչ իրավական երաշխիքներ, որոնք միտված են նշված հավասարակշռությունն ապահովելուն: Մասնավորապես, Օրենքի 22-րդ հոդվածի և 31-րդ հոդվածի (1-ին պարբերության «գ», «գ.1» կետեր և 4-րդ պարբերություն) համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով նախատեսված են արտոնություններ, որոնք կիրառելի են կա մ իրավունքի ուժով (22-րդ հոդված), ըստ էության բացառելով դատական հայեցողությունը, կա մ կարող են սահմանվել դատարանի կողմից (Օրենքի 31-րդ հոդված) նույն Օրենքի 9-րդ հոդվածում մատնանշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից: Ընդ որում, վերոհիշյալ արտոնությունները, ի թիվս այլնի, ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու իրավական հնարավորություն:

Մահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի իրավակարգավորումը դատական պաշտպանության իրավունքի իրացման շրջանակներում նպատակ ունի իրավական որոշակի չափանիշներով պայմանավորված, հնարավորություն ստեղծել երաշխավորելու արդար հավասարակշռություն մի կողմից՝ դատարանի մատչելիության, մյուս կողմից՝ սոցիալական խնդիրներով կամ հանրային բնույթի առանձին գործերով դատական պաշտպանությունն ապահովելու սահմանադրաիրավական անհրաժեշտության միջև:

Հետևաբար, արդարադատության իրականացմամբ պայմանավորված՝ պետական տուրքի վճարման պարտականության շրջանակներում օրենքով նման արտոնություններ (կամ՝ ընդհանուր կանոններից բացառություններ) նախատեսելը հետապնդում է արդարացի և իրավունքի արդյունավետ իրացմանը միտված Մահմանադրությամբ նախանշված նպատակներ:

4.3. Անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի իրացման շրջանակներում պետական տուրքի վճարման արտոնությունների կառուցակարգի և դատավարական տարբեր փուլերում այն կիրառելու կանոնակարգման ու իրավակիրառական պրակտիկայում դրա մեկնաբանման սահմանադրականության վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին՝ Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդիրը դիտարկել ինչպես Օրենքի 22-րդ հոդվածի, Օրենսգրքի 60-րդ հոդվածի վիճարկվող նորմերում ամրագրված իրավակարգավորումների և դրանց հետ փոխկապակցված այլ նորմերի, այնպես էլ՝ Մահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում հաստատագրված չափանիշների համատեքստում:

Օրենսգրքի «Դատական ծախսերը» վերտառությամբ 10-րդ գլխի և դրա հետ փոխկապակցված Օրենքի նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է, որ.

- դատական ծախսերն արդարադատության իրականացման օբյեկտիվ նախապայման են ու հետևանք, դրանք դատավարության մասնակիցները որպես հատուցման պարտականություն, կարող են կրել դատաքննության տարբեր, այդ թվում՝ դատական բողոքարկման փուլերում,

- պետական տուրքը դատական ծախսի տարատեսակ է (Օրենքի 56-րդ հոդված), որը դատական պաշտպանության իրավունքի իրացման պարտադիր նախապայման է այն դեպքերում և գործերով, որոնք սպառիչ նախատեսված են (Օրենսգրքի 9-րդ հոդված),

- պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Օրենքով (Օրենսգրքի 57-րդ հոդված),

- վարչական գործերով դատաքննության ծախսերը, բացի պետական տուրքից, կարող են ներառել այլ ծախսեր՝ վկաներին, փորձագետներին, թարգմանիչներին վճարվելիք գումարներ, դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարներ, դատարանի պահանջները և դատական հանձնարարությունները կատարելու հետ կապված ծախսեր և այլն (Օրենսգրքի 58-րդ հոդված):

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, հստակեցնելով դատական ծախսերի միասնական կազմը, այդ ծախսերի հետ կապված հարաբերությունները վարչական դատավարության շրջանակներում կարգավորելիս, առաջնորդվել է պետական տուրքի ինչպես պարտադիր վճարման, այնպես էլ այդ վճարումից ազատելու (արտոնություն սահմանելու)՝ Օրենքում հաստատագրված ընդհանուր սկզբունքներով, իսկ առանձնահատկությունները պայմանավորված են վարչաարդարադատական որոշակի գործերի բնույթով (Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերություն): Ընդհանուր են նաև այդ կառուցակարգն անձանց նկատմամբ կիրառելու սկզբունքները (Օրենքի 31-րդ հոդված):

Միաժամանակ, օրենսդիրը հստակեցրել է դատական ծախսերի բաշխման կանոնակարգումը: Մասնավորապես, Օրենսգրքի 60-րդ հոդվածում սահմանված են գործի քննության ելքով կամ դատավարական այս կամ այն գործընթացով պայմանավորված սպառիչ նախապայմանները, որոնց առկայությամբ են պարտավոր իրավասուբյեկտի հաշվին հատուցվում այդ ծախսերը, այդ թվում՝ վճարված պետական տուրքը: Ինչ վերաբերում է դատական ծախսերի հատուցման՝ Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի վիճարկվող կարգավորմանը, ապա օրենսդիրն առաջնորդվել է մրցակցային արդարադատության հիմքում դրված կանոններով, համաձայն որոնց.

- կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է (իրավական վեճում «պարտվել է»), կրում է վկաներին և փորձագետներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար,

- դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Այսպիսով, վերոհիշյալ հանգամանքներով պայմանավորված առանձնահատուկ դեպքերում օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հարցում օբյեկտիվորեն կարևորել է հատկապես դատաքննության արդյունքը, դրա հիմքում որպես գնահատման չափանիշ դիտարկելով **արդյունավետությունը**, և դրան համապատասխան՝ դատական ծախսերի հատուցման

պարտականություն սահմանել այն իրավասությունների համար, որի իրավունքների, օրինական շահերի դատական պաշտպանությունն օբյեկտիվորեն անարդյունավետ է եղել:

Հետևաբար, Մահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման (հատուցման) իրավակարգավորման նման սկզբունքի նախատեսումը հետապնդում է արդարացի, Մահմանադրության 61-րդ (1-ին մաս), 63-րդ (1-ին մաս) հոդվածներին համապատասխան՝ իրավունքի իրացման չափանիշներին համապատասխանող նպատակ, այն բավարար չափով որոշակի է (Մահմ. 79-րդ հոդված), որպեսզի վարչական դատավարության կոնկրետ մասնակիցներն ի վիճակի լինեն կանխատեսել դատաքննության արդյունքներով պայմանավորված իրավական հետևանքներ՝ կապված դատական ծախսերի հատուցման հնարավոր պարտականության կատարման հետ:

4.4. Մահմանադրական դատարանն իր՝ 2008թ. սեպտեմբերի 9-ի ՄԴՈ-758 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ յուրաքանչյուր դատական աստյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական աստյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում: Սույն գործի շրջանակներում զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ Մահմանադրական դատարանը գտնում է, որ վերադաս դատարանի ակտի հիման վրա նոր քննության արդյունքում ստորադաս դատարանի կողմից ընդունված ակտը կամ հետապնդում է ինքնուրույն նպատակ՝ տվյալ գործի քննության գործընթացում կողմերի համար առաջացնելով իրավական հնարավոր նոր հետևանքներ: Հետևաբար, դատական նման ակտի արդյունքում առաջանում են նաև տվյալ ակտի բողոքարկման հետ կապված նոր իրավահարաբերություններ, որոնց պայմաններում դատաքննության արդյունքում կայացված դատական ակտը հանդիսանում է վերադաս դատարանի կողմից վերահսկողության նոր օբյեկտ: Դրանով պայմանավորված՝ վերադաս դատարանը, վերահսկողություն իրականացնելով դատական ենթադրյալ սխալ պարունակող՝ ստորադաս աստյանի դատական ակտի նկատմամբ, կատարում է գործողություն, որն օրենքի իմաստով հանդիսանում է պետական տուրքի գանձման ինքնուրույն օբյեկտ: Ընդ որում, խնդրո առարկա իրավիճակում գանձվող պետական տուրքը **ծառայում է այն նույն նպատակներին, ինչն այդ ինստիտուտն ունի ընդհանրապես, այն է՝ փոխհատուցել վերադաս դատարանում գործի քննությանը պայմանավորված ծախսերը:**

Հաշվի առնելով, որ սույն գործով դիմողի մատնանշած իրավիճակում բողոք բերող կողմը, ելնելով Օրենքի 22-րդ հոդվածի վիճարկվող իրավակարգավորման բովանդակությունից, շարունակում է օգտվել օրենսդրական այն երաշխիքներից, որոնք միտված են բացառելու դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը պետական տուրք վճարելու պարտականությամբ խոչընդոտելու հնարավորությունը, Մահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող հիշյալ դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարության շրջանակներում կայացված դատական ակտերի բողոքարկման ընթացակարգերում պետական տուրքի գծով արտոնություն չի տրամադրվում այդ արտոնությունից օգտված անձին, դատարանի մատչելիության իրավունքի ենթադրյալ խախտման առումով սահմանադրականության խնդիր է առաջացնում: Օրենքի վերոհիշյալ հոդվածի վիճարկվող իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազոր մարմինների ընդունած որոշման դեմ, բողոքներով պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելով, օրենսդիրը որևէ սահմանափակում կամ բացառություն չի նախատեսել կապված այդ գործերով կայացված դատական ակտերի հետագա հնարավոր բողոքարկման շրջանակներում հիշյալ արտոնության շարունակական կիրառման հետ: Սակայն, Մահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 22-րդ հոդվածի և Օրենսգրքի 60-րդ հոդվածի վիճարկվող նորմերի համատեղ կիրառման շրջանակներում դատական ծախսերի բաշխման կանոնները չեն կարող մեկնաբանվել այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի պետական տուրքի գծով արտոնություն ունեցող անձից այդ ծախսերը գանձվեն՝ ներառելով նաև վճարման ենթակա պետական տուրքի գումարը: Այն դեպքերում, երբ դատաքննության անբարենպաստ ելքով կամ օրենքով նախատեսված կոնկրետ հիմքով պայմանավորված դատավարության մասնակից այն սուբյեկտը, որն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի վճարման արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերն Օրենքով նախատեսված հիմքերով հատուցելու պարտականություն՝ պահպանելով պետական տուրքի գծով արտոնությունը:

Մահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկական պետք է առաջնորդվի քննության առարկա դրույթների հենց այսպիսի ընկալմամբ՝ ապահովելով դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումը նաև դատական բողոքարկման ընթացակարգերում: Մինչդեռ, սույն գործով դիմումին կից ներկայացված 13.09.2017թ. թիվ N ՎԴ/3146/05/16 որոշումը կայացնելիս ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով Օրենսգրքի 60-րդ հոդվածը (այդ թվում՝ հիշյալ

հողվածի վիճարկվող նորմը), դիմողից հոգուտ մյուս կողմի բռնազանձել է որպես բողոք բերելու համար սահմանված չափով նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում կազմող համապատասխան գումար:

4.5. Անդրադառնալով սույն գործով վիճարկվող իրավակարգավորման էության շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատագրված պրակտիկային՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարևորել հետևյալ դիրքորոշումները, համաձայն որոնց.

«...Դատարանն այնուհետև կրկնում է, որ այն դեպքերում, երբ բողոքարկման ընթացակարգեր են նախատեսված, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաքննիչ դատարաններում, ինչպիսիք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում» (տե՛ս Case of Paykar ev Haghtanak LTD v. Armenia, § 45, 20 December 2007, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-84119>).

«...Ավելին, այն սահմանափակումները, որոնք գուտ ֆինանսական բնույթ ունեն, և որոնք բացարձակապես կապված չեն վերաքննիչ բողոքի կամ վերջինիս հաջողության հեռանկարների հետ, պետք է արդարադատության շահերից էլնելով մանրակրկիտ քննության առնվեն» (տե՛ս Case of Podbielski and PPU Polpure v. Poland, 26 July 2005, § 65, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-69911>):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի գծով արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը, որը չի կարող ներառել այդ արտոնությամբ նախատեսված պետական տուրքի վճարը:

2. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմա-

նադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով՝ դատական բողոքարկման բուլտ փուլերում:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներին համապատասխան՝ սույն գործով դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով իրենց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերանայման վերոհիշյալ իրավունքը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմանադրական դատարանում սույն գործով դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

10 հուլիսի 2018 թվականի
ՄԴՈ-1423



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆՇԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ
ՕՐԵՆՔԻ 61-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 16-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 հուլիսի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (գեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ ՀՀ վարչական դատարանի,
գործով որպես պատասխանող ներգրավված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության օրենսդրական փորձաքննության բաժնի ավագ իրավափորձագետ Ա. Քոչարյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)/2018

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել 2017 թվականի նոյեմբերի 29-ին, ուժի մեջ է մտել՝ 2017 թվականի դեկտեմբերի 16-ից:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է ՀՀ վարչական դատարանի 2018 թվականի ապրիլի 6-ի ՎԴ/5524/05/16 գործով «Վարչական գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը վիճարկում է Օրենքի «Զինծառայողների դրամական ապահովությունը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 16-րդ մասը, համաձայն որի՝ «Զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափով: Սույն մասում նշված դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինծառայողի սույն օրենքի համաձայն զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը»:

Դիմողը նշում է, որ Աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածը չօգտագործված արձակուրդի հատուցման համար ժամկետային սահմանափակում չի նախատեսում: Բացի դրանից, չօգտագործված արձակուրդի համար փոխհատուցում ստանալու իրավունքը սահմանափակված չէ նաև «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Դատական ծառայության մասին», «Դիվանագիտական ծառայության մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Հարկային ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքներով:

Դիմողը նշում է, որ Աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածից տարբերվող կարգավորումներ կարելի է հանդիպել «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» և «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքներում, որոնց դրույթները չօգտագործված արձակուրդի հատուցման հարցի լուծումը վերապահել են ՀՀ կառավարությանը:

Ելնելով վերոգրյալից դիմողը եզրահանգում է, որ «օրենսդիրը խտրական մոտեցում է ցուցաբերել զինծառայողների՝ մի կողմից, և առնվազն դատական, դիվանագիտական, մաքսային, հարկային ծառայողների, ազգային անվտանգության մամիններում, Ազգային ժողովի աշխատակազմում ծառայողների, քննիչների և քննչական կոմիտեի դեպարտամենտում ծառայողների մյուս կողմից, միջև չօգտագործված արձակուրդի հատուցման հարցում: Մասնավորապես, զինծառայողները թվարկված մյուս ծառայողների հանդեպ ավելի բացասական իրավական դրության մեջ են, քանի որ նրանց նման հատուցումը սահմանափակված է եռամյա ժամկետով, իսկ մյուս ծառայողներինը ոչ»: Ընդ որում, դիմողի կարծիքով, նշված բոլոր տեսակի ծառայողների սոցիալիրավական կարգավիճակը նույնասեռ է, քանի որ նրանք բոլորն իրականացնում են հանրային պետական ծառայությունն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական գործունեություն:

Դիմողը նշում է նաև, որ նման պայմաններում արձանագրված խտրականությունը չի խախտի Սահմանադրության 29-րդ հոդվածը, միայն եթե առկա լինի տարբերակված մոտեցման օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում, հետապնդի իրավաչափ նպատակ և պահպանվի համաչափ կապ սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև:

Միաժամանակ դիմողը շեշտում է, որ Վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ վարչական դատարանը համապատասխան հայցի հիման վրա կիրառում է այդ պահին գործող իրավական նորմերը, ինչը փաստացի անհնար է դարձնում արդեն իսկ իրավաբանական ուժ չունեցող իրավանորմերի հիման վրա վարչական դատարանի կողմից որոշումների կայացման հնարավորությունը:

Դիմողը գտնում է, որ արդարացված չէ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասով զինծառայողների նկատմամբ օրենսդրի դրսևորած խտրականությունը, ուստի առկա է հիմնավոր կասկած առ այն, որ այն չի համապատասխանում Սահմանադրության 29-րդ հոդվածի պահանջներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը նշում է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել սահմանադրական փոփոխություններով:

Օրենսդիրն Օրենքի ընդունմամբ «ակնկալել է ապահովել խաղաղ և պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանության արդյունավետությունը, բարձրացնել քաղաքացիների վստահությունը պարտադիր զինվորական ծառայության և պահեստագորային պատրաստության գործընթացի նկատմամբ, քաղաքացիների մոտ խթանել պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու կամահայտության դրսևորումը»:

Իր դիրքորոշումները հիմնավորելու նպատակով պատասխանողը հղում է կատարում Սահմանադրության 10-րդ հոդվածի («Մեփականության երաշխավորումը»), 28-րդ և 29-րդ հոդվածների («Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը» և «Խտրականության արգելքը»), 60-րդ հոդվածի («Մեփականության իրավունքը»), 82-րդ հոդվածի («Աշխատանքային պայմանները») դրույթներին, ինչպես նաև անդրադարձ է կատարում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Աշխատանքի միջազգային կազմակերպության «Վճարովի արձակուրդների մասին» կոնվենցիայի համապատասխան դրույթներին:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների դատական պրակտիկան առ այն, որ պետության կողմից համեմատաբար նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ վերաբերմունքի տարբերակված մոտեցման սահմանման հնարավորությունը կարող է լինել օրինական միայն օբյեկտիվ և հիմնավոր արդարացման առկայությամբ, ինչպես նաև ելնելով վերոթվարկյալ միջազգային և ներպետական իրավական նորմերի ամբողջական համադրության համատեքստից՝ պատասխանողը փաստում է, որ վճարովի արձակուրդի իրավունքը և այն չիրացնելու դեպքում չօգտագործված համապատասխան արձակուրդի դիմաց փոխհատուցման իրավունքի նկատմամբ տարբերակված մոտեցման հայեցակարգը բացառապես անհրաժեշտ է դիտարկել իրավաչափ նպատակի հետապնդման, օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորման, ինչպես նաև հետապնդվող նպատակի և միջոցների միջև համաչափ կապի հստակ պահպանման տեսանկյունից:

Պատասխանողի կարծիքով՝ վիճարկվող դրույթով սահմանված՝ «զինծառայողների համար արձակուրդի իրավունքի արդյունավետ իրականացման ապահովման ընթացակարգերում ողջամիտ և օբյեկտիվ արդարացման տեսանկյունից առկա է ոչ բավարար հայեցակարգ»:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված դրույթը չի համապատասխանում Սահմանադրության պահանջներին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյոք ք զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցում տրամադրելը Սահմանադրությամբ, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված պետության պոզիտիվ պարտականությունն է,

- արդյոք ք զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ իրավակարգավորումների փոփոխման, մասնավորապես՝ կարգավիճակի վատթարացման դեպքում անձն ունի Սահմանադրությամբ երաշխավորված լեզիտիմ ակնկալիքներ, որոնց պարագայում զինծառայողին չօգտագործված արձակուրդի բոլոր օրերի համար փոխհատուցում ստանալու հնարավորությունից զրկելը խախտում է Սահմանադրությամբ ամրագրված անձի սեփականության իրավունքը,

- արդյոք ք այլ պետական ծառայողների համեմատ զինծառայողների համար չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորության սահմանափակումը խախտում է Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքը:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը քննում է Սահմանադրության 29, 60, 73 և 82-րդ հոդվածների համատեքստում:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սոցիալական իրավունքների ամրագրումն ու այդ իրավունքների իրականացման ապահովումը բխում է Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջից, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Սահմանադրության 82-րդ հոդվածը, որը նվիրված է աշխատանքային պայմաններին, որպես սոցիալական ոլորտի օրենսդրական երաշխիք՝ յուրաքանչյուր աշխատողի համար նախատեսել է, ի թիվս այլնի, ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 158-րդ հոդվածի՝ ամենամյա արձակուրդն աշխատողին տրամադրվում է վերջինիս հանգստանալու և նրա աշխատունակությունը վերականգնելու նպատակով: Ընդ որում, հանգստանալու իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու համար արձակուրդի ընթացքում պահպանվում է աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) և նրան վճարվում է միջին աշխատավարձ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(92)2018

Օրենսգրքի 164-րդ հոդվածի համապատասխան ամենամյա արձակուրդը յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար տրամադրվում է տվյալ աշխատանքային տարում:

Ամենամյա արձակուրդի տեղափոխումը թույլատրվում է բացառիկ դեպքերում, և, որպես կանոն, տեղափոխված ամենամյա արձակուրդը տրամադրվում է նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար աշխատողին չի հատկացվել կամ մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը:

Ելնելով Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներից՝ այն է՝ «Քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների ... աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ», Օրենքի 49-րդ հոդվածը նախատեսել է դրույթ, համաձայն որի՝ «Եթե հիվանդության կամ այլ հարգելի պատճառով պայմանագրային զինծառայողը չի օգտվել հերթական և (կամ) սույն օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լրացուցիչ արձակուրդից, ապա դրանք տրվում են հաջորդ տարվա առաջին կիսամյակի ընթացքում»:

Բացի դրանից, համաձայն նույն հոդվածի՝ «Հերթական արձակուրդից պայմանագրային զինծառայողին հետ կանչել թույլատրվում է միայն ծառայողական ծայրահեղ անեքստրեմիզմի դեպքում՝ արձակուրդ տրամադրած հրամանատարի (պետի) հրամանով: Նշված դեպքում չօգտագործած արձակուրդի մասը տրամադրվում է նույն տարում, եթե կազմում է 15 օրացուցային օր և ավելի: Չօգտագործած արձակուրդի օրերը պայմանագրային զինծառայողի ցանկությամբ միացվում են հաջորդ տարվա հերթական արձակուրդի օրերին»: Այսինքն՝ վերոնշյալ իրավակարգավորումներն ուղղված են նրան, որ աշխատակիցները, այդ թվում՝ պայմանագրային զինծառայողները, պարտադիր կերպով օգտվեն իրենց ընձեռված հանգստանալու հնարավորություններից:

Դրան է ուղղված նաև Հայաստանի Հանրապետության կողմից 2006 թվականի հունվարի 27-ին վավերացված Աշխատանքի միջազգային կազմակերպության 1970թ. հունիսի 24-ի «Վճարովի արձակուրդների մասին» թիվ 132 կոնվենցիայի (այսուհետ՝ ԱՄԿ-ի կոնվենցիա) 12-րդ հոդվածը, համաձայն որի՝ արգելվում են և անվավեր են փոխհատուցման դիմաց ամենամյա նվազագույն վճարովի արձակուրդի իրավունքից հրաժարվելու կամ նման արձակուրդները չօգտագործելու վերաբերյալ համաձայնությունները:

Ինչ վերաբերում է զինծառայողներին արձակուրդների տրամադրման ձևավորված պրակտիկային, ապա հարկ է նշել, որ ՀՀ պաշտպանության նախարարը 12.06.2018 թվականի ՊՆ/510-819 գրությամբ (ի պատասխան 2018 թվականի հունիսի 5-ի ՄԴԴ-14 գրության) հայտնել է, որ «...օրենքի պահանջների համաձայն տարվա ընթացքում որևէ պատճառով հերթական արձակուրդից չօգտված պայմանագրային զինծառայողներին նախորդ տարվա հերթական արձակուրդը տրվել է հաջորդ տարվա առաջին 6 ամսվա ընթացքում, ինչը կազմել է գործող պրակտիկան»:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ամենամյա արձակուրդի սահմանադրական իրավունքն ուղղված է ապահովելու անձի՝ հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու անհրաժեշտությունը, ինչից էլնելով էլ իրավակարգավորումներն, որպես ընդհանուր կանոն, արգելում են ամենամյա արձակուրդի փոխարինումը դրամական հատուցմամբ: Միևնույն ժամանակ, ամենամյա արձակուրդից օգտվելն անձի իրավունքն է, իսկ արձակուրդի տրամադրման կարգի սահմանման պարտականությունը կրում է պետությունը: Նույնիսկ այն դեպքերում, երբ արձակուրդի տրամադրման կարգի խախտումը տեղի է ունենում աշխատողի համաձայնությամբ կամ միջնորդությամբ, չեն կարող բացառվել դեպքեր, երբ այդ իրավունքը չիրացնելու արդյունքում աշխատանքի կամ ծառայության ընթացքում կուտակվեն ամենամյա արձակուրդների չօգտագործված օրեր:

Հաշվի առնելով Սահմանադրությամբ ամրագրված անձի՝ ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքը, Օրենսգրքի 170-րդ հոդվածը նախատեսել է չօգտագործված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցում ստանալու հնարավորություն: Մասնավորապես, եթե աշխատանքային պայմանագրի լուծման հետևանքով ամենամյա արձակուրդի իրավունք ձեռք բերած աշխատողին չի կարող տրամադրվել ամենամյա արձակուրդ, կամ աշխատողը չի ցանկանում դրա տրամադրումը, ապա նրան վճարվում է դրամական հատուցում (1-ին մաս): Ընդ որում, հատուցումը վճարվում է արձակուրդի չօգտագործված բոլոր օրերի համար՝ առանց ժամկետային սահմանափակման (2-րդ մաս):

Նույնաբովանդակ կարգավորում է նախատեսվում նաև ԱՄԿ-ի վերոհիշյալ կոնվենցիայի 11-րդ հոդվածով, համաձայն որի՝ աշխատանքի դադարեցման դեպքում անձը ստանում է վճարովի արձակուրդ իր աշխատանքի ժամանակահատվածի տևողությանը համապատասխանող մասով, որի համար նա չի ստացել այդպիսի արձակուրդ, **կամ դրա փոխարեն տրվում է փոխհատուցում**, կամ տրամադրվում է ապագա համարժեք արձակուրդի իրավունք:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ զինվորական ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդի չօգտա-

գործված օրերի դիմաց փոխհատուցում նախատեսող իրավակարգավորման ապահովումը Սահմանադրությամբ, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված պետության պոզիտիվ պարտականությունն է:

4.2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս կամ ծառայությունից արձակվելիս՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորումները դիտարկել Սահմանադրության 73-րդ հոդվածով նախատեսված օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժին վերաբերող դրույթների լույսի ներքո: Մասնավորապես, Սահմանադրության վերոնշյալ դրույթի համապատասխան անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ մինչև 2004 թվականին ընդունված Աշխատանքային օրենսգրքի 2005 թվականի հունիսի 21-ից ուժի մեջ մտնելը, նախկին Աշխատանքային օրենսգրքի 246.1-րդ հոդվածը նախատեսում էր դրույթ, համաձայն որի՝ աշխատողի արձակման դեպքում չօգտագործված արձակուրդի դիմաց դրամական փոխհատուցումը ենթակա էր վճարման ոչ ավելի, քան երկու աշխատանքային տարվա համար:

Հետագայում ո՛չ գործող Աշխատանքային օրենսգրքը, ո՛չ էլ զինվորական ծառայության ոլորտի օրենսդրությունը (մինչև 2014թ. հոկտեմբերի 2-ի թիվ 1075-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 778 որոշումը 15.1 կետով լրացնելը), որևէ ժամկետային սահմանափակում չէին նախատեսում հերթական արձակուրդների չօգտագործված օրերի դիմաց փոխհատուցում ստանալու վերաբերյալ:

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին, որոնք վերաբերում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի բովանդակության բացահայտմանը: Մասնավորապես, դատարանը նշել է, որ «գույք» հասկացությունը ներառում է ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցները, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու օրինական ակնկալիքը: (*Trgo v. Croatia, 11 June 2009* վճիռ):

Այդ առումով, ակտիվներ ձեռք բերելու նկատմամբ «օրինական ակնկալիքը» նույնպես կարող է գտնվել Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանության ներքո: Միաժամանակ, «օրինական ակնկալիքների» մասին խոսք չի կարող լինել, եթե դրա համար չկան ազգային օրենսդրությամբ սահմանված բավարար հիմքեր:

Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշման մեջ ևս նշել է, որ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակարգավորման այդպիսի պայմաններում, երբ կոնկրետ ժամանակահատվածում չի եղել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու ժամկետային սահմանափակումը, սակայն զինձառայողը գրկված է եղել այդ արձակուրդային օրերն օգտագործելու կամ դրանց դիմաց առանց ծառայությունից արձակվելու փոխհատուցում պահանջելու և ստանալու հնարավորությունից, ապա զինձառայողի համար առկա են եղել «օրինական ակնկալիքի» հիմքեր: Հետևաբար, նշված դեպքերում պետք է երաշխավորվի փոխհատուցում ստանալու անձի հնարավորությունը՝ որպես Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանության իրագործում:

4.3. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական ծառայությունն ընդգրկում է դատական ծառայությունը, քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության գորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը:

Զինվորական ծառայությունը, ի թիվս այլնի, համարվում է պետական ծառայության տեսակ, որտեղ գործող հարաբերություններն Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով կարող են կարգավորվել Օրենսգրքով միայն այն դեպքում, երբ համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ: Մինչդեռ, Օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասով այլ բան է նախատեսվում, քան այն նախատեսված է Օրենսգրքով: Մասնավորապես, ի տարբերություն Օրենսգրքի 170-րդ հոդվածի, որը թույլատրում է աշխատանքից

ազատվելիս հատուցում ստանալ **չօգտագործված արձակուրդների համար առանց ժամկետային սահմանափակման**, Օրենքը նախատեսել է հատուցում ստանալու իրավունք միայն զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց, իսկ Օրենքի 72-րդ հոդվածով հստակեցվում է զինծառայողների և զինծառայողներին հավասարեցված անձանց շրջանակը, որոնց վրա տարածվում է դիտարկվող սոցիալական երաշխիքը: Դրանք են՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողները:

Ի տարբերություն այլ աշխատողների՝ Օրենքի 72-րդ հոդվածով նախատեսված զինծառայողների և զինծառայողներին հավասարեցված անձանց համար **նույն սոցիալական երաշխիքը նախատեսվել է ավելի փոքր ծավալով**: Եվ դա նախատեսվել է Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին համահունչ:

Այլ է խնդիրը, թե արդյոք օրենսդիրն իրավասու էր աշխատանքային բնույթի հարաբերությունների մեջ գտնվող բոլոր անձանց համար նախատեսված սոցիալական երաշխիքը որոշ կատեգորիայի ծառայողների համար սահմանել այլ ծավալով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշված իրավակարգավորումը դիտարկել Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով նախատեսված խտրականության արգելքի սկզբունքի տեսանկյունից:

Մասնավորապես, Սահմանադրության «խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածով սահմանվում է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրական դատարանն իր՝ 2015թ. հուլիսի 7-ի ՍԴՈ-1224 որոշման մեջ նշել է, որ՝ «...խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ»:

Մեկ այլ, 2011թ. հունիսի 7-ի ՄԴՈ-967 որոշման մեջ խտրականության արգելման վերաբերյալ նշվում է. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է»:

Իսկ Կոնվենցիայի՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով սահմանվում է, որ նույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի միջև: Ըստ Եվրոպական դատարանի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես, *Abdulaziz, Cabales and Balkandali v. the United Kingdom*, 28 May 1985 վճռում Եվրոպական դատարանը նշել է. «...տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»:

Բացի դրանից, անդրադառնալով Կոնվենցիայի 14-րդ հոդվածով ամրագրված խտրականության արգելքի վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկային, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շեշտել է, որ Կոնվենցիան կիրառելի է ոչ միայն քաղաքացիական անձանց, այլև զինծառայողների նկատմամբ: Մասնավորապես, *Markin v. Russia*, 22 Mart 2012 վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի նորմերը մեկնաբանելիս և կիրառելիս պետք է հաշվի առնել զինվորական կյանքի առանձնահատկությունները և առանձին զինծառայողների համար դրանց ունեցած ազդեցությունը: Մյուս կողմից զինվորական ծառայություն անցնող անձինք օժտված են նույն իրավունքներով և ազատություններով, ինչ մյուս քաղաքացիները, իսկ այդ իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է պայմանավորված լինեն զինվորական ծառայության ոլորտում կարգուկանոն ապահովելու անհրաժեշտությամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև անդրադառնալ Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատանքի և

զբաղվածության ոլորտում խտրականության վերաբերյալ» թիվ 111 կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է 1995թ. հուլիսի 29-ից) 1-ին հոդվածին, համաձայն որի՝ աշխատանքի ոլորտում խտրականությունն է համարվում ոչ միայն ռասայի, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական համոզմունքի, ազգային ծագման կամ սոցիալական պատկանելության հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որոնց հետևանքով վերանում կամ խախտվում է աշխատանքի ու զբաղվածության բնագավառում հնարավորության կամ վերաբերմունքի հավասարությունը, այլ նաև աշխատանքի և զբաղվածության բնագավառում հնարավորության կամ վերաբերմունքի հավասարության վերացմանը կամ խախտմանը հանգեցնող ցանկացած այլ տարբերակում, մերժում կամ նախապատվություն, այսինքն, ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խտրականությունը: Այդ առումով Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ արձակուրդի իրավունքը համապարփակ իրավունք է և տարածվում է ինչպես հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այնպես էլ մասնավոր անձանց վրա, որոնք գտնվում են աշխատանքային հարաբերությունների մեջ: Զինծառայողները թե՛ հանրային ծառայողներ են, թե՛ նաև լայն իմաստով՝ աշխատանք կատարող անձինք, որոնց արձակուրդի և հանգստի իրավունքը չի կարող չերաշխավորվել օրենքով:

Թեև Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրին է վերապահված ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքի բովանդակությունը որոշակիացնելու լիազորությունը, այդուհանդերձ, Սահմանադրությունը, ի թիվս այլնի, նախ բացառում է ընդհանրապես այս իրավունքի չերաշխավորելը օրենքով, ինչպես նաև խտրական մոտեցումն այն երաշխավորելիս:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքը երաշխավորում է այս իրավունքը նաև զինծառայողների համար, բայց սահմանում է դրա պաշտպանության ավելի նեղ ծավալ՝ չսահմանելով և չհիմնավորելով այն չափանիշները, որոնցով հնարավոր կլինի իրավաչափ տարբերակում դնել, մի կողմից՝ զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, մյուս կողմից՝ այլ պետական ծառայողների միջև:

Այդ առումով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չօգտագործված արձակուրդների օրերի դիմաց փոխհատուցում ստանալու միասնական իրավակարգավորումների ապահովումն օրենսդրի իրավասության շրջանակներում է:

Վերոգրյալից էլնելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում տարբերակումը չունի օբյեկտիվ բնույթ, հիմնավորված չէ և չի հետապնդում իրավաչափ նպատակ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասը՝ զինծառայողի՝ չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորությունը զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա ժամանակահատվածով սահմանափակելու մասով, ճանաչել Սահմանադրության 29, 60, 73-րդ և 82-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

10 հուլիսի 2018 թվականի
ՄԴՈ-1424



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՍ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
61-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 16-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 10 ՀՈՒԼԻՄԻ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՍԴՈ-1424 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-1424 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ ունեմ հետևյալ առարկությունները:

1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշման պատճառաբանական մասում բավարար հիմնավորումներ առկա չեն կապված՝ պետական ծառայության այդ տեսակի առանձնահատկությունների և հատկապես դրանցով պայմանավորված այն իրավակարգավորումների հետ, որպիսիք առնչվում են զինվորական ծառայության բնագավառում զինծառայողների սոցիալական երաշխիքների իրացման հետ: Դրա փոխարեն, որոշման պատճառաբանական մասում իրավավերլուծական շարադրանքը (ՍԴ որոշման 4.1., 4.2., 4.3. կետեր) հանգեցրել է այն մտքին, որ արձակուրդի, որպես աշխատանքի իրավունքի իրացման կարևոր երաշխիքի հետ կապված հարաբերությունները զինվորական ծառայության բնագավառում կարգավորելի են (կամ՝ պետք է կարգավորվեն) ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված իրավական չափանիշներով, հստակ չեն արձանագրվել օրենքով նախատեսված այն բազմաթիվ առանձնահատկությունները, որպիսիք բնութագրում են պետական ծառայության այդ տեսակը, ավելին՝ հղում է կատարված Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում կնքված «Վճարովի արձակուրդների մա-

սին» կոնվենցիայի՝ արձակուրդից հրաժարվելու կամ այն չօգտագործելու վերաբերյալ համաձայնությունների անվավերության վերաբերյալ նորմին (ՄԴ որոշման 4.1-րդ կետ), ըստ էության հիմնավորելու համար բազմակի չօգտագործված արձակուրդի կուտակման անթույլատրելիությունը ու այնուհետ՝ հետևություններ են արվել խտրականության արգելքի սկզբունքի խախտման մասին (ՄԴ որոշման 4.3-րդ կետ):

Չժխտելով չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցում ստանալու անձի իրավունքի անվերապահ պաշտպանության անհրաժեշտությունը, կարևոր է միաժամանակ արձանագրել, որ զինվորական ծառայության և դրան հավասարեցված պետական ծառայության այլ տեսակների (ոստիկանությունում, ազգային անվտանգության, քրեակատարողական, փրկարար ծառայության մարմիններում ծառայության և այլն) վերաբերյալ օրենսդրության ակտերի ուսումնասիրումը վկայում է, որ օրենսդիրը պետական ծառայության հատուկ տեսակներում ծառայողների արձակուրդի տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորելիս առաջնորդվել է այն միասնական ընդհանուր սկզբունքներով, համաձայն որոնց.

- հերթական արձակուրդը չօգտագործելը բացառություն է, ընդ որում նախատեսված են արձակուրդը հերթական տարում չօգտագործելու դեպքերը,

- օգտագործած արձակուրդի օրերը զինծառայողի ցանկությամբ միացվում են հաջորդ տարվա հերթական արձակուրդի օրերին,

- նախատեսված է չօգտագործված արձակուրդի դիմաց դրամական հատուցման կարգը և պայմանները:

Ի դեպ, իրավակարգավորման գրեթե նույնպիսի ընդհանուր սկզբունքներ են ամրագրված նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքում (167-րդ, 168-րդ, 169-րդ և 170-րդ հոդվածներ):

Հետևաբար, հիմնավորելու համար, թե արդյո՞ք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի վիճարկվող իրավակարգավորմամբ խախտվել է Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքի սկզբունքը և այդ հիմքով վիճարկվող նորմը հակասահմանադրական ճանաչելը, անհրաժեշտ էր նախ, համեմատական իրավավերլուծությամբ բացահայտել ենթադրյալ այդ խախտումը տալով այն հարցի պատասխանը, թե զինծառայության և դրան հավասարեցված պետական ծառայության այլ տեսակներում իրավակարգավորման վերոհիշյալ միասնական սկզբունքների կիրառման պայմաններում հատկապես ինչու՞մ է դրսևորվել խտրականությունը, կամ՝ աշխատանքային-քաղաքացիական և զինծառայությամբ պայմանավորված հարաբերություններում արդյո՞ք՝ օրինաչափ և իրավաչափ է սոցիալական երաշխիքների ու հատկապես՝ ամենամյա արձակուրդի հետ

կապված հարաբերությունների միակերպ կարգավորումն այն դեպքում, երբ զինվորական ծառայությունն օրենքով հաստատագրված շրջանակներում ունի մի շարք էական այնպիսի առանձնահատկություններ, որպիսիք հիմք են այն պետական ծառայության հատուկ տեսակների շարքում դիտարկելու համար: Այդ հանգամանքը հաշվի չառնելը չի բխի նաև Սահմանադրության 82-րդ հոդվածի ընդհանուր բովանդակությունից, համաձայն որի օրենքին համապատասխան են որոշվում անձանց աշխատանքային պայմանները, այդ թվում նաև՝ ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքի իրացման կարգը: Դրանով իսկ նաև սահմանադրական մակարդակով է կանխորոշված արձակուրդի իրավունքն օրենքով սահմանված կարգին համապատասխան իրացնելու պայմանը, ինչն առկա է նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում: Մինչդեռ, Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում առկա են հղումներ Սահմանադրական դատարանի 2015թ. հուլիսի 7-ի ՄԴՈ-1224 որոշմամբ և ՄԻԵԴ-ի՝ Abdulaziz, Cabales and Balkandali v. The United Kingdom, 28 May 1985 վճռում արտահայտված իրավական դիրքորոշումներին, որոնք վերաբերելի չեն քննության առարկա հարցի հետ այնքանով, որ չեն հանգեցնում իրավաբանորեն հիմնավորված այնպիսի հետևության, համաձայն որի օրենսդիրը խախտել է Սահմանադրության 29-րդ հոդվածում ամրագրված խտրականության արգելքի սկզբունքը: Իրավական հիշատակված դիրքորոշումներին համապատասխան «...ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել...», և որ խտրականության արգելքի սկզբունքի խախտում է եթե «...տարբերակումը կամ տարբերությունը ... չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում ... չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին» (ՄԴ որոշման 4.3-րդ կետ): Փաստորեն, հիշյալ դիրքորոշումներից անխուսափելիորեն կարող բխել մի հետևություն, համաձայն որի.

- զինվորական ծառայության բնագավառում արձակուրդի իրավունքի իրացման առանձնահատկությունները չունեն օբյեկտիվ և ողջամիտ արդարացում,

- այդ առանձնահատկությունները չեն հետապնդում իրավաչափ նպատակ, համաչափ չեն հետապնդվող իրավաչափ նպատակին...:

Միաժամանակ, որոշմամբ փաստելով, որ «...օրենքը երաշխավորում է այս իրավունքը (այսինքն՝ ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքը,-ավելացումը **հեղինակի**) նաև զինծառայողների համար, բայց սահմանում է դրա պաշտպանության ավելի նեղ ծավալ՝ չսահմանելով և չհիմնավորելով այն չափանիշները, որոնցով հնարավոր կլինեք իրավաչափ տարբերակում դնել մի կողմից՝ զինծառայողների և նրանց հավա-

սարեցված անձանց, մյուս կողմից՝ այլ պետական ծառայողների միջև» լրացուցիչ վկայում է այն մասին, որ համեմատական իրավավերլուծությանը չեն բացահայտվել այն հիմնական առանձնահատկությունները, որոնցով բնորոշելի են պետական ծառայության հատուկ տեսակներն ընդհանրապես և դրանով պայմանավորված՝ օրենսդրի կողմից դրսևորված իրավակարգավորման տարբերակված մոտեցումը:

2. Սահմանադրական դատարանի որոշմամբ համակարգային փոխկապակցվածության շրջանակներում իրավավերլուծական անդրադարձ չի կատարվել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 9-րդ մասում նախատեսված իրավակարգավորմանը, համաձայն որի օրենսդիրն ըստ էության օրինաչափ չի համարել զինծառայողի հերթական արձակուրդի բազմակի չօգտագործումն ու արդյունքում դրա կուտակումը, ինչն անհրաժեշտ էր զինծառայության և դրան հավասարեցված պետական ծառայության հատուկ այլ տեսակներում արձակուրդի, որպես սոցիալական կարևոր երաշխիքի իրացման առանձնահատկությունը բացահայտելու և իրավաբանորեն իմաստավորելու տեսանկյունից:

ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր

Հ. ՆԱԶԱՐՅԱՆ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՈՒԹՅԱՆ «ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԵՎՐՈՊԱ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի տեղակալ Ն. Ղարիբյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց 2018 թվականի մարտի 20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև մշակութային և ստեղծագործ ոլորտների համար Միության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ փոխըմբռնման

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից ստորագրված Կառավարության՝ 2018 թվականի հուլիսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով փոխըմբռնման հուշագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Գ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև մշակութային և ստեղծագործ ոլորտների համար Միության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) ստորագրվել է 2018 թվականի մարտի 20-ին Բրյուսելում՝ հայաստանյան մշակութային ոլորտի կազմակերպությունների՝ եվրաինտեգրման գործընթացին ակտիվորեն ներգրավվելու, գրականության, թատրոնի, ճարտարապետության, կերպարվեստի և կինոարտադրության ոլորտներում դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու նպատակով:

2. Հուշագրի անբաժանելի մաս են կազմում երկու Հավելվածները, որոնցով սահմանվում են մշակութային և ստեղծագործ ոլորտների համար Միության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրում Հայաստանի ֆինանսական հատկացումը կարգավորող կանոնները և ֆինանսական վերահսկողության, փոխհատուցման ու խարդախության դեմ միջոցառումները:

3. Հուշագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետությունը մասնակցի մշակութային ենթածրագրին և մշակութային և ստեղծագործ ոլորտների համար Միության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի (այսուհետև՝ Ծրագիր) միջոլորտային հարթակին՝ Հուշագրի և Շրջանակային համաձայնագրում շարադրված պայմաններին համաձայն,
- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությունը ծրագրի միջոցառումներին համահունչ լինի (ԵՄ) թիվ 1295/2013 կանոնակարգով սահմանված նպատակներին, չափանիշներին, ընթացակարգերին և վերջնաժամկետներին,

• Ծրագիրն իրականացնելու նպատակով ապահովել, որ ներպետական մակարդակով ստեղծվեն համապատասխան կառույցներ ու մեխանիզմներ և ձեռնարկվեն բոլոր այլ անհրաժեշտ միջոցներն աշխատանքների ներպետական համակարգման և կազմակերպման համար՝ համաձայն 1295/2013 կանոնակարգի համապատասխան դրույթների,

• յուրաքանչյուր տարի ֆինանսական հատկացում կատարել Եվրոպական Միության ընդհանուր բյուջե՝ Հուշագրի 1-ին Հավելվածով սահմանված կարգով,

• ֆինանսական կանոնակարգի և Հուշագրում նշված այլ կանոնների համաձայն՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետությունում հիմնված՝ Ծրագրի շահառուների հետ կնքված պայմանագրերը և դրամաշնորհային համաձայնագրերը ապահովեն ֆինանսական կամ այլ աուդիտների անցկացումը ցանկացած ժամանակ՝ պայմանագրի կամ դրամաշնորհային համաձայնագրի իրականացման ընթացքում և 5 տարվա կտրվածքով՝ սկսած հաշվեկշռի վճարման օրվանից, բացառությամբ 60.000 եվրոյին համարժեք կամ դրանից ցածր դրամաշնորհների, որոնց համար այդ ժամկետը կսահմանափակվի մինչև 3 տարվա կտրվածքով,

• ապահովել, որ Հանձնաժողովի գործակալները կամ Հանձնաժողովի լիազորած այլ անձինք ունենան պատշաճ հասանելիություն կայքերին, աշխատանքներին ու փաստաթղթերին և ամբողջ այն տեղեկատվությանը, որը պահանջվում է նման աուդիտ իրականացնելու համար, ներառյալ էլեկտրոնային տարբերակները, ինչպես նաև ապահովել, որ հասանելիության այդ իրավունքը հստակ շարադրված լինի պայմանագրերի և դրամաշնորհային համաձայնագրերի մեջ, որոնք կկնքվեն՝ Հուշագրում նշված գործիքները իրականացնելու համար,

• Եվրոպական Միության իրավասու մարմիններին պարբերաբար փոխանցել համապատասխան տեղեկություններ,

• ապահովել, որ Հայաստանի իրավասու մարմիններն առանց ձգձգման Հանձնաժողովին տեղեկացնեն իրենց նկատած ցանկացած փաստի և կասկածի մասին, որը վերաբերում է խախտման՝ կապված պայմանագրերի և դրամաշնորհային համաձայնագրերի կնքման և իրականացման հետ, որոնք կնքվել են Հուշագրում նշված գործիքներն իրականացնելու համար:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հուշագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

ՍԱՀՄԱՍՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՍՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2018 թվականի մարտի 20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև մշակութային և ստեղծագործ ոլորտների համար Միության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

10 հուլիսի 2018 թվականի
ՄԴՈ-1425



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՌՈՍԻԿ ԴԱՆԻԱԼԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 375-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «ՏՈՒԺՈՂԻՆ,
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑՎՈՐԻՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՆ,
ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶԻԶՆԵՐԻՆ ԴԱՏԱՎՃՈՒ ՊԱՏՃԵՆՆ ԱՅԴ ՆՈՒՅՆ
ԺԱՄԿԵՏՈՒՄ ՀԱՆՁՆՎՈՒՄ Է ՆՐԱՆՑ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ» ԴՐՈՒՑԹԻ՝ ՀՀ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 սեպտեմբերի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող կողմի ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Տ. Եգորյանի և Դ. Գյուրջյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության օրենսդրական փորձաքննության բաժնի ավագ իրավափորձագետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռոմիկ Դանիալի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(92)2018

նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի «Դատավճռի պատճենը հանձնելը դատապարտվածին կամ արդարացվածին» վերտառությամբ 375-րդ հոդվածով սահմանվում է. «Դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին: Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ»:

Գործի քննության առիթը Ռ. Դանիալի՝ 2018 թվականի ապրիլի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 375-րդ հոդվածի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը, համաձայն որի՝ տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին և նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենը 5 օրում հանձնվում է նրանց միջնորդությամբ: Նա պնդում է, որ նշված «...դրույթը և/կամ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը հակասության մեջ գտնվելով Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ հոդվածների, 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածների հետ հակասում է Սահմանադրության նաև 29-րդ հոդվածին»:

Դիմողը նշում է, որ վերաքննիչ դատարանը վիճարկվող դրույթն իր նկատմամբ կիրառել է այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ «Դատարանը դատավճռի օրինակը Դիմողին պարտավոր էր հանձնել միայն նրա դիմումի առկայության պայմաններում, իսկ Դիմողն իր հերթին պարտավոր էր 5-օրյա ժամկետում դիմել և ստանալ դատավճռի օրինակը՝ դրա դեմ բողոք ներկայացնելով սահմանված 1-ամսյա ժամկետում հրապարակման պահից»:

Դիմողի համոզմամբ վիճարկվող դրույթի ուժով դատավճռի բողոքարկման տուժողի իրավունքի իրացումն առկախվում է նրա դրական (ակտիվ) վարքագծից, այն է՝ դատավճիռը պահանջելու հանգամանքից՝ այդ կերպ սահմանափակելով իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության նրա իրավունքը:

Դիմողի կարծիքով, դատավճռի պատճենն ստանալու համար տուժողի կողմից միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ օրենքի պահանջն իրավաչափ նպատակ չի հետապնդում և հակասում է դատավարության կողմերի հավասարության և մրցակցության քրեադատավարական հիմնարար սկզբունքներին: Վիճարկվող դրույթը դատավճիռն ստանալու համար տուժողին անհարկի ծանրաբեռնելով միջնորդություն ներկայացնելու պարտականությամբ, չի սահմանում դատավարության մեկ կողմի նկատմամբ նման տարբերակված մոտեցման հիմքը, պատճառները և նման սահմանափակման անհրաժեշտությունը:

Հղում կատարելով Սահմանադրության 79-րդ հոդվածին՝ դիմողը գտնում է, որ քրեական գործով տուժող ճանաչված անձի՝ այդ գործով կայացված դատավճռի բողոքարկման իրավունքը, որպես անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի բաղադրիչ, սահմանափակելու դեպքում նույնպես օրենքը պետք է սահմանի դրա հիմքերը և լինի բավարար չափով որոշակի:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթը չի սահմանում դատավճռի օրինակը տուժողի կողմից դատարանից պահանջելու հստակ ժամկետ և չի որոշակիացնում, թե ինչպիսի հետևանք է առաջացնում տուժողի համար հրապարակման պահից 5-օրյա ժամկետից ուշ դիմելը:

Դիմողը պնդում է նաև, որ, ի տարբերություն քննարկվող դեպքի, մի շարք այլ գործերով Վերաքննիչ դատարանը ձևավորել է արմատապես տարբերվող դատական պրակտիկա, այսինքն՝ դատավճռի հանձնման և ստացման, դրա դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետները կարգավորող իրավական դրույթները Վերաքննիչ դատարանի կողմից կիրառվում են ոչ միատեսակ:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ, վիճարկելով Օրենսգրքի 375-րդ հոդվածի խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը, դիմողը բարձրացնում է երկու տարբեր հիմնախնդիրներ՝

- վիճարկվող դրույթը, սահմանելով դատարանի պարտականությունը՝ տուժողի կողմից միջնորդությամբ դիմելու դեպքում դատավճռի հրապարակման պահից հնգօրյա ժամկետում վերջինիս հանձնել դատավճռի պատճենը, միջնորդություն ներկայացնելու համար հստակ ժամկետ չի սահմանում, և

- վիճարկվող դրույթը դատավճռի պատճենն ստանալու համար տուժողին անհարկի ծանրաբեռնում է միջնորդություն ներկայացնելու պարտա-

կանությամբ՝ սահմանափակելով նրա իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, այն դեպքում, երբ դատավճիռը դատապարտվածին, արդարացվածին, նրանց պաշտպանին և նույնիսկ մեղադրողին հանձնվում է առանց որևէ միջնորդության կամ պահանջ ներկայացնելու նախապայմանի:

Առաջին հիմնախնդրի առնչությամբ պատասխանողը պնդում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ դատարանը պարտավոր է տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին դատավճռի պատճենը հանձնել միայն նրանց միջնորդության առկայության պայմաններում, իսկ հիշյալ անձինք կարող են հնգօրյա ժամկետում դիմել և ստանալ դատավճռի պատճենը և դրա դեմ բողոք ներկայացնել քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Եթե այդ գործընթացում դատարաններն Օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումների նպատակներին հակասող չափանիշներ են կիրառել, դա չի կարող հանգեցնել այդ իրավակարգավորումների հակասահմանադրականությանը, քանի որ իրավակիրառ պրակտիկայում Օրենսգրքի որևէ դրույթի՝ Օրենսգրքի նպատակներին ոչ համապատասխան մեկնաբանությունը չի կարող փոխել այդ դրույթների բովանդակությունը, քանզի դրանք սահմանվում են բացառապես օրենսդրի կողմից, հետևաբար «խնդիրն առավելապես գործնական մեկնաբանման հարթության տիրույթում է, այլ ոչ թե օրենսդրական»:

Ինչ վերաբերում է տուժողին միջնորդություն ներկայացնելու պարտականությամբ անհարկի ծանրաբեռնելու հանգամանքին, ապա պատասխանողը նշում է, որ նույն դրույթում դատավարության մյուս կողմի նկատմամբ դրսևորվում է այլ մոտեցում:

Պատասխանողը, համադրելով արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանն ուղղված միջազգային որոշ իրավանորմեր և Սահմանադրության համապատասխան դրույթները, փաստում է, որ «...արդարացիության առանցքային հենքը կողմերի հավասարությունն է, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումներում ամրագրվում է որպես «զենքերի հավասարությունը», իսկ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներում՝ «մրցակցությունը», որոնք ընդհանուր առմամբ հանդիսանում են «արդարության բոլոր պահանջներից» առաջնայինը»:

Պատասխանողն ակնհայտ է համարում, որ վիճարկվող դրույթը, սահմանելով դատավճիռը դատապարտյալին կամ արդարացվածին, նրանց պաշտպանին և մեղադրողին որոշակի ժամկետում հանձնելու դատարանի պարտականությունը, տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին և նրանց ներկայացուցիչներին նույն պատճենը հանձնելու համար պահանջում է միջնորդություն: Նման տար-

բերակված մոտեցումն առաջացնում է արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման խտրական և անհավասար պայմաններ, ինչը կարող է խաթարել արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը: Պատասխանողը եզրակացնում է, որ վիճարկվող իրավադրույթն այդ առումով հակասում է Սահմանադրության պահանջներին:

3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները

Սահմանադրական դատարանը 2017 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1394 որոշմամբ գտել է, որ Օրենսգրքի 375-րդ հոդվածը «համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ հոդվածի՝ «պետք է հանձնվի» և «հանձնվում է» արտահայտությունները նշանակում են **ամբողջական ակտի՝ ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելն օրենքով նախատեսված սուբյեկտներին պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը**»: Օրենսգրքի 375-րդ հոդվածի սահմանադրականությունը նշված գործով վիճարկվել է միայն այն մասով, որ չի սահմանում դատական ակտը հրապարակելու օրը կողմին տրամադրելու դատարանի պարտականություն, և Սահմանադրական դատարանի քննության առարկա է եղել միայն այդ հարցը, ուստի, վերոհիշյալ որոշման առկայությունը վիճարկվող դրույթի քննության համար արգելք չէ:

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզաբանել հետևյալ հարցադրումները.

- արդյո՞ք քրեական դատավարության կողմերին դատավճռի պատճենը հանձնելու տարբեր կարգերի սահմանման դեպքում խախտվում են օրենքի առջև ընդհանուր հավասարության սահմանադրական սկզբունքը և խտրականության արգելքը,

- արդյո՞ք դատավճռի պատճենն ստանալու համար տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին միջնորդություն ներկայացնելու պահանջ առաջադրելու դեպքում խախտվում է քրեական դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը և, հետևաբար, նաև դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները,

- արդյո՞ք վիճարկվող իրավադրույթը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ իրավադրույթներն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր են սահմանում քրեական դատավարությունում տուժող կամ քաղաքացիական հայցվոր, քաղաքացիական պատասխանող ճանաչված անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրականացման համար,

- արդյո՞ք վիճարկվող իրավադրույթը համապատասխանում է որոշակիության սահմանադրական սկզբունքի պահանջներին:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելու է Սահմանադրության 28-րդ, 29-րդ հոդվածների, 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի և 75-րդ, 79-րդ հոդվածների համատեքստում:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները երաշխավորվում են Սահմանադրությամբ (28 և 29-րդ հոդվածներ) և ՀՀ քրեական դատավարական օրենսդրությամբ (8-րդ հոդված), ինչպես նաև մի շարք կարևորագույն միջազգային փաստաթղթերով՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (7-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (26-րդ հոդված), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (14-րդ հոդված) և այդ կոնվենցիային կից 12-րդ Արձանագրությամբ: Այդ իրավադրույթներից բխում է, որ պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները:

Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքը, գտել է, որ «ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է» (ՄԴՈ-967, 7 հունիսի 2011թ.):

Անդրադառնալով սույն գործով դիմողի պնդմանն առ այն, որ վիճարկվող հոդվածը չի ապահովում քրեական դատավարության մասնակիցների հավասարությունն օրենքի առջև, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընդհանուր հավասարության սկզբունքի պահպանվածությունն, անկասկած, գնահատվում է այլ անձանց հետ համեմատության համատեքստում: Միաժամանակ հարկ է նշել, որ անձի որոշակի դատավարական կարգավիճակի ճանաչման պահից դատավարության յուրաքանչյուր մասնակից օժտվում է իրավունքների և պարտականությունների որոշակի շրջանակով թե՛ բոլոր մասնակիցների համար ընդհանուր իրավունքներով ու պարտականություններով, թե՛ դատավարության տվյալ մասնակցի կարգավիճակին բնորոշ հատուկ իրավունքներով ու պարտականություններով:

Օրենսգրքի «Կողմերը և քրեական դատավարության մասնակցող անձինք» վերտառությամբ 3-րդ բաժինը հստակ առանձնացնում է մեղադրանքի կողմը (7-րդ գլուխ), պաշտպանության կողմը (8-րդ գլուխ), ներկայացուցիչներ և իրավահաջորդներ (9-րդ գլուխ), քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք (10-րդ գլուխ):

Օրենսգրքի 23-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ»: Բացի դրանից, նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է դրույթ, համաձայն որի՝ «Քրեական դատավարության ընթացքում կողմերն իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն օրենքի շրջանակներում **ընտրում են ինքնուրույն**՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից: Դատարանը, կողմի միջնորդությամբ, սույն օրենսգրքով սահմանված կարգով, աջակցում է նրան ձեռք բերելու անհրաժեշտ նյութեր»:

Այսպիսով, քրեական դատավարության մասնակիցները հավասար են օրենքի առջև հենց քրեական դատավարական օրենսդրությամբ նրանց համար նախատեսված իրավունքների և պարտականությունների շրջանակներում և ծավալով, հակառակ դեպքում՝ դատավարության տարբեր մասնակիցներին դատավարական բոլոր գործընթացներում մասնակցության ամբողջ գործիքակազմով և հավասար հնարավորություններով օժտելն իմաստազրկում է անձի դատավարական կարգավիճակի բովանդակությունը:

4.2. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն ընդգրկում է նաև անձի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու և կայացված դատական ակտն ստանալու և բողոքարկելու հնարավորությունը (դատարանի մատչելիություն), դատարանի որոշումների հիմնավորվածությունը և վերջնական բնույթը, ինչպես նաև վերջնական դատավճիռների ժամանակին ի կատար ածելը:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Գործի քննության արդարացիությունն ընդգրկում է նաև մրցակցային դատավարության և կողմերի իրավահավասարության պահանջներ: Դատավարության մրցակցային բնույթը նշանակում է, որ գործին առնչվող նյութերն ու ապացույցները պետք է հասանելի լինեն երկու կողմերին, և նրանք պետք է ունենան հակառակ կողմի ներկայացրած ապացույցներին

և փաստարկներին ծանոթանալու և դրանք մեկնաբանելու հնարավորություն: Կողմերի իրավահավասարությունը ենթադրում է կողմերի գործը ներկայացնելու հավասար հնարավորությունների ապահովում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատավարության կողմերի հավասարության սկզբունքը որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր, պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին ողջամիտ հնարավորություն տրվի իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որոնք նրա հակառակորդի պայմանների համեմատ **էականորեն անբարենպաստ չեն** (Kress v. France [GC], no. 39594/98, § 72, ECHR 2001-VI, Wynen and Centre Hospitalier Interregional Edith Cavell v. Belgium, no.32576/96, 05/11/2002, § 32, Yvon v. France, no.44962/98, 24/04/2003, § 31, Matyjek v. Poland, no. 38184/03, 24/04/2007, § 55, Nikolova and Vandova v. Bulgaria, no.20688/04, 17/12/2013, § 91):

Օրենսգիրքը 7, 8 և 9-րդ գլուխներում սահմանում է մեղադրանքի և պաշտպանության կողմերի, ինչպես նաև նրանց ներկայացուցիչների իրավունքները: Երկու կողմն էլ իրավունք ունեն ստանալ դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման պատճենը, բողոքարկել դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը, առարկություններ ներկայացնել դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման դեմ դատավարության մյուս մասնակիցների կողմից բերված բողոքների վերաբերյալ:

Դատավճռի պատճենն անվճար ստանալն ամրագրված է որպես քրեական դատավարության մասնակիցների ինքնուրույն իրավունք (Օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ կետ, 61-րդ հոդվածի 11-րդ կետ, 65-րդ հոդվածի 19-րդ կետ, 75-րդ հոդվածի 12-րդ կետ, 77-րդ հոդվածի 14-րդ կետ), և այդ իրավունքի հավասար տրամադրումը դատավարության երկու կողմերին առաջին հերթին բխում է քրեական դատավարության մրցակցության սկզբունքից և կողմերին դատավարության շրջանակներում հավասար հնարավորություններ տրամադրելու անհրաժեշտությունից, ինչն անձի արդար դատաքննության իրավունքի իրացման երաշխիքներից է:

Դատավարության մասնակիցների՝ դատավճռի պատճենն ստանալու իրավունքի օրենսդրական երաշխավորումը, ըստ էության, հետապնդում է երկու նպատակ, այն է՝ ապահովել, որպեսզի դատավարության մասնակիցը.

- տեղեկացվի դատավճռի հիմնավորումներին և կողմնորոշվի, թե որքանով է դատավճիռն անմիջականորեն սահմանափակում իր իրավունքները և ազատությունները կամ այլ կերպ անմիջականորեն առնչվում իր շահերին,

- հնարավորություն ունենա իրացնել դատավճռի բողոքարկման իր իրավունքը, եթե գտնում է, որ այն խախտում է իր իրավունքները և օրինական շահերը:

Օրենսգրքի 375-րդ հոդվածի վերտառությունից ակներև է դառնում, որ հոդվածը վերաբերում է դատավճռի պատճենը դատապարտվածին կամ արդարացվածին հանձնելուն: Այդուհանդերձ, հոդվածում Օրենսդիրը ներառել է դատավարության մասնակիցների ավելի լայն շրջանակ և վերջիններիս փաստացի բաժանել է երկու խմբի՝ դատապարտված, արդարացված, պաշտպան ու մեղադրող, որոնց դատավճռի պատճենը հանձնվում է անվերապահորեն, և տուժող, քաղաքացիական հայցվոր, քաղաքացիական պատասխանող ու նրանց ներկայացուցիչներ, ում դատավարական այդ փաստաթուղթը տրվում է որոշակի պայմանի, այն է՝ նրանց միջնորդության առկայության դեպքում:

Սահմանադրական դատարանը 2010 թվականի մայիսի 4-ի ՄԴՈ-881 որոշմամբ խտրականության արգելման սկզբունքի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է դիտարկվել որպես խտրականություն, և թույլատրելի է համարվում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում:

Թեև տուժողը, և քաղաքացիական հայցվորը դատախազի (մեղադրողի) հետ միասին մեղադրանքի կողմն են (Օրենսգրքի 6-րդ հոդվածի 21-րդ կետ), իսկ նշված անձինք մեղադրյալի, պաշտպանի և քաղաքացիական պատասխանողի հետ միասին նաև համարվում են դատավարության մասնակիցներ (Օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետ), նրանց դատավարական իրավունքների և պարտականությունների համադրումն ու համալիր ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ ծավալային և բովանդակային առումով դրանք չեն համընկնում (Օրենսգրքի 54, 59, 61, 65, 73 և 75-րդ հոդվածներ): Ավելին, դրանցում կան որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են քրեական դատավարության այս կամ այն մասնակցի կարգավիճակի առանձնահատկություններով:

Այսինքն՝ դատավարության մասնակիցների իրավունքների ծավալային անհամապատասխանությունը կամ բովանդակային ոչ նույնականությունը տվյալ դեպքում պայմանավորված է այնպիսի օբյեկտիվ հիմքով, ինչպիսին նրանց դատավարական կարգավիճակների տարբերությունն է:

Իր հերթին դատավարության մասնակցի կարգավիճակը կանխորոշվում է քրեական վարույթի շրջանակներում նրա ունեցած իրավաչափ շահերով և դրանց բավարարմանը հասնելու ողջամիտ ձգտումով: Այլ

կերպ ասած՝ վարույթի այս կամ այն մասնակցի իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանելիս օրենսդիրը ելնում է նրա շահերի արդյունավետ պաշտպանության հնարավորություններ ստեղծելու իրավաչափ նպատակից:

Դատավճռի պատճենը դատավարության կողմերին հանձնելու՝ նման տարբերակված մոտեցումը հետապնդում է նաև դատարանների աշխատանքն անհարկի չձանրաբեռնելու և արդարադատության պատշաճ կառավարում ապահովելու իրավաչափ նպատակ: Այդ մասին է վկայում ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տեղեկատվությունը, համաձայն որի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2016-2017 թվականների ընթացքում ստացված 7310 վերաքննիչ բողոքներից՝ տուժողի (տուժողի իրավահաջորդի), քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և նրանց ներկայացուցիչների (այդ թվում՝ օրինական) կողմից ներկայացված վերաքննիչ բողոքների թիվը կազմել է ընդամենը 121, որն ընդհանուր թվի մոտ 1.6% է, որից միայն 8-ն է թողնվել առանց քննության ժամկետանց լինելու հիմքով:

Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկին, որ տուժողի՝ դատավճիռը բողոքարկելու իրավունքի իրացումն առկախվում է նրա դրական (ակտիվ) վարքագծից, այն է՝ դատավճիռը պահանջելու հանգամանքից, և դատավճիռն ստանալու համար նրան անհարկի ձանրաբեռնում են միջնորդություն ներկայացնելու պարտականությամբ, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 375-րդ հոդվածում ամրագրված պայմանը չի սահմանափակում տուժողի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Վիճարկվող հոդվածի և դրա հետ համակարգային ամբողջության մեջ գտնվող Օրենսգրքի մյուս հոդվածների վերաբերելի դրույթների վերլուծությունից հետևում է, որ դատավճռի պատճենն ստանալու համար միջնորդություն ներկայացնելը շահագրգիռ անձի համար իրավաբանական բարդություններ չի ստեղծում կամ հավելյալ լուրջ դժվարություններ (լրացուցիչ ջանքերի գործադրում, նոր ծախսերի կատարում և այլն) չի առաջացնում: Բացի դրանից, միջնորդության քննությունը խճճված կամ անհարկի ընթացակարգեր հաղթահարելու կամ դատավճռի պատճենը չստանալու ռիսկեր չի պարունակում, քանի որ դատարանն այդ դեպքում անվերապահորեն պարտավոր է տրամադրել դատավճռի պատճենը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, սկզբունքորեն ընդունելի համարելով արդարադատության պատշաճ իրականացման նպատակով օրենսդրությամբ ընթացակարգային սահմանափակումների և պահանջների սահմանումը, գտնում է, որ դիմողը պարտավոր է զգալի ջանքեր ցուցաբերել դատավարական ընթացակարգային պահանջների կատարման ուղղությամբ (Jodko v. Lithuania, no.39350/98, որոշում դիմումի ընդունելիության մասին, 7/09/1999):

Դատավճռի բողոքարկման ժամկետների առումով ևս տուժողը կամ այդ խմբի մեջ մտնող մյուս սուբյեկտները դատավարության այլ մասնակիցների համեմատ ոչ շահավետ կամ էականորեն անբարենպաստ իրավիճակում չեն հայտնվում, քանի որ դատավարության բոլոր մասնակիցների համար այդ ժամկետները նույնն են:

4.3. Մահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ վերոհիշյալ տարբերակված մոտեցումը կարող է արդարացված լինել միայն այն պարագայում, երբ առկա են տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի, նրանց ներկայացուցիչների մասով դատավճռի պատճենն ստանալու համար միջնորդություն ներկայացնելու հնարավորության ապահովման օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Ընդ որում, այդպիսի երաշխիքներից առաջնայինն այն է, որ տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը, նրանց ներկայացուցիչները դատավճռի պատճենն ստանալու համար միջնորդություն ներկայացնելուց առաջ տեղյակ լինեն դատավճռի հրապարակման մասին:

Օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է, որ դատական նիստերի տեղի և ժամի մասին դատավարության կողմին ծանուցելու դատարանի պարտականությունն ամրագրված է Օրենսգրքի վերաքննիչ (Օրենսգրքի 390-րդ հոդված) և վճռաբեկ (Օրենսգրքի 417-րդ հոդված) վարույթներին վերաբերող դրույթներում, ինչպես նաև առաջին աստիճանի դատարանի վարույթի շրջանակներում միայն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննության (285-րդ հոդված) և ձերբակալման դեմ բողոքի քննության (289.4-րդ հոդված) մասերով: Մնացած դեպքերում առաջին աստիճանի դատարանում քրեական գործով դատական նիստերի տեղի և ժամի մասին դատավարության կողմերին ծանուցելու վերաբերյալ ուղղակի պահանջ ամրագրված չէ, ինչպես նաև բացակայում է դատավճռի հրապարակման տեղի և վայրի մասին ծանուցելու վերաբերյալ որևէ կարգավորում: Սակայն Օրենսգրքի 307, 308 և 305-րդ հոդվածների բովանդակությունից ուղղակիորեն բխում է այդ անձանց դատական նիստերի տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցելու դատարանի պարտականությունը:

Օրենսգրքի 101-րդ հոդվածը երաշխավորում է դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների պարզաբանումը և դրանց իրականացման հնարավորության ապահովումը: Հիշյալ հոդվածի համաձայն՝ բացի նրանից, որ «դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի իմանալ իր իրավունքները և պարտականությունները, իր ընտրած դիրքորոշման իրավական հետևանքները, իր մասնակցությամբ կատարվող դատավարական գործողու-

թյունների նշանակությունը», «քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը»: Հարկ է նշել, որ նաև «դատավարության մասնակցի կարգավիճակ ձեռք բերած անձին նրա իրավունքները և պարտականությունները պարտադիր պարզաբանվում են նախքան նրա մասնակցությամբ կատարվող քննչական կամ այլ դատավարական գործողություններն սկսվելը և նրա կողմից՝ որպես դատավարության մասնակից որևէ դիրքորոշում արտահայտելը: Դատարանը պարտավոր է դատական նիստին ներկայացած դատավարության մասնակցին պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները՝ անկախ դրանց քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում պարզաբանումից»:

Օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն՝ միջնորդությունները և պահանջները պետք է պարտադիր քննության առնվեն, իսկ նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է դրույթ, համաձայն որի՝ «միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ: Միջնորդության լուծումը կարող է հետաձգվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչև միջնորդության վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ոչ ժամանակին հարուցված միջնորդությունը թողնվում է առանց քննության»: Բացի դրանից՝ «միջնորդության կամ պահանջի վերաբերյալ ընդունված որոշման մասին քրեական վարույթն իրականացնող մարմինն անմիջապես տեղյակ է պահում դիմողին»:

Ելնելով վերոշարադրյալից՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Օրենսգրքով սահմանված կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը վերն արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում ապահովում են վիճարկվող իրավադրույթում նշված դատավարության կողմերի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրականացումը:

4.4. Անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ վիճարկվող քրեադատավարական դրույթը չի համապատասխանում որոշակիության սահմանադրական սկզբունքին, որովհետև «չի սահմանում դատավճռի օրինակը տուժողի կողմից դատարանից պահանջելու հստակ ժամկետ», Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

Քննության առարկա հոդվածի առաջին նախադասությամբ հստակ սահմանվում է այն ժամանակահատվածը «դատավճիռը հրապարակվե-

լուց ոչ ուշ, քան 5 օրում», որի ընթացքում «պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին»: Նշված ժամանակահատվածը վերաբերում է նաև հողվածի երկրորդ նախադասությունում նշված դատավարության մյուս մասնակիցներին՝ տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին:

Դատական ակտերը վերադասության կարգով բողոքարկելու համար օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովելու քրեական դատավարության պատշաճ իրականացումը: Օրենսդրությամբ սահմանված այդ ժամկետների շրջանակում էլ վիճարկվող իրավադրություն նշված անձինք պարտավոր են դրսևորել անհրաժեշտ վարքագիծ դատավճռի պատճենն ստանալու և դատավճիռը բողոքարկելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ» դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

18 սեպտեմբերի 2018 թվականի
ՍԴՈ-1426



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԿ ՄԱՇՈՒՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 96-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 հոկտեմբերի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող կողմի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի և Ռ. Ռևազյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23, 40 և 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայկ Մաշուրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)/2018

թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի «Գործի վարույթը կարճելը» վերստառությամբ 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է. «Դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ (...) հայցվորը հրաժարվել է հայցից, բացառությամբ սույն օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված այն գործերի, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից...»:

Գործի քննության առիթը Հ. Մաշուրյանի՝ 2018 թվականի ապրիլի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը բարձրացված հարցադրումների շրջանակում նշում է, որ «ՀՀ Սահմանադրությունը՝ Հայաստանի իրավագործության ներքո գտնվող անձանց, ի թիվս այլոց՝ երաշխավորում է դատական պաշտպանության, իրավահավասարության, խտրականությունից զերծ լինելու իրավունքները»:

Դիմողը նաև գտնում է, որ 2013 թվականի օգոստոսի 24-ին տեղի է ունեցել միջամտություն իր իրավունքներին, իրեն մեղսագրվել է արարք, որն արգելված է օրենքով և մերժելի է թե՛ իր, թե՛ հանրության կողմից, և այդ արարքն իրեն վերագրելն արատավորում է իր պատիվն ու արժանապատվությունը: Ավելին՝ ՀՀ վարչական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 8-ի՝ տուգանք նշանակելու որոշմամբ հաստատվել է նրա մեղքը, թեև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը 2015 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ բեկանել է այն, բայց չի փարատվել նրա գանգանք կատարած լինելու փաստը, և նրա համար նյութական և բարոյական բացասական հետևանքներ են առաջացել: Ըստ նրա՝ «Արդարացման վճիռն այն առաջին պայմանն ու արդյունավետ միջոցն է Դիմողի՝ իր և հանրության աչքում վերականգնվելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու համար»:

Դիմողի կարծիքով՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը համապատասխանում են «քրեական մեղադրանք» հասկացությանը, որի պայմաններում պետք է երաշխավորել և ապահովել «օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի [...] դատաքննության իրավունք»:

Դիմողը գտնում է, որ, վիճարկվող դրույթների առկայությամբ պայմանավորված, վարչական իրավունքում սահմանված չեն «արդարացված», «արդար» կամ «անմեղ» բառերի հասկացությունները, և հայցից հրաժարվելու հիմքով գործի կարճման դեպքում որևէ կերպ չի նշմարվում մեղադրյալի արդար կամ անմեղ լինելու հանգամանքը, և շատ դեպքերում այն կարող է ընկալվել որպես «հայցվորի բարի կամքի» դրսևորում: Եվ այս հանգամանքը, ըստ դիմողի՝ «կողմնակի և օբյեկտիվ դիտորդի մոտ համոզմունք է առաջացնում, որ դրանցում կասկածի տակ է դրվում պատասխանողի անմեղությունը»:

Դիմողը նաև գտնում է, որ օրենսդիրը, վարչական իրավունքում սահմանելով մեղադրանքից (հայցից) հրաժարվելու հիմքով գործի վարույթի կարճում, չի նախատեսել դատական ակտով արդարացման պարտականություն, որի պատճառով անձը չի կարող իրեն հռչակել «արդար» կամ «անմեղ», ինչը հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 23, 28, 61, 63, 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածների հետ:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողն արձանագրում է, որ սույն գործով սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթը պետք է դիտարկել Օրենսգրքի 96, 97, 108, 110, 125 և 131-րդ հոդվածների համակարգային փոխկապակցության մեջ: Դրանց համադրության և վերլուծության արդյունքում պատասխանողը փաստում է, որ օրենսդիրն Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանել է դատարանի կողմից գործի քննության ցանկացած փուլում գործի վարույթի կարճման սպառիչ հիմքերը, ինչն ինքնին, սահմանադրականության խնդիր չի առաջացնում: Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթում դիմողի մատնանշած օրենսդրական բացին, ապա պատասխանողն անհրաժեշտ է համարում փաստել, որ պայմանավորված դատական ակտի բողոքարկման իրավունքի իրականացման ապահովմամբ, առկա են գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման հնարավորությունը կանոնակարգող որոշակի իրավական մեխանիզմներ և երաշխիքներ, չնայած օրենսդրի կողմից դատարանի որոշման բողոքարկումն անմիջականորեն ամրագրված չէ:

Ըստ պատասխանողի՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանի պետախիշխանական կամքն իր արտաքին ձևակերպումն է ստացել որոշման տեսքով, բայց այն իր դատավարական նշանակությամբ համարժեք չէ միջանկյալ դատական ակտերին և չի կարող դասվել վերջիններիս շարքին: Հետևաբար, որպես վերջնական ակտ, այն կարող է բողոքարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտերի համար նախատեսված կարգով:

Պատասխանողը նշում է, որ դատարանի մատչելիության երաշխավորումն անձի իրավունքները և ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից է: Եվ այս-

տեղ կարևոր է, թե «...որքանով է հասանելի արդարադատությունը, որքանով են արդյունավետ անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը»: Հակառակ դիմողի փաստարկների, պատասխանողը նշում է, որ. «...սույն սահմանադրաիրավական վեճի առարկայի շրջանակներում, անձը՝ արդար դատաքննության իրացման երաշխավորման տեսանկյունից ունի դատական ակտը բողոքարկելու հստակ գործնական հնարավորություն,....»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Քննության առարկա գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դիմողն Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի սահմանադրականության հարցը բարձրացնում է միայն այն մասով, որ վարչական դատավարությունում հայցից հրաժարվելու հիմքով գործի կարճման դեպքում նախատեսված չէ դատական ակտով արդարացման հնարավորություն, որի պատճառով անձը չի կարող իրեն արդարացնել կամ ապացուցել իր անմեղությունը: Իսկ վիճարկվող իրավադրույթի սահմանադրականության վերաբերյալ այլ հարցեր դիմողը չի բարձրացնում:

Հետևաբար, հաշվի առնելով հիշյալ հանգամանքը, Սահմանադրական դատարանն Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը քննության է առնում **բացառապես** վարչական իրավախախտում կատարելու համար անձին պատասխանատվության ենթարկելու նպատակով ներկայացված հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթի կարճման դեպքում դատական ակտով արդարացման հնարավորության օրենսդրական կարգավորման բացակայության սահմանադրականության գնահատման տեսանկյունից: Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

ա) արդյո՞ք վիճարկվող դրույթն Օրենսգրքի այլ նորմերի հետ համակարգային ամբողջականության շրջանակներում ենթադրում է գործի վարույթը կարճելու մասին դատարանի որոշման մեջ պատասխանողին վերագրվող արարքի հաստատում կամ դրա հիմնավորող ապացույցների գնահատում,

բ) արդյո՞ք վիճարկվող հիմքով վարչական գործի կարճումը համարժեք է պատասխանողի կողմից իրավախախտում չկատարելու փաստի հաստատմանը,

գ) արդյո՞ք Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը վարչական դատավարության շրջանակներում հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթի կարճման պարագայում նախատեսում է բավարար երաշխիքներ պատասխանողի՝ Մահմանադրությամբ ամրագրված իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար:

4. Մահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Վարչական գործի վարույթը կարճելուն վերաբերող Օրենսգրքի դրույթների վերլուծության արդյունքում Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է այդ վարույթը կարճելու հիմքերը, կարգը և հետևանքները, որոնք բխում են Մահմանադրության 75-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանի համար բավարար է հաստատված համարել գործի վարույթը կարճելու համար օրենքով նախատեսված որևէ հիմքի առկայությունը: Այսինքն, գործի վարույթը կարճելու ընթացակարգի շրջանակներում դատարանը քննության առարկա չի դարձնում հայցը, չի ստուգում դրանում նշված փաստերը, չի գնահատում ապացույցները և չի անդրադառնում իրավական հիմնավորումներին, ինչը նշանակում է, որ տվյալ դեպքում կողմերի միջև վեճի առարկա հարցերը չեն քննարկվում:

Վիճարկվող դրույթի առումով այս հետևությունը հաստատվում է նաև Օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասով, ըստ որի՝ «Եթե հայցվորը ներկայացնում է դիմում հայցից հրաժարվելու վերաբերյալ, ապա՝ դատարանը երկշաբաթյա ժամկետում հրավիրում է դատական նիստ՝ այն քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամանակ կրկնում է հայցից հրաժարվելու իր դիմումը կամ պատշաճ ծանուցված լինելու պայմաններում չի ներկայանում դատական նիստին, ապա դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին»: Այսինքն՝ դատարանը միայն քննում է հայցից հրաժարվելու մասին հայցվորի դիմումը և մեկ անգամ ևս համոզվում նրա մտադրության հավաստիության մեջ:

Ավելին՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենսգրքի 108-րդ հոդվածը սահմանում է, որ մինչև դատաքննության ավարտը հայցվորն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության լրիվ կամ մասնակի հրաժարվելու իր պահանջներից: Այդ դեպքում վարչական դատարանը կայացնում է որոշում գործի վարույթը կարճելու մասին այն պահանջի մասով, որից հրաժարվել է հայցվորը, բացառությամբ Օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսված այն գործերի, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից: Մա նաև նշանակում է, որ, ի թիվս վերոնշյալ հարցերի, դատարանը քննության չի առնում նույնիսկ հայցվորի հայցից հրաժարվելու պատճառները կամ շարժառիթները:

Հետևաբար, վիճարկվող դրույթի հիման վրա գործի վարույթը կարճելիս դատարանը վեճի էությանը վերաբերող որևէ հարց չի քննում և չի լուծում, իսկ կայացվող որոշմամբ տվյալ դատական վարույթն ըստ էության ավարտվում է:

4.2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթը դիտարկել նաև այն տեսանկյունից, թե հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթի կարճումն ինչ ազդեցություն է ունենում պատասխանողի իրավունքների և իրավաչափ շահերի վրա:

Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով հայցվորը, դիմելով դատարան, պաշտոնապես ներկայացնում է պատասխանողի կողմից այս կամ այն վարչական իրավախախտումն առերևույթ կատարելու վերաբերյալ իր վարկածը կամ հիմնա- վոր ենթադրությունը և, բնականաբար, դրանից բխող պահանջը: Հետագայում նույն հայցվորը, պարտավոր չլինելով ներկայացնել որևէ հիմնավորում, կարող է հրաժարվել հայցից, այսինքն՝ չհաստատել իր նախկին պնդումները և այլևս չհավակնել դատարանից ստանալու իր կողմից ակնկալվող արդյունքը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարչական դատարանում գործ հարուցելու միակ հիմքը հայցն է (Օրենսգրքի հոդվ. 65): Միաժամանակ դա միակ դատավարական փաստաթուղթն է, որով պաշտոնապես ձևակերպվում են հայցի պահանջը հիմնավորող փաստերն ու փաստարկները, մասնավորապես արդյոք տվյալ անձը մեղավոր է իրավախախտում կատարելու համար, և արդյոք նա ենթակա է դատական կարգով վարչական պատասխանատվության: Ուստի հայցից հրաժարվելը հանգեցնում է ոչ միայն սուկ դատավարական հետևանքների, այլև անխուսափելիորեն հանգեցնում է դրա նյութական հիմքերի վերացմանը:

Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով հայցից հրաժարվելը պետք է մեկնաբանվի և ընկալվի բացառապես այն իմաստով, որ հայցվորը (պետությունը ի դեմս վարչական մարմնի) այդ գործողությամբ, ըստ էության, ընդունում է ենթադրյալ վարչական իրավախախտման փաստի բացակայությունը կամ պատասխանողի դրան առնչակից չլինելը, ներառյալ իրավախախտում կատարելու համար նրա մեղավորության բացակայությունը: Այսինքն՝ հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթի կարճման պարագայում պատասխանողը ոչ միայն չի ենթարկվում պատասխանատվության, այլև փաստացի արձանագրվում է նրա անմեղությունը, և նա ըստ էության «արդարացվում է»՝ անկախ տարբեր դատավարությունների հատուկ եզրութաբանությունից:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման տրամաբանությունից հետևում է, որ դատական ծախսերի հատուցման պարտականությունը գործի վարույթի կարճման դեպքում դրվում է հայցվորի վրա, եթե նա հրաժարվել է հայցից:

Հետևաբար, վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հայցից հրաժարվելու հիմքով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշումն ինքնին առաջացնում է նույն հետևանքները, ինչ հայցը մերժելու վերաբերյալ վճռի դեպքում:

4.3. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև վարչական դատավարության շրջանակներում հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթի կարճման պարագայում պատասխանողի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության բավարար երաշխիքների առկայության հարցին: Դա նախևառաջ կարևորվում է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում:

Սահմանադրական դատարանն իր՝ 2015 թվականի փետրվարի 10-ի ՄԴՈ-1190 որոշմամբ արձանագրել է «...գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը **ենթակա է բողոքարկման** գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով...»:

Զարգացնելով իր իրավական դիրքորոշումը՝ **Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ տեղ կգտնեն պատասխանողի անմեղությունը կասկածի տակ դնող կամ նրա իրավաչափ շահերն այլ կերպ խախտող դրույթներ, պատասխանողն արդյունավետ հնարավորություն ունի դատական կարգով ներկայացվող բողոքի միջոցով հայցել իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանությունը:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

2 հոկտեմբերի 2018 թվականի
ՄԴՈ-1427



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ
ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

23 հոկտեմբերի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի,
Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի,
Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝
Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-
րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական
դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդված-
ների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի դեկ-
տեմբերի 11-ին ստորագրված Հեղինակային և հարակից իրավունքների՝
կոլեկտիվ հիմունքներով կառավարման կարգի մասին համաձայնագրում
ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերա-
բերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ 4(92)2018

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2018 թվականի օգոստոսի 24-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հեղինակային և հարակից իրավունքների՝ կոլեկտիվ հիմունքներով կառավարման կարգի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի դեկտեմբերի 11-ին Մոսկվայում հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթների ու Եվրասիական տնտեսական միության իրավունքի վրա և հեղինակային ու հարակից իրավունքների իրավատերերի համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի ԱԺՈ-132-Ն որոշմամբ վավերացված «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 89-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները համագործակցում են այդ պետությունների հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերերի համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Համաձայնագիրը սահմանում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներում հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարման կարգն այն դեպքերում, երբ հեղինակների, կատարողների, հնչյունագրեր պատրաստողների (արտադրողների) և հեղինակային և(կամ) հարակից իրավունքների այլ իրավատերերի կողմից հեղինակային և(կամ) հարակից իրավունքների գործնականում իրականացումն անհատական կարգով դժվարացված է, կամ երբ անդամ պետությունների օրենսդրությամբ թույլատրվում է այդ իրավունքների օբյեկտների օգտագործումը առանց իրավատերերի համաձայնության, սակայն վարձատրության վճարմամբ (հոդվ. 1, կետ 1):

3. Համաձայնագրով անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող հեղինակային և(կամ) հարակից իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարման ոլորտներում անդամ պետությունները նախատեսում են իրավունքների կոլեկտիվ կառավարման կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ստեղծման հնարավորություն (հոդվ. 1, կետ 2):

Համաձայնագրով այդ կազմակերպությունների լիազորությունների իրականացման համար հիմք է հանդիսանում իրավունքների կառավարման լիազորությունների փոխանցման պայմանագիրը, որը գրավոր կնք-

վում է այդ կազմակերպությունների կողմից՝ իրավատիրոջ հետ, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ բացառությամբ Համաձայնագրի 1-ին հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերի (հոդվ. 1, կետ 3):

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Կազմակերպությանը վերապահվում են լիազորություններ իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարման և վարձատրության հավաքման համար ինչպես ի շահ այն իրավատերերի, որոնք համապատասխան լիազորություններն անմիջականորեն փոխանցել են այդպիսի կազմակերպություններին, այնպես էլ ի շահ այն իրավատերերի, որոնք չեն հրաժարվել իրավունքների կառավարումից, ապա ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նման Կազմակերպության գործունեության նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու համար լիազորությունների վերապահում համապատասխան պետական մարմին (այսուհետ լիազորված մարմին) (հոդվ.1, կետ 5),

- ապահովել, որ այդ Կազմակերպության գործունեությունը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվի հրապարակայնության, թափանցիկության, հաշվետվողականության, վերահսկողության, արդարության (խտրականության բացառման) սկզբունքներին համապատասխան (հոդվ. 2, կետ 1),

- ապահովել, որ Կազմակերպության կազմակերպատիրական ձևը և իրավական կարգավիճակը, դրան համապատասխան լիազորություններ վերապահելու առանձնահատկությունները, Կազմակերպության գործառույթները, նրա անդամների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև Համաձայնագրով չկարգավորված այլ հարցեր լուծելու կարգը սահմանվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (հոդվ. 2, կետ 2),

- ապահովել, որ Կազմակերպությունն իրականացնի հեղինակային և (կամ) հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման համար հավաքված վարձատրության բաշխում իրավատերերի միջև և նրանց վճարի նշված վարձատրությունը (հոդվ. 3, կետ 2),

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանել Կազմակերպության կողմից հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը լրանալուց հետո չվճարված միջոցների պահպանման, ինչպես նաև չպահանջված վարձատրության գումարի օգտագործման կարգը (հոդվ. 3, կետ 4),

- ապահովել, որ Կազմակերպությունը կատարի Համաձայնագրի 4 և 5-րդ հոդվածներով նախատեսված պարտավորությունները (հոդվածներ 4 և 5),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվի պատասխանատվություն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված գործողությունների համար, ինչպես նաև ձեռնարկվի

անհրաժեշտ միջոցներ՝ ուղղված այդ պատասխանատվությունը սահմանող օրենսդրության նորմերի ներդաշնակեցմանը (հոդվ. 6),

- ապահովել, որ Կազմակերպությունն իրավատերերի հետ փոխգործակցելիս առաջնորդվի Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված սկզբունքներով:

5. Մահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և նպատակաուղղված են նպաստելու Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներում հեղինակային և հարակից իրավունքների՝ կոլեկտիվ հիմունքներով կառավարման կարգի զարգացմանը, ինչպես նաև այդ իրավունքների իրավատերերի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Միաժամանակ, Մահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների իրացումը նպատակաուղղված է նաև նպաստելու Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 60-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված՝ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության իրականացմանն ու ամրապնդմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Մահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի դեկտեմբերի 11-ին ստորագրված՝ Հեղինակային և հարակից իրավունքների՝ կոլեկտիվ հիմունքներով կառավարման կարգի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Մահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

23 հոկտեմբերի 2018 թվականի
ՄԴՈ-1428



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-ԻՆ ԱԼՄԱԹԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 հոկտեմբերի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. Անանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի փետրվարի 2-ին Ալմաթիում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԱՏԱՐԱՆ 4(92)2018

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի փետրվարի 2-ին Ալմաթիում՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) անդամ պետություններում կեղծված (նմանակված) ապրանքների ապօրինի շրջանառության կանխման և կանխարգելման, նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ոլորտում համաձայնեցված, համակարգված քաղաքականության իրականացման և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ապրանքների օրինական շրջանառության ապահովման նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

1) համաձայնվել, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշմամբ Միության շրջանակներում սահմանվեն ապրանքների դրոշմավորում,

2) ապահովել, որ ապրանքները դրոշմավորվեն դրանց և (կամ) դրանց փաթեթի վրա նույնականացման միջոցներ կամ նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչներ գետեղելու եղանակով,

3) ապահովել, որ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվի նույնականացման միջոցների միասնական ռեեստր,

4) ապահովել, որ ապրանքների դրոշմավորում սահմանելու օրվանից արգելվեն դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների պահպանումը, փոխադրումը, ձեռքբերումն ու իրացումը (վաճառքը) Հայաստանի Հանրապետության տարածքում՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

5) ապահովել, որ Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների դրոշմավորումն իրականացվի նախքան այդ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նախքան այդ ապրանքներն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպելը,

6) ապահովել, որ ապրանքների դրոշմավորումը դրոշմավորման ենթակա ապրանքների արտադրություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից իրականացվի նախքան դրանք փոխադրելը և (կամ) իրացման (վաճառքի) համար առաջարկելը,

7) ապահովել, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ծանուցվի Հայաստանի Հանրապետության տարածքում այն ապրանքների դրոշմավորում սահմանելու մտադրությունների մասին, որոնք Միության շրջանակներում ենթակա չեն դրոշմավորման, ինչպես նաև ներկայացվեն տեղեկություններ այդպիսի ապրանքների և, եթե հնարավոր է, նույնականացման միջոցների վերաբերյալ, ապրանքների վրա դրանց գետեղման եղանակների և ապրանքների դրոշմավորում սահմանելու ամսաթվի վերաբերյալ,

8) ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մարմինները Հայաստանի Հանրապետության հսկողություն իրականացնող և (կամ) իրավապահ այլ մարմինների հետ միասին ապահովեն դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան,

9) Համաձայնագրի կատարման նկատմամբ մշտադիտարկում և հսկողություն, անդրսահմանային առևտրի ժամանակ ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև դրոշմավորված ապրանքների և դրանց նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկություններն սպառողներին ու այլ շահագրգիռ անձանց հասանելի դարձնելու համար ապահովել տեղեկատվական փոխգործակցություն Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների միջև, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավասու (լիազորված) մարմինների ու Հանձնաժողովի միջև՝ ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի շրջանակներում,

10) դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ պատասխանատվություն նախատեսել Համաձայնագրով սահմանված պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3. Մահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Մահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2018 թվականի փետրվարի 2-ին Ալմաթիում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

23 հոկտեմբերի 2018 թվականի
ՄԴՈ-1429



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2018 թվականի մայիսի 14-ին սնտիոնիս սնոնագրված՝ «ՂՐԴՁՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 թվականի մայիսի 29-ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» 2014 թվականի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

23 հոկտեմբերի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի մայիսի 14-ին Սոչիում ստորագրված՝ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին»

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 31-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի մայիսի 14-ին, Սոչիում՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև:

2015 թվականի մայիսի 8-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» արձանագրությունը, էլնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1218 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2015 թվականի հունիսի 16-ին (ԱԺՈ-161-Ն):

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունը.

Համաձայնվել կատարելու փոփոխություն «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրում՝ «Ղրղզստանի Հանրապետության կողմից Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի կիրառման ամսաթվից երեք տարի ժամկետով» բառերը փոխարինելով «Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամկետով» բառերով (հոդվ. 1):

3. Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է 2018 թվականի օգոստոսի 12-ից և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու ամսաթվից (2-րդ հոդվածի 1-ին մաս):

ՍԱՀՄԱՍՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

Արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից այն (ՀՀ օրենսդրությամբ միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառման հնարավորություն չնախատեսելու հիմքով) կիրառվում է դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու ամսաթվից և տարածվում է 2018 թվականի օգոստոսի 12-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ելնելով այն հանգամանքից, որ ՄԴՈ-1218 որոշմամբ 2015 թվականի մայիսի 8-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ղրղզստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող, ինչպես նաև հաշվի առնելով քննության առարկա Արձանագրությամբ այդ պարտավորությունների շարունակական կատարման հանգամանքը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ կատարվող վերոհիշյալ փոփոխությունն ինքնին սահմանադրականության խնդիր հարուցել չի կարող:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

23 հոկտեմբերի 2018 թվականի
ՄԴՈ-1430



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 379-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 հոկտեմբերի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահ-
հող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկու-
ցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի Վճռաբեկ դատարանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Հայաստանի Հանրապե-
տության Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխա-
տակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապա-
հովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ
հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մա-
սին» սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վճռաբեկ դատա-
րանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերա-
բերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենս-
գիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998
թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորա-
գրվել է 1998 թվականի սեպտեմբերի 1-ին, ուժի մեջ է մտել 1999 թվականի
հունվարի 12-ից:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)/2018
197

Օրենսգրքի «Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը» վերստառությամբ 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է՝

«1. Վերաքննիչ բողոք բերվում են՝

....

2) սույն օրենսգրքի 376¹ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում.»:

Գործի քննության առիթը Վճռաբեկ դատարանի 2018 թվականի հուլիսի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է Վճռաբեկ դատարանի 2018 թվականի հուլիսի 20-ի ԱԲԴ/ 0182/01/11 գործով «Գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Դիմողի դիրքորոշումները

Օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասի և 21-րդ հոդվածի 6-րդ մասի համադրված վերլուծության հիման վրա դիմողն արձանագրում է, որ օրենսդիրն անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք բերելու համար որևէ ժամկետային սահմանափակում չի նախատեսել, ինչն, ըստ դիմողի, պայմանավորված է արդարադատության շահով և անձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

Վերոնշյալ համատեքստում դիմողը հարկ է համարում նշել, որ «...ի տարբերություն հիմնարար խախտման դեպքում անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոքի, որի ներկայացման համար չի սահմանվել որևէ ժամկետային սահմանափակում, նույն հիմքով ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու համար օրենսդիրը սահմանել է վեցամսյա ժամկետ»:

Ըստ դիմողի՝ դատական ատյաններով պայմանավորված՝ վերանայման նույն եղանակի հանդեպ բողոքարկման ժամկետների հարցում օրենսդիրը դրսևորել է տարբերակված մոտեցում: Արդյունքում ստացվում է, որ եթե անձն իր նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտը մինչև վերջինիս օրինական ուժի մեջ մտնելը նախկինում բողոքարկել է վերադատության կարգով, ապա կարող է առանց ժամկետային սահմանափակման հիմնարար խախտման հիմքով ներկայացնել վճռաբեկ բողոք, իսկ այն անձը, ով նախկինում չի բողոքարկել առաջին ատյանի դատարանի համապատասխան դատական ակտը, և այն մտել է օրինական ուժի մեջ, ապա վեցամսյա ժամկետի ավարտից հետո գրկվում է հիմնարար խախտման հիմքով Վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու հնարավորությունից:

Դիմողը նշում է նաև, որ՝ «...ի տարբերություն ՀՀ վճռաբեկ դատարան բողոք բերելուն՝ օրենսդիրը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոքի ներկայացման ավելի լայն սահմանափակումներ է նախատեսել, ինչը չի բխում նաև դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի տրամաբանությունից»:

Անփոփելիվ վերոգրյալը, դիմողն արձանագրում է, որ հիմնարար խախտման դեպքում անձի վիճակի բարելավման հիմքով Վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու համար վեցամսյա ժամկետի սահմանումը վտանգում է Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության, դատապարտվածի կողմից դատավճռի բողոքարկման հիմնարար իրավունքները:

Դիմողը միջնորդում է որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համապատասխանությունը Սահմանադրության 28-րդ հոդվածի, 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի, 69-րդ և 78-րդ հոդվածների պահանջներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Վերլուծելով Սահմանադրության մի շարք դրույթներ, ինչպես նաև անդրադառնալով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումներին՝ պատասխանողն արձանագրում է, որ դատարանի մատչելիության իրավունքը կարող է օրենքով ենթարկվել իրավաչափ սահմանափակումների, ինչն առկա է, երբ սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն, իսկ տվյալ սահմանափակման պայմաններում դատարանի մատչելիությունն արդյունավետ է, այն է՝ անձն ունի հստակ և գործնական հնարավորություն բողոքարկելու իր իրավունքները շոշափող դատական ակտը:

Պատասխանողի կարծիքով՝ արդարադատության մատչելիության, արդար դատաքննության, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների, անձի կողմից դատավճռի բողոքարկման իրավունքի իրացման տեսանկյունից դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել անձի վիճակի բարելավման հիմքով դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, և ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում: Ուստի, դատարանի մատչելիությունը կարող է ունենալ միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ օրենսդիրը չի կարող այնպիսի ընթացակարգեր սահմանել, որոնք կհանգեցնեն իրավունքի բուն էության խախտմանը: Մասնավորապես՝ դատական ակտի դեմ անձի

վիճակի բարելավման հիմքով բողոքարկման պայմանները, այդ թվում՝ բողոքարկման ժամկետները, չպետք է խոչընդոտեն դատական մատչելիության իրավունքի իրականացմանը:

Ամփոփելով պատասխանողը նշում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը հակասում է Սահմանադրության պահանջներին, քանի որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքում անձի վիճակի բարելավման հիմքով Վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու համար վեցամսյա ժամկետի սահմանումը վտանգում է անձի հիմնարար իրավունքները:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը

-արդյո՞ք վերաքննության կարգով չբողոքարկված և ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտերի անձի վիճակի բարելավմանն ուղղված նյութական կամ դատավարական հիմնարար խախտումները վերացնելու հիմքով վերանայման համար վեցամսյա ժամկետ նախատեսելը համաչափորեն է սահմանափակում Սահմանադրությամբ նախատեսված անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության, ինչպես նաև դատապարտյալի կողմից իր նկատմամբ կայացված դատավճռի վերանայման իրավունքները:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 69-րդ հոդվածն ամրագրում է դատապարտվածի բողոքարկման իրավունքը, համաձայն որի՝ հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք: Սահմանադրական այս իրավունքն իր արտացոլումն է գտել Օրենսգրքի մի շարք հոդվածներում: Մասնավորապես, Օրենսգրքի 103-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր դատապարտյալ ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի և որոշման վերանայման իրավունք»: Ընդ որում, դատապարտյալն իրավունք ունի բողոքարկելու ինչպես օրինական ուժի մեջ չմտած, այնպես էլ բացառիկ դեպքերում՝ ուժի մեջ մտած դատավճիռները:

Օրենսգրքի 376¹-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են բողոքարկվել պայմանավորված նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով, ինչպես նաև այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(92)2018

Ի տարբերություն նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով վերանայմանը գործի նախորդ դատական քննության ընթացքում առաջին ատյանի դատարանի թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը սահմանափակված է համապատասխան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետով: Ընդ որում՝ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ վերադաս դատարանը կայացնում է որոշում:

Նման իրավակարգավորումների պայմաններում կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ որևէ սուբյեկտիվ կամ օբյեկտիվ պատճառով առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում չբողոքարկվելու դեպքում այլևս հնարավոր չլինի վերացնել այդ ակտով թույլ տրված նյութական կամ դատավարական հիմնարար խախտումները: Խնդիրն հասկապես կարևորվում է, երբ դատական ակտով էականորեն խախտվում են այնպիսի սահմանադրական իրավունքներ, ինչպիսիք են անձի արժանապատվության, անձնական ազատության, ազատ տեղաշարժվելու, սեփականության, արդար դատաքննության և այլ իրավունքները:

4.2. Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդրո առարկա դրույթը դիտարկել դատական ակտերը վերանայելու համար նախատեսված դատավարական ժամկետների սահմանման իրավաչափության տեսանկյունից:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է դատական ակտերի վերանայման համար նախատեսված բողոքարկման ժամկետների սահմանադրականության խնդրին և կարևորել այն դատական ակտերի անփոփոխելիության սկզբունքի ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՄԴՈ-780 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է, որ «իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը: Դրանով իմաստազրկվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու և դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է»:

Սեկ այլ 2008 թվականի մայիսի 27-ի ՄԴՈ-754 որոշմամբ Սահմանադրական դատարանը շեշտել է, որ «Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res iudicata), ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի»:

Այս տեսանկյունից Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, վիճարկվող դրույթին համապատասխան, օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման համար նախատեսված վեցամսյա ժամկետն ընդհանուր առումով ուղղված է դատական ակտերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի որոշակիության և անխախտելիության սկզբունքի ապահովմանը:

Մյուս կողմից՝ զարգացնելով դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման վերաբերյալ իր դիրքորոշումները, Սահմանադրական դատարանը 2011 թվականի հուլիսի 15-ի ՄԴՈ-984 որոշման մեջ վկայակոչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորած իրավակիրառ պրակտիկան, համաձայն որի՝ «...իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ: Քրեական գործի վարույթը նորոգելու հնարավորությունն ինքնին համատեղելի է Կոնվենցիայի հետ, ներառյալ՝ 6-րդ հոդվածի երաշխիքները: 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետը հստակորեն թույլատրում է նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գտած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարույթը»:

Հարկ է նշել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում վերահաստատել է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ էական կամ անհաղթահարելի բնույթի հանգամանքներով պայմանավորված օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերացման գործընթացը կարող է համապատասխանել իրավական որոշակիության սկզբունքին, երբ դա անհրաժեշտ է դատական սխալը շտկելու համար (*Pravednaya v. Russia, 18 նոյեմբերի 2004*):

4.3. Օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարության օրենսդրության կարևորագույն խնդիրն է ոչ միայն անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործություններից, այլ նաև անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ: Դրանից ելնելով՝ քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման:

Նյութական կամ դատավարական հիմնարար խախտման արդյունքում կայացված և արդարադատության բուն էությունը խաթարող արդեն իսկ ուժի մեջ մտած առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման հնարավորությունը վեցամսյա ժամկե-

տով սահմանափակելը դատական պաշտպանության իրավունքը դարձնում է անարդյունավետ միաժամանակ զրկելով անձին արդար դատաքնության իրավունքի իրականացման հնարավորությունից: Անկախ սահմանված ժամկետում համապատասխան դատական ակտը չբողոքարկելու պատճառից՝ իրավական պետությունում չպետք է հանդուրժվի արդարադատության բուն էությունը խաթարող դատապարտյալի հիմնարար իրավունքները խախտող դատական ակտի գոյությունը:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի տարբերակված մոտեցումը, կապված արդեն իսկ ուժի մեջ մտած դատական ակտերի վերաքննության կամ վճռաբեկության կարգով վերանայման հնարավորության հետ, արդարացված չէ: Այսպես Օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Մույն օրենսգրքի 21-րդ հոդվածի վեցերորդ մասով սահմանված դեպքերում անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, իսկ անձի վիճակի վատթարացման հիմքով՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը նույն հիմքով վճռաբեկ բողոք ներկայացնելու համար չի նախատեսել որևէ ժամկետային սահմանափակում, վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վեցամսյա ժամկետի նախատեսումը չի հանդիսանում դատական պաշտպանության և արդար դատաքնության հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգ:

Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքի ներկայացման պահանջները կարող են լինել ավելի խիստ, քան ստորադաս դատական ատյաններ ներկայացվող դիմումների պահանջները (*Levages Prestations Services v. France, 23 հոկտեմբերի 1996*):

Վճռաբեկ բողոքների թույլատրելիության շեմը չհաղթահարած, սակայն արդարադատության բուն էությունը խաթարելու վերաբերյալ ենթադրյալ փաստեր պարունակող բողոքների համար ժամկետային սահմանափակումներ սահմանելը պատշաճ հնարավորություն չի տալիս նաև հենց երկրորդ «փաստի ատյանում», ինչպիսին է վերաքննիչ դատարանը, վերանայելու առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը: Հետևապես, օրենսդրի կողմից որդեգրված տարբերակումը վերաքննիչ և վճռաբեկ բողոքների միջև դուրս է դատական պաշտպանության արդյունավետ երաշխավորման համակարգային տրամաբանության շրջանակներից և համարժեք չէ դատական ակտերի կայունությունը երաշխավորելու նպատակի հարադրությամբ:

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդարադատության բուն էությունը խաթարող և նյութական կամ դատավարական հիմնարար խախտումների արդյունքում անձանց համար անբարենպաստ հետևանքներ առաջացնող առաջին ատյանի դատարանի

գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկելու հնարավորության սահմանափակումը դրանց ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետով, համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին, այն է՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի որոշակիության և անփոփոխելիության սկզբունքի ապահովմանը, ինչի արդյունքում անհամաչափորեն սահմանափակվում են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, ինչպես նաև դատապարտվածի իր նկատմամբ կայացված դատավճռի օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունքը:

Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը չի խոչընդոտում վերջնական դատական ակտի վերանայման հնարավորությունը պետության օրենքներին համապատասխան, երբ առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, **կամ եթե գործի նախորդ քննության ընթացքում թույլ են տրվել էական խախտումներ:** Կարևոր է, սակայն, որպեսզի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ընթացակարգն օգտագործվի բացառիկ դեպքերում՝ էական դատական սխալների ուղղման, արդարադատության չարաշահումների վերացման, այլ ոչ թե առիթ հանդիսանա գործը կրկին քննելու համար:

Այս առումով Սահմանադրական դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ Օրենսգրքում օգտագործվող «հիմնարար խախտում» ձևակերպումը կամ կատեգորիան ենթադրում է նյութական կամ դատավարական իրավունքի առավել կոպիտ կամ լուրջ խախտման առկայություն, քան «քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը» կամ «քրեադատավարական օրենքի էական խախտումը»: Հիմնարար խախտման էությունն այն է, որ վերջինս ի սկզբանե կանխորոշում է քրեական վարույթի ոչ իրավաչափ ընթացքը, արժեզրկում է դրա բովանդակությունը՝ հանգեցնելով անօրինական և չհիմնավորված դատական ակտի կայացմանը:

Միաժամանակ այդպիսի խախտումը պետք է պատճառահետևանքային կապի մեջ գտնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկատմամբ արդարացի պատիժ նշանակելուն, հանցագործությունից տուժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պատճառված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը ստացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական (ավելի մանրամասն տես՝ ԵՄԴ/0020/01/14 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.06.2015 թվականի որոշումը):

Օրենսգրքի համակարգային վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության և որոշակիության սկզբունքի և արդարադատության բուն էությունը խաթարող և նյութական կամ դատավարական հիմնարար խախտումներ պարունակող դատական ակտերի առանց ժամկետային սահմանափակման վերանայման հնարավորության միջև ողջամիտ հավասարակշռության ապահովմանն են ուղղված Օրենսգրքով նախատեսված հետևյալ լրացուցիչ երաշխիքները.

նախ արդարադատության բուն էությունը խաթարող չորոքարկված և օրինական ուժի մեջ մտած առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայումը հնարավոր է բացառիկ դեպքերում՝ երբ առկա են նյութաիրավական կամ դատավարական նորմերի **հիմնարար** խախտումներ,

երկրորդ՝ օրինական ուժի մեջ մտած առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը վերոհիշյալ հիմքով վերաքննիչ ատյանի կողմից կարող է վերանայվել, եթե այն նախկինում չի բողոքարկվել վերադատության կարգով,

երրորդ՝ վերանայման մասին որոշումը Վերաքննիչ քրեական դատարանը կայացնում է կոլեգիալ կազմով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ, 64-րդ և 71-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն այնքանով, որքանով ժամկետային սահմանափակում է նախատեսում անձի իրավական վիճակի բարելավմանն ուղղված առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման համար, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, ճանաչել Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 69-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

23 հոկտեմբերի 2018 թվականի
ՍԴՈ-1431

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ 4(92)2018 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՉԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 102-Դ
ՀՈՐԿԱԾԻ 5-ԴԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

30 հոկտեմբերի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահ-
հոդ), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խա-
չատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)
դիմողի Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասու-
թյան դատարանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի պաշ-
տոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-
կան փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ
Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ
հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մա-
սին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արարատի և Վայոց
ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման
վրա՝ ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետի Սահմանադրու-
թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հողային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից
ընդունվել է 2001 թվականի մայիսի 2-ին, Հանրապետության Նախագահի
կողմից ստորագրվել՝ 2001 թվականի հունիսի 4-ին և ուժի մեջ է մտել 2001
թվականի հունիսի 15-ից:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՏՅԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)/2018

Օրենսգրքի «Հողամասի նկատմամբ իրավունքների հարկադիր դադարման հիմքերը» վերտառությամբ 102-րդ հոդվածի սույն գործով վիճարկվող նորմը սահմանում է.

«Հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարում են դատական կարգով, հետևյալ հիմքերով՝

...

5) հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելը և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելը...»:

Գործի քննության առիթն Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի հունիսի 26-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի հունիսի 15-ի ԱՎԴ2/1791/02/17 գործով «ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները, վերջիններիս հետ փոխկապակցված օրենսդրության այլ նորմերը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումները

Հղումներ կատարելով Սահմանադրության 60-րդ հոդվածի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության նորմերին, վկայակոչելով Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները, դիմողը գտնում է, որ հողի հարկը չվճարելու պատճառաբանությամբ սեփականությունից զրկելը «...պիտանի և անհրաժեշտ չէ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված նպատակին հասնելու համար՝ անձի սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտության տեսանկյունից, առկա է առավել բարենպաստ միջոց՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման վերաբերյալ վարույթը»: Դիմողը նաև գտնում է, որ «...Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, ... լիազորված մարմինը պարտավոր է հողի հարկը գանձելու նպատակով ընտրել անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման վերաբերյալ վարույթ հարուցելու հնարավոր իրավաչափ լուծումը և ոչ թե սեփականությունից զրկումը»: Դիմողն այն կարծիքին է, որ «...հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելու և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելու պատճառաբանությամբ սեփականազրկումը չի կարող արդարացված համարվել, քանի որ այն

աղերս չունի հանրության շահի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ, այստեղ առկա չէ արդար հավասարակշռություն հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև, անձի կողմից հողի հարկի չվճարման դեպքում հասարակության ընդհանուր որևէ շահ չի խախտվում...»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրության պահանջներին:

Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետով ամրագրված սեփականության իրավունքի սահմանափակումը՝ որպես պատասխանատվության միջոց, «...առավել քան օրինաչափ նպատակ է հետապնդում, ինչպես նաև համաչափ է պետության գոյության անհրաժեշտ պայմանի ու միջոցի առկայությամբ պայմանավորված պետության հատկանիշի՝ հետևաբար նաև հասարակության բոլոր անդամների հանրային շահերի ապահովման նկատառումների համատեքստում, որը միտված է արդար հավասարակշռություն ապահովել հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների և պաշտպանության միջև»: Հղումներ կատարելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և Սահմանադրության մի շարք հոդվածներին, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներ, պատասխանողը եզրահանգում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորմամբ «... ապահովված է ... իրավական տրամաբանության միասնականությունը, քանզի վիճարկվող դրույթով ամրագրված սեփականության իրավունքի սահմանափակման հիմքը բխում է պետության և հասարակության բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունից և հանդիսանում է հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռվածության ապահովման միջոց, որը ոչ միայն չի զիջում, այլ նաև զերակայում է դիմողի կողմից մատնանշված Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերով ամրագրված դրույթների հետապնդած նպատակին»:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս պարզել.

- արդյոք ք Օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված նորմը Սահմանադրության 60 և 78-րդ հոդվածների սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում համաչափ միջոց է մասնավոր և հանրային շահերի արդարացի հավասարակշռությունն ապահովելու համար,

- սույն գործով վիճարկվող, ինչպես նաև սեփականության իրավունքի իրացումն ապահովող օրենսդրության այլ նորմերի հետ համակարգային առումով փոխկապակցվածության շրջանակներում լիարժեք երաշխա-

վորվում է արդյոք անձի՝ դատական պաշտպանության իրավունքը՝ ելնելով այն հանգամանքից, որ այդ իրավունքի իրացման արդյունավետությունն ու մատչելիությունն օբյեկտիվորեն պայմանավորված են անձի իրավունքների այդ թվում նաև սեփականության իրավունքի պաշտպանության իրավական հնարավորությամբ,

- արդյոք ք հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելու և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելու դեպքում հողամասի նկատմամբ իրավունքների դատական կարգով դադարելը բխում է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի էությունից ու բովանդակությունից:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սեփականության իրավունքը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն: Այն միջազգային իրավական ամրագրում է ստացել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 17-րդ), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունում, որի 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Միաժամանակ, հիշյալ արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասն արտոնում է օրենքով նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք պայմանավորված են հանրային շահերով կամ անհրաժեշտ են հարկերի, տուրքերի կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ իրավապայմանները ելակետային նշանակություն ունեն ներպետական իրավահամակարգում սեփականության իրավունքի օրենսդրական կանոնակարգման համար:

Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք, այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով, ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով օրենքով սահ-

մանված դեպքերի, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

Այսպիսով, ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրական մակարդակներով հաստատագրված է հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ, մասնավորապես.

առաջին՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի,

երկրորդ՝ երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար,

երրորդ՝ Սահմանադրությամբ կանխորոշված նպատակով սահմանել սեփականության իրավունքի իրացման ազատության օրենքով թույլատրելի շրջանակը,

չորրորդ՝ երաշխավորել օրենքով սահմանված դեպքերում՝ դատական կարգով անձին սեփականությունից զրկելու, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունը հարկադիր օտարելու և նախնական ու համարժեք փոխհատուցում ապահովելու վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների կատարումը:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-92, ՄԴՈ-630, ՄԴՈ-649, ՄԴՈ-650, ՄԴՈ-667, ՄԴՈ-669, ՄԴՈ-735, ՄԴՈ-815, ՄԴՈ-901, ՄԴՈ-903, ՄԴՈ-1009, ՄԴՈ-1056, ՄԴՈ-1073, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1189, ՄԴՈ-1203, ՄԴՈ-1210 և այլն) անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, այդ իրավունքի պաշտպանության, հնարավոր սահմանափակման խնդիրներին՝ իրավական դիրքորոշումներ է արտահայտել սեփականության իրավունքի էության, այդ իրավունքի սահմանափակման, դադարման հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման սահմանադրականության վերաբերյալ՝ կարևորելով այդ բնագավառում սահմանադրական կարգի սկզբունքներից բխող իրավական միջոցների գործադրման անհրաժեշտությունը, միաժամանակ բացահայտելով սեփականությունից զրկելու սահմանադրական եզրույթի բովանդակությունն ու միջազգային իրավական պրակտիկայում դրա ընկալման և կիրառման փորձը:

Ելնելով սույն գործով դիմումում բարձրացված հարցերի բովանդակությունից և վերջինիս շրջանակներում վերահաստատելով իր արտահայտած դիրքորոշումները, Սահմանադրական դատարանը կարևոր է համարում գնահատել նաև սեփականության և մասնավորապես հողի նկատմամբ այդ իրավունքի հնարավոր դադարեցմանն ուղղված իրավական միջոցների համաչափության խնդիրը, կապված հողի հարկի վճարման պարտավորության մասով պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող վճարումների կատարումն ապահովելու հետ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է գտնում Օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս նախ՝ այն դիտարկել Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված պարտադիր վճարի տեսակով պայմանավորված պարտականության կատարման, ինչպես նաև՝ հողի, որպես անշարժ գույքի տեսակ հանդիսացող սեփականության օբյեկտի իրավական կարգավիճակի բովանդակային վերլուծության շրջանակներում, ելնելով ինչպես Քաղաքացիական օրենսգրքի, այնպես էլ Հարկային օրենսգրքի, Հողի հարկի մասին օրենքի իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությունից:

4.2. Օրենսգրքի ինչպես վիճարկվող, այնպես էլ վերջինիս հետ փոխկապակցված նույն օրենսգրքի այլ նորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ.

- հողն անշարժ գույքի տեսակ է, որը, ինչպես նաև վերջինիս կարգավիճակը (ներառյալ դրա նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները) օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման (Օրենսգրքի 5-րդ, 53-րդ հոդվածի 1-ին մաս),

- հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը սեփականատիրոջ կողմից իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքն է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ (Օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մաս, 109-րդ հոդված),

- հողամասի նկատմամբ իրավունքների (այդ թվում՝ սեփականության իրավունքի) սահմանափակումները սահմանվում են անմիջականորեն՝ օրենքով, այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ դատական կարգով (Օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մաս),

- սահմանված են հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման և սահմանափակման դեպքերը, այդ թվում՝ հողամասի վրա դրա սեփականատիրոջ պարտավորություններով պայմանավորված բռնագանձում տարածելիս (Օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մաս, ինչպես նաև՝ 101-րդ, 102-րդ, 103-րդ, 104-րդ և 105-րդ հոդվածներ),

- սահմանված են հողամասերի սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում կապված՝ պարտադիր վճարումների կատարման հետ (Օրենսգրքի 109 և 110-րդ հոդվածներ, ինչպես նաև՝ 110-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ, 111 և 112-րդ հոդվածներ):

Հողամասի նկատմամբ որպես հարկման օբյեկտով պայմանավորված իրավունքների իրացման և պարտականությունների կատարման առնչությամբ՝ Հողի հարկի մասին օրենքի, Քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաև Հարկային օրենսգրքի իրավակարգավորումների համադրված վերլուծությունն իր հերթին, վկայում է, որ.

- հողի հարկը որպես պարտադիր վճար վճարվում է ինչպես հողի սեփականատերերի, այնպես էլ պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողների կողմից որոշակի չափով ու կարգով (Հողի հարկի մասին օրենքի 1-ին, 2-րդ, 3-9-րդ հոդվածներ),

- ինչպես և հարկման այլ օբյեկտների դեպքում, նախատեսված են հողի հարկի վճարման արտոնություններ (Հողի հարկի մասին օրենքի 10 և 11-րդ հոդվածներ),

- սահմանված են հողի հարկը պետական և համայնքային բյուջեներ վճարելու ընդհանուր կարգն ու պայմանները (Հողի հարկի մասին օրենքի 4-րդ գլուխ),

- նախատեսված են հողի հարկի վճարման գծով խախտումների համար պատասխանատվության և դրանից ազատելու ընդհանուր սկզբունքները (Հողի հարկի մասին օրենքի 18-րդ հոդված):

Այսպիսով, համադրելով Օրենսգրքի վերոթվարկյալ կարգավորումները՝ գույքային, սեփականության իրավունքի, պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերություններ կարգավորող Քաղաքացիական օրենսգրքի և Հողի հարկի մասին օրենքի համապատասխան նորմերի հետ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հողամասը լինելով քաղաքացիական իրավունքների օբյեկտ և անշարժ գույքի տեսակ (Քաղ. օր.-ի 132 և 134-րդ հոդվածներ) հետևաբար նաև հարկման օբյեկտ (Հարկային օրենսգրքի 10-րդ հոդված), օժտված է նույնպիսի **ընդհանուր իրավակարգավիճակով**, ինչպիսին սահմանված է սեփականության օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի այլ տեսակների համար՝ այն առանձնահատկություններով, որոնք նախատեսված են Հողային օրենսգրքով: Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ նորմատիվ կարգավորումների **ընդհանուր տրամաբանությունը**, մասնավորապես հողի հարկի վճարման պարտականության մասով, օբյեկտիվորեն միտված է Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի իրավական պատվիրանի կատարմանը և **սկզբունքային տարբերակում** չի նախատեսում:

4.3. Անդրադառնալով Օրենսգրքի 102-րդ հոդվածի վիճարկվող և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենսգրքի այլ նորմերով նախատեսված իրավակարգավորումներին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 20-րդ գլխում՝ հողամասերի նկատմամբ իրավունքների դադարման գործող կարգի հիմքում դրված է այն հայեցակարգը, համաձայն որի.

- հստակեցված են իրավաբանական փաստի ուժով դատական կարգով հողամասերի նկատմամբ անձանց սեփականության իրավունքի **դադարման հիմքերը**, այդ թվում՝ հողամասի վրա դրա սեփականատիրոջ պարտավորություններով բռնագանձում տարածելիս (100-րդ հոդվածի 1-ին մաս, նույն մասի 8-րդ կետ, 101-րդ հոդված),

- սահմանված են դատական կարգով հողամասերի նկատմամբ անձանց սեփականության իրավունքի **հարկադիր դադարման հիմքերը** (102-րդ, 104-րդ և 105-րդ հոդվածներ), այդ թվում՝ սույն գործով վիճարկվող հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելու և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելու հիմքով (102-րդ հոդվածի 5-րդ կետ):

Այսպիսով, ի տարբերություն հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման վերոթվարկյալ ընդհանուր այլ հիմքերով նախատեսված ընթացակարգերի, վիճարկվող նորմն իր իրավական բո-

վանդակությանը որպես սեփականության իրավունքի դատական կարգով հարկադիր դադարման անառարկելի փաստ է նախատեսում երեք տարվա ընթացքում պետական կամ համայնքային բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունը չկատարելը և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելը, որով անկախ պարտավորությամբ պայմանավորված պարտքի չափից անձն ըստ էության ամբողջությամբ զրկվում է հարկման ենթակա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքից, բացառվում է հարկային պարտավորության կատարման հնարավորությունը տվյալ անձի սեփականություն հանդիսացող այլ գույքի (շարժական, անշարժ) հաշվին վերջինիս վրա բռնագանձում տարածելու կամ հարկային պարտավորության կատարումը պատշաճ վարչարարությամբ օրենքով նախատեսված կարգով ապահովելու միջոցով:

4.4. Անդրադառնալով հարկերի վճարումն ապահովելու նպատակով սեփականության իրավունքին միջամտության մասին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մի շարք գործերով դատարանը կարևորել է պետությունների այնպիսի օրենքներ ընդունելու և կիրառելու իրավունքը, որն անհրաժեշտ է ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրակա նացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար (մասնավորապես, տե՛ս *Gasus Dosier-und Fördertechnik GmbH v. The Netherlands*, 15375/89, 23.02.1995, § 60¹): Միաժամանակ, հաստատված նախադեպային իրավունքի շրջանակներում Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ պարագրաֆը պետք է մեկնաբանել նույն հոդվածի 1-ին պարագրաֆում սահմանված սկզբունքի լույսի ներքո: Հետևաբար, միջամտությունը պետք է սահմանի «արդար հավասարակշռություն» համայնքի ընդհանուր շահերի և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: Այս հավասարակշռության հասնելու նկատառումն արտահայտված է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ամբողջ կառուցվածքում, ներառյալ երկրորդ պարագրաֆը, համաձայն որի պետք է առկա լինի ողջամիտ հարաբերակցություն կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս նույն տեղում, §62, ինչպես նաև *National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society et Yorkshire Building Society*, 117/1996/736/933-935, 23.10.1997, §80²): Ըստ դատարանի դիրքորոշման՝ սահմանելու համար, թե արդյո՞ք այս պահանջը պահպանվել է, անհրաժեշտ է, որպեսզի Պայմանավորվող պետությունը հարկման ոլորտում քաղաքականություն մշակելիս և կիրառելիս ունենա լայն հայեցողության շրջանակ, և դատարանը պետք է հարգի այս հարցերում օրենսդրի գնահատականը, **եթե այն գուրկ չէ ողջամիտ հիմքից** (տե՛ս *Gasus Dosier-und Fördertechnik GmbH v. The Netherlands*, 15375/89, 23.02.1995, § 60):

¹ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57918>

² <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58109>

Միկրոինտելեկտ ՍՊԸ-ն ընդդեմ Բուլղարիայի 2014 թվականի մարտի 4-ի վճռում (Microintellect OOD v. Bulgaria, 34129/03, § 36³), որը վերաբերում է վարչական մարմնի որոշմամբ անձի գույքի՝ արտադատական կարգով բռնագանձմանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ բռնագանձման իրականացումը վարչական մարմնի կողմից վերահսկողություն է սեփականության օգտագործման նկատմամբ (տե՛ս AGOSI v. the United Kingdom, 24 October 1986, § 51⁴, Bowler International Unit v. France, no. 1946/06, § 41, 23 July 2009) և հանդիսանում է հարկերի և տուգանքի վճարման ապահովման միջոց (տե՛ս Gasus Dosier-und Fördertechnik GmbH v. The Netherlands, 15375/89, 23.02.1995, § 59):

Եվրոպական դատարանը նաև նշել էր, որ անձի ունեցվածքի բռնագանձման դեպքում հատկապես կարևորվում է նման որոշման դեմ բողոք բերելու արդյունավետ միջոցների ապահովումը, չնայած Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով ուղղակիորեն նախատեսված չէ նման պահանջ (տե՛ս Microintellect OOD v. Bulgaria, 34129/03, § 44):

Հիմնական եզրահանգումն այն է, որ օրենքով նախատեսված իրավաչափ պարտավորությունների կատարման համար վարչական միջոցների համաչափ գործադրումը չի կարող դիտվել որպես սեփականության իրավունքի ռոտահարում կամ սեփականությունից զրկում: Էականը՝ վարչական միջամտության դեմ դատական բողոք բերելու արդյունավետ միջոցի երաշխավորումն է:

4.5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ հողի, ինչպես և անշարժ գույքի մյուս տեսակների տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սույն որոշման 4.2.-րդ կետում արձանագրված քաղաքացիական իրավունքի օբյեկտների հարկման հիմնական սկզբունքների միասնականությունից բխում է, որ օրենքով պետք է երաշխավորվեն այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ ընդհանուր կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ելնելով ինչպես սահմանադրական իրավունքների և ազատությունների իրացման ազատության երաշխավորման անհրաժեշտությունից, այնպես էլ սահմանադրական պարտականությունների անվերապահ կատարման սահմանադրաիրավական պահանջից: Սույն գործով քննության առարկայի շրջանակներում դա, մասնավորապես, ենթադրում է, որ Սահմանադրության 10 և 60-րդ հոդվածներով երաշխավորված սեփականության իրավունքն անշարժ գույքի այդ թվում հողի նկատմամբ, հարկման հետ կապված հարաբերությունների շրջանակներում պետք է իրացվի ընդհանուր սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես, Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին համապատասխան հարկեր (այդ թվում՝ հողի հարկ), տուրքեր և պարտադիր այլ վճարումներ կատարելու անձանց պարտականությունը նույն հոդվածի սահմանադրա-

³ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-141365>

⁴ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-57418>

իրավական ընդհանուր բովանդակության շրջանակներում ենթադրում է, որ անձն այդ պարտականության կատարման համար, օրենքով նախատեսված որոշ բացառություններով, որպես կանոն, պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով՝ առանց այդ գույքի առարկայական (սեփականություն հանդիսացող օբյեկտների) տարբերակման, ինչը որպես քաղաքացիական պարտականությունների կատարումն ապահովող իրավակարգավորման ընդհանուր սկզբունք ամրագրված է նաև Քաղաքացիական օրենսգրքի մի շարք նորմերում (60-րդ, 74-րդ, 75-րդ, 77-րդ, 83-րդ, 90-րդ, 95-րդ և այլ հոդվածներ): Միաժամանակ, Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից բխում է, որ անձն օրենքով սահմանված, այդ թվում՝ հարկային պարտավորությունների հարկադիր կատարումն ապահովելու դեպքերում, սեփականությունից կարող է զրկվել բացառապես դատական կարգով՝ իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ քննության արդյունքում, ինչը ենթադրում է նաև, որ գործի (հարկային պարտավորության խախտման) հանգամանքների բազմակողմ, օբյեկտիվ և լրիվ գնահատմամբ է որոշելի տվյալ անձին պատկանող սեփականություն հանդիսացող գույքի (շարժական, անշարժ) այն տեսակը, որի նկատմամբ կարող է կամ բռնագանձում պետք է տարածվի:

Ելնելով վերոշարադրյալից, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետում նախատեսված նորմը Սահմանադրության 60 և 78-րդ հոդվածների սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում համաչափ և արդյունավետ միջոց չէ հանրային իրավահարաբերություններ կարգավորելու համար: Նման իրավակարգավորմամբ լիարժեք հաշվի չեն առնվում արդար դատաքննության շրջանակներում տվյալ հողամասի սեփականատեր հանդիսացող անձի՝ իր հարկային պարտավորության կատարման հետ կապված օբյեկտիվ կամ այլ հանգամանքների լրիվ ու բազմակողմ ուսումնասիրման և գնահատման անհրաժեշտությունը կամ այդ պարտավորության կատարումը սեփականություն հանդիսացող այլ գույքի վրա բռնագանձում տարածելու միջոցով ապահովելու հնարավորությունը, լիարժեք չի երաշխավորվում անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը, ինչը սույն գործով դիմողի ներկայացրած փաստարկների շրջանակներում հիմնավոր է: Այդ իրավունքի իրացման արդյունավետությունն ու մասշտելիությունն օբյեկտիվորեն պայմանավորված է անձի իրավունքների, այդ թվում՝ նաև՝ սեփականության իրավունքի պաշտպանության լիարժեք իրավական հնարավորությամբ, ինչն էական է ոչ միայն հանրային, այլև՝ մասնավոր իրավահարաբերությունների կարգավորման արդյունավետության ապահովման շրջանակներում: Հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելու և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելու հիմքով հողամասի նկատմամբ իրավունքների դատական կարգով անվերապահ հարկադիր դադարեցնելու վերաբերյալ իրավակարգավորումը չի բխում անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի էությունից ու բովանդակությունից, ինչպես նաև՝ այդ իրավունքի պաշտպանությունը երաշխավորելու հանրային իշխանության սահմանադրաիրավական հանձնառության էություն-

նից, հետևաբար և միտված չէ արդար հավասարակշռություն ապահովել հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև: Հողի հարկի՝ որպես պարտադիր վճարի, կամավորության հիմքով պարտավորության չկատարումն ինքնին օբյեկտիվորեն հանգեցնում է պետության կողմից դրա իրավական հարկադրանքի միջոցով պարտքի գանձմանը, որն իրավաչափ է, հետապնդում է Մահմանադրությամբ հետապնդվող նպատակ, սակայն, Մահմանադրության 60-րդ հոդվածի համատեքստում չի կարող դիտարկվել որպես սեփականությունից զրկում, ինչը կառուցակարգային առումով մասամբ իրացված է օրինակ, Օրենսգրքի 102-րդ հոդվածի 9-րդ կետում, համաձայն որի հողամասի վրա բռնագանձում կարող է տարածվել պայմանավորված դրա սեփականատիրոջ պարտավորություններով:

Մահմանադրական դատարանը նաև գտնում է, որ Մահմանադրության 78-րդ հոդվածի պահանջների համատեքստում վիճարկվող դրույթում ամրագրված սեփականության իրավունքի դադարման հիմքն անմիջականորեն չի բխում պետության և հասարակության անձի սեփականության իրավունքի հանդեպ գերակայող շահերի ապահովման անհրաժեշտությունից և անհրաժեշտ միջոց չէ Մահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված նպատակին հասնելու համար, համարժեք չէ սահմանափակվող իրավունքի նշանակությանը, արդարացի միջոց չէ հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռությունն ապահովելու տեսանկյունից: Հողի նկատմամբ սեփականության իրավունքի հարկադիր դադարեցումը հողօգտագործումից բխող հարկային պարտավորությունների չկատարման հիմքով, Մահմանադրական դատարանի գնահատմամբ, այնպիսի ծայրահեղ միջոց է, որը պետք է կիրառվի պետության և հասարակության գերակա շահերով պայմանավորված նպատակին հասնելու բոլոր պիտանի և անհրաժեշտ իրավական այլ միջոցները սպառելու դեպքում: Մասնավորապես, հողի հարկի վճարման պարտականության չկատարումը կարող է հիմք հանդիսանալ հողի նկատմամբ սեփականության իրավունքի հարկադիր դադարման, **եթե այլ կերպ, այդ թվում՝ հարկատու անձի սեփականությունն հանդիսացող այլ գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու արդյունքում, հարկային այդ պարտավորության կատարումը հարկային պարտքին համարժեք չի ապահովվել:** Վերջինս կարևոր է նաև հողի նկատմամբ բռնագանձում տարածելիս և (կամ) վերոհիշյալ հիմքով հողի նկատմամբ սեփականության իրավունքը հարկադիր դադարեցնելիս, քանի որ չի կարող գույքի, այդ թվում՝ հողի բռնագանձվող մասը, կամ ամբողջությունը գերազանցել հարկային պարտավորության չկատարման արդյունքում պետական կամ համայնքային բյուջեներ վճարման ենթակա պարտքի (գումարի) չափը:

Հետևաբար, օրենսդրի պարտականությունն է, ելնելով Մահմանադրության 10 և 60-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությունից, ինչպես նաև Մահմանադրության 75-րդ հոդվածի պահանջից, հողի հարկի վճարման պարտավորությունների հարկադիր կատարումն ապահովող նորմատիվ կարգավորումներ սահմանելիս երաշխավորել

արդյունավետ ընթացակարգեր՝ մի կողմից սեփականության իրավունքի լիարժեք պաշտպանության, մյուս կողմից՝ անհրաժեշտության դեպքում, պետական կամ համայնքային բյուջեի նկատմամբ հողի հարկի վճարման պարտավորության կատարումը պատշաճ վարչարարության շրջանակներում ապահովելու և հարկատուի սեփականություն հանդիսացող այլ գույքի նկատմամբ դատական կարգով արդարացի ու հարկային պարտավորությանը համարժեք բռնագանձում տարածելու եղանակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Մ Ե Ց**:

1. ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետը ճանաչել Սահմանադրության 60-րդ, 75-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

30 հոկտեմբերի 2018 թվականի
ՍԴՈ-1432



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 նոյեմբերի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ռ. Ռուբինյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հուլիսի 7-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև արձակուրդի և աշխատանքի ծրագրի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)/2018
218

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև արձակուրդի և աշխատանքի ծրագրի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի հուլիսի 7-ին Բուենոս Այրեսում՝ երկու պետությունների երիտասարդներին, ովքեր մտադիր են արձակուրդն անցկացնելու կամ զբոսաշրջության նպատակով մուտք գործել Կողմերի պետությունների տարածք և մնալ այնտեղ՝ փոխադարձ մուտքի արտոնագրերի տրամադրումը դյուրացնելու նպատակով:

2. Համաձայնագիրը երկու պետությունների երիտասարդներին հնարավորություն է ընձեռում կատարելու կարճատև վարձատրվող աշխատանք, որը կօգնի նրանց հոգալու իրենց այցելության ծախսերը, կավելացնի նրանց աշխատանքային փորձը և կբարելավի մյուս Կողմի պետության լեզվի, մշակույթի և հասարակության վերաբերյալ իմացությունները:

Կողմերին տրամադրվող արձակուրդի և աշխատանքի համար մուտքի արտոնագրերի տարեկան քանակը սահմանվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ դիվանագիտական ուղիներով հայտագրերի փոխանակման միջոցով:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ՀՀ օրենսդրության համաձայն՝ Արգենտինայի քաղաքացիներին տրամադրել արձակուրդի և աշխատանքի համար ժամանակավոր, բազմակի մուտքի արտոնագիր, որը վավեր է տրման ամսաթվից երեք (3) ամիս ժամանակահատվածում, և տասներկու (12) ամսվա օրինական կեցության համար՝ ՀՀ տարածք առաջին անգամ մուտքի օրվանից (այսուհետ՝ արձակուրդի և աշխատանքի մուտքի արտոնագրեր), պայմանով, որ նրանք համապատասխանում են Համաձայնագրի 1-ին հոդվածով սահմանված պահանջներին (հոդվ. 1),

- թույլ տալ Արգենտինայի քաղաքացիներին, որոնք կրում են վավեր արձակուրդի և աշխատանքի արտոնագիր, ընդունվել աշխատանքի որպես նրանց այցելության ոչ պարտադիր բաղադրիչ՝ ուղղված ճանապարհորդության ծախսերը հոգալուն և չի հանդիսանա այցելության հիմնական նպատակ (հոդվ. 3),

- արձակուրդի և աշխատանքի համար վավերական մուտքի արտոնագիր ունեցող անձանց իրավունք տալ աշխատելու իրենց այցելության տասներկու (12) ամիսներից վեց (6) ամսվա ընթացքում (հոդվ. 4),

- երաշխավորել, որ հայկական և արգենտինական Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, Համաձայնագրի դադարեցումը կամ կասեցումն ամբողջությամբ կամ մասնակիորեն չխոչընդոտի վավերական արձակուրդի և աշխատանքի մուտքի արտոնագիր

ունեցող անձին մուտք գործել կամ մնալ ՀՀ տարածքում և այնտեղ աշխատել մինչև մուտքի արտոնագրի ժամկետի լրանալը՝ Համաձայնագրի համաձայն (հոդվ. 12):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**.

1. 2014 թվականի հուլիսի 7-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև արձակուրդի և աշխատանքի ծրագրի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

6 նոյեմբերի 2018 թվականի
ՄԴՈ-1433



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 17-
ԲԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 141-ԲԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ, 3-ԲԴ ԵՎ 8-ԲԴ
ՄԱՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ՉԸՆՏՐՎԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ
ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 նոյեմբերի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի Հանրապետության նախագահի ներկայացուցիչ՝ Հանրապետության նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Հովակիմյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության օրենսդրական փորձաքննության բաժնի պետ Գ. Մելոյանի և նույն վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 68-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու հետևանքներին վերաբերող կանոնակարգումների բացակայության մասով, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի հունվարի 17-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2018 թվականի հունվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարանի մասին օրենք)՝ «Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղը համալրելու կարգը» վերտառությամբ 17-րդ հոդվածի սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո թափուր տեղում նոր դատավորի ընտրությունը կատարվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում՝ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2017 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի մայիսի 18-ից:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Ազգային ժողովի կանոնակարգ)՝ «Սահմանադրական դատարանի դատավորների ընտրությունը» վերտառությամբ 141-րդ հոդվածի սույն գործով վիճարկվող 1-ին, 3-րդ և 8-րդ մասերը սահմանում են.

«1. Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունն անցկացվում է Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը թափուր մնալու դեպքում, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ավարտին կամ պաշտոնավարման տարիքը լրանալուն նախորդող վեց ամսվա ընթացքում»,

«3. Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումները կատարում են հաջորդաբար Հանրապետության նախագահը, դատավորների ընդհանուր ժողովը և Կառավարությունը՝ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, իսկ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորություններն ավարտվելու կամ պաշտոնավարման տարիքը լրանալու դեպքում՝ Սահմանադրական դատարանի նախագահի կողմից համապատասխան տեղեկությունն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում»,

«8. Եթե Սահմանադրական դատարանի դատավորը չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, իրավասու մարմինը առաջադրում է նոր թեկնածու»:

Վերոհիշյալ 141-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը լրացվել և փոփոխվել են Ազգային ժողովի կողմից ընդունված 17.01.18թ. ՀՕ-50-Ն և 07.02.18թ. ՀՕ-96-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի՝ 2018 թվականի հունիսի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով դիմողի և պատասխանողի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի և Ազգային ժողովի կանոնակարգի համապատասխան դրույթները, գործում առկա մյուս փաստաթղթերը, Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը փաստում է, որ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների ընտրության (ինչն ընդգրկում է նաև առաջադրումը) մանրամասներ (այդ թվում՝ ժամկետներ) սահմանված չեն և դրանք սահմանադիրը վերապահել է Սահմանադրական դատարանի մասին օրենքին և Դատական օրենսգրքին:

Սահմանադրության 166 և 167-րդ հոդվածների կարգավորումների շրջանակներում, վերլուծելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 17-րդ հոդվածը և Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածը, դիմողը գտնում է, որ.

- ի կատարումն Սահմանադրության 166-րդ հոդվածի պահանջի՝ Սահմանադրական դատարանի մասին օրենքով պետք է սահմանվեին Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության մանրամասներ, սակայն այդ օրենքի համապատասխան կարգավորումներ (17-րդ հոդվածով) առանցքային մանրամասներ չեն սահմանվել, այլ դրանք վերապահվել են Ազգային ժողովի կանոնակարգով սահմանելուն,

- Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի կազմավորման կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով, սակայն Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 1-ին մասով կարգավորվել է Սահմանադրական դատարանի կազմավորմանը վերաբերող հարց, որը, ըստ դիմողի, ուղղակիորեն դուրս է այդ օրենքի՝ Սահմանադրությամբ նախատեսված առարկայի շրջանակներից,

- Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումներ կատարող (այսուհետև՝ Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրող) մարմինների համար առաջադրման ժամկետներ սահմանված չեն, և, ըստ էության, դրանց սահմանման հարցը սահմանադիրը Սահմանադրության

166-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով վերապահել է Սահմանադրական դատարանի մասին օրենքին և Դատական օրենսգրքին: Սակայն, համապատասխան կարգավորումները սահմանվել են մեկ այլ սահմանադրական օրենքով՝ Ազգային ժողովի կանոնակարգով: Արդյունքում, ըստ դիմողի, օրենսդիրը գերազանցել է Սահմանադրությամբ սահմանված իրավասության տիրույթը,

- հստակ չէ, թե ինչ իրավաչափ և անհրաժեշտ նպատակ են հետապնդում Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածով Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումներ կատարելու (այսուհետ նաև Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրման) համար սահմանված ժամկետները: Օրենսդիրը մի դեպքում մեկամսյա ժամկետ է սահմանել, իսկ մեկ այլ՝ Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու դեպքում՝ տասնօրյա ժամկետ, որոնց սահմանադրաիրավական հիմքը, ինչպես նաև անհրաժեշտության և ողջամտության հիմնավորումը, դիմողի կարծիքով, բացակայում են:

Դիմողը, վկայակոչելով Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, չի բացառում, որ կարող են լինել դեպքեր, երբ, օրինակ՝ սուկ քաղաքական շարժառիթներով Ազգային ժողովի կողմից խոչընդոտվի Սահմանադրական դատարանի կազմի համալրումը և արդյունքում հնարավոր է առաջանա Սահմանադրական դատարանի նիստերի իրավագործության խնդիր: Դիմողը միաժամանակ գտնում է, որ Սահմանադրական դատարանի մասին օրենքը՝ սահմանելով Սահմանադրական դատարանի նիստերի իրավագործության ռեժիմ, չի նախատեսել որևէ առանձնահատկություն այն իրավիճակի դեպքում, երբ, օրինակ՝ Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի առկայությունը կհանգեցնի նիստերի իրավագործության խնդրին, ինչն օրենսդրական բաց է և կարող է առաջացնել իրավական անվտանգության խնդիր և խախտել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ Սահմանադրական դատարանի դիմելու սահմանադրական իրավունքը:

Վերոհիշյալի հիման վրա դիմողը սույն գործով բարձրացնում է Սահմանադրական դատարանի մասին օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասին, Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերի՝ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասին, 166-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերին, 167-րդ հոդվածի 3-րդ մասին, ինչպես նաև Սահմանադրական դատարանի մասին օրենքի՝ Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու հետևանքներին վերաբերող կանոնակարգումների բացակայության մասով՝ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասին, 167-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին համապատասխանության հարցեր:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից բխում է, որ սահմանադիրը հստակ տարբերակում է Սահմանադրական դատարանի դատավոր առաջադրող և Սահմանադրական դատարանի դատավոր ընտրող պետական մարմիններին, ուստի Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունը չի ընդգրկում նրա առաջադրումը: Վկայակոչելով Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասի այն կարգավորումը, համաձայն որի դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով՝ պատասխանողը գտնում է, որ սահմանադրական այդ օրենքներով ենթակա են սահմանման ոչ թե ամբողջական ընթացակարգեր, այլ բացառապես այդ օրենքների կարգավորման առարկայի շրջանակներում դատավորների ընտրությանը և նշանակմանն առնչվող մանրամասներ:

Ըստ պատասխանողի այնքանով, որքանով Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը, այն վերջինիս գործառույթն է, ուստի Սահմանադրական դատարանի դատավորների ընտրությանը վերաբերող կարգավորումները տրվում են Ազգային ժողովի կանոնակարգով, քանի որ Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան, իսկ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:

Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերի իրավակարգավորումների շրջանակներում վերլուծելով Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերի կարգավորումները պատասխանողը փաստում է, որ Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրումը Հանրապետության նախագահի, Կառավարության և դատավորների ընդհանուր ժողովի գործառույթն է:

Վկայակոչելով իրավունքի բացի վերաբերյալ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ պատասխանողը չի վիճարկում, որ հնարավոր են դեպքեր, երբ Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերն առաջացնեն Սահմանադրական դատարանի նիստերի իրավագործության խնդիր: Սակայն, ըստ պատասխանողի, նշված խնդրի հաղթահարման մեխանիզմի սահմանումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակից դուրս է և պայմանավորված չէ իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ: Հետևաբար՝ դիմողի կողմից բարձրացված հարցի օրենսդրական մակարդակով համապատասխան կարգավորման բացակայությունը չի կարող որակվել որպես օրենսդրական բաց: Ավելին, գուտ ընթացա-

կարգային առումով օրենսդիրը փորձել է, մասնավորապես, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսել հիշյալ խնդրի առաջացումը կանխող կարգավորումներ:

Վերոգրյալի հիման վրա պատասխանողը գտնում է, որ.

- Ազգային ժողովի կանոնակարգով Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությանը վերաբերող իրավակարգավորումները համապատասխանում են Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու սահմանադրական գործառույթին և այդ գործառույթի իրացումը կարգավորող ընթացակարգային նորմեր են դուրս չգալով Ազգային ժողովի կանոնակարգի կարգավորման առարկայի շրջանակից, հետևաբար Սահմանադրական դատարանի մասին օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը, որում հղում է արվում Ազգային ժողովի կանոնակարգին, համապատասխանում է Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասին, ինչպես նաև 166-րդ հոդվածի 9-րդ մասին,

- Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերի այն հասվածները, որտեղ սահմանվում են Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրման, Սահմանադրական դատարանի կազմավորմանն առնչվող ընթացակարգային դրույթներ, չեն համապատասխանում Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի, 166-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին,

- Սահմանադրական դատարանի մասին օրենքն այնքանով, որքանով չի ամրագրում Սահմանադրական դատարանի կազմավորմանը վերաբերող, ինչպես նաև Սահմանադրական դատարանի գործունակությունը երաշխավորող կարգավորումներ, չի հակասում Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասին և 167-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելիս, նկատի ունենալով նաև սույն գործով կողմերի դիրքորոշումները, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

ա) սույն գործով վիճարկվող դրույթներով սահմանված Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության մանրամասներն արդյո՞ք բխում են Սահմանադրության, մասնավորապես, 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասության, 166-րդ հոդվածի 9-րդ մասի և 167-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրող և ընտրող մարմինների գործունեության սահմանադրական կարգերից և արդյո՞ք ապահովում են նրանց սահմանադրաիրավական լիազորությունների պատշաճ իրականացումը,

բ) Սահմանադրական դատարանի մասին օրենքում արդյո՞ք առկա է օրենսդրական բաց Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու հետևանքներին վերաբերող կանոնակարգումների, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի նիստերի իրավագործության ապահովման առանձնահատուկ երաշխիքների մասով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 4(92)2018

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության կարգը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կազմավորմանը վերաբերող սահմանադրական կարգավորումներն ամրագրված են Սահմանադրության՝ համապատասխանաբար «Դատավորների ընտրության և նշանակման կարգը» վերտառությամբ 166-րդ հոդվածով և «Սահմանադրական դատարանը» վերտառությամբ 167-րդ հոդվածով: Մասնավորապես.

Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջարկել միայն դատավորներ: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ»:

Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով»:

Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի կազմավորման կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

Նույն գործի շրջանակներում անհրաժեշտ համարելով բացահայտել Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով սահմանելու նորմը չի ենթադրում, որ **բացառապես** հիշյալ օրենքներով պետք է սահմանվեն **բոլոր** մանրամասները և այդ առումով չեն կարող վերապահումներ նախատեսվել այլ սահմանադրական օրենքների իրավակարգավորումներին: Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասի և, մասնավորապես, այդ նորմի «մանրամասներ» եզրույթի՝ Սահմանադրությամբ կանխորոշված բովանդակությունն անհրաժեշտ է դիտարկել սահմանադրական լուծումների ամբողջականության համատեքստում՝ **ելնելով սահմանադրական կոնկրետ նպատակներից, հաշվի առնելով նաև իրավակարգավորման առարկայի շրջանակները, իրավասու մարմինների սահմանադրական կարգավիճակը, նրանց գործունեության սահմանադրական կարգերը և սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացումն ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև կարգավորող իրավական ակտի տեսակը և բնույթը:** Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության մանրամաս-

ները կարող են բովանդակել ինչպես էական (սկզբունքային), այնպես էլ դրանց իրականացումն ապահովող ընթացակարգային (կազմակերպական) իրավակարգավորումներ:

Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումների համակարգային տրամաբանությունից բխում է, որ Սահմանադրական դատարանի դատավորների ընտրությունը ներառում է Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրումը և, որպես միասնական գործընթաց, ուղղված է նույն սահմանադրական նպատակի իրականացմանը, այն է Սահմանադրական դատարանի կազմավորմանը (կազմի համալրմանը), ըստ այդմ նրա բնականոն գործունեության և սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացման ապահովմանը: Հիշյալ սահմանադրական նպատակի իրականացման վերջնարդյունքը, բնականաբար, Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության իրականացման հնարավորության ստեղծումն է, որով ապահովվում է Սահմանադրության գերակայությունը:

Ինչ վերաբերում է մանրամասներ սահմանող իրավական ակտերի տեսակին և բնույթին, ապա Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված է, որ դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են **սահմանադրական օրենքներով** Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով: Հարկ է նշել, որ Սահմանադրության՝ «Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը» վերտառությամբ 7-րդ գլխի ընդհանուր տրամաբանությունից և, մասնավորապես, Սահմանադրության 166-րդ հոդվածից, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկություններից է բխում, որ Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանադրարանն առաջատել և Սահմանադրական դատարանի մասին օրենքին է վերապահել Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության մանրամասների սահմանումը, իսկ այլ դատարանների դատավորների ընտրության և նշանակման մանրամասների սահմանումը Դատական օրենսգրքի կարգավորմանը: Ի դեպ, հարկ է նշել նաև, որ այս տարանջատումն իր հետագա օրենսդրական ամրագրումն է ստացել սահմանադրական օրենքի Դատական օրենսգրքի 1-ին հոդվածում, համաձայն որի Դատական օրենսգրքը կարգավորում է դատական իշխանության կազմավորման և գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները, Բացառությամբ Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության կազմակերպման հետ կապված հարցերի: Քննարկվող համատեքստում Դատական օրենսգրքով սահմանվում է միայն դատավորների ընդհանուր ժողովի կողմից Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրության կարգը (75-րդ հոդված):

Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում անհրաժեշտ է ընդգծել, որ Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության անցկացման էական իրավակարգավորումներ բովանդակող մանրամասները

սահմանադրական օրենքով, այն է՝ Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանելը սահմանադրական կարևորագույն երաշխիքներից է նաև Սահմանադրական դատարանի անկախության ապահովման տեսանկյունից (Սահմանադրության 167-րդ հոդված):

Սահմանադրության 166-րդ հոդվածի 9-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում անհրաժեշտ է ընդգծել նաև, որ Ազգային ժողովը՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորին ընտրող սահմանադրական մարմին, Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն գործում է իր կանոնակարգին համապատասխան, որը ևս սահմանադրական օրենք է (Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասություն): Իսկ սահմանադրական օրենքների առումով առկա է Սահմանադրության ուղղակի պահանջ, այն է՝ սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից (Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն):

Սահմանադրական դատարանի մասին օրենքի համակարգային վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության մանրամասները Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանելու սահմանադրական պատվիրանն իրացրել է Սահմանադրական դատարանի մասին օրենքի հատկապես 17-րդ հոդվածում, որով, մասնավորապես, սահմանել է, որ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո թափուր տեղում նոր դատավորի ընտրությունը կատարվում է Ազգային ժողովի կանոնակարգով սահմանված ժամկետում՝ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով (1-ին մաս): Իսկ այդ ժամկետը սահմանված է Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածով՝ մասնավորապես դրա 1-ին մասով, համաձայն որի Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունն անցկացվում է Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը թափուր մնալու դեպքում, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ավարտին կամ պաշտոնավարման տարիքը լրանալուն նախորդող **վեց ամսվա ընթացքում**:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի մասին օրենքում, տվյալ դեպքում՝ 17-րդ հոդվածի 1-ին մասում Ազգային ժողովի կանոնակարգին հղում կատարելը ձևի առումով ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում: Ինչ վերաբերում է բովանդակային խնդրին, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի մասին օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո թափուր տեղում նոր դատավորի ընտրության **ժամկետի սահմանումը** վերապահում է Ազգային ժողովի կանոնակարգի իրավակարգավորմանը՝ սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց է: Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 1-ին մասով վեցամսյա ժամկետ է սահմանվում

Մահմանադրական դատարանի դատավորի ընտրության անցկացման համար, և, ինչպես դա բխում է նաև նույն հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումներից, Մահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրումը կատարվում է ընտրության ժամկետի սահմաններում: Ընտրության արդյունքում, ինչպես վերը նշվել է, համալրվում է Մահմանադրական դատարանի կազմը, ըստ այդմ՝ ապահովվում է նրա բնականոն գործունեությունը և սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացումը, ուստիև այնպիսի էական մանրամասը բովանդակող իրավակարգավորում է, որը պետք է սահմանվի Մահմանադրական դատարանի մասին օրենքով:

Նույն տեսանկյունից վերլուծելով նաև Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի այլ դրույթները՝ Մահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ հոդվածի 3-րդ մասով, 7-րդ մասի երկրորդ նախադասությամբ և 8-րդ մասով ևս սահմանվում են Մահմանադրական դատարանի դատավորների ընտրության անցկացմանը, ներառյալ առաջադրմանը, պաշտոնի ստանձնմանը վերաբերող էական մանրամասներ բովանդակող իրավակարգավորումներ, մասնավորապես, թե ինչ հաջորդականությամբ են կատարվում Մահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումները և ինչ ժամկետներում, երբ է Մահմանադրական դատարանի նորընտիր դատավորն ստանձնում իր պաշտոնը՝ Մահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ավարտին կամ պաշտոնավարման տարիքը լրանալուն նախորդող վեց ամսվա ընթացքում ընտրվելու դեպքում, ինչ ժամկետում է առաջադրվում Մահմանադրական դատարանի դատավորի նոր թեկնածու՝ Մահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու դեպքում:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 4, 5, 6-րդ մասերի և 7-րդ մասի առաջին նախադասության (զադտնի քվեարկության մասով) դրույթներին, ապա դրանցով սահմանվում են Մահմանադրական դատարանի դատավորների ընտրության անցկացման, ներառյալ առաջադրման, ընթացակարգային մանրամասներ բովանդակող իրավակարգավորումներ, ինչպես նաև դրանք վերաբերում են բացառապես Ազգային ժողովի լիազորությունների իրականացման, գործունեության կանոնակարգման հարցերին և, ելնելով Մահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջից պետք է սահմանված լինեն հենց Ազգային ժողովի կանոնակարգով: Մասնավորապես, հիշյալ դրույթները սահմանում են Մահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի Ազգային ժողովի նախագահին ուղղված դիմումով առաջադրվելու կարգը, դիմումին ներկայացվող պահանջները, դիմումի վերադարձման կարգը, ընտրության անցկացման օրվա և ժամի մասին հայտարարության կարգը, Ազգային ժողովի կողմից Մահմանադրական դատարանի դատավորի ընտրության հարցի քննարկման և քվեարկության կարգը:

Ելնելով վերոգրյալից, **Մահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող Մահմանադրական դատարանի մասին օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով Մահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց կամ դադարեցվե-**

լուց հետո թափուր տեղում նոր դատավորի ընտրության ժամկետի սահմանումը վերապահում է Ազգային ժողովի կանոնակարգի իրավակարգավորմանը, ինչպես նաև Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 7-րդ մասի երկրորդ նախադասությունը և 8-րդ մասը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց են: Հիմք ընդունելով Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասության, 166-րդ հոդվածի 9-րդ մասի և 167-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները այդ դրույթները պետք է սահմանվեն Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 4, 5, 6-րդ մասերը և 7-րդ մասի առաջին նախադասությունը (գաղտնի քվեարկության մասով) սահմանված լինելով Ազգային ժողովի կանոնակարգով՝ սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չեն, ավելին՝ դրանք Ազգային ժողովի կանոնակարգով սահմանելը բխում է Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջից:

4.2. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը բարձրացնում է Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրման համար Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերով սահմանված ժամկետների ողջամտության հարց: Դիմողը բարձրացնում է նաև հիշյալ մասերով սահմանված ժամկետների առումով միասնական մոտեցում ապահովելու հարց:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարանը դատավորների թեկնածուների առաջադրումը կանոնակարգելու համար Սահմանադրությամբ սահմանվում են Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուներ առաջադրող մարմինների շրջանակը և նրանցից յուրաքանչյուրի կողմից Սահմանադրական դատարանի երեքական դատավոր առաջարկելու լիազորությունը, իսկ Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրման ժամկետի մասով Սահմանադրությամբ որևէ կարգավորում սահմանված չէ:

Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրումը, նախևառաջ, ենթադրում է Սահմանադրությամբ նախատեսված պահանջներին բավարարող թեկնածուների ընտրություն: Այդ պահանջները, մասնավորապես, ամրագրված են Սահմանադրության 165-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ «Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը»:

Ակնհայտ է, որ Սահմանադրության 165-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներից առնվազն մեկը՝ բարձր մասնագիտական որակների առկայությունը, գնահատման ենթակա է և Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրող մարմնից որոշակի ժամանակ է պահանջում:

Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերի վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը սահմանել է Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղերի համար առաջադրումներ կատարելու տարբեր ժամկետներ: Այսպես Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 3-րդ մասով, մասնավորապես, սահմանվում է, որ Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումները Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուներ առաջադրող մարմինները կատարում են Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, իսկ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորություններն ավարտվելու կամ պաշտոնավարման տարիքը լրանալու դեպքում՝ Սահմանադրական դատարանի նախագահի կողմից համապատասխան տեղեկությունն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվում է, որ, եթե Սահմանադրական դատարանի դատավորը չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, իրավասու մարմինն առաջադրում է նոր թեկնածու:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի ինչպես 3-րդ մասով, այնպես էլ 8-րդ մասով նախատեսված դեպքերում Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուներ առաջադրելու ժամկետները **չեն կարող կամայականորեն տարբերակվել միմյանցից**: Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու դեպքում Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրող մարմինը, ըստ էության, իրականացնում է առաջադրման նույն գործընթացը, ինչպես և նախորդ դեպքում, քանի որ այլ առանձնահատուկ գործընթաց օրենքով սահմանված չէ, իսկ Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները միասնական են և պայմանավորված չեն Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրման արդյունքներով:

Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրող մարմինների կողմից առաջադրման կոնկրետ մոտեցումներին, ապա դրանք ենթակա են իրացման առաջադրող յուրաքանչյուր մարմնի կողմից իր սահմանադրաիրավական լիազորությունների շրջանակներում՝ հիմք ընդունելով սահմանադրաիրավական կարգավորումները, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուներին ներկայացվող սահմանադրաիրավական պահանջները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ **Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրման ժամկետ սահմանելն օրենսդիր մարմնի իրավասության հարց է**: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրման ժամկետ սահմանելիս օրենսդիր կողմից պետք է ամրագրվի Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների առաջադրման ողջամիտ ժամկետ՝ Սահմանադրական դատարանի դատավորների թեկնա-

ծուների առաջադրման սահմանադրական լիազորության պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով: Մինևույն ժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված մեկամսյա ժամկետը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ:

Ելնելով վերոգրյալից Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի կանոնակարգի 141-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված տասնօրյա ժամկետն այնքանով, որքանով էականորեն տարբերվում է նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրելու մեկամսյա ժամկետից, խնդրահարույց է Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուներին ներկայացվող սահմանադրաիրավական պահանջներին բավարարող թեկնածու առաջադրելու սահմանադրական լիազորության պատշաճ իրականացումն ապահովելու տեսանկյունից:

4.3. Սույն գործի շրջանակներում դիմողը բարձրացնում է նաև օրենսդրական բացի հարց «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու հետևանքներին վերաբերող կանոնակարգումների, մասնավորապես Սահմանադրական դատարանի նիստերի իրավազորության ապահովման առանձնահատուկ երաշխիքների մասով:

Նախ հարկ է նշել, որ հանրային իշխանության մարմնի իրավազորությունը պայմանավորվում է իր իրավասության իրացման կարողունակությամբ: Բսկ **տվյալ մարմնի իրավազորության առկայության և գործառույթների իրացման իրավաչափության նախադրյալը քվորումի առկայությունն է:**

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (այդ թվում՝ ՍԴՈ-1081 և ՍԴՈ-1384) հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել կոլեգիալ մարմնի նիստերի իրավազորության վերաբերյալ, որոնք կարևոր նշանակություն ունեն նաև սույն գործով: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ հանրային իշխանության իրականացումն ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ սկզբունքներով սահմանադրաիրավական պայման է, որն անմիջականորեն բխում է Սահմանադրության անփոփոխելի 2-րդ հոդվածի իրավակարգավորումից և պայմանավորված է կառավարման ժողովրդավարական սկզբունքների շարունակական իրացման անհրաժեշտությամբ:

Կոլեգիալ մարմնի գործունեության ապահովման տեսանկյունից առաջնահերթ կարևորվում է որոշում ընդունելու նպատակով օբյեկտիվ պատճառներով տվյալ մարմնի նիստին նրա բոլոր անդամների մասնակցությունն ապահովելու անհնարինության պայմաններում այդ մարմնի անդամների անհրաժեշտ այնպիսի թվաքանակի ներկայության ապահովումը, որով կերաշխավորվի նրա կողմից լեգիտիմ որոշումներ կայացնելու կարողունակությունը:

Հարկ է արձանագրել նաև, որ Հայաստանի Հանրապետությունում հանրային իշխանության կոլեգիալ մարմինների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի իրավակարգավորումների հիմքում առավելապես դրված է այն տրամաբանությունը, որ.

ա) կոլեգիալ մարմնի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է կոլեգիալ մարմնի անդամների ընդհանուր թվի մեծամասնությունը կամ որակյալ մեծամասնությունը,

բ) կոլեգիալ մարմնում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների կամ կոլեգիալ մարմնի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կամ որակյալ մեծամասնությամբ:

Որքանո՞վ է Սահմանադրությունը կարգավորում Սահմանադրական դատարանի նիստերի իրավագործության հարցը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս հարցն ստացել է հստակ կարգավորում: Սահմանադրական դատարանի որոշումների և եզրակացությունների ընդունման համար Սահմանադրական դատարանի դատավորների անհրաժեշտ ձայների քանակը սահմանված է Սահմանադրության 170-րդ հոդվածի 5-րդ մասով, համաձայն որի՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ կետերով նախատեսված հարցերով որոշումները, ինչպես նաև եզրակացություններն ընդունվում են Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մյուս որոշումները ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հիշյալ սահմանադրական կարգավորումը որևէ բացառություն չի սահմանում, հետևաբար **օրենսդրական այնպիսի կարգավորումը, որով Սահմանադրական դատարանի նիստերի իրավագործությունն ապահովելու համար կսահմանվի Սահմանադրությամբ չնախատեսված թվով Սահմանադրական դատարանի դատավորների մասնակցություն, խնդրահարույց կլինի Սահմանադրության 170-րդ հոդվածի 5-րդ մասի տեսանկյունից, ուստի Սահմանադրական դատարանի մասին օրենքով (կամ որևէ այլ օրենքով) չեն կարող սահմանվել Սահմանադրական դատարանի նիստերի քվորումի հատուկ կանոններ:**

Սահմանադրական դատարանն օրենսդրական բացի սահմանադրականության հարցին անդրադարձել է իր մի շարք, մասնավորապես՝ ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-917, ՍԴՈ-922, ՍԴՈ-933, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1154, ՍԴՈ-1255 որոշումներում: Սույն գործի շրջանակներում վերահաստատելով և զարգացնելով հիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, Սահմանադրական դատարանը գտնում է, որ **առկա չէ օրենսդրական բաց բոլոր այն դեպքերում, երբ ենթադրյալ օրենսդրական բացին վերաբերող հարցերն ուղղակիորեն կարգավորվում են Սահմանադրությամբ:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Սահմանադրական դատարանի մասին օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է Սահմանադրական դատարանի նիստերի իրավագործության ընդհանուր կանոն, համաձայն որի՝ «2. Նիստն իրավագոր է, եթե ապահովված է տվյալ գործով որոշում ընդունելու համար սույն օրենքի 62-րդ հոդվածով նախատեսված քվորումը»: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի որոշում կամ եզրակացություն ընդունելու համար անհրաժեշտ ձայների թվով դատավորների ներկայությունը նիստին բավարար է նիստն իրավագոր ճանաչելու համար:

Սահմանադրական դատարանի մասին օրենքի համակարգային վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը Սահմանադրական դատարանի նիստերի քվորումի ապահովման երաշխիքներ, ըստ էության, նախատեսել է Սահմանադրական դատարանի դատավորների՝ Սահմանադրական դատարանի նիստերին մասնակցության ապահովման և Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ժամկետն ավարտվելու կամ պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով լիազորությունները դադարելու դեպքում Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության գործընթացը կազմակերպելու կարգավորումների շրջանակներում (Սահմանադրական դատարանի մասին օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ և 17-րդ հոդվածի 2-րդ մաս):

Անդրադառնալով դիմողի այն մոտեցմանը, ըստ որի՝ Սահմանադրական դատարանի նիստերի իրավազորության խնդիր կարող են առաջացնել սուսկ քաղաքական շարժառիթները, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ **Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության անցկացումը, ներառյալ՝ առաջադրումը, այն իրականացնող մարմինների պարտադիր, այլ ոչ թե հայեցողական սահմանադրական լիազորություններն են, որոնք Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չկատարելը, անկախ շարժառիթներից, կարող է խաթարել Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության իրականացումը, որով ապահովվում է Սահմանադրության գերակայությունը:**

Սահմանադրական դատարանի կազմի համալրման, նրա բնականոն գործունեության և սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացման երաշխավորումը բխում է իրավական պետության հիմնարար սկզբունքներից, մասնավորապես, իրավունքի գերակայության, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքներից, և կոչված է պաշտպանելու ողջ սահմանադրական կարգը:

Սույն խնդրի առումով դիմողը հայտնում է նաև այն մոտեցումը, որ «Սահմանադրական դատարանի մասին» նախկին օրենքով համապատասխան թափուր տեղերի համալրման գործընթացում որպես բացառություն սահմանված էին այն դեպքերը, երբ պաշտոնավարման տարիքը լրանալու պահին Սահմանադրական դատարանի անդամը մասնակցում էր մեկ կամ մեկից ավելի գործերի դատաքննությանը, այդ դեպքում նրա լիազորությունները դադարում էին տվյալ գործի (գործերի) ավարտման օրը (բայց այդ գործընթացը չէր կարող տևել ավելի, քան պաշտոնավարման տարիքը լրանալու օրվանից վեց ամիս), **կարող է դիտարկվել նաև որպես օրենսդրի կողմից Սահմանադրական դատարանի նիստերի իրավազորության ապահովման երաշխիք մինչև համապատասխան համալրում իրականացնելը:**

Սահմանադրական դատարանը նախ անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Սահմանադրական դատարանի դատավորներն ընտրվում են **տասներկու տարի ժամկետով:**

Միաժամանակ, Սահմանադրության 166-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանի դատավորները պաշտոնավարում են **մինչև յոթանասուն տարին** լրանալը: Իսկ Սահմանադրության «Եզրափակիչ և անցումային դրույթներ» վերտառությամբ 16-րդ գլխի 213-րդ հոդվածը սահմանում է, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Այսինքն, 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել **մինչև իրենց 70 տարին լրանալը** (2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 117-րդ հոդվածի 13-րդ կետ), իսկ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո նշանակվածները պաշտոնավարում են **մինչև 65 տարին լրանալը** (2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 96-րդ հոդված): **Ակնհայտ է, որ Սահմանադրության հիշյալ նորմերով և հատկապես «մինչև» եզրույթի կիրառմամբ սահմանադիրը որևէ բացառություն չի սահմանել:**

Այսպիսով, վերոհիշյալ սահմանադրական նորմերի կարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ժամկետն ավարտվելու կամ պաշտոնավարման տարիքը լրանալու պահից անձը չի կարող զբաղեցնել Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոն, և այս առումով Սահմանադրական դատարանի մասին օրենքով որևէ բացառություն սահմանվել չի կարող:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ժամկետն ավարտվելը և պաշտոնավարման տարիքը լրանալը Սահմանադրական դատարանի դատավորի լիազորության դադարման կանխատեսելի հիմքեր են, իսկ Սահմանադրական դատարանի մասին օրենքով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները կարող են դադարել կամ դադարեցվել նաև ոչ կանխատեսելի հիմքերով, մասնավորապես, երբ նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն, մահացել է, օրենքով սահմանված կարգով հրաժարական է ներկայացրել, պաշտոնավարման ընթացքում զբաղվել է քաղաքական գործունեությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի վերոհիշյալ մոտեցումը Սահմանադրական դատարանի մասին օրենքի նոր իրավակարգավորումների շրջանակներում չի կարող դիտարկվել որպես Սահմանադրական դատարանի նիստերի իրավագործության ապահովման երաշխիք: Ի տարբերություն «Սահմանադրական դատարանի մասին» նախկին (01.06.2006թ. ՀՕ-58-Ն) օրենքի՝ Սահմանադրական դատարանի մասին գործող օրենքով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ժամկետն ավարտվելու կամ պաշտոնավարման տարիքը

լրանալու հիմքով լիազորությունները դադարելուց առնվազն վեց ամիս առաջ Սահմանադրական դատարանի նախագահը Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունների գործընթացը կազմակերպելու նպատակով տեղյակ է պահում Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրող մարմիններին (17-րդ հոդվածի 2-րդ մաս) և, ըստ այդմ՝ սկսվում է Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունը Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի առաջադրմամբ: Բացի այդ, Սահմանադրական դատարանի մասին օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Սահմանադրական դատարանի նախագահը, սահմանված կարգով, այդ մասին տեղյակ է պահում Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու առաջադրող մարմիններին: Այսինքն՝ օրենսդիրը Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունը կազմակերպելու և, ըստ այդմ, նաև Սահմանադրական դատարանի նիստերի իրավազորությունը երաշխավորելու նպատակով սահմանել է կարգավորումներ:

Ելնելով վերոգրյալից՝ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի մասին օրենքով Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի անկայությամբ պայմանավորված՝ Սահմանադրական դատարանի նիստերի քվորումի հատուկ կանոնի բացակայությունը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ, բխում է Սահմանադրության 170-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջից, և այդ առումով Սահմանադրական դատարանի մասին օրենքում օրենսդրական բաց առկա չէ:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-5-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 8.**

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո թափուր տեղում նոր դատավորի ընտրության ժամկետի սահմանումը վերապահում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի իրավակարգավորմանը՝ ճանաչել Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությանը, 166-րդ հոդվածի 9-րդ մասին և 167-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող:

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերը ճանաչել Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությանը, 166-րդ հոդվածի 9-րդ մասին և 167-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը՝ Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու հետևանքներին վերաբերող կանոնակարգումների բացակայության մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

4. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված վիճարկվող դրույթների Սահմանադրությանը հակասող ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի խոչընդոտներ Սահմանադրական դատարանի կազմի համալրման, ըստ այդմ, նրա բնականոն գործունեության և սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացումն ապահովելու համար, որոնցով կխաթարվի վերոհիշյալ դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը՝ սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի ապրիլի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

6 նոյեմբերի 2018 թվականի
ՄԴՈ-1434



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 141-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ, 3-ՐԴ ԵՎ 8-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ՝ «ՍԱՀՄԱՆԱ ԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱ ԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԶԸՆՏՐՎԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Սահմանադրական դատարանի որոշումն, ըստ էության, համապատասխանում է Սահմանադրության տառին, այսուհանդերձ, չեմ կարող համաձայնել որոշման եզրափակիչ մասի առաջին և երրորդ կետերում ամփոփված եզրահանգումների և դատարանի որոշմամբ արտահայտված առանձին իրավական դիրքորոշումների հետ և անհրաժեշտ եմ համարում դրանց վերաբերյալ ներկայացնել որոշակի նկատառումներ:

1. Կարծում եմ՝ սահմանադրական նորմի մեկնաբանությունը յուրաքանչյուր դեպքում պահանջում է ոչ միայն ելնել դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, այլ նաև հաշվի առնել դրա նպատակը և, ելնելով սահմանադրական հանրաճանաչ սկզբունքներից, վերլուծել դրա բովանդակությունը և իմաստը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվել է Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությանը, 166-րդ հոդվածի 9-րդ մասին և 167-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող, ելնելով միայն այն հանգամանքից, որ այն Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց կամ դադարեցվելուց հետո թափուր տեղում նոր դատավորի ընտրության ժամկետի սահմանումը վերապահել է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածը զետեղված է օրենքի «Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակը» վերտառությամբ երկրորդ գլխում և դատավորի ընտրության ժամկետներին անդրադառնում է դատավորի կարգավիճակի համատեքստում: Օրենքի այդ գլխի նպատակն է ի կատարումն Սահմանադրության 164-րդ հոդվածի 11-րդ մասի սահմանել Սահմանադրական դատարանի դատավորի բարձր կոչմանը համապատասխան կարգավիճակին վերաբերող մանրամասներ, որոնք պետք է ներառեն դրույթներ դատավորի անկախության, անձեռնմխելիության, անվտանգության, նյութական ապահովության, սոցիալական և այլ երաշխիքների, դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերի մասին, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոնները և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը: Նշված մանրամասների սահմանումն այլ օրենքի, առավել ևս ավելի ցածր աստիճանի նորմատիվ իրավական ակտին վերապահելն է, որ կարող է վտանգել դատավորի անկախության սահմանադրական սկզբունքի ապահովումը:

Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունն Ազգային ժողովի լիազորությունն է, և այդ լիազորության իրականացմանն ուղղված ընթացակարգային կարգավորումները դուրս համարվել չեն կարող «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի առարկայի շրջանակներից:

Ավելին, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքն ընդունվել է ավելի վաղ՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը՝ 2018 թվականի հունվարի 17-ին, և հարցի վերաբերյալ արդեն գործող համարժեք իրավական նորմին հղումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի պահանջից, համաձայն որի իրավական մարմնի ընդունած նույն տեսակի նորմատիվ իրավական ակտերում չպետք է անհիմն կրկնվեն գործող նորմատիվ իրավական ակտերով սահմանված նորմերը:

Հետևաբար, զուտ ձևական հիմքը բավարար չէ վիճարկվող նորմը Սահմանադրությանը հակասող ճանաչելու համար:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու հետևանքներին վերաբերող կանոնակարգումների, մասնավորապես, Սահմանադրական դատարանի նիստերի իրավազորության ապահովման երաշխիքների վերաբերյալ օրենսդրական բացի հարցը, ճիշտ կերպով դարձնելով քննության առարկա, Սահմանադրական դատարանը գտել է, որ օրենքը նման կարգավորումների բացակայության մասով համապատասխանում է Սահմանադրությանը:

Հակադարձելով դիմողի այն փաստարկին, որ Սահմանադրական դատարանի կազմը կարող է չհամալրվել սոսկ քաղաքական շարժառիթներով և առաջացնել դատարանի նիստերի իրավազորության խնդիր, որոշմամբ պատճառաբանվել է, որ «Սահմանադրական դատարանի դա-

տավորի ընտրության անցկացումը, ներառյալ՝ առաջադրումը, այն իրականացնող մարմինների պարտադիր, այլ ոչ թե հայեցողական սահմանադրական լիազորություններն են...»:

Պետք է նշել, որ սահմանադրաիրավական այդ պարտադիր լիազորությունները որոշակի ժամկետում իրականացնելու որևէ իրավական երաշխիք Սահմանադրությամբ սահմանված չէ, մինչդեռ քաղաքական շարժառիթներով դրանց ձգձգումը չի կարող բացառվել: Սահմանադրությունն օրենսդրին չի արգելում սահմանել այդպիսի երաշխիքներ: Ընդհանրապես, սահմանադրություններն, ամրագրելով հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված որոշակի սկզբունքներ և պահանջներ, օրենսդրին թողնում են հայեցողության հնարավորություն:

Սահմանադրական դատարանն իրավացիորեն նշել է, որ «Սահմանադրական դատարանի կազմի համալրման, նրա բնականոն գործունեության և սահմանա դրական լիազորությունների պատշաճ իրականացման ապահովման երաշխավորումը բխում է իրավական պետության հիմնարար սկզբունքներից, մասնավորապես, իրավունքի գերակայության, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքներից, և կոչված է պաշտպանելու ողջ սահմանադրական կարգը», սակայն եզրակացնելով, որ Սահմանադրությունը Սահմանադրական դատարանի դատավորին թույլ չի տալիս նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու կամ պաշտոնավարման տարիքը լրանալու պահից այլևս զբաղեցնել այդ պաշտոնը և, ըստ էության, օրենսդրին զրկել է Սահմանադրական դատարանի դատավոր չնշանակվելու դեպքում դատարանի բնականոն գործունեության և սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացման ապահովման համար անհրաժեշտ երաշխիքներ սահմանելու հայեցողությունից:

Ակնհայտ է, որ ներկա պահին Սահմանադրական դատարանը սահմանված ժամկետում համալրելու խնդիրն առկա է, և նման իրավիճակներից խուսափելու համար, թերևս, որոշմամբ կարելի էր առաջադրել հնարավոր լուծումներ, նկատի ունենալով, որ Սահմանադրությունը, հանդիսանալով կենսունակ փաստաթուղթ, գործում է հակասական իրականությունում, պետության զարգացման յուրաքանչյուր փուլում տարբեր իրական պայմաններում, ուստի սահմանադրական արդարադատությունը կոչված է նրանում ամրագրված հանրաճանաչ սկզբունքները մեկնաբանելու և լրացնելու պետության զարգացման տվյալ փուլին համապատասխանող բովանդակությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր

Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱ ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 նոյեմբերի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2018 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված՝ «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 4(92)2018

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. Ենթածրագիր 2» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 9-ին:

Համաձայնագիրն ունի կից չորս Ժամանակացույց՝ Ժամանակացույց 1.

«Օրագրի նկարագրություն», Ժամանակացույց 2. «Մարման ժամանակացույց», Ժամանակացույց 3. «Վարկային միջոցների առհանումը», Ժամանակացույց 4. «Օրագրի իրականացում և այլ հարցեր»:

2. Ասիական զարգացման բանկը (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Վարկառու) Համաձայնագրով սահմանված կարգով տրամադրում է հիսուն միլիոն (50,000,000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ)՝ Համաձայնագրով նախատեսված ծրագրի (այսուհետ՝ Օրագիր) իրականացման համար:

Օրագրի գլխավոր նպատակն է Վարկառուի ֆինանսական շուկաների հնարավորության ավելացումը:

Օրագիրը բաղկացած է երկու ենթածրագրից: Համաձայնագիրը վերաբերում է երկրորդ ենթածրագրին:

Օրագիրը, մասնավորապես, ներառում է՝

ա) Վարկառուի պետական պարտքի և ֆիսկալ ռիսկի կառավարման գործելակերպի և քաղաքականության հզորացումը,

բ) պետական արժեթղթերի և փողի շուկայի ենթակառուցվածքների բարելավումը,

գ) ֆինանսական գործիքների բազայի և ներդրողների շրջանակի ընդլայնումը և կորպորատիվ թափանցիկության մակարդակի բարձրացումը:

Օրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վարկն ունի մայր գումարի մարման 12 տարի ժամկետ, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված կարգով և ժամկետներում Վարկի արտոնյալ ժամանակահատված:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

1) Բանկին վճարել տոկոսներ մայր գումարի առհանված և դեռևս չվճարված վարկի նկատմամբ՝ յուրաքանչյուր տոկոսի հաշվեգրման ժամանակահատվածի համար, հետևյալ գումարին հավասար չափով՝ LIBOR և 0.60 %, ինչպես սահմանված է Վարկավորման կանոնների 3.02-րդ բաժնով, հանած 0.10 %, ինչպես նախատեսված է Վարկավորման կանոնների 3.03-րդ բաժնով,

ՍԱՀՄԱՍԱՌՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

2) տարեկան կտրվածքով վճարել Վարկի ամբողջ գումարի նկատմամբ 0.15 %-ի չափով պարտավորավճար,

3) Վարկը մարել Համաձայնագրով նախատեսված մարման ժամանակացույցին համապատասխան, կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին,

4) Բանկին տրամադրել կամ ապահովել, որ տրամադրվեն բոլոր այն հաշվետվությունները և տեղեկատվությունները, որոնք Օրագրի իրականացման համար Բանկի կողմից ողջամտորեն կպահանջվեն,

5) Վարկի մայր գումարի մարումը և Վարկի մայր գումարի տոկոսները վճարել Համաձայնագրի 2-րդ ժամանակացույցի դրույթներին համապատասխան,

6) վարկային հաշվից առհանում կատարել Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո,

7) ապահովել, որ վարկային միջոցները Համաձայնագրի դրույթներին համապատասխան օգտագործվեն Օրագրի իրականացման համար կատարված ծախսերը ֆինանսավորելու համար,

8) վարկային միջոցների որևէ առհանում չկատարել Համաձայնագրի 3-րդ ժամանակացույցում նշված չթույլատրվող ծախսերի համար:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է բյուջետային վարկ և դրա հետ կապված Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը կապահովվի բյուջետային վերահսկողության ընդհանուր կարգի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2018 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

19 նոյեմբերի 2018 թվականի
ՄԴՈ-1435



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 109-ՐԴ
ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 11-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՎ 123-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-
ՐԴ ԿԵՏԻ «Բ» ԵՆԹԱԿԵՏԵՐԻ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1373-Ն ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ 3-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՎ 15-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ
ԵՆԹԱԿԵՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

27 նոյեմբերի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի, գործով որպես պատասխանող կողմեր ներգրավված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Հայաստանի Հանրապետության կառավարության,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 35-րդ հոդվածի, 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի «ա» և 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետերի, ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ հաստատված N 1

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ և 15-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «**Եկամտի առանձին տեսակների հաշվառման առանձնահատկությունները**» վերտառությամբ 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի «ա» ենթակետով սահմանվում է.

«Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ են համարվում նաև

(...)

11) Կառավարության սահմանած կարգով շահութահարկ վճարողների (բացառությամբ սույն մասի 12-րդ կետով սահմանված դեպքերի) կողմից ա. դուրս գրված հարկման նպատակով դուրս գրման ենթակա կրեդիտորական պարտքերի գումարները,....»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը փոփոխության է ենթարկվել Ազգային ժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված ՀՕ-266-Ն օրենքով, որի համաձայն՝ 11-րդ կետի «ա» ենթակետի «անհուսալի» բառը փոխարինվել է «հարկման նպատակով դուրս գրման ենթակա» բառերով:

Օրենսգրքի՝ «**Այլ նվազեցումները**» վերտառությամբ 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանվում է.

«1. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են՝

(...)

2) Կառավարության սահմանած կարգով շահութահարկ վճարողների (բացառությամբ սույն մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի) կողմից (...)

բ. անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումները գերազանցող գումարները,....»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը որևէ փոփոխության չի ենթարկվել:

«Շահութահարկ վճարողների (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N 2052-Ն որոշումն ուժը

կորցրած ճանաչելու մասին» N 1373-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) Կառավարության կողմից ընդունվել է 2017 թվականի հոկտեմբերի 5-ին, վարչապետի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի նոյեմբերի 3-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

Նշված Որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է.

«3. Սույն կարգի կիրառման առումով՝

....

2) կրեդիտորական պարտքը (այդ թվում՝ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների, շահաբաժինների գծով) հարկ վճարողի կողմից այլ անձանց (կրեդիտորներին) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարն է»:

Նույն հավելվածով սահմանված կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է.

«15. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեբիտորական պարտքը ճանաչվում է անհուսալի՝

....

2) դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության) օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, եթե տվյալ դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը գերազանցում է 100 հազ. դրամը....»:

Վերոնշյալ դրույթները որևէ փոփոխության չեն ենթարկվել:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2018 թվականի հունիսի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները, Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշումը, վերջիններիս հետ փոխկապակցված օրենսդրության այլ նորմերը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումները

Բարձրացված սահմանադրաիրավական խնդիրը դիմողը դիտարկել է իրավական որոշակիության և սեփականության իրավունքի՝ բացառապես օրենքի հիման վրա սահմանափակման հնարավորության տեսանկյուններից:

Իրավական որոշակիության առումով դիմողի հիմնական հարցադրումն այն է, որ օրենսդիրը, օգտագործելով «կրեդիտորական պարտք» և «անհուսալի կրեդիտորական պարտք» եզրույթները, Օրենսգրքում չի բացա-

հայտում դրանց բովանդակությունը: Վերոնշյալ տերմինների սահմանումը, այնուամենայնիվ, տրված է Որոշմամբ, սակայն, ըստ դիմողի՝ այդ սահմանումը «դուրս է Օրենսգրքով դեկլարացված կարգավորման առարկայից»:

Ըստ դիմողի՝ խնդիրն այն է, որ Որոշմամբ տրված սահմանման համաձայն՝ որպես կրեդիտորական պարտք է դիտարկվում նաև շահաբաժինների գծով՝ կազմակերպության կողմից այլ անձանց (կրեդիտորներին) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարը: Սակայն, վճարման ենթակա շահաբաժնի գումարը, Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, հանդիսանում է ծախս չհամարվող տարր, ուստի որևէ ազդեցություն չի ունենում հարկվող շահույթի որոշման ժամանակ: Արդյունքում ստացվում է, որ, Օրենսգրքում այդ գումարը չդիտարկվելով որպես ծախս, որևէ ազդեցություն չունենալով հարկվող շահույթի որոշման գործընթացում, Որոշմամբ դրան տրված մեկնաբանության պարագայում այն կարող է դիտարկվել որպես անհուսալի կրեդիտորական պարտք և հարկվել: Դիմողը գտնում է, որ նշված իրավիճակում առաջանում է իրավական որոշակիության խնդիր, որի առնչությամբ դիմողի կողմից վկայակոչվում են ինչպես Սահմանադրական դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներ, որոնց հիման վրա դիմողը եկել է այն եզրահանգման, որ օրենքի հիման վրա սեփականության իրավունքի սահմանափակման մասին խոսք լինել չի կարող, եթե տվյալ օրենքը չի համապատասխանում իրավական որոշակիության կանոններին, անձը հնարավորություն չի ունենում իր վարքագիծը համապատասխանեցնել օրենքի պահանջներին:

Դիմողի կողմից բարձրացված մյուս խնդիրը վերաբերում է բացառապես օրենքի հիման վրա սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորությանը, որը, ըստ դիմողի, խախտվում է տվյալ իրավիճակում: Մասնավորապես, Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետում ամրագրվել է հարցերի այն շրջանակը, որը պետք է կարգավորվի Կառավարության որոշմամբ: Ըստ այդ հոդվածի՝ Կառավարությունը պետք է սահմանի կարգ՝ պահուստաֆոնդին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստաֆոնդին կատարված մասհանումները գերազանցող գումարի չափով համախառն եկամուտը նվազեցնելու համար: Վերոգրյալի հաշվառմամբ դիմողը գտնում է, որ Կառավարությանը չի վերապահվել լիազորություն՝ սահմանելու, թե երբ պետք է դեբիտորական պարտքը ճանաչվի անհուսալի, այսինքն՝ սահմանվի իրավունքի իրականացման կարգ, թեև հարկային մարմնի իրավակիրառ պրակտիկան վկայում է, որ Կառավարությունը փաստացի սահմանել է այդ կարգը: Ըստ դիմողի՝ Որոշմամբ սահմանված կարգի 1-ին կետի համաձայն՝ նշված կարգով կարգավորվում են հարկվող շահույթը որոշելիս դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման,

դեբիտորական և կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման հետ կապված հարաբերությունները: Ստացվում է, որ Կառավարությունը դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներից, ինչի պատճառը օրենքի մակարդակում «անհուսալի դեբիտորական պարտք» հասկացության բացակայությունն է:

Բարձրացված խնդիրը դիտարկելով Սահմանադրության 60-րդ հոդվածի շրջանակներում՝ դիմողն անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյոք օրենքի և Կառավարության որոշման շրջանակներում սեփականության իրավունքին միջամտությունը համաչափ է, և պահպանվում է արդյոք արդար հավասարակշռություն հանրային և մասնավոր շահերի միջև:

Ներկայացնելով Սահմանադրական դատարանին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանին վերաբերելի իրավական դիրքորոշումներ՝ դիմողը եզրակացնում է, որ այն դեպքերում, երբ հարկ վճարելու պարտականությունը սահմանված չէ օրենքով, առաջանում է օրենքով չսահմանված միջամտություն անձի սեփականության իրավունքի իրականացմանը:

Սույն գործով վիճարկվող դրույթների մասով դիմողի մեկ այլ մտահոգությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Օրենսգիրքը չի սահմանում «դեբիտորական պարտք» հասկացությունը, իսկ Որոշումը պարտականություն է դնում տնտեսվարողի վրա՝ դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու համար ունենալու 100 հազար դրամը գերազանցող գումարի մասով դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու վերաբերյալ դատարանի համապատասխան վճիռ: Դիմողը գտնում է, որ Որոշումամբ ամրագրված բռնագանձման մասին վճռի պահանջը միանշանակ չի ապահովում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը: Ի հիմնավորումն իր դիրքորոշումների՝ դիմողը ներկայացնում է նաև խնդրո առարկայի վերաբերյալ կատարված միջազգային փորձի (Վրաստան, Ռուսաստան, Լատվիա) ուսումնասիրություն:

Ամփոփելով իր դատողությունները՝ դիմողը եզրակացնում է, որ վիճարկվող դրույթները հակասում են Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասին, 39-րդ հոդվածին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերին և 79-րդ հոդվածին՝ այնքանով, որքանով «կրեդիտորական պարտք» և «դեբիտորական պարտք» եզրույթների հասկացությունները տրվում են ոչ թե օրենքով, այլ Կառավարության որոշումամբ (ինչը չի բխում օրենքից)՝ դրանով իսկ հանգեցնելով սեփականության իրավունքին օրենքով չնախատեսված կարգով միջամտության:

2. Պատասխանողների դիրքորոշումները

2.1. Սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովը գտնում է, որ վիճարկվող դրույթների բովանդակությունից բխող իրավակարգավորումներում առկա է օրենքի բաց, որն իրավակիրառողի համար հանգեցրել է իրավական անորոշության:

Ելնելով վիճարկվող դրույթներով պայմանավորված կանոնակարգումների, ինչպես նաև սույն սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթներից բխող համապատասխան իրավակարգավորումների համակարգային և համապարփակ վերլուծության արդյունքում Սահմանադրության

պահանջների, ըստ որոնց՝ անձը չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով և պարտավոր է մուծել միայն օրենքին համապատասխան սահմանված հարկեր և տուրքեր, լիակատար իրացման անհրաժեշտությունից, պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքում առկա է օրենքի բաց, և այդ պարագայում Որոշման հավելվածում բովանդակվող հասկացությունների սահմանումից բխող անորոշություն, ինչը տարաբնույթ մեկնաբանությունների պատճառով կարող է հարկային պարտավորության բացակայության պայմաններում առաջացնել ավելացված արժեքի հարկի և շահութահարկի վճարման՝ սահմանադրաիրավական նորմերով ամրագրված հարկային պարտավորությունների խախտման հիմնավոր վտանգ:

Վերոգրյալ դատողությունները պատասխանողը հիմնավորում է՝ վկայակոչելով Մահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի օրենքի բացի և իրավական որոշակիության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ամփոփելով իր եզրահանգումները՝ պատասխանողը եկել է այն համոզման, որ սույն սահմանադրաիրավական վեճի առարկայի շրջանակներում իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից առկա օրենսդրական բացը վտանգում է անձի Մահմանադրության 39-րդ և 60-րդ հոդվածներով երաշխավորված՝ մարդու ազատ գործելու և սեփականության իրավունքների պատշաճ իրացումը, ինչը ստեղծում է սահմանադրական հիշյալ իրավունքների խախտման պոտենցիալ հնարավորություն, որը հնարավոր չէ հաղթահարել օրենսդրության մեջ առկա այլ իրավական երաշխիքներով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթները հակասում են Մահմանադրության պահանջներին:

2.2. Գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Կառավարությունը սույն գործով վիճարկվող Որոշման դրույթների մասով գտնում է, որ «դեբիտորական պարտք» և «կրեդիտորական պարտք» եզրույթների հասկացությունները չսահմանելը չի հանգեցնում նշված տերմինների տարաբնույթ մեկնաբանությունների և միջազգային ստանդարտներին համապատասխան կիրառելիության սահմանափակմանը, հետևաբար, «դեբիտորական պարտք» և «կրեդիտորական պարտք» եզրույթների հասկացությունները Որոշմամբ սահմանելը համապատասխանում է Մահմանադրությանն այն հիմնավորմամբ, որ դրանք դուրս են բերվել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից և միաժամանակ հանդիսանում են հանրահայտ տերմիններ, ուստի դրանց լրացուցիչ ամրագրումը պարզապես պայմանավորված է իրավական որոշակիության սկզբունքի ապահովման նկատառումներով:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «կրեդիտորական պարտք» և «անհուսալի դեբիտորական պարտք» հասկացությունները կիրառվում են Կառավարության Որոշման իմաստով՝ պատասխանողը գտնում է, որ նման կանոնակարգումն իրավաչափ է հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ հարկման նպատակով դուրսգրման ենթակա կրեդիտորական պարտքերի դուրսգրման կարգի սահմանումը վերապահված է Կառավարությանը: Հետևաբար, որպեսզի Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանվի անհուսալի կրեդիտորական պարտքերի դուրսգրման կարգ, նախ պետք է Կառավարության կողմից սահմանվի «կրեդիտորական պարտք» հասկացությունը, այնուհետև նաև կրեդիտորական պարտքի անհուսալի համարվելու դեպքերը, հակառակ դեպքում իրավական առումով հնարավոր չի լինի հստակեցնել, թե որ հարաբերություններն են առհասարակ համարվում Կառավարության կողմից սահմանված կարգի կարգավորման առարկա: Այս առումով, ելնելով իրավական որոշակիության սկզբունքից, Որոշման N 1 հավելվածով հաստատված կարգով նախ տրվել է «կրեդիտորական պարտք» հասկացության սահմանումը, այնուհետև սահմանվել են կրեդիտորական պարտքն անհուսալի համարվելու դեպքերը՝ որպես վերոնշյալ կարգի կարգավորման առարկա հանդիսացող հարաբերություններ:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ Կառավարությանը վերապահված է բացառապես անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար պահուստաֆոնդին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումները գերազանցող գումարները համախառն եկամտից նվազեցնելու կարգ սահմանելու իրավասություն, պատասխանողը գտնում է, որ այն չի բխում Օրենսգրքի 6-րդ բաժնի դրույթներից, քանի որ Օրենսգրքով ինչպես պահուստին կատարվող մասհանումների սահմանման կարգը, այնպես էլ դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման կարգը սահմանելու իրավասությունը վերապահվել է Կառավարությանը:

Միաժամանակ Որոշմամբ հաստատվել է դեբիտորական պարտքերի դուրսգրման ամբողջ ընթացակարգը, իսկ դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչումը ընթացակարգի փուլերից մեկն է: Այս առումով պատասխանողը գտնում է, որ դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման համար համապատասխան պայմանների, մասնավորապես 100 հազար դրամը գերազանցող դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման համար պարտքի գումարը բռնազանձելու վերաբերյալ դատարանի համապատասխան վճռի առկայության նախատեսումը չի հակասում Սահմանադրությամբ ամրագրված բացառապես օրենքի հիման վրա սեփականության իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթին, ինչպես նաև դրանով չի խախտվում սեփականության իրավունքի անձեռնմխելիության սկզբունքը:

Ամփոփելով իր դիտարկումները՝ պատասխանողը գտնում է, որ քննարկման առարկա դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ վեճը հիմնավորված չէ:

3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն գործի շրջանակներում իրավական վեճը վերաբերում է օրենքի լիազորող նորմերի և դրանց հիման վրա Կառավարության Որոշմամբ

«կրեդիտորական և դեբիտորական պարտք» հասկացությունների ու բովանդակության, ինչպես նաև դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու կարգի ամրագրման սահմանադրականությանը:

Վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել հետևյալ հարցերը.

ա) արդյո՞ք Օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորումները համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքին,

բ) արդյո՞ք Օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորումների պայմաններում պահպանվում են սեփականության իրավունքի սահմանափակումներին վերաբերող սահմանադրական պահանջները,

գ) արդյո՞ք Կառավարությունը Սահմանադրությամբ լիազորված է ընդունել այնպիսի կանոնակարգումներ, ինչպիսիք են Որոշման վիճարկվող դրույթները:

4. Սահմանադրական դատարանի իրավական վերլուծությունները և դիրքորոշումները

4.1. Օրենսգրքի՝ դիմողի կողմից վիճարկվող 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի «ա» ենթակետի դրույթը վերաբերում է շահութահարկով հարկման բազան որոշելիս եկամտի առանձին տեսակների հաշվառման առանձնահատկություններին: Այդ դրույթով, ի թիվս այլնի, սահմանվում է, որ շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ են համարվում նաև Կառավարության սահմանած կարգով շահութահարկ վճարողների կողմից դուրս գրված հարկման նպատակով դուրսգրման ենթակա կրեդիտորական պարտքերի գումարները:

Վիճարկվող դրույթի տրամաբանության շրջանակում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Օրենսգրքի՝ «Շահութահարկով հարկման օբյեկտը, հարկման բազան և դրույքաչափերը» վերտառությամբ 22-րդ գլխով շահութահարկի հարկմանը վերաբերող իրավակարգավորումների վերլուծությանը:

Այսպես, Օրենսգրքի՝ «Շահութահարկով հարկման օբյեկտը» վերտառությամբ 104-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ շահութահարկով հարկման օբյեկտ է ռեզիդենտ կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող կամ ստացման ենթակա համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտների: Իսկ շահութահարկով հարկման բազա է, ի թիվս այլնի, ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար՝ հարկվող շահույթը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 104-րդ

հողվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերություն (Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Միաժամանակ նույն Օրենսգրքի՝ «Օրենսգրքում կիրառվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ 4-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով տրվում է նաև համախառն եկամտի հասկացությունը, այն է՝ «հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ ստացման ենթակա Օրենսգրքով սահմանված եկամուտների հանրագումար»: Նույն հոդվածով սահմանվում է նաև, որ եկամուտ է ձեռնարկատիրական, անձնական և (կամ) պասիվ եկամուտը: Օրենսգրքով սահմանվում են նաև շահութահարկով հարկման բազայի որոշման սկզբունքները, որոնք հանգում են հետևյալին. «Շահութահարկով հարկման բազան որոշելիս 1) հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե Օրենսգրքի սույն բաժնով և Օրենսգրքի ընդհանուր մասով դրանց կիրառության առանձնահատկություններ սահմանված չեն...» (Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Ինչ վերաբերում է հաշվառման առանձնահատկություններին, ապա Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը կատարվում է հաշվառման հաշվեգրման մեթոդով, եթե Օրենսգրքով չի նախատեսվում, որ հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը կատարվում է հաշվառման դրամարկղային մեթոդով: Իսկ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Օրենսգրքի կիրառության իմաստով 1) հաշվառման հաշվեգրման մեթոդը նշանակում է, որ ա. հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ձանաչելու պահից՝ անկախ հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից, բ. հարկ վճարողը հարկերի, բնօգտագործման վճարի և հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների հաշվառումն իրականացնում է՝ ելնելով հարկային պարտավորության ծագման կամ հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների առաջացման պահից՝ անկախ իր կողմից իրականացվող գործարքների դիմաց հատուցումների ստացման կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների գծով մատակարարներին կամ հարկային կամ մաքսային մարմիններին վճարումների կատարման պահից...»:

Վերոգրյալ դրույթների և դրանց հետ փոխկապակցված այլ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ շահութահարկ վճարողների համար հարկվող շահույթը համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունն է, ընդ որում, եթե համախառն եկամտից նվազեցվում են ձեռնարկատիրական ծախսերը, կորուստները և այլ նվազեցումները, իսկ հարկ-

վող շահույթը որոշելիս հաշվի են առնվում եկամուտները և ծախսերը, ապա «եկամուտ չհամարվող տարրերը» և «ծախս չհամարվող տարրերը» չեն հաշվառվում և չեն արտացոլվում հարկային մարմին ներկայացվող շահութահարկի հաշվարկներում:

4.2. Սահմանադրության 1-ին հոդվածի ուժով Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է իրավական պետություն, ինչն ինքնին ենթադրում է նաև իրավական որոշակիության սկզբունքին համահունչ օրենքի առկայություն: Միաժամանակ Սահմանադրության՝ «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ մասով մասնավորապես սահմանվում է, որ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Սահմանադրության՝ «Որոշակիության սկզբունքը» վերտառությամբ 79-րդ հոդվածով ամրագրված է. «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Սահմանադրական հիշատակված սկզբունքների նշանակությամբ պայմանավորված Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթները դիտարկել նախ և առաջ այդ սկզբունքների համատեքստում:

Իր բազմաթիվ որոշումներում Սահմանադրական դատարանն անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ մասնավորապես նշելով

- «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը:» (ՄԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:» (ՄԴՈ-753),

- «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության.» (ՄԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:» (ՄԴՈ-1213),

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրությունների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով:» (ՄԴՈ-1270),

- «...իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին:» (ՄԴՈ-1270):

Իրավական որոշակիության վերաբերյալ մի շարք դիրքորոշումներ արտահայտել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մասնավորապես, Բուսույոկն րնդդեն Մոլդովայի գործով (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունն առավել ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:

Միաժամանակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մեկ այլ վճռում արձանագրելով, որ «...չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց. իրավունքը պետք է ունակ

լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» (The Sunday Times v. the United Kingdom (Application no. 6538/74, 26/04/79, § 49):

Վերոգրյալ դիրքորոշումների համատեքստում սույն գործով վիճարկվող դրույթների վերաբերյալ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի «ա» ենթակետի վիճարկվող դրույթով սահմանվում է, որ շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ են համարվում նաև Կառավարության սահմանած կարգով շահութահարկ վճարողների կողմից դուրս գրված հարկման նպատակով դուրսգրման ենթակա կրեդիտորական պարտքերի գումարները: Այսինքն, դիտարկվող դրույթի ուժով շահութահարկ վճարողների համար հարկման նպատակով դուրսգրման ենթակա կրեդիտորական պարտքերի գումարները **համարվում են եկամուտ**, և այդ գումարները ենթակա են հարկման: Այս դրույթից բխում է նաև, որ օրենսդիրը Կառավարությանը լիազորել է սահմանել միայն հարկման նպատակով դուրսգրման ենթակա կրեդիտորական պարտքերի գումարները **դուրս գրելու կարգը**: Ստացվում է, որ դիտարկվող դրույթը շահութահարկ վճարողների համար սահմանում է հարկային պարտավորություն, ինչը ենթադրում է տվյալ պարտավորության առաջադրմանը վերաբերող բոլոր պայմանների հստակ ու ընկալելի ձևակերպումներ կատարելու անհրաժեշտություն: Այստեղից, վիճարկվող դրույթը լիազորում է Կառավարությանը սահմանել կրեդիտորական պարտքերի գումարների **դուրսգրման կարգ**, սակայն նույն «կրեդիտորական պարտք» եզրույթի բովանդակության բացահայտման մասով Կառավարությանը որևէ լիազորություն վերապահելու մասին խոսք լինել չի կարող:

Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կախադասությամբ ամրագրված նորմի պահանջների հաշվառմամբ, այն է՝ լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի «ա» ենթակետով ամրագրված վիճարկվող դրույթներն իրավական որոշակիության շրջանակներում դիտարկելու արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք ձևակերպված են բավարար հստակությամբ, և **Կառավարությունը վիճարկվող դրույթի հիման վրա լիազորված է սահմանել բացառապես կրեդիտորական պարտքերի գումարների դուրսգրման կարգ**:

4.3. Հարկային հարաբերությունները բացառապես օրենքով կարգավորման մասով Սահմանադրական դատարանի դիրքորոշումները հանգում են հետևյալին.

Սահմանադրության՝ «Սեփականության իրավունքը» վերտառությամբ 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ սեփականության իրավունքը կարող է

սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Իսկ 8-րդ մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Այնուհետև, անդրադառնալով սեփականության իրավունքի սահմանափակման խնդրին՝ Սահմանադրական դատարանն իր 2017 թվականի հունվարի 31-ի ՄԴՌ-1340 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, ըստ որի՝ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, այդ սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Միաժամանակ, նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը կարևորել է հիշատակված պայմանների առկայությունը իրավունքն իրավաչափ սահմանափակելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր բազմաթիվ վճիռներում նույնպես անդրադարձել է սեփականության իրավունքին, արձանագրելով, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը հռչակելով սեփականության իրավունքը, միաժամանակ նախատեսում է սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն ի շահ հանրության, եթե այդ սահմանափակումը նախատեսված է օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով, և ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար: Մինևնույն ժամանակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ ինչ հիմքով էլ տեղի ունենա միջամտությունը սեփականության իրավունքին, դա կարող է արդարացված լինել բացառապես այն դեպքերում, երբ իրականացվել է ի շահ հանրության: Այդ հիմնավորմամբ պայմանավորված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ միջամտությունն արդարացված լինելու համար պետք է հետապնդի օրինաչափ նպատակ և լինի համաչափ, այսինքն, պետք է **ապահովված լինի արդար հավասարակշռություն հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև** (Beyeler v. Italy, judgment 5 January 2000, §98, §107; Sporrang and Lonroth v. Sweden, judgment of 23 September 1982, §61, §69):

Հիշատակված դիրքորոշումների տրամաբանության շրջանակում և՛ Սահմանադրությամբ, և՛ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով սեփականության իրավունքի պաշտպանությունն ախտահարելու հետ միաժամանակ նախատեսվել է նաև օրենքով սահմանված հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարումների կատարման պարտականությունը: Սակայն սեփականության իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում, այդ թվում՝ հարկի սահմանումը, պետք է տեղի ունենա բացառապես օրենքի հիման վրա, համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին, իսկ այդ սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և ունենա արդարացի հիմնավորում:

Այս առումով վիճարկվող դրույթների սահմանադրականությունն անհրաժեշտ է դիտարկել **«օրենքին համապատասխան սահմանված հարկեր»** արտահայտության բովանդակության լիարժեք բացահայտման համատեքստում: Այսպես սահմանադրական հիշատակված կարգավորումներում **«օրենքին համապատասխան սահմանված հարկեր»** դրույթի բովանդակությունից հետևում է, որ բացառապես օրենքով կարող են սահմանվել հարկերը և դրանց բովանդակությունը կազմող տարրերը: **Իսկ Սահմանադրության՝ «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի համատեքստում՝ օրենքի իրականացումն ապահովելու նպատակով Կառավարության կողմից կարող են ընդունվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, սակայն դրանք չեն կարող փոփոխել կամ լրացնել հարկի բովանդակությունը և հարկային պարտավորության ծավալները, ինչը նշանակում է, որ ցանկացած հասկացություն, որն օգտագործում է Օրենսգրքը, և որի բովանդակությունից է նաև կախված հարկային պարտավորության ծավալը, պետք է ամրագրվի բացառապես օրենքով:**

Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **հարկը** պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար է, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում: Իսկ 6-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել հարկեր, որոնք նախատեսված չեն դարձյալ նույն օրենսգրքով:

Միաժամանակ, Օրենսգրքի «Հարկի և վճարի սահմանման ընդհանուր պայմանները» վերտառությամբ 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. «Հարկը և վճարը համարվում են սահմանված միայն այն դեպքում, երբ սահմանված են հետևյալ տարրերը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի. 1) հարկ վճարողների շրջանակը. 2) հարկման օբյեկտը. 3) հարկման բազան. 4) հարկի դրույքաչափը. 5) հարկի հաշվարկման կարգը. 6) հարկի վճարման կարգը և ժամկետները»: Իսկ Օրենսգրքի «Հարկման օբյեկտը» վերտառությամբ 10-րդ հոդվածի 1-ին

մասի համաձայն՝ հարկման օբյեկտ է ցանկացած գործարք, եկամուտ, գույք, գործունեության տեսակ (այդ թվում՝ գործողություն կամ գործառույթ) կամ ցանկացած այլ օբյեկտ, որի առկայությունը կամ որի նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունը կամ որի կատարումը, Օրենսգրքին համապատասխան, հարկ վճարողի մոտ առաջացնում է հարկի հաշվարկման կամ վճարման պարտավորություն:

Օրենսգրքի վիճարկվող դրույթով սահմանվում է, որ շահութահարկ վճարողների համար եկամուտ են նաև կրեդիտորական պարտքերի գումարները, մինչդեռ Օրենսգրքը չի բացահայտում «կրեդիտորական պարտք» եզրույթի բովանդակությունը: Ստացվում է, որ կրեդիտորական պարտքը դիտարկվում է որպես եկամուտ, իսկ հարկը սահմանված համարվելու համար անհրաժեշտ է, որ օրենքով սահմանվի նաև հարկման օբյեկտը, մասնավորապես եկամուտը: Մինչդեռ, տվյալ դեպքում «կրեդիտորական պարտք» եզրույթի բովանդակությունը տրված է ոչ թե Օրենսգրքով, այլ Կառավարության Որոշմամբ:

Սահմանադրական հիշատակված կարգավորումների համատեքստում և Օրենսգրքի համապատասխան դրույթների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ հարկը սահմանված համարվելու համար միաժամանակ անհրաժեշտ է դրա բովանդակությունը կազմող տարրերի օրենքով հստակ սահմանում, իսկ դրանցից առնվազն որևէ մեկի բացակայությունն ինքնին նշանակում է, որ հարկը համարվում է չսահմանված: Այսինքն՝ **հարկը սահմանված համարվելու համար անհրաժեշտ է այդ տարրերի այնպիսի հստակություն, որ դրանց լրացուցիչ հստակեցման կամ մանրամասնեցման կարիք չլինի, իսկ եթե կա նման անհրաժեշտություն, ապա այդպիսի հստակեցումը նույնպես պետք է տեղի ունենա օրենքով, քանի որ հարկի սահմանումն ինքնին իրականացվում է բացառապես օրենքին համապատասխան:**

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում «օրենքին համապատասխան սահմանված հարկեր» արտահայտությունը ենթադրում է ինչպես հարկի, այնպես էլ դրա բովանդակությունը կազմող տարրերի սահմանում բացառապես օրենքով: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարկային պարտավորությունը կհամարվի օրենքին համապատասխան սահմանված, եթե ոչ միայն գուտ ձևական առումով այն ամրագրվի օրենքով, այլև դրա բովանդակությունը կազմող տարրերն իրենց ամբողջական արտացոլումը գտնեն օրենքում: Մինչդեռ տվյալ դեպքում եկամուտ համարվող տարրի բովանդակությունը բացահայտվել է ոչ թե Օրենսգրքով, այլ Կառավարության որոշմամբ, ինչը կարող է հանգեցնել անձի սեփականության իրավունքին օրենքով չնախատեսված միջամտության:

Այս մտտեցումը հիմնավորվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներով, մասնավորապես, Լելասն ընդդեմ Խորվաթիայի (Lelas v. Croatia, 10.05.2010) գործով դատարանը նշել է, որ եթե միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով, ապա համաչափության հարցը քննարկման ենթակա չէ, և սեփականության իրավունքի խախտումն ինքնաբերաբար հաստատված է:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կրեդիտորական պարտքի մասով սեփականության իրավունքի սահմանափակումը տեղի է ունեցել Կառավարության որոշմամբ սահմանված կարգով՝ օրենքով սահմանված կարգի փոխարեն, ինչը հանգեցնում է հարկային պարտավորության սահմանմանը՝ ոչ թե օրենքին, այլ ենթաօրենսդրական իրավական ակտին համապատասխան:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա է ոչ իրավաչափ միջամտություն սեփականության իրավունքին առանց սեփականության իրավունքի սահմանափակման մյուս պայմանների հաշվառման:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված է նաև Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով «դեբիտորական պարտք» հասկացությունը սահմանող դրույթը, ըստ որի՝ «Սույն կարգի կիրառման առումով՝ 1) դեբիտորական պարտքը հարկ վճարողին այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարն է.»::

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ դիրքորոշումները հավասարապես կիրառելի են Կառավարության Որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի նկատմամբ:

4.4. Դիմողի կողմից վիճարկվող մյուս դրույթը վերաբերում է շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումներին: Մասնավորապես, Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանվում է, որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է շահութահարկ վճարողների (բացառությամբ նույն մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի) կողմից անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման դեպքում Կառավարության սահմանած կարգով պահուստին կատարվող մասհանումների, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին կատարված մասհանումների գերազանցող գումարի չափով:

Այս հոդվածով սահմանվել է նաև այն հարցերի շրջանակը, որոնք պետք է կարգավորվեն Կառավարության որոշմամբ: Ստացվում է, որ Կառավարությանը չի վերապահվել լիազորություն սահմանելու, թե երբ պետք է դեբիտորական պարտքը ճանաչվի անհուսալի, այսինքն՝ սահմանվի իրավունքի իրականացման կարգ, թեև հարկային ծառայության մարմնի իրավակիրառ պրակտիկան վկայում է, որ Կառավարությունը փափոսացի սահմանել է և պրակտիկայում իրացվում է հենց այդ իմաստով՝ դուրս գալով օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից:

Վիճարկվող դրույթը իրավական որոշակիությանն առնչվող՝ ներկայացված դիրքորոշումների համատեքստում դիտարկելու արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված դրույթից հստակ է, թե այն ու՛մ է ուղղված, և ի՛նչ գործողություններ պետք է կատարեն դրա հասցեատերերը: Ուստի իրավական որոշակիության առումով Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով շահութահարկ վճարողի հարկման օբյեկտի որոշման նպատակով համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումներին վերաբերող դրույթը ևս սահմանադրականության խնդիր չի հարուցում: Վերոնշյալ դրույթի հիման վրա կայացվել է Որոշում, որով սահմանվել է շահութահարկ վճարողների դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը, ինչի շրջանակներում բացահայտվել է ոչ միայն դեբիտորական պարտքի հասկացությունը, այլև նշվել են այն դեպքերը, երբ այդ պարտքը դառնում է անհուսալի: Ըստ այդմ՝ Որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է, որ դեբիտորական պարտքը հարկ վճարողին այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարն է, իսկ նույն կարգի 15-րդ կետով սահմանվում է, որ «...դեբիտորական պարտքը ճանաչվում է անհուսալի՝ 1) կետանցված դառնալու 366-րդ օրվանից, եթե դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը չի գերազանցում 100 հազ. դրամը. 2) դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության) օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, եթե տվյալ դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը գերազանցում է 100 հազ. դրամը. 3) պարտապանի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անվճարունակ (սնանկ) ճանաչվելու կամ պարտապան կազմակերպության լուծարվելու, կամ պետական հաշվառումից հանված պարտապան անհատ ձեռնարկատիրոջ, կամ գործունեությունը կասեցված պարտապան նոտարի, կամ պարտապան ֆիզիկական անձի մահվան դեպքերում՝ անկախ պարտքի մարման ժամկետից»:

Դիմողի դիրքորոշումները պայմանավորված են այն հիմնավորումներով, որ նշված կարգավորմամբ դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու համար հարկ վճարողի վրա դրվում է պարտականություն՝ 100 հազար դրամը գերազանցող գումարի մասով ունենալու՝ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու կարգը նույնպես պետք է սահմանվի օրենքով, այլ ոչ թե Կառավարության որոշմամբ, քանի որ դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելուց է նաև կախված հարկման օբյեկտը, հետևաբար նաև

անձի հարկային պարտավորությունների ծավալը, ինչը նշանակում է, որ դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու պայմանները պետք է ամրագրվեն օրենքով, իսկ Սահմանադրությամբ նախատեսված որևէ այլ մարմին իրավասու չէ ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով կարգավորել դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու պայմանները:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետի մասով նույնպես առկա է ոչ իրավաչափ միջամտություն սեփականության իրավունքին առանց սեփականության իրավունքի սահմանափակման մյուս պայմանների հաշվառման:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ, 64-րդ և 68-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի «ա» ենթակետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերին հակասող:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի հետ համակարգային առումով փոխկապակցված 1-ին ենթակետը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերին հակասող:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերին հակասող:

6. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետի և 19-րդ մասի պահանջները, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշման եզրափակիչ մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված վիճարկվող դրույթների Սահ-

մանադրությանը հակասող ճանաչելի անխուսափելիորեն կառաջացնի խոչընդոտներ **շահութահարկի հարկման օբյեկտի որոշման համար**, ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1373-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ, ինչպես նաև վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված 1-ին և 15-րդ կետի 2-րդ ենթակետերը Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելի անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի մայիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

7. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

27 նոյեմբերի 2018 թվականի
ՍԴՈ-1436



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՍ**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 109-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 11-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՎ 123-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ
2-ՐԴ ԿԵՏԻ «Բ» ԵՆԹԱԿԵՏԵՐԻ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 1373-Ն ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏՍՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ
N 1-ՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ 3-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՎ 15-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ
ԵՆԹԱԿԵՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-1436 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ ունեմ հետևյալ առարկությունները:

1. Որոշման պատճառաբանական մասի 4.1-րդ կետում շարադրված է վերլուծություն՝ շահութահարկով հարկման բազայի, շահութահարկով հարկման օբյեկտի որոշման, համախառն եկամտի հասկացության, բնօգտագործման վճարի հաշվարկման կարգի հետ կապված հարաբերությունների՝ Հարկային օրենսգրքի կոնկրետ հոդվածներում նախատեսված կարգավորումների վերաբերյալ, որից բխեցված է հետևություն այն մասին, որ. «Վերոգրյալ դրույթների և դրանց հետ փոխկապակցված այլ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ շահութահարկ վճարողների համար հարկվող շահույթը համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունն է, ընդ որում, եթե համախառն եկամտից նվազեցվում են ձեռնարկատիրական ծախսերը, կորուստները և այլ նվազեցումները, իսկ հարկվող շահույթը որոշելիս հաշվի են առնվում եկամուտները և ծախսերը, ապա «եկամուտ չհամարվող տարրերը» և «ծախս չհամարվող տարրերը» չեն հաշվառվում և չեն արտացոլվում հարկային մարմին ներկայացվող շահութահարկի հաշվարկներում»:

Այսպիսով պարզ չէ, նախ վերլուծության և հետևության անմիջական կապը, փոխկապակցված նորմերի շրջանակը (եթե հիշյալ շարադրանքում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 4(92)2018

մանրամասն նշված են վերոհիշյալ կարգավորումները նախատեսող նորմերը դրանց իրավական բովանդակությամբ հանդերձ, ապա գոնե նշված պետք է լինեին այն նորմերը կամ դրանց վերաբերյալ հղումները, որոնց հետ համակարգային փոխկապակցվածության շրջանակներում արվել է նման հետևություն, ինչը առավել փաստարկված բովանդակություն կհաղորդեր շարադրանքին: Բացի այդ, պարզ չէ հիշյալ հետևության և որոշման 3-րդ կետում կանխորոշված հարցերի շրջանակի միջև ենթադրյալ կապը:

2. Որոշման պատճառաբանական մասի 4.2-րդ, 4.3-րդ կետերի ծավալուն հատվածներում բառացի վերարտադրված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն իրավական որոշակիության սկզբունքի, սեփականության իրավունքի և այդ իրավունքի սահմանափակման իրավաչափության իրավական բովանդակության վերաբերյալ, որպիսիք առանձին կարճ հղումների պարագայում առավել ամփոփ ու մատչելի կրնկալվեին:

Որոշման հիշյալ 4.2-րդ կետում շարադրված է վերլուծություն «կրեդիտորական պարտքերի գումարները դուրս գրելու կարգ» բառակապակցության կամ՝ դիմումի շրջանակներում՝ այդ կարգի իրավական բովանդակության բացահայտման վերաբերյալ, հիմնավորելու համար, որ այդ «կարգի» սահմանամբ Կառավարությունը փաստացի ստանձնել է «հարկային պարտավորություն սահմանելու» լիազորություն: Սակայն, որոշման հիշյալ կետի, հավասարապես նաև 4.4-րդ կետի շարադրանքից հստակ պարզ չէ նախ, թե իրավական առումով ի նչ են «կրեդիտորական պարտքերի գումարները դուրս գրելու» կամ՝ դեբիտորական պարտքն անհուսալի ճանաչելու» կարգերը և հետո միայն՝ դրանք «հարկային պարտավորություն» առաջացնու մ են, թե ոչ: Այդպիսի վերլուծությունն **սկզբունքային նշանակություն կունենար դիմումում առաջադրված հարցի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից:** Սակայն, որոշման պատճառաբանական մասի վերջում արված է հետևություն, թե «... որոշմամբ հաստատված հավելված N1-ով սահմանված կարգի 15-րդ կետի 2-րդ ենթակետի մասով նույնպես առկա է ոչ իրավաչափ միջամտություն սեփականության իրավունքին՝ առանց սեփականության իրավունքի սահմանափակման մյուս պայմանների հաշվառման», ինչը դրան նախորդող շարադրանքից միանշանակ բխող եզրահանգում համարվել չի կարող:

3. Չնայած, որոշման պատճառաբանական մասում իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում դիմումում բարձրացված սահմանադրաիրավական խնդրի ծավալուն վերլուծությանը, այնուհանդերձ որոշման եզրափակիչ մասում անդրադարձ չի կատարվել Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին վիճարկվող նորմերի համապատասխանության գնահատման հարցին:

ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր

Շ. ՆԱԶԱՐՅԱՆ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-266-Ն ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2018
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՀՕ-338-Ն ՕՐԵՆՔԻ 44-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 դեկտեմբերի 2018թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահ-
հող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խա-
չատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի Ազգային ժողովի պատգամավորների ներկայացուցիչներ Վ.
Հարությունյանի, Գ. Մուղնեցյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներ-
կայացուցիչներ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձա-
քննության վարչության օրենսդրական փորձաքննության բաժնի պետ Գ.
Մելոյանին նույն վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա.
Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ
հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատա-
րանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հան-
րապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման
վրա «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփո-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

խություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի հունիսի 26-ի ՀՕ-338-Ն օրենքի 44-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի հունիսի 26-ի ՀՕ-338-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 2018 թվականի հունիսի 26-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 1-ից:

Օրենքի՝ վիճարկվող 44-րդ հոդվածի համաձայն՝ Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 255-րդ հոդվածի փոփոխված 1-ին մասի 5-րդ կետը և 2-րդ մասը սահմանում են.

«Հոդված 255. Շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելը

1. Շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, եթե՝

....

5) տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված փաստը՝ այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից, իսկ եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է կամ որպես նոտար նշանակվել է ավելի ուշ, ապա պետական գրանցման կամ հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից: Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումն անվավեր համարելու մասին դատարանի վճռի ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կրկին համարվում են շրջանառության հարկ վճարողներ այդպիսին համարվելուց դադարելու օրվանից:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը»:

Գործի քննության առիթը Ազգային ժողովի պատգամավորների՝ 2018 թվականի հոկտեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի և Օրենքի համապատասխան դրույթները, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողի կարծիքով՝ օրենսդիրը փոփոխությունների արդյունքում Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում ամրագրել է, որ «... հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմնի ղե-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՐԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

կավարի որոշման ընդունման դեպքում տնտեսվարող սուբյեկտը դադարում է շրջանառության հարկ վճարող լինելուց և ձեռք է բերում հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ իրավական կարգավիճակ հարկային տարվա սկզբից դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով հանդերձ: Ըստ դիմողի արդյունքում ստացվում է, որ եթե հարկային մարմնի ղեկավարը 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում որևէ օր որոշում ընդունի որոշակի անձանց Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն փոխկապակցված ճանաչելու վերաբերյալ, ապա այդ անձանց խմբում ներառված բոլոր տնտեսվարողները/կամ առնվազն նրանք, ովքեր եղել են շրջանառության հարկ վճարող մինչ այդ որոշումը/ դադարում են շրջանառության հարկ վճարող լինելուց 2018 թվականի հունվարի 1-ից, ինչը նշանակում է, որ վերջիններս պարտավոր են վճարել ավելացված արժեքի հարկ այդ ժամանակահատվածում կատարված բոլոր իրացումներից, վճարել շահութահարկ՝ հաշվետու ամբողջ տարվա համար, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաթղթավորել իրենց ձեռքբերումները՝ դրանցից բխող բոլոր իրավական հետևանքներով: Արդյունքում դիմողն եզրակացնում է, որ եթե անձը դադարում է շրջանառության հարկ վճարող լինելուց, ապա նրա համար իրավական կարգավորման պայմանները փոփոխվում են, «անձը հարկային իրավական հարաբերություններում անցում է կատարում մեկ իրավական վիճակից մյուսին, որտեղ արդեն կարգավորման պայմանները բոլորովին այլ են», փոփոխության «պրակտիկ կիրառման հետևանքով առաջանում է անձի վիճակի վատթարացում», քանի որ «ստացվում է, որ 2018 թվականի հունվարի 1-ից անձը պետք է վճարի նաև ավելացված արժեքի հարկ իր կատարած գործարքներից գոյացած ամբողջ շրջանառության նկատմամբ զրկված լինելով ձեռքբերումների ընթացքում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու հնարավորությունից», ինչը, ըստ դիմողի «...պայմանավորված է լինելու այն հանգամանքով, որ անձը իր ձեռքբերման վերաբերյալ փաստաթղթերը, /այդ թվում՝ ԱԱՀ-ով ձեռքբերումների փաստաթղթերը/ պահելու և դրանք հաշվապահական և/կամ/ հարկային հաշվառման ենթարկելու պարտականություն չի ունեցել»: Դիմողը, ըստ էության, բարձրացնում է վիճարկվող դրույթի Մահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմերով կատարված փոփոխությունների արդյունքում Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված իրավանորմը կարող է տարածվել միայն 2018 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառման ենթակա է նախկին իրավանորմը, որի պայմաններում սահմանվել է «...առավել խիստ իրավական հետևանք վրա հասնելու հանգամանք ամրագրելով, որ վերջինս բացա-

ռապես ուղղված և կիրառելի է Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ այն է 2018 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, որտեղ իրավահարաբերության սուբյեկտները ողջամտորեն հնարավորություն ունեն համապատասխան վարքագծի ձևավորման համար»:

Ի հիմնավորումն իր պնդման վկայակոչելով Սահմանադրական դատարանի և Սարգոյ իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ պատասխանող կողմը գտնում է, որ փոփոխությունների արդյունքում Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը պետք է կիրառվի հետևյալ մեկնաբանությամբ.

«1) Եթե ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված փաստն ի հայտ է եկել 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ապա շրջանառության հարկ վճարողը կարող է դադարել այդպիսին համարվելուց բացառապես 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,

2) Եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է կամ որպես նոտար նշանակվել է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, և ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված փաստը տեղի է ունեցել 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ապա որպես հարկ վճարող գրանցված, հաշվառված կամ որպես նոտար նշանակված անձը պետք է դադարի այդպիսին համարվելուց բացառապես 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,

3) Եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է կամ որպես նոտար նշանակվել է 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, և ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված փաստը տեղի է ունեցել 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ապա որպես հարկ վճարող գրանցված, հաշվառված կամ որպես նոտար նշանակված անձը պետք է դադարի այդպիսին համարվելուց բացառապես որպես հարկ վճարող գրանցվելու, հաշվառվելու կամ որպես նոտար նշանակվելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար»:

Վերոհիշյալի պարագայում, ինչպես գտնում է պատասխանող կողմը, իրավունքի սուբյեկտներն ունեին ողջամիտ հնարավորություն իրենց վարքագիծն ըստ անհրաժեշտության փոխելու և վերագնահատելու իրենց «ռիսկերը՝ նկատի ունենալով վիճարկվող իրավանորմի ընդունման արդյունքում ավելի խիստ իրավական հետևանքի վրա հասնելու հանգամանքը»: Ուստի, պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող նորմերը համապատասխանում են Սահմանադրության 73-րդ հոդվածի պահանջներին:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք Օրենքի վիճարկվող նորմերով փոփոխվում է հարկատուի՝ Օրենսգրքով նախատեսված պարտականությունների բնույթն ու բովանդակությունը,

- արդյո՞ք օրենսդրական փոփոխությունների արդյունքում վատթարանում է անձի իրավական վիճակը,

- առկա է արդյո՞ք Օրենսգրքի՝ վեճի առարկա նորմերի՝ հետադարձ ուժով կիրառման հնարավորություն նինչպիսի՞ն են դրանց իրավական հետևանքները Սահմանադրության 73-րդ հոդվածի իրավակարգավորումների համատեքստում:

Ելնելով այն հանգամանքից, որ սույն գործով դիմումի առարկան անմիջականորեն վերաբերում է շրջանառության հարկի վճարման ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի փաստերով պայմանավորված իրավապայմաններինն դրանց հնարավոր փոփոխություններին առնչվող իրավակարգավորումներին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերիսահմանադրականությունը քննել Սահմանադրության ինչպես 73-րդ հոդվածի 1-ին մասի, այնպես էլ 60-րդ հոդվածի 8-րդ մասի համատեքստում:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, ինչից հետևում է, որ սահմանադրական այդ պարտականության բովանդակությունը, այն կրող իրավասուբյեկտների շրջանակը, հարկատեսակները, հարկային պարտականությունների կատարման կարգն ու պայմանները պետք է նախատեսվեն բացառապես օրենքով:

Մասնավորապես, Օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն, իրավական այդ ակտով են Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում կիրառվող հարկերի հետ կապված հարաբերությունները, սահմանվում հարկային համակարգի սկզբունքները, հարկի հասկացությունը, տեսակները, հարկ վճարողների շրջանակը, հարկի դրույքաչափերը, հարկի հաշվարկման, վճարման, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկային պարտավորությունների կատարման (գանձման) կարգն ու ժամկետները, ինչն ունի սահմանադրաիրավական օբյեկտիվ հիմնավորում, քանի որ կոչված է, նախ իրացնել հարկեր սահմանելու և դրանք մուծելու կարգի սահմանման իրավական պատվիրանը, ինչպես նաև երաշխավորել անձանց հարկային պարտականությունների կատարման հիմնական այն իրավապայմանները, որոնք անմիջականորեն բխում են Սահմանադրության վերոհիշյալ հոդվածի իրավական բովանդակությունից:

4.2. Սույն գործով վիճարկվող նորմերով իրավակարգավորման են ենթարկվել սուբյեկտի՝ որպես շրջանառության հարկ վճարողի, կարգավիճակի և դրանով պայմանավորված նրա իրավունքների ու պարտականությունների կատարման հետ կապված հարաբերությունները: Մասնա-

վորապես, Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխված նորմերի վերլուծությունը վկայում է, որ շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, այսինքն՝ ազատվում է այդ հարկատեսակով պայմանավորված սուբյեկտիվ պարտականությունների կատարումից, եթե.

- հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն, որով նշել է ավելացված արժեքի հարկ (այսուհետ՝ ԱԱՀ) վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, այսինքն՝ Օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով ստանձնել է ԱԱՀ վճարողի պարտականությունները,

- ընթացիկ հարկային տարում գործունեության բոլոր տեսակների մասով նրա իրացման շրջանառությունը գերազանցել է 58.35 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը,

- տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը (ակցիզային հարկ վճարողների, բանկերի, վարկային կազմակերպությունների և ֆինանսավարկային այլ կազմակերպությունների դեպքերում, որոշ բացառություններով՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների դեպքերում, համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների դեպքում) այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը,

- տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում նշված փաստը (այսինքն՝ հարկային տարվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների երրորդ խախտումը, այն արձանագրելու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը) այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը,

- տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված փաստը (այսինքն՝ եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցում է 58.35 միլիոն դրամը)՝ այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից, իսկ եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է կամ որպես նոտար նշանակվել է ավելի ուշ, ապա պետական գրանցման կամ հաշվառման կամ որպես նոտար նշա-

նակման օրվանից, ընդ որում՝ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումն անվավեր համարելու մասին դատարանի վճռի ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կրկին համարվում են շրջանառության հարկ վճարողներ՝ այդպիսին համարվելուց դադարելու օրվանից:

Միաժամանակ Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելը դադարելու համապատասխան հիմքը և օրը:

Հիշյալ իրավակարգավորումների ընդհանուր բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրն իրացրել է Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասից բխող իր սահմանադրական գործառնությունը, սահմանելով իրավասուբյեկտների որպես հարկատուների կարգավիճակով, իրավաբանական որոշակի փաստերով պայմանավորված պարտականությունների կատարման կարգն ու ժամկետները, մի դեպքում՝ այն պայմանավորելով իրացման շրջանառությունների հանրագումարի մեծության ավելացմամբ, իսկ մի շարք դեպքերում՝ սուբյեկտների տեսակով, կազմով, հարկային օրենսդրության կոնկրետ պահանջների խախտմամբ և այլ հանգամանքներով, ինչը պայմանավորված է տնտեսական գործունեության շրջանակներում գնահատման ենթակա իրավիճակների, պայմանների օբյեկտիվ փոփոխությունները հարկային պարտականությունների կատարման շրջանակներում առավելագույնս հաշվի առնելու ու կանոնակարգելու իրավական անհրաժեշտությամբ, ինչն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում:

4.3. Անդրադառնալով Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխված իրավակարգավորման իրավական հետևանքների, մասնավորապես հարկատու սուբյեկտների իրավական կարգավիճակի վատթարացման և այն նախատեսող նորմերին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դիմող կողմի փաստարկներին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդիրը դիտարկել ինչպես վիճարկվող իրավակարգավորման իրավական բովանդակության, այնպես էլ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այլ պետությունների իրավակիրառ պրակտիկայի համատեքստում՝ կարևորելով այն ընդհանուր և հիմնարար սկզբունքները, որոնք համադրելի են սույն գործով դիմումի առարկայի շրջանակների հետ:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-649, ՄԴՈ-723, ՄԴՈ-758, ՄԴՈ-881, ՄԴՈ-1000, ՄԴՈ-1061, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1224, ՄԴՈ-1326), անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի

սահմանադրաիրավական խնդրին, արտահայտել է իրավական դիրքորոշումներ, համաձայն որոնց անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը.

- պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է,

- իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեզիտիմ ակնկալիքների հանդեպ,

- ընդհանուր կանոն է, իսկ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից, ինչը բխում է մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից,

- իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է, միաժամանակ, այդ սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա, ինչը կհակասեր նաև մի շարք միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին:

Վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված արգելքի տեսանկյունից կիրառելի են նաև սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս:

4.4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն գործի շրջանակներում սկզբունքային կարևորություն ունի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը: Ինչպես գտել է ՄԻԵԴ-ը հետադարձ ուժ ունեցող իարկային օրենսդրությունն սկզբունքորեն արգելված չէ Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով¹: Անհրաժեշտ է տալ այն հարցի պատասխանը, թե «արդյոք օրենքի հետադարձ կիրառումը ոչ ողջամիտ բեռ է սահմանում ... և դրանով չի պահպանում արդարացի հավասարակշռություն տարբեր շահերի միջև», ինչպես նաև կապված է հետադարձ ուժ տալու պատճառների հետ, և, երկրորդ՝ «հետադարձ ուժ ունեցող օրենքի դիմումատուների կարգավիճակի վրա ունեցած ազդեցության հետ»²:

Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ, ըստ ՄԻԵԴ-ի դիրքորոշման՝ «պայմանավորվող պետությունը հարկային ոլորտում քաղաքականություն մշակելիս և կիրառելիս ունի լայն հայեցողության շրջանակ», և որ օրենսդրի գնահատականն ընդունելի է, եթե «այն զուրկ չէ ողջամիտ հիմքից»³:

¹ ECtHRno. 27793/95, 10 June 2003, (M.A. and 34 others against Finland).

² Նույն տեղում:

³ ECtHRnos. 21319/93, 21449/93 and 21675/93, 23 October 1997, National&ProvincialBuildingSociety s. and ECtHRno. 27793/95 10 June 2003, (M.A. and others v. Finland).

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Եվրոպական միության շրջանակներում ձևավորված իրավակիրառ պրակտիկայում իրավական որոշակիությունն ու լեգիտիմ ակնկալիքների սկզբունքներն իրավունքի հետադարձ ուժի գնահատման չափանիշներ են և համարվում են Եվրոպական միության իրավունքի ընդհանուր սկզբունքներ: Ինչ վերաբերում է հետադարձ ուժ ունեցող հարկային օրենսդրության գնահատման չափանիշներին, ապա հետադարձությունը թույլատրելի է համարվում, եթե «...դա պահանջում է հետապնդվող նպատակը և եթե շահագրգիռ կողմերի լեգիտիմ ակնկալիքները պատշաճ կերպով պաշտպանված են» (EC, C-376/02, 26 April 2005, StichtingGoedWonen II <https://eur-lex.europa.eu/legalcontent/EN/TXT/PDF/?uri=CEL-EX:62002CJ0376&from=SV>, ECJ C-381/97, 3 December 1998, Belgocodex, <https://eur-lex.europa.eu/legalcontent/EN/TXT/HTML/?uri=CELEX:61997CJ0381&from=EN>, ECJ C-396/98, 8 June 2000, Schloßs-traße, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:61998CJ0396&from=EN>, ECJ C-62/00, 11 July 2002, Marks&Spencer, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/-?uri=CELEX:62000CJ0062&from=EN>):

Իրավակարգավորման վերոհիշյալ սկզբունքները՝ որպես իրավունքի հետադարձության իրավաչափության գնահատման չափանիշներ, հաստատագրված են նաև Եվրոպական պետությունների (օրինակ՝ Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Իսպանիա⁴) իրավակիրառ պրակտիկայում, համաձայն որի

- հարկային օրենսդրության հետադարձ ուժն արգելված է, բացառությամբ եթե դա արդարացվում է ընդհանուր շահի ծանրակշիռ պատճառաբանվածությամբ,

- հարկային օրենքների հետադարձությունը կարող է իրավաչափ համարվել «ողջամտության» հիմնավորմամբ և չի կարող հակասել «սահմանադրական արժեքներին և սկզբունքներին»:

4.5. Սույն գործով վիճարկվող նորմերով Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների փոփոխված և վերջիններիս հետ Օրենսգրքի փոխկապակցված այլ նորմերի, ինչպես նաև վերոհիշյալ հոդվածով նախատեսված նախկին իրավակարգավորման համադրված վերլուծությունը վկայում է, որ հարկատու իրավասուբյեկտի կարգավիճակի, իրավաբանական որոշակի փաստերի ուժով պայմանավորված հարկային պարտականությունների կատարման պայմանների կիրառման փոփոխված կարգ և ժամկետներ նախատեսելիս, ի տարբերություն նախկին իրավակարգավորումների (2016 թվականի հոկտեմբերի 4-ի խմբագրությամբ), օրենսդիրն առաջնորդվել է ժամանակի մեջ և անձանց նկատմամբ դրանք գործողության մեջ դնելու տարբեր կանոններով, մասնավորապես, որոշ դեպքերում հարկային փոփոխված պարտականությունների կատարումը սահմանելով տվյալ փաստի ծագմանը հաջորդող, իսկ այլ դեպքերում նաև այդ փաստին նախորդող հարաբերությունների շրջանակներում:

⁴ Աղբյուրը՝ Retroactivityoftaxlegislation,HansGribnauandMelvinPauwels, 2010 EATLP Congress, Leuven 27-29 May 2010, pages 59-66, https://pure.uvt.nl/ws/portalfiles/portal/9197496/2013_EATLP_book_definitief.pdf

Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում, ինչպես նաև 5-րդ կետի երկրորդ նախադասությունում նախատեսված դրույթները ժամանակի մեջ գործողության մեջ են դրվում համապատասխան փաստի ծագմանը հաջորդող իրավահարաբերությունների նկատմամբ, ինչը հնարավորություն է ընձեռում հարկային համապատասխան պարտականություններ ունեցող անձանց ձևավորել օրենսդրական փոփոխություններին համարժեք լեզվատիպ ակնկալիքներ և դրսևորել համապատասխան վարքագիծ: Ընդ որում, Սահմանադրական դատարանը չի անդրադառնում հիշյալ կարգավորումների ինքնին «խստացման» խնդրին, քանի որ, Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, օրենսդրի խնդիրն է, մասնավորապես, իր հայեցողությամբ սահմանել հարկային պարտականությունների սահմանման, փոփոխման կամ դադարման հիմքերը և կարգը:

Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում կարևորում է նման կարգի ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու այնպիսի կանոնի պահպանումը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով («Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մաս) պահպանելով հատկապես Սահմանադրության 73-րդ հոդվածի պահանջները: Վերջիններիս իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ իրավական ակտը (օրենքները և այլ իրավական ակտերը) ընդունող մարմնի հայեցողությունն է անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը (Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մաս): Միաժամանակ այն ենթադրում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգ, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը իրացնելով իրեն Սահմանադրությամբ վերապահված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու նպատակահարմարության դեպքում սահմանում է դրա վերաբերյալ դրույթ: Նշված հայեցողությունն իրացնելու նման ընթացակարգն ինքնանպատակ չէ և տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի իրացման պայմանների այնպիսի փոփոխությունները, երբ սահմանվում են հարկային պարտականությունների դադարման, նոր պարտականությունների սահմանման կոնկրետ պայմաններ և դրանք ժամանակի մեջ գործողության մեջ դնելու այնպիսի կարգ, որոնց կիրառումն իրավական հնարավոր հետևանքների առումով կանխատեսելի է, սկզբունքորեն հետապնդում են իրավաչափ նպատակներ: Այս տեսանկյունից, Օրենքի վիճարկվող նորմերով փոփոխված Օրենսգրքի 255-րդ հոդվածի վերոհիշյալ դրույթներն ինքնին սահմանադրականության խնդիր հարուցել չեն կարող:

Ինչ վերաբերում է Օրենքով Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նախատեսված այն իրավակարգավորմանը, համաձայն որի՝ շրջանառության հարկ վճարողները դադարում են այդպիսին համարվե-

լուց, եթե տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված փաստը (այսինքն՝ եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցում է 58.35 միլիոն դրամը) այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ, հարկատու իրավասուբյեկտի պարտականությունների սահմանման, փոփոխման և դադարման հետ կապված հարաբերությունները կարգավորելիս օրենսդիրը պարտավոր է առաջնորդվել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների երաշխավորված և համալիր իրացման անհրաժեշտությամբ՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման կարևոր նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման այս կամ այն ձևի ու միջոցի ընտրությունը, դրանով պայմանավորված՝ անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու իրավաչափնպատակ հետապնդելը, չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման: Ինչպես վկայում է Օրենքով Օրենսգրքի 255-րդ հոդվածի 5-րդ մասի հիշյալ փոփոխված նորմի իրավական բովանդակության վերլուծությունը, հարկատու իրավասուբյեկտի կարգավիճակի փոփոխությամբ կամ իրացման շրջանառությունների հանրագումարի մեծության չափով պայմանավորված փաստերի ուժով ծագած հարկային հարաբերությունների կարգավորման իրավաչափ նպատակը չի կարող իրացվել անհամաչափ միջոցներով: Մասնավորապես, մինչև հիշյալ փաստերի տեղի ունենալը շրջանառության հարկ վճարող իրավասուբյեկտն Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված իրավական կարգավիճակին համապատասխան կրում էր նույն Օրենսգրքի 55-րդ գլխում նախատեսված պարտականությունները, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում նախատեսված է պատասխանատվություն: Օրենսգրքի 77-րդ գլխի նորմերով սահմանված կարգով: Հասարակական հարաբերությունների այդպիսի ընդհանուր սկզբունքով կարգավորումը կանխատեսելի է և իրավաչափ, քանի որ իրավահարաբերությունների սուբյեկտները օժտված լինելով փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով և ժամանակի մեջ դրանք գործադրելու իրավագործությամբ, ունակ են ձևավորել նորմատիվ պահանջներին համարժեք լեգիտիմ ակնկալիքներ և դրսևորել համապատասխան վարքագիծ, որը, որպես կանոն, հաջորդում է նախապես կանխորոշված այս կամ այն փաստի ծագմանը (առաջացմանը): Այլ է իրավահարաբերությունների բովանդակությունն այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով առաջացած փաստերի հիմքով այնպես է փոխվում դրանք կարգավորող նորմերի բովանդակությունը, որ անձը, գործելով արդեն իսկ օրենքով կարգավորված հարաբերությունների շրջանակներում, ունենալով որոշակի իրավունքներ և պարտականություններ, օրենքի (նորմի) փոփոխման պատճառով հայտնվում է համեմատաբար ավելի վատթար իրավական վիճակում, տվյալ դեպքում՝ գրկվելով հարկատուի նախկին կարգավիճակից բխող իրավունքներից, կամ այդ իրավահարաբերությունների ուժով սահմանափակվում է նրա իրավունքի

իրացումը, ինչն առկա է Օրենսգրքի 255-րդ հոդվածի 5-րդ մասի վերոհիշյալ փոփոխված իրավակարգավորման շրջանակներում, երբ անձի համար Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված փաստի ծագման հիմքով հետադարձ ուժով (փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից) առաջանում են անցած (իրավական նշանակություն ունեցող փաստի ծագմանը նախորդող) ժամանակահատվածի համար կատարված հարկային պարտականությունը զուգահեռ բովանդակությամբ հարկային նոր պարտականություններ: Արդյունքում, այդպիսի իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող անձի իրավական վիճակը կարող է վատթարանալ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու այնպիսի կանոնների պահպանումը, որոնց գործադրմամբ երաշխավորվեն նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմաններ: Դա Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում առավել կարևոր է հատկապես այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների վատթարացմանը (խստացմանը): Քննության առարկա գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքում նման փոփոխությունների գործադրումը պետք է զուգորդվի այնպիսի իրավապայմանների սահմանմամբ, որոնք, մասնավորապես, կերաշխավորեն հարկային պարտականությունների կատարման կանխատեսելիությունն դրան համապատասխան սուբյեկտիվ վարքագծի դրսևորման համարժեք հնարավորություն բացառելով հետադարձ ուժով իրավասուբյեկտների իրավական վիճակի որևէ վատթարացում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի հունիսի 26-ի ՀՕ-338-Ն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասը «այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից» բառակապակցության Օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ ծագած իրավահարաբերությունների վրա տարածելու մասով, ճանաչել Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

14 դեկտեմբերի 2018 թվականի
ՄԴՈ-1437

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(92)2018

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 11.12.2018թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՍԴ տեղեկագիրը
ՀՀ բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(92)2018
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(92)2018
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 4(92)2018